

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER OF ARMENIAN STATE
UNIVERSITY OF ECONOMICS

2(34)

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան չորս անգամ
Հրատարակության 11-րդ տարի

Գլխավոր խմբագիր՝ Հովսեփ ԱՂԱԶՆՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Կորյուն ԱԹՈՅԱՆ (խորհրդի նախագահ), Սուրեն ԳԵՎՈՐԳՅԱՆ, Սամսոն ԴԱՎՈՅԱՆ, Արարատ ԶԱՔԱՐՅԱՆ, Մարի ԶԱՔԱՐՅԱՆ, Աշոտ ԹԱՎԱԴՅԱՆ, Գրիգոր ԿԻՐԱՎՈՍՅԱՆ, Արկաղի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Գոհար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ատոմ ՍԱՐԳԱՐՅԱՆ, Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, Սուսաննա ՉԱԼԱԲՅԱՆ (ավագ խմբագիր), Մարտիրոս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Աշոտ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, Աղասի ՍԱՐԳՍՅԱՆ, Արամ ՍԱՐԳՍՅԱՆ, Վարդան ՍԱՐԳՍՅԱՆ, Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, Գագիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Իշխան ՏԻԳՐԱՆՅԱՆ, Պարույր ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Главный редактор Овсеп АГАДЖАНИЯ

Редакционная коллегия: Кoryун АТОЯН (председатель), Аркадий АЙРАПЕТЯН, Гагик ВАРДАНИЯН, Сурен ГЕВОРКЯН, Самсон ДАВОЯН, Арарат ЗАКАРЯН, Мари ЗАКАРЯН, Паруйр КАЛАНТАРЯН, Григор КИРАКОСЯН, Атом МАРГАРЯН, Микаел МЕЛКУМЯН, Гоар ОГАНЕСЯН (ответственный секретарь), Мартирос ПЕТРОСЯН, Ашот САЛНАЗАРЯН, Агаси САРКИСЯН, Арам САРКИСЯН, Вардан САРКИСЯН, Юрий СУВАРЯН, Ашот ТАВАДЯН, Ишхан ТИГРАНЯН, Сусанна ЧАЛАБЯН (старший редактор)

Editor-in-chief Hovsep AGADJANYAN

Editorial board: Koryun ATOYAN (chairman), Susanna CHALABYAN (senior editor), Samson DAVOYAN, Suren GEVORGYAN, Arkadi HAYRAPETYAN, Gohar HOVHANNISYAN (executive secretary), Paruyr KALANTARYAN, Grigor KIRAKOSYAN, Atom MARGARYAN, Mikayel MELKUMYAN, Martiros PETROSYAN, Ashot SALNAZARYAN, Aghasi SARGSYAN, Aram SARGSYAN, Vardan SARGSYAN, Yuri SUVARYAN, Ashot TAVADYAN, Ishkhan TIGRANYAN, Gagik VARDANYAN, Ararat ZAKARYAN, Mary ZAKARYAN

«Բանբեր Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի» հանդեսն ընդգրկված է
դոկտորական ատենախոսությունների արդյունքների
տպագրման համար ընդունելի գիտական
հրատարակությունների ցանկում

© «Բանբեր ՀՊՏՀ», 2014

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ, ԴԱԿԻԹ ՀԱՆԿԵՐԴՅԱՆ

Համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ հիմքերը և
Հայաստանի մարտահրավերները.....9

ՄԵԼԱՆՅԱ ԴԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Միգրացիայի դրդապատճառները և սոցիալ- տնտեսական
հետևանքները ՀՀ-ում20

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տնտեսական աճի չափման այլընտրանքային միջոցները29

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ

ԳՈՐ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ բանկային համակարգում իրացվելիության ռիսկի դրսևորման
ծների վերլուծություն37

ԿԱՌՈՆ ԱՐԳԱՐՅԱՆ

Ձեռնարկության ֆինանսների կառավարման տնտեսամեթոդական
հիմնախնդիրները53

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՈՐՄԻԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ապրանքների մրցունակության, օգտակարության տնտեսական
էության բացահայտման և գնահատման հարցի շուրջ.....62

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՆԱՆՅԱՆ

Առևտրային կազմակերպությունների կադրային քաղաքակա-
նության գերակա ուղղությունները70

ՀԱՆՔԱՅԻՆ ՈՏՍՈՒՐՆԵՐ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍՅԱՆ

Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող
ծեռնարկությունների արտահանման կարողությունների
ընդլայնմանն ուղղված օրենսդրակազմակերպական քայլերը77

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության
վերականգնման ու զարգացման հրամայականը.....89

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ, ՄԱՐԻԱՄ ՄՈՍՋՅԱՆ

Էներգախնայողության հիմնախնդիրները և սպառողների
էներգետիկ գրագիտությունը.....97

ՋԲԱՂԿԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՄԱՐԻԱ ՍԱՀԱԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության զբաղվածության հիմնախնդիր-
ների վերլուծությունը և դրանց լուծման հնարավորությունները104

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ***ՎԱՂԻՄԻՐ ՄԱՆԱՍՅԱՆ***

ՀՀ գյուղական տարածքների խնդիրը համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման համատեքստում112

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ***ՋՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ***

Անցումային տնտեսություններ. առաջընթաց, թե՞ ձախողում 125

ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ***ԼԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***

Բնակչության պահանջարկի կանխատեսման խնդիրները և դրանց լուծման ուղիները..... 134

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ***ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Համաիրադարձային անունների իմաստաբանական վերլուծությունը 140

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ***ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***

Եվրոպական մշակույթը հայ հետազոտողի աչքերով 148

СОДЕРЖАНИЕ

МЕЖДУНАРОДНЫЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

КОРЮН АТОЯН, ДАВИД АХВЕРДЯН

Институциональные основы мировой экономики и вызовы
Армении 9

МЕЛАНИЯ КАРАГЁЗЯН

Причины и социально-экономические последствия миграции
в РА 20

ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ

АРМИНЕ ПЕТРОСЯН

Альтернативные меры измерения экономического роста 29

ФИНАНСЫ И БАНКОВСКОЕ ДЕЛО

ГОР СААКЯН

Анализ аспектов риска ликвидности в банковской системе РА..... 37

КАРЛЕН АБГАРЯН

Экономические и методические проблемы управления финансами
в предприятии..... 53

МЕНЕДЖМЕНТ

РОМИК АВАНЕСЯН

К вопросу о раскрытии экономической сущности конкуренто-
способности, полезности товаров и их оценки..... 62

АРМЕН КАРАХАНИЯН

Приоритетные направления кадровой политики коммерческих
организаций 70

МИНЕРАЛЬНЫЕ РЕСУРСЫ

МИКАЕЛ МЕЛКУМЯН, СУРЕН ПАРСЯН

Законодательные и организационные шаги для увеличения
экспортного потенциала предприятий, добывающих и
перерабатывающих нерудные полезные ископаемые 77

ПРОМЫШЛЕННАЯ ПОЛИТИКА

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

Необходимость восстановления и развития промышленности
Республики Армения 89

ГАРЕГИН БАГРАМЯН, МАРИАМ МОМДЖЯН

Проблемы энергосбережения и энергетическая грамотность
потребителей..... 97

ПРОБЛЕМЫ ЗАНЯТОСТИ

МАРИЯ СААКЯН

Анализ проблем занятости Республики Армения и возможности
их решения 104

АГРАРНАЯ ЭКОНОМИКА***ВЛАДИМИР МАНАСЯН***

Проблема сельских территорий РА в контексте укрупнения сельских общин и формирования межобщинных объединений..... 112

ПЕРЕХОДНАЯ ЭКОНОМИКА***ЗОЯ ТАДЕВОСЯН***

Страны с переходной экономикой: прогресс или провал?..... 125

ТОВАРОВЕДЕНИЕ***ЛИАНА АЙРАПЕТЯН***

Проблемы прогнозирования спроса населения и пути их решения 134

ЯЗЫКОЗНАНИЕ***ЛУСИНЕ АРУТЮНЯН***

Семантический анализ общесобытийных имен 140

РЕЦЕНЗИЯ***САРГИС АЙРАПЕТЯН***

Европейская культура глазами армянского исследователя 148

CONTENTS

INTERNATIONAL ECONOMIC RELATIONS

KORYUN ATOYAN

DAVIT HAKHVERDYAN

Institutional Bases of the World Economy and the Challenges for Armenia..... 9

MELANYA GHARAGYOZYAN

The Causes and Socio-economic Consequences of Migration in the RA 20

THEORY OF ECONOMICS

ARMINE PETROSYAN

Alternative Measures for Assessing the Economic Growth..... 29

FINANCE AND BANKING

GOR SAHAKYAN

Analysis of Dimensions of Liquidity Risk in the Banking System of the RA 37

KARLEN ABGARYAN

Economic and Methodical Issues of Managing Finance in Enterprisers..... 53

MANAGEMENT

ROMIK AVANESYAN

On the Issue of Disclosing the Concepts of Economic Nature of Competitiveness, Utility of Goods and their Evaluation Methods 62

ARMEN KARAKHANYAN

Priority Directions of Personnel Policy in Commercial Organizations 70

MINERAL RESOURCES

MIKAYEL MELKUMYAN, SUREN PARSYAN

Legislative and Organizational Measures of Expanding Export Potentials of Non-Metallic Mineral Mining in Processing Enterprises..... 77

INDUSTRIAL POLICY

SERGEY MELKUMYAN

The Imperative of Reconstructing and Developing Industry in the Republic of Armenia..... 89

GAREGIN BAGHRAMYAN, MARIAM MOMJYAN

Problems of Energy Savings and Energy Intelligence of Consumers 97

ISSUES OF EMPLOYMENT

MARIA SAHAKYAN

Analysis of Issues of Employment in The Republic of Armenia and Possibilities to Solve Them..... 104

AGRICULTURAL ECONOMY***VLADIMIR MANASYAN***

The Issue of Rural Territories in the RA in the Context of Enlarging Rural Communities and Forming Intercommunity Unions..... 112

TRANSITION ECONOMY***ZOYA TADEVOSYAN***

Countries in Transition: Progress or Failure? 125

SCIENCE OF MERCHANDISE***LIANA HAYRAPETYAN***

Problems of Demand Prediction and Their Solutions..... 134

LINGUISTICS***LUSINE HARUTYUNYAN***

The Semantic Analysis of the Nouns Denoting „Event” 140

REVIEW***SARGIS HAYRAPETYAN***

European Culture in the Eyes of Armenian Researcher..... 148

ՄԻՋ ԱԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՂԱԿԻԹ ՀԱՆԿԵՐԴՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության կարևոր ինստիտուտների զարգացումը թերազնահատելու պայմաններում տնտեսական ազատականացումը և մասնավորեցումը միակողմանիորեն դիտարկելու համար հասարակությունը թանկ է վճարել: Տնտեսական ազատության, ժողովրդավարացման և օրենքի գերակայության խնդիրները սերտորեն փոխկապված են: Դա խոսում է հօգուտ այն բանի, որ անցումային տնտեսությամբ երկրներում մասնակի բարեփոխումներն անհնարին են:

Ինստիտուտները գնահատելիս հարկ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1) դրանք պետք է արտացոլեն կառավարության սահմանափակումները, 2) պետք է նկատի ունենան միջավայրի մշտական կամ երկարատև միտումները, որոնք ոչ միշտ են պահպանվում:

Հայաստանի համար առաջնահերթ է դառնում երկրի մրցունակության մակարդակի բարձրացումը, և առանձնացվում է մրցակցային առավելության 5 ծն, որոնց կենսագործումը պետք է դառնա ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման անկյունաքարը:

Հիմնաբառեր. համաշխարհային տնտեսություն, ինստիտուտներ, ազատություն, ժողովրդավարություն, մրցունակություն, բարեփոխումներ

Ինստիտուցիոնալ միջավայրի և համապատասխան բարեփոխումների ազդեցության գնահատման անհրաժեշտությունը հիմք է տալիս անդրադարձնալու աշխարհի տարբեր երկրների (երկրների խմբի) համար կատարված հետազոտություններին՝ պատմական միջակայքերի գնահատման միջոցով պատկերացում կազմելով համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ հենքի վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ հիմքերի, այդ թվում՝ տնտեսական ազատության և ժողովրդավարության հաշվարկման, ինչպես նաև տնտեսական աճի գործում դրանց դերի վերաբերյալ տնտեսագետների կարծիքները տարբերվում են: Այնտեղ, որտեղ կանոնները խստորեն պահպանվում են, պետության իշխանությունը սահմանափակված է, իսկ տնտեսական գործակալները զբաղված են արդյունավետ ներդրումային գործունեությամբ, դիտարկվում է կայուն տնտեսական աճ: Տվյալ փոխկապվածության տարբեր տեսակետներ լայնորեն ուսումնասիրվել են ինստիտուցիոնալ տնտեսագիտության ներկայացուցիչների կողմից¹: Փորձառական տվյալները, սակայն, ոչ միշտ են նույնական արդյունքների հանգեցնում:

Տնտեսական ինստիտուտների վարկանիշները յուրաքանչյուր տարի հրապարակում են «Heritage Foundation», «Fraser Institute's» և այլ հետազոտական կենտրոններ: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունների արդյունքները, տնտեսական ազատության համաթվերը (ինդեքս) և տնտեսական զարգացման ցուցանիշները դրականորեն հարաբերակցվում են:

Այնուամենայնիվ, վերջին ժամանակներում հրապարակված համաթվերը լուրջ տարակարծություններ են առաջացնում: Ըստ բանախոսների՝ վարկանիշները սուբյեկտիվ են ու երբեմն գաղափարախոսական նպատակներով «տեղաշարժվում են», իսկ փորձառական տվյալները հաճախ ոչ համարժեք կապ են պատկերում:

Վարկանիշային գնահատականները լայնորեն օգտագործվում են տնտեսագիտական վերլուծություններում՝ այլընտրանքային հետազոտությունների բացակայության պատճառով:

Ըստ որոշ հետազոտողների՝ տպավորություն է ստեղծվում, թե ինստիտուտների և տնտեսական աճի միջև կապը դիտարկող հետազոտությունները հաճախ չափում են բոլորովին այլ մեծություններ: Այսպես՝ Polity համաթվերն ավելի քաղաքական արդյունքներ, քան քաղաքական սահմանափակումներ են արտացոլում և սեփականության իրավունքի պաշտպանության առումով վատ ցուցիչներ են համարվում: Օրինակ՝ Մաոյի ժամանակահատվածի Չինաստանն ըստ այդ համաթվի ստացել է 3 միավոր (վարկանշավորման սանդղակն ընդգրկում է -10-ից +10 միջակայքը), իսկ Պինոչետի ժամանակաշրջանի Չիլին՝ 1²:

Ինստիտուտները գնահատելիս պետք է հասկանալ, որ անհրաժեշտ են որոշակի ժամանակ և ջանքեր, որպեսզի կիրառվող միջոցները վերածվեն նորմերի, իսկ տնտեսական գործակալները սկսեն արձագանքել դրանց:

Ինստիտուտների ցանկացած գնահատական պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները. 1) ինստիտուտները պետք է արտացոլեն կառա-

¹ Առավել մանրամասն տե՛ս **Меняшев Р., Яновский К., Натхов Т.**, Свобода, рейтинги и экономический рост: в поисках надежной связи. Журнал „Экономическая политика“, N4, 2013, էջ 167-172:

² Տե՛ս **Edward L. Glaeser, Rafael La Porta**, Florencio Lopez-de-Silanes, Andrei Shleifer, 2004. „Do Institutions Cause Growth?“, Journal of Economic Growth, vol. 9(3), էջ 271-303:

վարության սահմանափակումները, 2) ինստիտուտները պետք է նկատի ունենան միջավայրի մշտական կամ երկարատև միտումները: Ինստիտուցիոնալ համաթվերի վերաբերյալ գրականության մեջ մեծ մասամբ պահանջները չեն բավարարվել³:

Ինստիտուտների և տնտեսական աճի միջև կապի առկայությունը կասկածի տակ դնող հեղինակները նշում են, որ հետազոտությունների մեծ մասում ստացված արդյունքների հավաստիությունը չի ստուգվում: Մի շարք աշխատություններում հաշվի չեն առնվում գրականության մեջ մեծ տարածում գտած ֆիզիկական և մարդկային կապիտալի ցուցանիշները՝ որպես տնտեսական բարեկեցության ու կայուն աճի գործոններ⁴:

Աղյուսակ 1-ում բերված են ընտրանքային օրինակներ Polity IV 2010 թվականի ցուցանիշի համար, իսկ աղյուսակ 2-ում ներկայացված է տնտեսական ազատության համաթիվն ըստ EFW (Ֆրեյզերի ինստիտուտ) ցուցանիշի:

Աղյուսակ 1

Ժողովրդավարության տարբեր ռեժիմների գնահատումն ըստ Polity IV ինդեքսի (Ֆրեյզերի ինստիտուտ, 2010)⁵

<i>Ժողովրդավարության ռեժիմներ*</i>	<i>Գնահատականներ, համադրումներ</i>
Ղանիայի թագավորություն. մինչև 1834 թ.	Չինական կայսրություն. XIX դարի սկիզբ (-6)
Պրուսիա և այդ ժամանակաշրջանի եվրոպական մյուս երկրներ (-10)**	Ստալինյան ԽՍՀՄ. 1933-1952 թթ. (-9) Մաոյի ՉԺՀ. 1948-1975 թթ. (-8-ից մինչև -9)
Ռուսական կայսրություն. մինչև 1905 թ.	Հիտլերյան Գերմանիա 1933-1945 թթ. (-9)
Նորվեգիա. մինչև 1873 թ. (-7)*** ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից օկուպացված արևմտագերմանական գոտիներ. 1945-1948 թթ. (-6) Նիդեռլանդներ. XIX դարի առաջին կեսին (-6-ից մինչև -7)	«Ժողովրդավարական Կամբոջա» 1976-1979 թթ. (-9)
Ռուսաստան. 1992 թ. (+5) 1993-1999 թթ. (+3)	Ռուսաստան. 2000-2006 թթ. (+6), 2007-2010 թթ. (+4)

* *Վարկանշավորման սանդղակն ընդգրկում է -10-ից +10 միջակայքը:*

** *Այս երկրներում պահպանվում էր անձնական կյանքի և մասնավոր սեփականության անձեռնմխելիության իրավունքը, բացառվում էին զանգվածային բռնություններն ընդդիմության (ԽՍՀՄ, Չինաստան) կամ կառավարությանը քննադատողների նկատմամբ (Կամբոջա):*

*** *Նորվեգիայում (-7) գործում էր տվյալ ժամանակի համար բավական ազատական սահմանադրություն, որը նույնիսկ դանիական ընդդիմության պահանջների համար որպես օրինակ էր ծառայում (աղբյուրը՝ www.systemicpeace.org/polity/polity4.htm)*

Երբեմն համաթիվը չափում է ոչ թե ազատությունը, այլ պետական կառավարման որակը, իսկ սեփականության պաշտպանության որակի բազմաթիվ գնահատականներ հաշվի չեն առնում սեփականատիրոջ պաշտպանվածության աստիճանը: Սա, կարծում ենք, պայմանավորված է այն հանգա-

³ Տե՛ս **Меняшев Р., Яновский К., Натхов Т.**, նշվ. աշխ., էջ 169:

⁴ Տե՛ս **Edward L. Glaeser, Rafael La Porta**, նշվ. աշխ., էջ 271-303:

⁵ Տե՛ս **Меняшев Р., Яновский К., Натхов Т.**, նշվ. աշխ., էջ 170:

մանքով, որ ամերիկյան և արևմտաեվրոպական տնտեսագետների համար այդ պաշտպանվածությունը քննարկման ենթակա չէ:

Սակայն, ի տարբերություն «հին» շուկայական ժողովրդավարություն ունեցող երկրների, հենց սեփականատիրոջ պաշտպանվածությունն է ապահովում սեփականության պաշտպանությունը⁶:

Ասվածը վկայում է, որ համաշխարհային տնտեսության, ինչպես նաև առանձին երկրների ինստիտուցիոնալ աճը բնութագրող համաթվերը պետք է վերապահումով ընդունել, քանի որ որոշ գնահատականներ անհեթեթ պարկեր են ներկայացնում: Օրինակ՝ խնդրահարույց են Բահրեյնի, Քուվեյթի, Պերուի բարձր դիրքերը Ֆրանսիայի, Շվեդիայի, Բելգիայի համեմատությամբ, Ղրղզստանի բարենպաստ դիրքը Իտալիայի, Լեհաստանի, Իսրայելի կամ Խորվաթիայի նկատմամբ:

Կարելի է ենթադրել, որ խնդիրն ունի առնվազն երկու կողմ. առաջին՝ ստացված արդյունքների համադրելիությունը, որը քննադատության է արժանանում, երկրորդ՝ ինստիտուցիոնալ գործոնների և տնտեսական կապի միջև հստակ կախվածության գնահատումը:

Աղյուսակ 2

Միջերկրային համադրություններ՝ ըստ տնտեսական ազատության վարկանիշի (Ֆրեյզերի ինստիտուտ, 2010)⁷

Երկիր*	Դիրք (վարկանիշ)	Հիմնախնդիրներ, մեկնաբանություններ
Հոնկոնգ	1 (9,05)	Սեփականության, սեփականատիրոջ և ձեռնարկատիրոջ ազատության երաշխիքները հիմնված են Չինաստանի կոմունիստական կուսակցության խոստման վրա:
Սինգապուր	2 (8,7)	Ազատությունների երաշխիքները հիմնված են ավանդույթների վրա, սակայն դրանք պաշտպանող ինստիտուտները ոչ արդարացի են գործում. գույքի բռնագանձումը, որպես կանոն, վերաբերում է, ընդդիմության առաջնորդների ունեցվածքին՝ քաղաքական ենթատեքստով:
Նոր Զելանդիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա	3 (8,27) 6 (7,96) 7 (7,95) 8 (7,90)	Սեփականության և սեփականատիրոջ երաշխիքները հիմնված են սահմանադրական ավանդույթի, անկախ դատական համակարգի և սուր քաղաքական պայքարի վրա:
Մեծ Բրիտանիա, Դանիա, Լյուքսեմբուրգ, Ֆինլանդիա, ԱՄԷ, Բահրեյն, Քուվեյթ, Պերու	Դիրքերի միջակայքը՝ 10–33, վարկանիշների միջակայքը՝ 7,81–7,39	Երկրների մեծ մասում սեփականության և սեփականատիրոջ երաշխիքները հիմնված են սահմանադրական ավանդույթի, անկախ դատական համակարգի և սուր քաղաքական պայքարի, մյուս մասում՝ կառավարչի բարի կամքի (ԱՄԷ, Բահրեյն, Քուվեյթ) և ընտրագանգվածի կողմնորոշման (Պերու) վրա:

⁶ Տե՛ս Яновский К., Шульгин С., Институты, демократия и экономический рост: тест 180-летнего развития. „Экономическая политика“, №3, 2008. էջ 57-75:

⁷ Տե՛ս Меньшев Р., Яновский К., Натхов Т., նշվ. աշխ., էջ 171:

Ֆրանսիա, Շվեդիա, Բելգիա, Հորդանան, Օման, Ուզանդա, Ղազախստան, Ղրղզստան	Դիրքերի միջակայքը՝ 35–62	Ուզանդա. վերջերս տեղի է ունեցել դաժան քաղաքացիական պատերազմ: Ղրղզստան. ուզբեկների նկատմամբ վերջին բռնությունները, սպանություններն ու գույքի ոչնչացումը կասկածի տակ են դնում ոչ միայն տնտեսական գործակալի գույքը, այլև կյանքը: Ղազախստան. դատական համակարգը հաճախ օգտագործվում է իշխանությանը «ոչ պիտանի» ձեռնարկատերերի, այդ թվում՝ արտասահմանյան ընկերությունների դեմ:
Իտալիա, Լեհաստան	Բաժանում են 66-րդ տեղը	Սեփականության համեմատաբար հուսալի երաշխիքներ:
Նամիբիա, Գանա, Հայիթի, Եգիպտոս	Համապատասխանաբար՝ 71, 72, 78, 80 տեղեր	Սեփականության և սեփականատիրոջը տրամադրվող երաշխիքների բացակայություն (հատկապես՝ Հայիթիում):
Իսրայել	81-րդ տեղ	Սեփականատիրոջ համար համեմատաբար հուսալի երաշխիքներ:
ՀԱՀ, Չինաստան, Ռուսաստան, Հնդկաստան, Խորվաթիա, Ռուանդա, Ինդոնեզիա, Թունիս	Զբաղեցրած տեղերի միջակայքը՝ 82-84, 87-90	Սեփականության և սեփականատիրոջը տրամադրվող հուսալի երաշխիքների բացակայություն (Ռուսաստան, Ռուանդա, Ինդոնեզիա, Թունիս, Չինաստան), մի շարք երկրներում որոշակի երաշխիքների առկայություն (Խորվաթիա, Հնդկաստան):

* Վարկանիշները բերված են ըստ նվազման:

Անցումային տնտեսությամբ երկրների ինստիտուցիոնալ զարգացման ներկայիս մակարդակը բացատրվում է մի շարք պատճառներով: Մասնավորապես՝

- պետության նշանակության, դերի և խնդիրների վերաբերյալ պատկերացումների խաթարում,
- իրավական պետության գլխավոր սկզբունքի՝ իրավունքի (օրենքի) գերակայության արհամարհում,
- գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների ոչ լիարժեք տարանջատում,
- սոցիալապես և նյութապես խոցելի, ուռճացված պետական ապարատ, որը պետական կառավարումը դարձնում է անարդյունավետ,
- ստվերային տնտեսության մերժելի չափեր,
- ժողովրդավարական պետությանը բնորոշ ինստիտուտների անկատարություն,
- նոր հասարակական հարաբերությունների ձևավորման քաղաքական և տնտեսական ռազմավարությունը հասարակությանը մատչելի ներկայացնելու անարդյունավետություն,
- օրենսդրության ձևավորման գործընթացում հակակոռուպցիոն գործոնի թերազնահատում,
- իրավապահ մարմինների և դատական համակարգի անբավարար աշխատանք կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման ու

համապատասխան տարրերին պատասխանատվության ենթարկման խնդրում, ինչպես նաև պատժի անխուսափելիության սկզբունքի խախտում,

- քաղաքացիական իրավունքների, գործող օրենսդրության, սոցիալական արդարության պաշտպանության մեխանիզմների անկատարություն,
- պետական կառավարման գործառույթների պատշաճ հսկողության և վերահսկողության նվազում,
- ՋԼՄ-ների պասիվ կամ ընտրողական մասնակցություն (լուսաբանում) հասարակական և քաղաքական կյանքին⁸:

Ի՞նչ կորցրին հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանը՝ հրաժարվելով ինստիտուցիոնալ բարեփոխումների արագ անցկացման հնարավորությունից⁹:

Նախևառաջ՝ ներդրումներ: Բարեփոխումների ընթացքում, օրինակ, Հայաստանը կարող էր ներգրավել 2–3 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումներ, որոնք երկրին կբերեին նոր տեխնոլոգիաներ, աշխատատեղեր և բարձր որակավորմամբ կառավարում, ինչպես նաև կնպաստեին հիմնական կապիտալի նորացմանը (հիմնական կապիտալի մաշվածությունը ՀՀ-ում շուրջ 80% է կազմում), արտադրողականության ավելացմանը և բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Երկրորդ՝ մրցունակություն: Այն ժամանակ, երբ բարեփոխվող երկրները էականորեն վերակողմնորոշում էին իրենց արտաքին առևտուրը դեպի արևմտյան երկրներ, ՀՀ հիմնական շուկան եղել և մնում է Ռուսաստանը:

Երրորդ՝ եկամուտներ:

Եվ, վերջապես, տնտեսական բարեփոխումների բացակայությունը, քաղաքական ոլորտում ավտորիտար ջանքերի, ժողովրդավարական ինստիտուտների էական ձևախեղման և քաղաքացիական հասարակության կառուցվածքի վրա էական ճնշման հետ միասին, միջազգային ասպարեզում ստեղծում են երկրի անբարենպաստ կերպար:

Այսպիսով՝ տնտեսական ազատության, ժողովրդավարացման, օրենքի և բարեփոխումների գերակայության խնդիրները սերտորեն փոխկապված են: Այսինքն՝ անցումային տնտեսությամբ երկրներում մասնակի բարեփոխումներն անարդյունավետ են: Երկար ժամանակահատվածում զարգացած երկրների մակարդակին կկարողանան հասնել միայն այն երկրները, որոնք իրականացրել են քաղաքական, տնտեսական և սոցիալական վերափոխումներ: Երկրները, որոնք հրաժարվել են բարեփոխումներից կամ դրանք միայն մասնակիորեն են իրականացրել, ստիպված կլինեն նորից կատարել ընտրություն, քանի որ, հակառակ դեպքում, այդ տնտեսությունները դատապարտված կլինեն լճացման:

Փաստորեն, հաջողություն կարող են ապահովել միայն տնտեսական համալիր բարեփոխումները:

Խորհրդային Միության նախկին երկրների տնտեսության բարեփոխումները կարելի է տարանջատել ըստ երկու ժամանակաշրջանի՝ 1998 թ. առաջ և

⁸ Տե՛ս Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն, Եր., «Տիգրան Մեծ», 2004, էջ 488:

⁹ Տե՛ս Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Ա. Հովասափյան, Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետաձգված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ, Եր., «Էդիթ Պրինտ», 2010, էջ 192-195:

հետո: Ակտիվորեն վերափոխվող երկրներում 1998 թ. դրությամբ գործնականում ավարտվեցին հիմնական տնտեսական բարեփոխումները, այսինքն՝ վերջիններիս տեղաբաշխման ազդեցությունը էականորեն նվազեց: Բարեփոխումները զսպող երկրներում 1990-ական թվականների կեսերին տեղի ունեցավ որոշակի առաջընթաց (իրականացվեցին մակրոտնտեսական կայունացում, զների ազատականացում, «փոքր» մասնավորեցում): Բացի դրանից, այդ երկրներում տնտեսական ակտիվություն նկատվեց՝ պայմանավորված Ռուսաստանում տնտեսական աճով: Սակայն այդ աշխուժացումը հետագայում կարող է նվազել՝ կախված Ռուսաստանի քաղաքացիների եկամուտների հետագա աճից, ինչպես նաև անցկացված բարեփոխումների տեղաբաշխման ազդեցությունից: Մինևույն ժամանակ, ակտիվ բարեփոխվող երկրներում տեղի կունենան տնտեսության հետագա վերակազմավորում և տնտեսական աճ՝ պայմանավորված ԵՄ մուտքի հեռանկարային գործոնի և այդ երկրներում ինստիտուցիոնալ բարեփոխումների ու մրցակցության զարգացման արդյունքում մրցակցային միջավայրի որակի բարելավմամբ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները կարևոր գործոն են անցումային երկրների տնտեսության համար: Առաջին՝ դրանք իրականացվում են արևմտյան ընկերությունների կողմից, որ համարվում է առավել արդյունավետ, և նպաստում են նոր՝ արևմտյանին մոտ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծմանը: Երկրորդ՝ բացի օտարերկրյա ուղղակի ներդրումներից, երկիր են մտնում նաև առանձնահատուկ ակտիվներ, որոնք նպաստում են արտադրողականության աճին:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման առավել նշանակալի բաղկացուցիչներ են արտաքին առևտրի և արժութային շուկայի ազատականացումը, բանկային բարեփոխումները, ֆոնդային շուկաների զարգացումը, խոշոր ընկերությունների մասնավորեցումը:

Ակնհայտ է, որ հետաձգված բարեփոխումները հանգեցնում են բաց թողնված հնարավորությունների կորստի: Մինչ բարեփոխվող երկրները վերակառուցում են տնտեսությունը, աշխատանքի բաժանման միջազգային համակարգում զբաղեցնում են «խորշեր» և բարելավում իրենց քաղաքացիների կենսամակարդակը, բարեփոխումներից հրաժարված և շեշտը վարչարարական տնտեսության վրա դրած երկրներում ընկնում է բնակչության բարեկեցության մակարդակը, նվազում է ազգային մրցունակությունը, իսկ տնտեսությունն ավելի ու ավելի անարդյունավետ է գործում:

Անցումային շրջանում, երբ շուկայական տնտեսության և իրավական պետության շուկայական ինստիտուտները և հատկապես օրենքներն ու դրանց գործադրման մեխանիզմները դեռևս կայացման փուլում են, մեծանում է վտանգը, որ կոռուպցիոն հարաբերությունները շատ դեպքերում կլինեն ավելի նախընտրելի, քան օրինական ճանապարհները¹⁰:

Այդ ծուղակում չհայտնվելու համար նոր ժողովրդավարական պետությունները պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն կառավարության իշխանության սահմանափակմանը, այսինքն՝ որոշեն կառավարության տեղն ազատ հասարակության մեջ: Դա անհրաժեշտ է ոչ միայն տնտեսության ամրապնդման, այլ նաև մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության

¹⁰ Տե՛ս **Ա. Մարգարյան**, Տնտեսական համակարգի բարեփոխումները սիներգետիկ մեթոդաբանության համատեքստում, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., 2008, 1(13), էջ 12:

համար: Երբ կառավարությունը չի կարողանում երաշխավորել մասնավոր սեփականության իրավունքները և միջամտում է ազատ առևտրին, թուլանում են իրավունքի նորմերը, խոսքի ազատության և քաղաքացիական այլ իրավունքների սահմանափակմանը զուգընթաց սկսում են խախտվել նաև մարդու հիմնական իրավունքները: Մ. Ֆրիդմանը նշել է. «Եթե տնտեսական ազատությունը նպաստում է քաղաքական ազատությանը, ապա քաղաքական ազատությունը տնտեսական ազատությունը ոչնչացնելու միտում է դրսևորում»¹¹:

Այն հանգամանքը, որ այս երկու գործոնները զարգանում են միևնույն ուղղությամբ, հուշում է՝ դրանք կարող են փոխադարձաբար ուժեղացնել միմյանց՝ գոնե մինչև որոշակի սահման: Սակայն նկատենք, որ այդ սահմանը որոշվում է ըստ պետության ազդեցության չափերի և ոլորտի:

Կառավարության գործունեությունը սահմանափակելու համար անհրաժեշտ է զսպել վերաբաշխող պետության աճը, որը ենթադրում է անհատական ազատության և պատասխանատվության ոգու բարձրացում: Նոր ժողովրդավարական պետությունները, ինչպես ցույց է տալիս հետսոցիալիստական երկրների փորձը, «տառապում են» վերնախավի կոռուպացվածությամբ, ռենտային միտվածությամբ, և նրանց սպառնում է ժողովրդավարական նորմերից հեռանալու վտանգը:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել երկրում ժողովրդավարության առկայության սկզբունքորեն կարևոր երկու չափանիշներ.

- քաղաքական գործիչների սերունդ, որ պատրաստ է զիջել իշխանությունը, և նրա համար իշխանությունն ինքնանպատակ չէ,
- քաղաքական համակարգի առկայություն, որ ունակ է վերարտադրելու ազգային ժողովրդավարական առաջնորդների¹²:

Ներխուրդի դրոշմները մեծ մասում նշված երկու ինստիտուտները քացակայում են:

Հայաստանում իշխանության եկած թիմն ունի շարժման երեք հնարավոր ճանապարհ: Առաջին (ամենանախընտրելին)՝ ազատական ժողովրդավարական համակարգի ստեղծում իշխանությունների բաժանմամբ և ազատ շուկայով: Սա այն է, որը հռչակվել, սակայն գործնականում չի իրականացվել:

Երկրորդ մոդելի դեպքում ստեղծվում է ավտորիտար շուկայական համակարգ, «գոհաբերվում են» ժողովրդավարությունը և ժողովրդավարական արժեքները, իսկ առաջին պլան են մղվում ազատականության և շուկայական տնտեսության գաղափարները (կիրառվում է մի շարք երկրներում):

Եվ, վերջապես, երրորդը վարչական-պետական կապիտալիզմի ստեղծումն է՝ հիմնված ուժային մեթոդների վրա:

Դժբախտաբար, մեր ընտրությունն այսօր երկրորդ և երրորդ մոդելների միջև է, և իրերի բարենպաստ դասավորության դեպքում հնարավոր կլինի ընտրել երկրորդ մոդելը:

¹¹ Տե՛ս **Friedman M.**, Economic Freedom, Human Freedom, Political Freedom. The Smith Center for Private Enterprise Studies, Inaugural Lecture, November 1, 1991. Hayward, Calif., The Smith Center for Private Enterprise Studies, 1992, էջ 7:

¹² Տե՛ս **Дарбинян А.**, Демократия и свободный рынок: оспариваемая первичность в практике переходного периода, Материалы международной конференции „Переходные экономики в постиндустриальном мире: вызовы десятилетия” 20-21 марта 2006, <http://www.iep.ru/ru/demokratiya-i-svobodnyi-rynok-osparivaemaya-pervichnost-v-praktike-pereodnogo-perioda-2.html>

Դրա հետ մեկտեղ, այս խնդիրը բարեփոխումներ իրականացնողների համար գործունեության լայն դաշտ է ապահովում ինստիտուցիոնալ վերափոխումների և ազատական տնտեսության ստեղծման առումով:

Հատկանշական է, որ ՀՀ Կառավարության 2012–2017 թթ. ծրագրով¹³ ամրագրվում են հետևյալ գերակայությունները. տնտեսության մրցունակության բարձրացում, մարդկային կապիտալի, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Ինստիտուտների անարդյունավետ գործունեության հետ կապված, տնտեսական ռիսկերի նվազեցման նպատակով, հարկ է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակներում սահմանված առաջնահերթությունների առնչությամբ ակտիվ գործունեություն ծավալել: Նախևառաջ, պետք է ստեղծել ժամանակակից հասարակությանը համապատասխանող ինստիտուտներ: Խոսքն առաջին հերթին տնտեսական ինստիտուտների մասին է, այդ թվում՝ զարգացման ինստիտուտների, որոնք թույլ կտան ապահովել տնտեսական աճի նոր որակ: Ինստիտուցիոնալ զարգացումը, բնականաբար, կազդի հասարակական կյանքի մյուս բնագավառների վրա, օրինակ՝ պետական կառավարման և սոցիալական ոլորտի:

Հայաստանի համար առաջնահերթ է դառնում երկրի մրցունակության բարձրացումը՝ հենվելով հայրենական արտադրողների գործունեության արդյունավետության աճի և պետական կարգավորման վրա:

Մենք առանձնացնում ենք մրցակցային առավելությունների 5 ձև, որոնց կենսագործումը պետք է դառնա ՀՀ տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման հիմքը: Այսպես՝

Ռեսուրսային առավելություններ. մեծացնում են սպառողական էֆեկտը, որը կապված է ձեռք բերված արտադրանքի գնային բնութագրիչների հետ, և առաջանում են հետևյալ դեպքում.

- բարենպաստ հարկային և վարչական ռեժիմ, որը ստեղծվում է կառավարության կողմից կապիտալի տեղաբաշխման ժամանակ և թույլ է տալիս ֆիրմաներին տնտեսել հարկային վճարների, ինչպես նաև գործառնական ծախսերի նվազման հաշվին,
- բարենպաստ տեղաբաշխվածություն (տրանսպորտային և տեղեկատվական հեռահաղորդակցության, առևտրային հանգույցներին և ենթակառուցվածքի մնացած տարրերին մոտ լինելը),
- բնական ռեսուրսների և անշարժ գույքի, տոկոսադրույքի մակարդակի (փոխառու կապիտալի էժանությունը) մատչելիության բարենպաստ պայմաններ,
- բնական ռեսուրսների և աշխատուժի էժանություն:

Տեխնոլոգիական առավելություններ. պայմանավորված են զանգվածային արտադրության տեխնոլոգիաների առկայությամբ և ֆիրմաների կողմից դրանց շահագործմամբ, որոնք ապահովում են մասշտաբից տնտեսում և մեծացնում սպառողական էֆեկտը՝ կապված ձեռք բերվող ապրանքների գնային բնութագրիչների հետ:

Նորարարական առավելություններ. ձևավորվում են ԳՀՓԿԱ արդյունքները արտադրությունում իրացնելու հաշվին և հնարավորություն են տալիս արագ նորացնելու թողարկվող արտադրանքի տեսականին՝ մեծացնելով

¹³ Տե՛ս <http://www.gov.am/files/docs/970.pdf>

սպառողական էֆեկտը՝ պայմանավորված ձեռք բերվող արտադրանքի որակական պարամետրերով:

Համընդհանրական առավելություններ. կապված են տնտեսական գործունեության արտատնտեսական (բնապահպանական, սոցիալական) չափորոշիչների ձևավորման և ընկերությունների ու պետական քաղաքականությամբ դրանց իրագործման հետ:

Մշակութային առավելություններ. պայմանավորված են երկրների մշակութային մերձեցմամբ (տարբերությամբ) և թույլ են տալիս ֆիրմաներին աջակցել վաճառահանման և ռեսուրսների շուկաներին մոտ կանգնած երկրներին:

КОРЮН АТОЯН

*Ректор АГЭУ, доктор экономических наук,
профессор*

ДАВИД АХВЕРДЯН

*Доцент кафедры „Международных экономических
отношений“ АГЭУ, доктор экономических наук*

Институциональные основы мировой экономики и вызовы Армении.- В условиях недооценки важных институтов для эффективного функционирования рыночной экономики, одностороннее акцентирование на экономическую свободу и приватизацию, дорого обошлись обществу. Вопросы экономической свободы, демократизации и преобладания закона тесно взаимосвязаны. Это говорит в пользу того, что частичные реформы в странах с переходной экономикой невозможны.

Любая оценка институтов должна учитывать следующие обстоятельства: 1) институты должны установить ограничения правительству; 2) институты должны учитывать постоянные и долгосрочные тенденции среды, которые не всегда соблюдаются.

Для Армении становится приоритетным повышение конкурентоспособности страны, и для этой цели приводятся 5 форм конкурентных преимуществ, реализация которых должна стать важнейшим фактором в процессе повышения конкурентоспособности экономики РА.

KORYUN ATOYAN

ASUE Rector, Doctor of Economics, Professor

DAVIT HAKHVERDYAN

*Associate Professor at the Chair of
„International Economic Relations“ at ASUE,
Doctor of Economics*

Institutional Bases of the World Economy and the Challenges for Armenia.- The society pays a high price for concentrating unilaterally on privatization and economic liberalization - given the underestimation of developing the effective performance vital for market economy institutions. Issues such as economic freedom, democratization, and the rule of law are closely correlated. This comes to prove that in transition economies partial reforms are not to bring substantial results.

Any estimate of institutions should take into account the following: 1) institutions should reflect the limitations of government, 2) institutions should take into account the permanent or long-term tendencies, which are not always stable.

For Armenia, enhancing the competitiveness of the economy is a matter of priority. With this regard 5 forms of competitive advantages, that should be the cornerstone of improvement of economic competitiveness, were emphasized.



ՄԵԼԱՆՅԱ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ
ՀՊՏՀ նակրոտէկոնոմիկայի ամբիոնի ասիստենտ

**ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴՐՂԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԵՎ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Անցումային տարիներից ի վեր Հայաստանն ապրել է միգրացիոն մի քանի ալիքներ, որոնք տարբերվում են իրենց ծավալով և բովանդակությամբ: Չնայած վերջին տասնամյակում ՀՀ արտաքին միգրացիոն հոսքերի գերակշիռ մասը բաժին է ընկել ժամանակավոր աշխատանքային միգրանտներին՝ պայմանավորված հանրապետությունում առկա զբաղվածության հիմնախնդրով, սակայն, զուտ տնտեսական խնդիրներից բացի, միգրացիան ունի նաև ավելի խորքային՝ ոչ տնտեսական դրդապատճառներ: Ընդ որում, միգրացիայի ազդեցությունը տնտեսության վրա երկակի է և գնահատվում է ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով. մի կողմից՝ նպաստում է տնտեսական աճին և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝ առաջացնում սոցիալական ու ժողովրդագրական բացասական հետևանքներ:

Հիմնաբառեր. *միգրացիա, աշխատանքային միգրացիա, զբաղվածություն, մասնավոր տրանսֆերտներ, միջին ամսական իրական աշխատավարձ, բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտներ, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ, միգրացիոն քաղաքականություն*

Բնակչության միգրացիան, ժողովրդական և սոցիալ-տնտեսական հետևանքներով հանդերձ, ՀՀ-ի առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից է: Անցումային տարիներից ի վեր, բազմաթիվ գործոններով պայմանավորված, Հայաստանն ապրել է միգրացիոն մի քանի ալիքներ, որոնք առանձնանում են իրենց չափերով և բովանդակությամբ: Եթե հանրապետության ստեղծման առաջին և նախորդող տարիներին միգրացիոն առաջին ալիքն ավելի շատ թելադրված էր քաղաքական պատճառներով և դրսևորվում էր հակադարձ հոսքերով՝ բնակչության բոլոր խավերի ընդգրկմամբ,

ապա 1992–2001 թթ. երկրորդ ակիքը բխում էր երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից և կրում էր զանգվածային բնույթ: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ միայն 1991–1998 թթ. բնակչության զուտ արտագաղթը հանրապետությունից կազմել է 760000–780000 մարդ, որը քանակապես համարժեք է 1991 թ. երկրի բնակչության 20%-ին¹: 1990-ականների համեմատությամբ, 2000-ականներին ՀՀ միգրացիոն իրավիճակը զգալիորեն մեղմացավ: Այսպես՝ ըստ մարդահամարի արդյունքների, 2011 թ., 2001 թ. համեմատությամբ, ՀՀ մշտական բնակչության թիվը նվազել է շուրջ 195 հազ. մարդով կամ 6%-ով, այն դեպքում, երբ միջմարդահամարային տարիներին (2002–2011 թթ.) ՀՀ բնակչության բնական հավելաձևը կազմել է 126 հազ. մարդ: Այսինքն՝ մշտական բնակչության թվի ցուցանիշի նվազումը, ի հաշիվ միգրացիայի, գնահատվում է շուրջ 320 հազ. մարդ²: Ըստ 2012 թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների՝ 2009–2012 թթ. միգրացիոն տեղաշարժերի 28.7%-ը եղել են ներհանրապետական, իսկ մնացած 71.3%-ը՝ միջպետական, ընդ որում, 90%-ը՝ դեպի Ռուսաստանի Ղաչնություն³:

Բնական է, որ բնակչության այս հսկայական տեղաշարժերը մեծ ազդեցություն են թողել ՀՀ տնտեսական և սոցիալական զարգացման վարքագծի, մասնավորապես՝ աշխատանքի շուկայի վրա: Ի դեպ՝ այդ ազդեցությունը երկակի է և գնահատվում է ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Այն, որ զանգվածային արտագաղթը մարդկային ռեսուրսների անվերադարձ կորուստ է առանց այդ էլ սակավաթիվ բնակչությամբ հանրապետության համար, և որն իր ծավալներով 1990-ականներին սպառնում էր ընդհուպ ՀՀ տնտեսական անվտանգությանը, երկմտանք չի հարուցում: Հատկապես գյուղական վայրերից արտագաղթը աճել է՝ վտանգելով դրանց տնտեսական զարգացումը: Այս խնդիրն առավել լուրջ է սահմանամերձ գյուղերի համար, որտեղ բնակչության ծերացումը աննախադեպ չափերի է հասնում, և եթե պետությունը շտապ միջոցներ չձեռնարկի, ոչ հեռու ապագայում բազմաթիվ գյուղեր կամայանան՝ լուրջ խնդիրներ առաջացնելով երկրի անվտանգության ու սահմանների պահպանության առումով: 1991 թ. ի վեր երկիրը լքել են մի քանի հարյուր հազար գյուղաբնակներ, իսկ յուրաքանչյուր 10-րդը սեզոնային աշխատանքային միգրանտ է⁴: Միգրանտների կազմում գերակշռում է բնակչության առավել ձկուն, արագ հարմարվող և նորամուծական փոփոխությունների հանդեպ ընկալունակ հատվածը կազմող երիտասարդ և միջին տարիքի անձանց տեսակարար կշիռը, ովքեր գտնվում են վերարտադրողական և աշխատանքային ծաղկուն տարիքում: Ըստ ԱՄԿ 2009 թ. հետազոտության արդյունքների՝ միգրանտների ավելի քան 80%-ը պատկանում են 25–55 տարիքային խմբին, որում առավել երիտասարդ հատվածը՝ 26–35 տարիքային խումբը, ամենամեծ մասնաբաժինն ունի ընդհանուրի մեջ (30%)⁵: Հիմնականում դրանով էլ պայմանավորված են հանրապետություն-

¹ Տե՛ս Վիճակագրության նախարարություն, ՏԱՄԻՍ – 1999:

² Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Մաս 1, Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008–2012 թթ., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 19:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 23:

⁴ Տե՛ս Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2009 թ., էջ 87:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

ուն մ ընթացող ժողովրդագրական անբարենպաստ փոփոխությունները՝ ծնելիության գործակցի նվազումը և բնակչության ծերացումը: 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ ծնելիության ընդհանուր գործակիցը 1 կնոջ հաշվով կազմել է 1.5 երեխա, այն դեպքում, երբ բնակչության պարզ վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է 2.1 երեխա⁶: ՀՀ-ում 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը 11.1% է, իսկ ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե այս ցուցանիշը 7%-ից բարձր է, բնակչությունը համարվում է ծերացած⁷:

Հանրապետությունում աշխատատեղերի պակասը, անկախ դրանց կայուն կամ լավ վարձատրվող լինելու կամ չլինելու հանգամանքից, իրավամբ առաջնահերթություն է ստանում ոչ միայն աշխատանքային, այլ նաև անվերադարձ միգրացիայի դրդապատճառների քննարկման շրջանակներում: Վերջինս, տնտեսական դրդապատճառներից բացի, ունի նաև այլ խորքային պատճառներ, ինչպիսիք են հասարակությունում առկա սոցիալական անարդարությունը, իրավահավասարության բացակայությունը, ապագայի հանդեպ անվստահությունը, անպաշտպանվածության զգացողությունը, ինքնադրսևորվելու և զարգանալու հնարավորությունների սահմանափակությունը և այլն: Այդ են վկայում նաև միգրացիայի մնացորդի վրա զբաղվածության մակարդակի, միջին իրական անվանական աշխատավարձի, բնակչության դրամական եկամուտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ ազդեցության չափը գնահատող բազմագործոն տնտեսաչափական մոդելի արդյունքները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ջբաղվածության մակարդակի, միջին ամսական իրական աշխատավարձի, բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների և ՀՆԱ ազդեցությունը միգրացիայի մնացորդի վրա 1995–2012 թթ.

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ սխալ	T վիճակագիր	P> t
Ջբաղվածության մակարդակ (%)	-0,1924	0,05542	-3,4712	0,0041
Միջին ամսական իրական աշխատավարձ (հազ. դրամ)	-0,0001	0,00006	-1,4829	0,1619
Դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով (հազ. դրամ)	0,00001	0,00012	0,0331	0,9741
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (հազ. դրամ)	0,000004	0,000004	0,7176	0,4857
Հաստատուն	19.99	3.08210	3.4859	0.0003
<p>Դիտումների թիվը՝ 18 $R^2 = 0,84$ Ուղղված $R^2 = 0,79$ Բազմակի $R = 0,92$ Ստանդարտ սխալ = 1,04 F վիճակ. = 17,25 F վիճակ. նշանակ. = 0,00004</p>				

⁶ Տե՛ս <http://www.unfpa.am/demographic-situation>

⁷ Տե՛ս նույն տեղը:

Տնտեսաչափական մոդելի վերջնական գնահատված տեսքն այսպիսին է՝

$$Y = 19.99 - 0,1924X_1 - 0,0001X_2 + 0,00001X_3 + 0,000004 X_4,$$

որտեղ՝ կախյալ փոփոխականը՝ Y-ը, միգրացիայի մնացորդն է, անկախ փոփոխականները՝ X₁-ը՝ զբաղվածության մակարդակը, X₂-ը՝ միջին ամսական իրական աշխատավարձը, X₃-ը՝ բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները, X₄-ը՝ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն:

Մոդելը բավական որակյալ է. դետերմինացիայի գործակիցը՝ R²-ն, ստացվել է 0.84, այսինքն՝ ընտրված փոփոխականները լավ են բացատրում կախյալ փոփոխականի տատանումները: Ըստ մոդելի արդյունքների՝ միգրացիայի մնացորդի վրա զբաղվածության մակարդակն ազդում է 0,1924 գործակցով՝ հակադարձ կախվածությամբ: Միգրացիայի մնացորդի վրա բացասական ազդեցություն է թողնում նաև միջին ամսական իրական աշխատավարձի մեծությունը՝ -0,0001 գործակցով: Ինչպես տեսնում ենք, իրական աշխատավարձի մեծության ազդեցությունը բավականին փոքր է, որը կարելի է բացատրել՝

1. բնակչության եկամուտների մեջ ոչ աշխատանքային մուտքերի զգալի մասնաբաժնով,
2. միջին աշխատավարձի ցածր մակարդակով, որը բավարար չէ բարեկեցության, միջազգայնորեն ընդունելի միջին պայմանների ապահովման համար, ուստի նաև ոչ գրավիչ՝ տնտեսական խնդիրներ լուծելու առումով:

Հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս միգրացիայի մնացորդի դրական կախվածությունը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող դրամական եկամուտներից և ՀՆԱ-ից, որը, սակայն, չափազանց փոքր է. զգայունության գործակիցները համապատասխանաբար հավասար են՝ 0,00001 և 0.000004: Ենթադրվում էր, որ բնակչության կենսամակարդակի աճը, որն արտահայտվում է դիտարկվող երկու ցուցանիշների միջոցով, պետք է նվազեցնի արտագաղթը, մինչդեռ մոդելի արդյունքները հակառակն են փաստում: Սա կարող է բացատրվել հետևյալ հանգամանքներով՝

1. Չնայած վերջին տասնամյակում ՀՀ-ում գրանցվող կենսամակարդակի աճին, այն դեռևս անհամեմատելիորեն ցածր է միգրանտներ ընդունող երկրների կենսամակարդակից, ուստի բավարար չէ տնտեսական դրդապատճառներով արտագաղթողների արտահոսքը նվազեցնելու համար:
2. Միգրացիայի՝ տնտեսական զարգացման վրա ունեցած մեծ ազդեցությամբ. տրանսֆերտները զգալի մասնաբաժին են կազմում տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտների կազմում՝ նպաստելով սպառման, հետևաբար՝ ամբողջական պահանջարկի աճին: Արդյունքում՝ կենսամակարդակի աճը, մեծապես պայմանավորված լինելով նաև միգրացիայի աճով, բացասաբար չի ազդում դրա վրա: Այլ կերպ ասած՝ տնային տնտեսությունների զգալի հատվածը միգրացիան դիտում է որպես հավելյալ եկամտի աղբյուր, և, վերջինիս ավելացմանը զուգահեռ, միգրանտների քանակն ավելանում է:

Ըստ մոդելի արդյունքների՝ դիտարկվող չորս գործոններից միգրացիայի մնացորդի վրա ամենամեծ ազդեցությունն ունի զբաղվածության մակարդակը: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ զբաղվածությունը,

տնտեսական բովանդակությունից բացի, ունի նաև սոցիալական ու բարոյա-հոգեբանական բովանդակություն. այսպես օրինակ՝ անձի ինքնադրսևորվելու և ինքնագարգանալու հնարավորությունը, պահանջված և կայացած լինելու զգացողությունը և այլն: Գրեթե նույն տրամաբանությամբ կարելի է բացատրել նաև իրական աշխատավարձից միգրացիայի մնացորդի բացասական, իսկ միայն զուտ տնտեսական բովանդակությամբ ցուցանիշներից՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող դրամական եկամուտներից և ՀՆԱ-ից դրական կախվածության պատճառները. մարդու համար շատ կարևոր է իր և իր ընտանիքի պահանջմունքները ոչ թե ընդհանրապես բավարարելու (օրինակ՝ մասնավոր ու սոցիալական տրանսֆերտների հաշվին), այլ հենց սեփական աշխատանքով հոգալու ունակությունը, որի հնարավորությունը տալիս է իրական աշխատավարձը: Փաստորեն, արտագաղթը զուտ տնտեսական գործոններով չի թելադրված: Ոչ տնտեսական գործոնները քանակապես չափելի չեն, և մոդելում դրանք ներառել հնարավոր չէ, սակայն, ինչպես տեսանք, միգրացիայի մնացորդի վրա մեր կողմից ընտրված չորս գործոններից բացասաբար են ազդում երկուսը, որոնք, բացի տնտեսականից, ունեն նաև սոցիալական ու հասարակական բովանդակություն, իսկ միայն զուտ տնտեսական բովանդակություն ունեցողները միգրացիայի մնացորդի վրա չնչին ազդեցություն ունեն, այն էլ՝ դրական: Այսպիսով՝ մոդելի արդյունքների վերլուծությունը մեկ անգամ ևս ապացուցում է.

1. բնակչության արտագաղթի հիմնական պատճառը հանրապետությունում զբաղվածության ցածր մակարդակն է,
2. արտագաղթը պայմանավորված չէ սոսկ տնտեսական խնդիրներով. այն ունի ավելի խորքային դրդապատճառներ, ինչպիսիք են անձի ինքնադրսևորվելու և զարգանալու, արժանապատիվ ապրելու և սեփական խնդիրներն իր ուժերով լուծելու հնարավորությունները:

Այսօր ՀՀ-ում, անվերադարձ միգրացիայից բացի, մեծ չափերի են հասնում նաև աշխատանքային միգրացիայի ծավալները: Վերջին տասնամյակում ՀՀ արտաքին միգրացիոն հոսքերի գերակշիռ մասը բաժին է ընկել ժամանակավոր աշխատանքային միգրանտներին⁸, ովքեր հիմնականում մեկնել են Ռուսաստանի Դաշնություն: Աշխատանքային միգրացիայի մեծ ծավալն աներկբայորեն վկայում է դրա և գործազրկության մակարդակների միջև ուղիղ կապի մասին: ՀՀ աշխատանքի շուկան պարզապես չի կարողանում կլանել առկա աշխատուժը, ուստի դրա ավելցուկային մասը հոսում է դուրս՝ ինչ-որ չափով մեղմացնելով աշխատաշուկայում տիրող լարվածությունը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գործազուրկները տնտեսության համար զուտ կորուստ չեն. տնտեսության զարգացումը և կառուցվածքային փոփոխությունները մեծացնում են ապագայում ավելցուկային աշխատուժի օգտագործման հավանականությունը:

Միգրանտների կազմում մեծ է որակյալ աշխատուժի մասնաբաժինը: Գաղտնիք չէ, որ միջազգային աշխատանքի շուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկ կա, ուստի ցածր կենսամակարդակ ունեցող երկրներից (ինչպիսին է նաև Հայաստանը), որտեղ բարձրակարգ մասնագետները մնալու և աշխատելու խթաններ չունեն, տեղի է ունենում «ուղեղների արտահոսք»: Այսօր հայաստանյան ընկերությունների կողմից առաջարկվող աշխատանքային պայմանները, մասնավորապես՝ վար-

⁸ Տե՛ս Միգրացիան և զարգացումը, Եր., 2009, էջ 8:

ծատրության համակարգը, ինքնադրսևորվելու և կատարելագործվելու հնարավորությունները աշխատուժի միջազգային շուկայում մրցունակ չեն, որի պատճառով էլ ինչպես զարգացած երկրների տնտեսությունները, այնպես էլ ռուսաստանյան արագ զարգացող տնտեսությունը հեշտորեն կլանում են ՀՀ բարձր որակավորում ունեցող աշխատուժը: Հայաստանը զգալիորեն տուժում է ուղեղների արտահոսքի մեծ ծավալներից: Այս գործընթացը կարող է ծանր վնաս պատճառել մեր երկրի համար ռազմավարական կարևորություն ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին: Եվ, ընդհանրապես, լավ կրթված, բարձր որակավորում ունեցող աշխատողների արտահոսքը դեպի այլ երկրներ մեծ ազդեցություն է ունեցել ՀՀ աշխատուժի մասնագիտական և որակական կառուցվածքի, մարդկային կապիտալի կուտակման տեմպերի վրա: Մարդկային կապիտալի կուտակումը, բացի զուտ ֆինանսական ծախսերից, պահանջում է նաև հասարակության մեջ տարիներով ձևավորված մշակույթ, համապատասխան հիմքեր և միջավայր, ուստի, այս տեսանկյունից, որակյալ աշխատուժի միգրացիան մեծ կորուստ է սակավաթիվ ռեսուրսներով հանրապետության համար, որն իր զարգացման տեսլականը կապում է գիտելիքահենք տնտեսության ստեղծման հետ: Ներկա պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման առաջնային և, կարելի է ասել՝ առանցքային ռեսուրսը մարդկային կապիտալն է, որի զարգացմամբ և շեշտադրմամբ պետք է կառուցվի մրցունակ տնտեսություն:

Մյուս կողմից՝ ՀՀ որակյալ աշխատուժի միգրացիան ստեղծել է յուրահատուկ արժեք ունեցող, սակայն թաքնված ռեսուրս՝ սփյուռքի մարդկային կապիտալը՝ գրեթե բոլոր զարգացած երկրներում և ամենատարբեր գիտական և գործարար ոլորտներում: Ներկայումս այս գործոնի օգտագործումը բավականին հեռու է դրա ներուժային մակարդակից, ուստի պետական նպատակաուղղված քաղաքականությամբ անհրաժեշտ է սփյուռքի հնարավորությունները գործադրել որպես տնտեսության զարգացման ուժ՝ խթանելով գիտելիքների և տեխնոլոգիաների ներհոսքը: Դրան մեծապես նպաստում են նաև հայրենիք վերադարձող միգրանտները, ովքեր ներմուծում են արտասահմանում կուտակված իրենց փորձը, հմտություններն ու առաջավոր տեխնոլոգիաները՝ բարելավելով ՀՀ աշխատուժի որակական հատկանիշները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ վերադարձողների մրցունակության և վարձատրության մակարդակներն աշխատաշուկայում, ընդհանուր առմամբ, բավականին բարձր են, սակայն գործարարության ձևավորված միջավայրը այնքան էլ բարենպաստ չէ հնարավոր ներդրումների իրականացման, բարձր տեխնոլոգիաների և արտադրական միջոցների ներկրման համար: Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ 2010 թվականի ՄՀԶ-ում Հայաստանի մրցակցային թերություններից և թույլ կողմերից առաջնային են համարվել մրցակցային միջավայրի գործոնները⁹: Առկա խոչընդոտների վերացումը կմեծացնի ՀՀ-ում նորարարությունների ներդրման, տնտեսական առաջընթացի խթանման, մրցունակության ապահովման հավանականությունը:

Աշխատանքային միգրացիան, անտարակույս, նպաստում է երկրի տրնտեսական զարգացմանը, քանի որ ապահովում է մասնավոր դրամական փոխանցումների մեծ հոսք հանրապետություն, որը, հատկապես 1990-ականներին, ՀՀ տնտեսության համար կենսական նշանակություն ունեցավ աղքատ

⁹ Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց – 2010. «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, էջ 36:

տության կրճատման գործում: Այսօր ևս դրամական փոխանցումներն էականորեն ազդում են ՀՀ տնտեսական աճի և, ընդհանրապես, մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման վրա, առանցքային նշանակություն ունեն բնակչության կենսամակարդակի բարձրացման առումով: Դրանք ավելացնում են ինչպես ներքին սպառումը, ներդրումները, այնպես էլ ֆիզիկական և մարդկային կապիտալի կուտակման տեմպերը, համարվում են արտարժույթի ձեռքբերման կարևոր աղբյուր, որը հետագայում օգտագործվում է ներմուծման կամ պետության արտաքին պարտքի մարման նպատակով: Սեզոնային և մշտական միգրանտների կողմից իրենց ընտանիքներին ուղարկվող դրամական փոխանցումները միայն 2005–2008 թթ. հասել են 10 320 602 հազար ԱՄՆ դոլար: Ընդ որում, 2008-ին, 2005 թ. համեմատությամբ, դրանք ավելի քան 2 անգամ աճել են՝ կազմելով ՀՆԱ մոտ 18%-ը: Դրամական փոխանցումները տարեցտարի շարունակաբար ավելացել են, բացառությամբ 2009-ի՝ ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, երբ նախորդ տարվա համեմատությամբ մուտքերը կրճատվել են 31.3%-ով՝ կազմելով 1 124 119 հազար ԱՄՆ դոլար: 2012 թ. ՀՀ ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով կատարված զուտ փոխանցումները, ըստ ՀՀ ԿԲ տվյալների, նախորդ տարվա համեմատությամբ աճել են 9.1%-ով և կազմել 1 687 263 հազ. ԱՄՆ դոլար: Դրանց 95.6%-ը Ռուսաստանյան Դաշնությունից են, 4%-ը՝ ԱՄՆ-ից, մնացյալը՝ այլ երկրներից¹⁰: Դրամական մասնավոր փոխանցումների ծավալը 2013-ին կազմել է 1 869 788 հազար ԱՄՆ դոլար¹¹ կամ նույն թվականի ՀՆԱ մոտ 19%-ը: Սակայն, եթե հաշվի առնենք, որ մեծամասնությունն իր հարազատներին գումարներ է փոխանցում ոչ պաշտոնական խողովակներով, ապա վստահորեն կարելի է ասել, որ դրանց ծավալներն իրականում ավելին են: Այսինքն՝ Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումների դերը երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարելավման գործում շատ ավելի մեծ է, քան կարելի է ենթադրել:

Հետազոտությունները ցույց են տալիս՝ թեև տնային տնտեսությունների ցածր եկամուտների պատճառով այդ գումարների մեծ մասն ուղղվում է առաջնային պահանջումների բավարարմանը, սակայն դրանց դերը զգալի է նաև կրթական ու առողջապահական խնդիրների լուծման գործում՝ մեծապես նպաստելով մարդկային կապիտալի կուտակմանը: Տրանսֆերտների հաշվին սպառման ավելացումը բազմարկչի էֆեկտով մեծացնում է եկամուտը՝ ազդելով տնտեսական աճի ինչպես անցումային դինամիկայի, այնպես էլ երկարաժամկետ կայուն իրավիճակի վրա: Մյուս կողմից՝ փոխանցված գումարները հիմնականում արագ կանխիկացվելու և սպառվելու պատճառով բանկային համակարգում հետագա ներգրավման առումով մեծ հնարավորություններ չեն թողնում: Միջինում դրամական փոխանցումների 82%-ը ծախսվում է ընթացիկ կարիքների բավարարման, և մոտ 8%-ը խնայվում է տարբեր նպատակներով¹²: Ամենայն հավանականությամբ, աշխատանքային միգրացիան ապագայում ևս կշարունակվի, քանի որ գործազրկության մակարդակը հանրապետությունում դեռևս բավականին բարձր է, գործարարության զարգացման հնարավորությունները՝ սահմանափակ, իսկ այս խնդիր-

¹⁰ Տե՛ս http://www.smsmta.am/?menu_id=130

¹¹ Տե՛ս http://www.smsmta.am/?menu_id=130

¹² Տե՛ս Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2009, էջ 28:

ների լուծմանն ուղղված պետական քաղաքականությունը՝ ակնհայտորեն անարդյունավետ, ուստի կարելի է ենթադրել, որ դրամական փոխանցումները մոտ ապագայում ևս ՀՀ բնակչության տնօրինվող եկամտի զգալի մասը կկազմեն: Ըստ այդմ՝ բանկային համակարգը պետք է ճկունություն դրսևորի և նոր, շահագրգռող մեխանիզմներ մշակի ինչպես փոխանցումների մի մասի ավանդադրման, այնպես էլ միգրանտների խնայողությունների ներգրավման նպատակով, որոնք հետագայում կարող են ներդրումների աղբյուր դառնալ:

Այսպիսով՝ ՀՀ բնակչության միգրացիան առայժմ զգալի դրական դեր է կատարում՝ տնային տնտեսություններին հնարավորություն տալով ապահովելու բավարար կենսամակարդակ, իսկ պետությանը՝ տնտեսական աճի դրական ցուցանիշներ: Այնուամենայնիվ, դրական ազդեցությամբ հանդերձ, բնակչության միգրացիան իր սոցիալական, ժողովրդագրական հետևանքներով, ինչպես նաև ազգային անվտանգության առումներով ավելի շատ բացասական է, ուստի պետությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկի ոչ միայն միգրանտների հոսքը նվազեցնելու, այլ նաև վերադարձն ակտիվացնելու ուղղությամբ: Հասունացել է երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության և ռազմավարության մեջ միգրացիայի բաղադրիչը պատշաճ կերպով ներառելու հրամայականը: Անհրաժեշտ է կենտրոնական դերակատարում հատկացնել միգրացիոն քաղաքականությանը՝ ապահովելով դրա բաղադրիչների օգտագործումը երկրի զարգացման համար կարևորագույն՝ կենսամակարդակի բարձրացման, բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորման, գյուղի զարգացման, երկրի անվտանգության, օրենքի գերակայության ապահովման և այլ խնդիրներ լուծելիս: Չնայած 2012 թ. մշակվել է միգրացիոն ռազմավարություն, սակայն ՀՀ Կառավարությունը գործնականում լուրջ անելիքներ ունի ընդունող երկրներում աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության, միջպետական մակարդակով նրանց գործունեության կարգավորման, հանրապետության համար այդքան անհրաժեշտ բարձր որակավորված գիտնականների և մասնագետների վերադարձին նպաստող միջավայրի ստեղծման ճանապարհին: Եվ չմոռանանք, որ տնտեսականից ոչ պակաս կարևոր են նաև սոցիալական ու բարոյական խնդիրները, ուստի միայն իրավահավասար ու դեմոկրատական պետության կառուցմամբ է հնարավոր ապահովել արժանապատիվ կյանքի պայմաններ, և մարդիկ ստիպված չեն լինի լքելու իրենց հայրենիքը:

МЕЛАНЯ КАРАГԵՅՅԱՆ

Ассистент кафедры „Макроэкономики“ АГЭУ

Причины и социально-экономические последствия миграции в РА.- Начиная с переходного периода, Армения пережила несколько миграционных потоков, которые будучи обусловленными конкретными социально-экономическими условиями, отличаются друг от друга по содержанию и объёму. В последнее десятилетие, в связи с существующими в республике проблемами занятости основную часть внешней миграции составляли временные трудовые мигранты. Однако кроме чисто экономических причин, миграция имеет также более глубокие, не экономические основы. Влияние миграции на экономику двойственно и имеет как отрицательные, так и положительные аспекты. Так, с одной стороны она стимулирует экономический рост и поднимает уровень жизни населения, а с другой стороны приводит к неблагоприятным социальным и демографическим изменениям.

MELANYA GHARAGYOZYAN

Assistant at the Chair of
„Macroeconomics“ at ASUE

The Causes and Socio-economic Consequences of Migration in the RA.- Since the transition period, the Republic of Armenia has experienced several flows of migration that are caused by specific socio-economic conditions, which differ from each other in content and coverage. In the last decade, due to the existing problems of employment in the country the main part of labor migration consisted of temporary labor migrants. However, in addition to purely economic reasons, migration has deeper motivations rather than economic fundamentals. The impact of migration on the economy is of dual nature, having both negative and positive aspects. Thus, on the one hand it stimulates economic growth and raises the standard of living, and on the other hand leads to unfavorable social and demographic changes.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՂՀ Կառավարության աշխատակազմի սոցիալ-տնտեսական վարչության առաջատար մասնագետ,
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ասպիրանտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԶԱՓՄԱՆ ԱՅԼՈՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տնտեսական աճը տնտեսության չափերի զուտ քանակական ավելացումը է։ Որպես շատ ավելի բազմակողմ հասկացություն է։ ՀՆԱ-ով տնտեսական աճի չափումը մի շարք խնդիրների հետ է կապված, որոնց լուծման նպատակով տարիներ ի վեր ձեռնարկվում են միջոցառումներ առանձին տնտեսագետների, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից։ Որոշ մոտեցումներ ամբողջապես ժխտում են ՀՆԱ հաշվարկման անհրաժեշտությունը։ Սակայն մինչև ՀՆԱ-ից հրաժարվելը ու նոր ցուցանիշով դա փոխարինելը պետք է հաշվի առնել, որ մոտ հարյուր տարի է, ինչ վիճակագիրները հաշվարկում են ՀՆԱ-ն, և ավելի քան հարյուր տարի է պահանջվել այս ցուցանիշն ամրագրելու համար։ ՀՆԱ-ն որևէ այլ ցուցանիշով փոխարինելու համար կարող են պահանջվել ևս տասնյակ տարիներ։ Ուստի առաջարկվում է համարել ՀՆԱ-ն։ Այդ առումով, կարելի է առանձնացնել 3 խոշոր միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունները։ Միավորված ազգերի կազմակերպություն (Վիճակագրության հանձնաժողով, Համաշխարհային բանկի խումբ), Եվրոմիություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն։

Հիմնաբառեր. ՀՆԱ, տնտեսական աճ, զարգացում, կայունություն, բարեկեցության չափում, երջանկություն, էկոլոգատնտեսական հաշիվների համակարգ, կայուն զարգացման ցուցիչներ, ճշգրտված զուտ խնայողություններ, նարդկային ներուժի զարգացման ցուցիչ

Ամբողջ աշխարհում, որպես տնտեսության գործունեության և բարեկեցության չափման, ինչպես նաև տնտեսական քաղաքականության հաջողությունների գնահատման ընդհանրացված, միջազգայնորեն ընդունված ցու-

ցանիշ, տնտեսական վերլուծաբանների, քաղաքական գործիչների, գործարար շրջանակների կողմից օգտագործվում են ՀՆԱ և մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշները: ՀՆԱ փոփոխությունն օգտագործվում է երկրի տնտեսական աճը չափելու համար, հետևապես՝ ՀՆԱ ավելացումը պետությունների գերխնդիրն ու գերնպատակն է համարվում:

Սակայն երբեմն չափման ճիշտ ցուցանիշ ընտրելուց առավել կարևոր է համապատասխան օբյեկտի ճիշտ սահմանումը: Սա հատկապես վերաբերում է տնտեսական աճին և դրա չափման ցուցանիշին՝ ՀՆԱ-ին: Տնտեսական աճը տնտեսության չափերի զուտ քանակական ավելացումը չէ. դա շատ ավելի բազմակողմ հասկացություն է: Տնտեսական աճ ասելով պետք է հասկանալ այնպիսի աճ, որն ուղեկցվում է ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացմամբ, քաղաքացիների բացարձակ մեծամասնության կենսամակարդակի աճով, և որը չի վտանգում գալիք սերունդների ապահով և բարեկեցիկ ապագան: Այս ամենը միայն ՀՆԱ-ով չի արտահայտվում, քանի որ ի սկզբանե դա տնտեսության նեղ քանակական չափման միավոր է:

ՀՆԱ-ով տնտեսական աճի չափումն ունի որոշ խնդիրներ: Նախևառաջ՝ ՀՆԱ-ն ամբողջապես չի ընդգրկում տնտեսությունը, մասնավորապես՝ արտադրական բոլոր հարաբերությունները, որոնք չափման ենթարկելն այդքան էլ հեշտ չէ, բոլոր տնտեսական գործունեությունները, որոնց աճով պայմանավորվում է ՀՆԱ աճը, որ բնորոշ են տնտեսության իրական աճին:

Ս. Կուզնեցի ժամանակներից ի վեր տնտեսագետներն իրենց աշխատանքները կառուցում են՝ հիմք ընդունելով տնտեսության քանակական չափման վերաբերյալ նրա թողած ժառանգությունը, միևնույն ժամանակ զարգացնելով այն: Այսօր զարգացող տեխնոլոգիաները թույլ են տալիս տնտեսագետներին նոր տեսակի տվյալներ հավաքել և օգտագործել, դա անել ավելի արագ և ավելի մեծ ճշգրտությամբ, քան Կուզնեցի ժամանակներում էր հնարավոր: Հետևաբար՝ մեր ազգային վիճակագրական ծառայությունները կարող են իրենց ջանքերը և հնարավորություններն ուղղել տնտեսության չափման, տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման նոր սկզբունքների զարգացմանը:

Ակնհայտ է դառնում մի փաստ. պետության ջանքերը պետք է ուղղվեն ընդհանուր ռազմավարության մշակմանը, որը կհամատեղի աճն ու զարգացումը և կհենվի երեք սյուների վրա՝ տնտեսության քանակական աճ, սոցիալական զարգացում և շրջակա միջավայրի պաշտպանություն:

Միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների և տարբեր տնտեսագետների կողմից քայլեր են արվում ՀՆԱ ցուցանիշը վերափոխելու, դա այլ ցուցանիշներով համալրելու կամ առհասարակ դրանից հրաժարվելու ուղղությամբ:

Այսպես, ՀՆԱ չափման և օգտագործման հետ կապված խնդիրներին լուծում տալու հրամայականով պայմանավորված՝ մշակվող նոր ցուցանիշները և ցուցանիշների խմբերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ¹.

1. ՀՆԱ-ն ճշգրտող ցուցիչներ: Այս ցուցիչների հիմքում օգտագործվում են ՄԱԿ-ի Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) և ՀՆԱ հաշիվները՝ ավելացնելով կամ հանելով որոշ տարրեր: Դրանցից են կայուն

¹ Տե՛ս Costanza R., Hart M., Posner S., Talberth J., Beyond GDP: The Need for New Measures of Progress, Boston, 2009, էջ 10:

տնտեսական բարեկեցության ցուցիչը (Index of Sustainable Economic Welfare - ISEW), իրական առաջընթացի ցուցանիշը (the Genuine Progress Indicator - GPI), «կանաչ» ՀՆԱ-ն (Green GDP) և իրական հարստությունը (Genuine Wealth):

2. Ցուցիչներ, որոնք չեն ընդգրկում ՀՆԱ-ն, քանի որ տնտեսական գործունեությունը չեն չափում: Դրանք անմիջականորեն չափում են շրջակա միջավայրի հետ կապված սոցիալական գործունեությունները, բարեկեցությունը: Այդ ցուցանիշներից են էկոլոգիական հետքը (Ecological Footprint - EP), սուբյեկտիվ բարեկեցությունը (Subjective Well-Being - SWB), համախառն ազգային երջանկությունը (Gross National Happiness - GNH):
3. Համակցված ցուցիչներ, որոնք ներառում են ՀՆԱ-ն: Սրանք միավորում են ՀՆԱ-ն կամ ՀՆԱ ձգարտված տարրերակները և որոշ ՀՆԱ հաշիվներ չափարունակող էկոլոգիական կամ սոցիալական ցուցիչներ՝ մեկ ընդհանուր ցուցիչում: Դրանցից են մարդկային ներուժի զարգացման ցուցիչը (Human Development Index - HDI), «կենդանի մոլորակ» զեկույցը (Living Planet Report), երջանկության միջազգային ցուցիչը (Happy Planet Index - HPI):
4. Ցուցանիշների հավաքածու: Այսպես՝ եկամտի հավելյալ հաշիվները (National income Satellite Accounts), կյանքի որակի Կալվերտ-Հենդերսոնի ցուցանիշները (The Calvert-Henderson Quality of Life Indicators), հազարամյակի զարգացման նպատակները և ցուցանիշները (Millennium Development Goals and Indicators):

Թվարկված ցուցանիշներն ունեն մի շարք ընդհանուր գծեր. բոլորն էլ միտված են չափելու աճի կայունությունը, հաշվի առնելու շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների շահագործումը և կարևորում են ոչ միայն զուտ տնտեսության չափերի աճը, այլև այն գործունեությունների բնույթը, որոնց հաշվին դա ապահովվել է: Դրանք դիտարկում են ՀՆԱ թերությունները, մատնանշում առաջընթացի և աճի գնահատման նոր միջոցներով լրացնելու ուղղությունը:

ՀՆԱ ցուցանիշի սահմանափակումներին և թերություններին առաջին անգամ անդրադարձել են Ուիլյամ Նորդհաուսը և Ջեյմս Թոբինը 1960-ական թվականներին: Նրանց նպատակն էր ստեղծել տնտեսական բարեկեցության և կենսամակարդակի գնահատման ավելի ձգարիտ ցուցանիշ: 1972 թ. իրենց համատեղ աշխատության մեջ տնտեսագետներն առաջարկեցին տնտեսական բարեկեցության չափման ցուցանիշը (Measure of Economic Welfare – MEW), որը ներկայացնում էր ՀՆԱ-ն՝ 6 ձգարտումներով: Մշակված ցուցանիշն ուներ սպառման ուղղվածություն՝ ի տարբերություն ՀՆԱ արտադրության ուղղվածության: Կատարված ձգարտումները վերաբերում էին ՀՆԱ ծախսերի վերադասակարգմանը, վերջնական սպառման, ներդրումների և միջանկյալ սպառման, ազատ ժամանակի, տնային տնտեսուհիների կատարած աշխատանքի և ոչ շուկայական ապրանքների ու ծառայությունների՝ ցուցանիշի հաշվարկներում ընդգրկմանը, ուրբանիզացիայի ու գերբնակեցվածության որոշ բացասական կողմերի ձգարտումներին: Ամենակարևոր ուղղումը վերաբերում էր ազատ ժամանակին: Նրանք նկատեցին, որ ազատ ժամանակը արժեքավոր է, բայց դա ՀՆԱ-ում չի արտացոլվում: Եթե մարդիկ

աշխատում են շաբաթական 60 ժամ՝ 40 ժամի փոխարեն, ապա ՀՆԱ-ն աճում է, սակայն, հնարավոր է, որ մարդիկ իրենց ավելի դժգոհ ու դժբախտ զգան:

Ստացված ցուցանիշը, մեկ շնչի հաշվով, աճում էր ավելի դանդաղ, քան մեկ շնչի հաշվով զուտ ազգային արդյունքը²:

Այս ցուցանիշը լայն կիրառություն չստացավ, սակայն մինչ օրս Նորդ-հաուսի և Թոբինի նախածեռնությունը շարունակվում է համաշխարհային տնտեսության շատ ազդեցիկ կազմակերպությունների ու առանձին պետությունների կողմից. անընդհատ քայլեր են կատարվում տնտեսության իրական բարեկեցության, իրական առաջադիմության չափման առավել կատարյալ գործիքների ստեղծման և կատարելագործման նպատակով:

Վերջին տարիներին բարեկեցության և առաջընթացի չափման հետաքրքիր առաջարկներ են մշակվել շատ ազգային վիճակագրական ծառայությունների կողմից, ինչպես օրինակ՝ Ավստրալիայում (2002 թ.), Ավստրիայում (2012 թ.), Ֆրանսիայում (2009 թ.), Իտալիայում (2011 թ.), Պորտուգալիայում (2012 թ.), Միացյալ Թագավորությունում (2010 թ.):

Կան մոտեցումներ, որոնք լիովին ժխտում են ՀՆԱ հաշվարկման անհրաժեշտությունը՝ առաջարկելով ընդհանրապես հրաժարվել դրանից:

Սակայն նշենք, որ մոտ հարյուր տարի է, ինչ վիճակագիրները հաշվարկում են ՀՆԱ-ն: ՀՆԱ-ն որևէ այլ ցուցանիշով փոխարինելու համար կարող են պահանջվել ևս տասնյակ տարիներ:

Այլ է ՀՆԱ ցուցանիշն ուրիշ ցուցանիշներով համալրելու խնդիրը՝ երկրի տնտեսական վիճակի գնահատման ավելի իրական ցուցանիշ ունենալու նպատակով: Այս առումով, պետք է փաստել 3 խոշոր միջազգային կազմակերպությունների աշխատանքը. Միավորված ազգերի կազմակերպություն (Վիճակագրության հանձնաժողով, Համաշխարհային բանկի խումբ), Եվրոմիություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

1980-ականների վերջին էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ աճող ուշադրությունը, շրջակա միջավայրի պաշտպանության և կայուն զարգացման շուրջ ծավալվող բանավեճերն ու քննարկումները հիմք տվեցին մտածելու այնպիսի միջազգային հաշիվների համակարգի ստեղծման մասին, որը կմիավորի էկոլոգիական և տնտեսական հաշիվները, կսահմանի միջազգային չափորոշիչներ միջերկրային համադրելի էկոլոգատնտեսական ազգային հաշիվների համար: Այսպես ստեղծվեց ՄԱԿ-ի էկոլոգատնտեսական հաշիվների համակարգը (ԷՀՀ՝ System of Environmental-Economic Accounting): ԷՀՀ-ն ցուցանիշների, հասկացությունների և մեթոդաբանության հավաքածու է: Դրա հիմքում նույն Ազգային հաշիվների համակարգի ցուցանիշներն են (ՀՆԱ, խնայողություններ, սպառում և այլն)՝ էկոլոգիական հարթությունում: ԷՀՀ-ում կիրառվում են բնական ռեսուրսների պաշարների և դրանց սպառման գնահատման ցուցանիշը, շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը, ռեսուրսների արտադրողականության և օգտագործման արդյունավետության ցուցանիշը և այլն:

ԷՀՀ համակարգի սկզբունքները, մեթոդաբանությունը և պարզաբանումները հիմք են հանդիսացել ՀՆԱ-ն ճշգրտող և կայուն զարգացման երկու այլ ցուցանիշների ձևավորման համար, որոնցից են «կանաչ» ՀՆԱ-ն, ճշգրտված

² Տե՛ս Nordhaus W., Tobin J., Is Growth Obsolete?, Yale University, 1972, Apendix A., էջ 13:

զուտ խնայողությունները՝ ՃՁԽ (Adjusted Net Savings) կամ, այլ կերպ ասած՝ իրական խնայողությունների ցուցիչը (Genuine Saving Index):

ՃՁԽ ցուցիչը հաշվարկվում և ներկայացվում է Համաշխարհային բանկի կողմից: Դա ստացվում է ստանդարտ ազգային հաշիվների զուտ ազգային խնայողությունների ցուցանիշից՝ մի շարք ճշգրտումներով: Չուտ ազգային խնայողություններին նախ գումարվում են կրթության վրա կատարվող ծախսերը, որոնք ԱՀՀ-ում համարվում են ծախս, իսկ այս հաշիվներում՝ ներդրում մարդկային կապիտալում: Հաջորդ ճշգրտմամբ՝ ստացված ցուցանիշից հանվում է բնական ռեսուրսների սպառման չափը (էներգիայի, հանքային նյութերի, անտառների սպառում): Վերջին քայլով՝ ստացված ցուցանիշից հանվում է աղտոտվածության հետևանքով հասցված վնասի չափը: Քանի որ վերջինս հիմնականում տեղական բնույթ է կրում, հետևաբար՝ դրա հաշվարկումը բարդանում է առանց համապատասխան տվյալների: Իսկ աղտոտվածության համընդհանրական վնասը չափվում է ըստ ածխածնի երկօքսիդի՝ մթնոլորտ արտանետումների չափով:

Եթե համեմատենք բարեկեցությունն ըստ ՀՆԱ և ճշգրտված զուտ խնայողությունների ցուցանիշի, կունենանք հետևյալ պատկերը. 2011 թ. ՀՆԱ ցուցանիշով աշխարհում առաջատարը ԱՄՆ-ն էր՝ 15533,8 մլրդ ԱՄՆ դոլար, ՃՁԽ ցուցանիշով, ըստ 100 երկրի տվյալների, զբաղեցնում էր 11-րդ տեղը՝ 133,8 մլրդ ԱՄՆ դոլար, առաջատարը Չինաստանն էր՝ 2567 մլրդ դոլար, որը ՀՆԱ-ով 2-րդն էր՝ 7321,9 մլրդ ԱՄՆ դոլար: ՀՀ-ն նույն թվականին ՀՆԱ ցուցանիշով աշխարհում զբաղեցնում էր 132-րդ տեղը, իսկ ՃՁԽ-ով 100 երկրից 71-րդն էր՝ 785 մլն ԱՄՆ դոլար, Ռուսաստանի Ղաշնությունը 13-րդն էր՝ 127,5 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ ցուցանիշով՝ 11-րդը՝ 1899 մլրդ ԱՄՆ դոլար³:

Եվրոմիության կողմից մշակվում է կայուն զարգացման ցուցիչների համակարգը (Sustainable Development Indicators - SDI): Կայուն զարգացման ավելի քան 100 ցուցիչներից 12-ն առաջնային են համարվել՝ 10 առանձնացված թեմաների շրջանակում բնութագրելու միության հաջողությունները, կիրառվում են ընդհանուր պատկերացում կազմելու համար՝ արդյո՞ք միությունը առաջ է շարժվում կայուն զարգացման ռազմավարական ուղով: Այդ թեմաները և համապատասխան ցուցանիշներն են՝ սոցիալ-տնտեսական զարգացում (1 շնչի հաշվով իրական ՀՆԱ աճ), կայուն սպառում և արտադրություն (ռեսուրսների արտադրողականություն), մարզինալացում (բնակչության աղքատության ռիսկը), ժողովրդագրական փոփոխություններ (տարեց աշխատողների զբաղվածության մակարդակը), հանրային առողջություն (կյանքի առողջ տարիները և կյանքի տևողությունը՝ ըստ սեռերի), կլիմայական փոփոխություններ և էներգետիկա (ջերմոցային գազերի արտանետումների չափը, վերջնական էներգիայի սպառման մեջ վերականգնվող էներգիայի մասնաբաժինը, առաջնային էներգիայի սպառումը), կայուն տրանսպորտ (տրանսպորտի էներգիայի սպառումը ՀՆԱ-ի նկատմամբ), բնական ռեսուրսներ (թռչունների ընդհանուր ցուցիչ, ձկնորսություն՝ ապահով կենսաբանական սահմաններից դուրս պաշարներից. ԵՄ-ի կողմից կառավարվող ձկան պաշարների վիճակը Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան մասում), համաշխարհային համագործակցություն (զարգացման նպատակով պաշտոնական օգնություն՝ որպես համախառն ազգային եկամտի մասնա-

³ Տե՛ս The World Bank Official Website, Data; data.worldbank.org/indicator:

բաժին), արդյունավետ պետական կառավարում (որևէ գնահատող ցուցանիշ չկա):

Աշխարհում կարևորագույն ցուցանիշներից է համարվում ՄԱԿ-ի մարդկային ներուժի զարգացման ցուցիչը, որը ՀՀ-ի համար ևս հաշվարկվում է: Ցուցիչն առաջին անգամ 1990 թ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրով ներկայացվեց «Մարդկային ներուժի զարգացման զեկույցում»՝ որպես այլընտրանք ազգային առաջընթացի չափման զուտ տնտեսական ցուցանիշների: Այս ցուցիչը մեծ հետաքրքրություն առաջացրեց քաղաքական և ակադեմիական շրջանակներում, եղան նաև քննադատություններ: 2010 թ. «Մարդկային ներուժի զարգացման» 20-րդ հոբեյանական զեկույցում վերանայվեցին և հաշվի առնվեցին դիտողությունները, ու աշխարհին ներկայացվեց նոր՝ կատարելագործված ու վերափոխված ցուցիչ: Այն 3 տարբեր ոլորտներում երկրի ձեռքբերումներն արտացոլող ենթացուցիչների միջին երկրաչափականն է: Այդ ոլորտներն են.

1. *առողջություն և երկարակեցություն*. երկրի ձեռքբերումները չափվում են կյանքի տևողությամբ,
2. *կրթություն*. որպես հիմք են ընդունվում չափահաս բնակչության գրագիտության և միջնակարգ ու բարձրագույն կրթության ցուցանիշները,
3. *կենսամակարդակ*. երկրի հաջողությունները չափվում են ըստ 1 շնչի հաշվով համախառն ազգային եկամտի (ՀԱԵ)՝ գնողունակության համարժեքությամբ (Purchasing Power Parity - PPP):

Յուրաքանչյուր կետի համար սահմանվում են թվային նվազագույն արժեքներ: Առավելագույն է համարվում 1980 թ. մինչև ցուցչի հաշվարկմանը նախորդող տարվա ընթացքում դիտված ամենաբարձր արժեքը: Այնուհետև համապատասխան բանաձևով հաշվարկվում է տվյալ ոլորտի ենթացուցիչը՝ 0-ից 1 միջակայքում: Վերջում հաշվարկվում է երեք ենթացուցիչների միջին երկրաչափականը, որն էլ համարվում է մարդկային ներուժի զարգացման ցուցիչը:

Բարեկեցության՝ ՀՆԱ-ով և մարդկային ներուժի զարգացման ցուցիչով չափման ցուցանիշները տարբեր են: Օրինակ՝ 2012 թ. մարդկային զարգացման ցուցիչով աշխարհում առաջին տեղում Նորվեգիան էր (0,955), որը նույն թվականին ՀՆԱ-ով զբաղեցնում էր 23-րդ տեղը, 2-րդ տեղում Ավստրալիան էր (0,938), իսկ ՀՆԱ-ով 12-րդն էր, ԱՄՆ-ն մարդկային զարգացման ցուցիչով աշխարհում զբաղեցնում էր 3-րդ տեղը (0,937), ՀՆԱ ցուցանիշով 1-ինն էր, Ռուսաստանի Ղաշնությունը 55-րդ տեղում էր (0,788), ՀՆԱ ցուցանիշով 8-րդն էր, ՀՀ-ն, համապատասխանաբար՝ 87-րդ (0,729) և 133-րդ տեղերում էր⁴:

Վերջին տարիներին շատ է խոսվում «երջանկություն» հասկացության և դրա չափման մասին: 2011 թ. ՄԱԿ-ի ընդունած 65/309 բանաձևում նշվում է. «Մարդկային գործունեության հիմքը երջանկության ձգտումն է»: Գիտակցելով դա ու «հասկանալով, որ ՀՆԱ-ն համարժեքորեն չի արտացոլում մարդկանց երջանկությունը և բարեկեցությունը»⁵, ՄԱԿ-ը «երջանկությունը» ընդ-

⁴ Տե՛ս The UN Official Website, Data; data.undp.org:

⁵ Տե՛ս UN, Resolution Adopted by the General Assembly on 19 July 2011, 65/309. Happiness: Towards a Holistic Approach to Development, 109th Plenary Meeting, 19 July 2011, էջ 1:

գրկեց համաշխարհային զարգացման օրակարգի առաջնահերթությունների շարքում:

Սա նաև գիտական հիմք ունի: Շատ վաղուց տնտեսագիտական գրականության մեջ շրջանառվում էր «երջանկություն» հասկացությունը: 1960-ականներին Ռիչարդ Իսթերլին երջանկության խնդիրն առավել համակարգված ներկայացնելու առաջին փորձը կատարեց՝ այդպիսով հիմք դնելով մի ուղղության, որը կոչվում է «երջանկության տնտեսագիտություն»:

Ռիչարդ Իսթերլինի առաջարկած երջանկության չափման ցուցանիշը ձևավորվում է ըստ մարդու՝ սեփական երջանկության վերաբերյալ սուբյեկտիվ կարծիքի հիման վրա: Ուստի նույնիսկ, այս երկու եղանակներն էլ միտված են հարցումների միջոցով պարզելու մարդկանց բարեկեցությունն ու գոհունակությունն իրենց կյանքից:

Մարդկանց պատկերացումները երջանկության մասին կարող են փոխվել ժամանակի ընթացքում, շատերը, հնարավոր է, նույնիսկ չկարողանան սահմանել, թե ինչ է երջանկությունը: Սա երջանկության չափման գործընթացի մարտահրավերներից միայն մեկն է: Սակայն մասնագետների հաշվարկներից և ուսումնասիրություններից, առանձին երկրների ազգային վիճակագրական մարմինների կատարած աշխատանքների արդյունքներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսության և դրա աճի չափման նոր ուղիների փնտրման գործընթացում երջանկության չափումը կարող է շատ օգտակար լինել: Ի վերջո, ո՞րն է տնտեսության զարգացման գլխավոր նպատակը, եթե ոչ՝ բարեկեցության ապահովումը և բնակչության բացարձակ մեծամասնության կենսամակարդակի բարձրացումը:

Ու գիտակցում են նաև տարբեր երկրների իշխանությունները: Այսպես՝ 2012 թ. ԱՄՆ-ի ֆեդերալ ռեզերվային համակարգի նախկին նախագահ Բեն Բեռնանկեն իր ելույթներից մեկի ժամանակ խոսեց բարեկեցության և երջանկության չափման անհրաժեշտության մասին⁶: 2010 թ. նոյեմբերի 25-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ղևիդ Քեմերոնը կառավարության անունից դիմեց Ազգային վիճակագրության գրասենյակին՝ Մեծ Բրիտանիայում բարեկեցության չափման նոր եղանակներ մշակելու կոչով, և 2012 թ. հրապարակվեց Մեծ Բրիտանիայի համար հաշվարկված երջանկության առաջին ցուցիչը: Շատ ավելի վաղ՝ 1970-ականներին, Բուրբանում ներմուծվեց համախառն ազգային երջանկություն ցուցանիշը: Բուրբանն այս ցուցանիշը հաշվարկում է տարիներ ի վեր՝ դա ավելի առաջնային համարելով, քան տնտեսության քանակական չափման հիմնական գործիքը՝ ՀՆԱ-ն:

Այսպիսով՝ ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ երջանկության չափումը և էկոլոգիական վնասի գնահատումը կարող են ավելի ճշգրիտ պատկերացում տալ տնտեսության իրական վիճակի և իրական տնտեսական աճի մասին, որ արտահայտվում է ազգային տնտեսության մրցունակության բարձրացմամբ, քաղաքացիների բացարձակ մեծամասնության կենսամակարդակի աճով, սերունդների ապահով և բարեկեցիկ ապագայի տեսլականով:

⁶ Տե՛ս **Bernanke B.**, The Economics of Happiness. The Commencement Address at the University of South Carolina; Columbia, South Carolina, May 8, 2010, էջ 1:

АРМИНЕ ПЕТРОСЯН

Аспирант кафедры „Экономической теории и управления” АргУ,
ведущий специалист в социально-экономическом управлении аппарата
правительства Нагорно-Карабахской Республики

Альтернативные меры измерения экономического роста.- Полезные показатели благосостояния и прогресса должны быть показателями степени реализации целей общества, а не просто измерять рыночную экономическую деятельность, что и измеряет Валовой Внутренний Продукт (ВВП) и что является только одной стороной благосостояния и прогресса. В этой статье обсуждаются различные альтернативы ВВП с их мотивами, целями и ограничениями. Некоторые из них являются пересмотренными показателями экономической деятельности, а некоторые измеряют изменения общественного капитала – природного, социального, человеческого. В частности, говорится о некоторых несвязанных с ВВП экологических, социальных показателях, которые с успехом использовались на разных уровнях общественного планирования и как вариант, могут быть использованы с ВВП или вариантами ВВП для того, чтобы дать нам полную картину экономического благосостояния.

ARMINE PETROSYAN

Post-graduate at the Chair of „Economic Theory and Management” at ArSU
Leading specialist in the Socio - economic Department of the Staff of the
Government of Nagorno - Karabakh Republic

Alternative Measures for Assessing the Economic Growth.- Useful measures of progress and well-being must be indicators of the degree at which society's goals are met, rather than measures of the mere volume of marketed economic activity, which is measured by Gross Domestic Product (GDP) and is only one aspect of welfare and progress. In this article various alternatives of GDP are discussed with of their motives, objectives, and limitations. Some of them are revised indicators of economic activity while others measure changes in community capital – natural, social, human. In particular, here are some of the non-GDP environmental, social indexes or other indicators of well-being that have been used successfully on various levels of community planning and, as an option, could be used with GDP or GDP variants to give us a complete understanding of economic welfare.



ԳՈՐ ՍԱՀՎԱԿՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության
ամբիոնի ասպիրանտ

**ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՎԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Իրացվելիության ռիսկը բանկային գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերից է, որի պատշաճ կառավարումը կարևորվում է ողջ բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից: Առանձին բանկերում իրացվելիության խնդիրները կարող են առաջացնել ավանդների արտահոսք ֆինանսապես առողջ բանկերից, խաթարել միջբանկային շուկայի բնականոն գործունեությունը՝ հանգեցնելով համակարգային իրացվելիության խնդիրների դրսևորման: Հոդվածում քննարկվել են բանկային գործունեությունում իրացվելիության ռիսկի դրսևորման հիմնական ձևերը, բացահայտվել են դրանց առաջացման սկզբնապատճառները՝ դիտարկելով փոխադրեցության ուղիները: Վիճակագրական տվյալների հիման վրա վերլուծվել են նաև ՀՀ բանկային համակարգում իրացվելիության ռիսկի դրսևորման ձևերը՝ առաջարկելով գսպման մեխանիզմներ:

Հիմնաբառեր. ֆինանսավորման իրացվելիության ռիսկ, շուկայական իրացվելիության ռիսկ, խոշոր պարտավորություն, ֆինանսական կայունություն

Իրացվելիության ռիսկը բանկային գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերից է, որը հիմնականում դրսևորվում է բանկերի ֆինանսական միջնորդության գործառնությունների հետևանքով: Սակայն, բանկային գործունեության շրջանակների ընդլայնմանը զուգահեռ, ձևավորվել են իրացվելիության ռիսկի նոր սկզբնապատճառներ՝ հանգեցնելով ռիսկի դրսևորման նոր ձևերի առաջացմանը: Այս տեսանկյունից արևմտյան տնտեսագիտական ժամանակակից գրականության մեջ առանձնացվում են բանկային գործունեությունում

իրացվելիության ռիսկի դրսևորման 2 հիմնական ձևեր՝ ֆինանսավորման իրացվելիության ռիսկ (funding liquidity risk) և շուկայական իրացվելիության ռիսկ (market liquidity risk):

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը բազմաթիվ հեղինակների (Է. Կրոկետ, Ղ. Շիմկո, Փ. Ուենթ, Կ. Նիկոլաու, Վ. Չեն) և միջազգային կառույցների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Բանկային վերահսկողության բազելյան կոմիտե) կողմից սահմանվում է որպես բանկի ունակություն՝ ժամանակին ֆինանսավորելու ակտիվները և կատարելու պարտավորությունները՝ առանց անընդունելի վնասներ կրելու¹: Բանկային համակարգում ֆինանսավորման իրացվելիության ռիսկի դրսևորումը պայմանավորված է բանկերի ֆինանսական միջնորդության գործառնություններով: Բանկերը, որպես ֆինանսական միջնորդներ, ուղղակիորեն միջնորդություն են իրականացնում դրամական միջոցների առաջնային վաճառողների և վերջնական գնորդների միջև՝ հավաքագրելով փոշիացած ու կարճաժամկետ խնայողությունները և դրանք ուղղելով երկարաժամկետ խոշորաժամկալ ներդրումներին: Տնտեսագիտական գրականությունում վերոնշյալ գործընթացը ստացել է բանկերի կողմից «ժամկետայնության ձևափոխման (maturity transformation) գործառնություն» անվանումը: Հենց դրանով էլ պայմանավորված է բանկերի հաշվեկշռի ակտիվային և պասիվային կառուցվածքում կարճաժամկետ հորիզոնում բացասական ձեռքվածքի առկայությունը, որն էլ բանկերին անխուսափելիորեն խոցելի է դարձնում իրացվելիության ռիսկի նկատմամբ²:

Շուկայական իրացվելիության ռիսկի մասով տնտեսագիտության գրականությունում հիմնական շեշտը դրվում է շուկայի երեք հատկությունների վրա՝ խորություն, սահմանափակություն, առաձգականություն³: Ըստ այդմ՝ հաճախ շուկայական իրացվելիության ռիսկը սահմանվում է որպես այն բանի հավանականություն, որ բանկը չի կարողանա կարճ ժամկետում, նվազագույն ծախսերով և գների վրա նվազագույն ազդեցությամբ իրականացնել ակտիվների առք ու վաճառքի գործարքներ ակտիվների պորտֆելի (փաթեթի) և ռիսկ-պրոֆիլի ճշգրտման նպատակով: Բանկային համակարգում շուկայական իրացվելիության ռիսկը դրսևորվում է ակտիվի գնի նվազման հետևանքով, երբ բանկերում առաջանում են պարտավորությունների վերաֆինանսավորման և (կամ) մարման, ինչպես նաև ակտիվների ֆինանսավորման համար դրամական միջոցների անբավարարություն:

Շուկայի իրացվելիության հատկությունները և դրանց կապը ակտիվների գնի և գործարքների ծավալների հետ կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով:


Գծապատկեր 1-ում AO և OA՝ հատվածները բնութագրում են վաճառքի և առքի գործարքների մասով շուկայի խորությունը: Դրանք գործարքների

¹ Տե՛ս **Crockett A.**, Liquidité de marché et stabilité financière, Banque de France, Revue de la stabilité financière No 11, Paris, 2008, էջ 14: **Shimko C., Went P.**, Integrated Bank Risk Management, GARP, Jersey City, 2010, էջ 33: **Nikolaou K.**, Liquidity (Risk) Concepts, Definitions and Interactions, ECB, Frankfurt on Main, 2009, էջ 19: **Chen W.**, Funding Liquidity Risk: from measurement to management, Taipei, 2012, էջ 2: International Monetary Fund, Global Financial Stability Report April 2008, Washington D.C., 2008, էջ 87:

² Տե՛ս **H. van Greuning, S. Bratanovic**, Analyzing Banking Risk: A Framework for Assessing Corporate Governance and Risk Management, The World Bank, Washington D.C., 2009, էջ 192:

³ Տե՛ս Market Liquidity Risk: Elusive no More: Defining and Quantifying Market Liquidity Risk, Master's Thesis by: Kolja Loebnitz, University of Twente, Utrecht, The Netherlands, 2006, էջ 50:

այն ծավալներն են, որոնք շուկան կարող է կլանել՝ առանց գների էական փոփոխության: $A_p B_p$ հատվածը բնութագրում է ակտիվի շուկայում ստանդարտ գործարքի ծախսը, ըստ այդմ՝ վերոնշյալ հատվածը ներկայացնում է շուկայի սահմանափակությունը: $B'C'$ և BC ճառագայթները, համապատասխանաբար, ներկայացնում են շուկայում մեծածավալ առքի և վաճառքի գործարքների դեպքում գների ճշգրտման գործընթացը: Այս առումով, դրանք բնութագրում են շուկայի առածգականությունը:




Գծապատկեր 1. Շուկայական իրացվելիության հատկությունները⁴

Իրացվելիության ռիսկի դրսևորման ձևերի փոխազդեցության տեսանկյունից՝ շուկայական և ֆինանսավորման իրացվելիության ռիսկերի միջև առկա է երկբնույթ փոխադարձ կախվածություն: Բնականոն գործունեության պայմաններում իրացվելիության արդյունավետ բաշխման միջոցով դա նպաստում է ֆինանսական կայունությանը, մինչդեռ ձգնաժամային իրավիճակներում վերածվում է իրացվելիության խնդիրների տարածման մեխանիզմի: Բնականոն գործունեության պայմաններում բանկերը, լինելով ֆինանսական համակարգի իրացվելիության հիմնական մատակարարներ, ապահովում են ֆինանսական շուկաների բավարար իրացվելիությունը (այս գործընթացն արտահայտում է շուկայական իրացվելիության կախվածությունը ֆինանսավորման իրացվելիությունից): Մյուս կողմից՝ արդի բանկային գործունեությունում իրացվելիության կառավարման նպատակներով բանկերը ֆինանսական շուկաներից ներգրավում են միջոցներ և իրացնում ակտիվներ՝ իրացվելիության առումով հայտնվելով ֆինանսական շուկաների զարգացումներից կախյալ վիճակում (այս գործընթացն արտահայտում է ֆինանսավորման իրացվելիության կախվածությունը շուկայական իրացվելիությունից): Արդյունքում՝ ֆինանսավորման և շուկայական իրացվելիության միջև առկա փոխադարձ կապի միջոցով ապահովվում է ֆինանսական համակարգի բավարար իրացվելիությունը:

⁴ St'eu Bervas A., La liquidité de marché et sa prise en compte dans la gestion des risques, Banque de France, Revue de la stabilité financière. No 8, Paris, 2006, էջ 69:

Ճգնաժամային իրավիճակներում շուկայական և ֆինանսավորման իրացվելիության փոխադարձ կապի միջոցով իրացվելիության խնդիրների տարածվածությունը պայմանավորված է միջբանկային շուկայի գործունեության խաթարմամբ և նույն ակտիվներում ներդրումներով (common exposures): Միջբանկային շուկայի գործունեության խաթարումը տեղի է ունենում անորոշության պայմաններում բանկերի կողմից մաքսիմինի և մրցակիցների դուրսմղման ռազմավարությունների կիրառման հետևանքով: Մաքսիմինի ռազմավարության դեպքում բանկերը որոշումներ են կայացնում՝ հիմնվելով հավանական վատագույն սցենարների վրա. կրճատում են վարկավորումը և ընդլայնում իրացվելի ակտիվների ծավալը դրամական միջոցների հնարավոր արտահոսքը բավարարելու նպատակով: Մրցակիցների դուրսմղման ռազմավարության դեպքում միջբանկային շուկայում վարկատու բանկերը կրճատում են միջբանկային վարկերի ծավալները՝ փորձելով սնանկացնել մրցակիցներին: Արդյունքում՝ միջբանկային շուկայում ավանդաբար վարկառու բանկերի ֆինանսական վիճակի կտրուկ վատթարացման հետևանքով հնարավոր են փոխադարձ պարտավորությունների չկատարում և (կամ) ուշացումներ: Բազմակողմ միջբանկային պահանջների դեպքում այս իրավիճակը կարող է հանգեցնել շղթայական չվճարումների՝ ընդհուպ առանձին բանկերի սնանկացման և ավանդների արտահոսքի:

« Բանկային համակարգում ավանդաբար առաջնային է համարվել ֆինանսավորման իրացվելիության ռիսկը, քանի որ բանկերը ներգրաված միջոցները հիմնականում տեղաբաշխում են վարկերում, մյուս կողմից՝ դրանց մասով ապահովում են առաջնային իրացվելի ակտիվների բարձր ծածկույթ: Այդուհանդերձ, ընդհանուր իրացվելիության նվազման և բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի կշռի զգալի աճի պայմաններում էական է դառնում նաև շուկայական իրացվելիության ռիսկը:




Գծապատկեր 2. « Բանկային համակարգի հետոհաշվեկշռային պայմանական պարտավորությունների փոփոխությունը⁵»

⁵ Գծապատկերներ 1-3-ի, 6-7-ի և 10-11-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում ներկայացված տվյալները:

ՀՀ բանկային համակարգում, ֆինանսավորման իրացվելիության ռիսկի գնահատման շրջանակներում, ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի վերլուծության նպատակով կիրառվել է ՀՀ ԿԲ՝ բանկերում իրացվելիության ռիսկի գնահատման մեթոդաբանությունը⁶:

Վերլուծության շրջանակներում գնահատվել են ակնթարթային (ցպահանջ), մինչև 90 օր կուտակային և ընդհանուր (մինչև 1 տարի կուտակային) իրացվելիության ցուցանիշները՝ որպես համապատասխան ժամկետային հորիզոնում ակտիվների և պարտավորությունների տարբերության հարաբերություն բարձր իրացվելի ակտիվներին: Ակնթարթային իրացվելիությունը, մշտապես պահպանվելով դրական մակարդակում, ցուցաբերում է աճի միտում և 2012 թ. վերջին կազմել է 38.7%: Մինչև 90 օր կուտակային իրացվելիությունը մինչձգնաժամային կտրուկ նվազումից հետո ցուցաբերում է վերականգնման միտում՝ 2012 թ. վերջին կազմելով 19.7%: Ընդհանուր իրացվելիության դեպքում նվազման միտումը պահպանվել է հետձգնաժամային ժամանակահատվածում և 2012 թ. վերջին կազմել -18.5%՝ պայմանավորված ֆինանսական միջնորդության խորացմանը զուգահեռ վարկերի ժամկետայնության աճով:




Գծապատկեր 3. ՀՀ բանկային համակարգի պայմանական ֆինանսավորման իրացվելիության ռիսկի բնութագրիչ ցուցանիշների փոփոխությունը


ՀՀ բանկային համակարգում իրացվելիության հետձգնաժամային զարգացումների արդյունքում բարելավվել է իրացվելիության վարկանիշը և 2012 թվականի վերջին կազմել «BBC»՝ ձգնաժամային «BCC»-ի փոխարեն⁷: Իրացվելիության ռիսկի ներկայիս վարկանիշը բնութագրում է իրացվելիության բավարար մակարդակ, սակայն անհրաժեշտ է ձեռնարկել երկարաժամկետ իրացվելիության բարելավման միջոցառումներ: Այսպիսով՝ ՀՀ բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների ներկայիս կառուցվածքը և առկա զարգացումները, ընդհանուր առմամբ, դրական են գնահատվում ֆինանսավորման իրացվելիության ռիսկի վրա ազդեցության տեսանկյունից:

⁶ ՀՀ կենտրոնական բանկ, Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկ, հավելված 5, Իրացվելիության ռիսկի վերլուծության մեթոդաբանություն, էջ 107-118:
⁷ ՀՀ բանկային համակարգի իրացվելիության վարկանիշը գնահատվել է ՀՀ ԿԲ իրացվելիության ռիսկի վերլուծության մեթոդաբանությանը համապատասխան:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկը պայմանավորող հաջորդ գործոնը պարտավորությունների կենտրոնացվածությունն է: Վերջինս ՀՀ բանկային համակարգում գնահատելու նպատակով վերլուծվել է խոշոր պարտավորությունների փոփոխությունը 2003–2012 թթ. ընթացքում: Խոշոր պարտավորությունների առանձնացման համար կիրառվել է ՀՀ ԿԲ մոտեցումը, ըստ որի՝ խոշոր է այն պարտավորությունը, որը հավասար է կամ գերազանցում է պարտապան բանկի ընդհանուր պարտավորությունների 5%-ը՝ առանց հաշվի առնելու պարտատերերի փոխկապվածությունը⁸:



Չճապատկեր 4. ՀՀ բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացվածությունը բնութագրող ցուցանիշները



Չճապատկեր 5. ՀՀ բանկային համակարգի պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռների քվարտիլները⁹

⁸ Տե՛ս 2008 թվականի փետրվարի 26-ի ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը», կանոնակարգ 3, գլուխ III, կետ 17:

⁹ Տե՛ս IMF Country Report No. 13/10, „Republic of Armenia: Financial System Stability Assessment“, International Monetary Fund, Washington, D.C., 2013, էջ 19:

Ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը մինչձգնաժամային ժամանակահատվածում աճել է 4.7 տոկոսային կետով և 2009 թ. վերջին կազմել 32.9%, հետձգնաժամային ժամանակահատվածում ցուցաբերել է նվազման միտում և 2012 թ. վերջին կազմել 26.2%: ՀՀ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության նվազման պայմաններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշռի բարձր մակարդակի պահպանումը հանգեցրել է վերջիններիս գծով իրացվելիության ծածկույթի կտրուկ նվազման: 2003 թ. համեմատությամբ, բարձր իրացվելի ակտիվներ/խոշոր պարտավորություններ ցուցանիշը նվազել է 4.5 անգամ և կազմել 104%:

Առանձին բանկերում պարտավորությունների կենտրոնացվածության գնահատման նպատակով դիտարկվել են պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշռի ցուցանիշի քվարտիլային արժեքները¹⁰: 10 բանկում խոշորագույն պարտավորության տեսակարար կշիռը կազմում է 0–7%, մինչդեռ մնացած 11 բանկում՝ 10–34%: Նույն ցուցանիշները երկրորդ ամենախոշոր պարտավորության տեսակարար կշռի համար կազմում են համապատասխանաբար՝ 0–0.8% և 1–6%: Խոշորագույն, 2-րդ և 5 ամենամեծ պարտավորությունների տեսակարար կշիռների ցուցանիշների քվարտիլային արժեքների համադրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ բանկերի պարտավորությունների կենտրոնացվածությունը հիմնականում պայմանավորված է մեկ խոշոր պարտատիրոջ նկատմամբ պարտավորության մեծ տեսակարար կշռով: Դա բացատրվում է նրանով, որ 2-րդ ամենախոշոր պարտավորության տեսակարար կշռի քվարտիլային արժեքները փոքր են և զիջում են խոշորագույն պարտավորության տեսակարար կշռի քվարտիլային արժեքներին: Միևնույն ժամանակ, խոշորագույն պարտավորության տեսակարար կշռի քվարտիլային արժեքները մոտ են 5 ամենամեծ պարտավորությունների տեսակարար կշռի նույն արժեքներին:

Ֆինանսավորման իրացվելիության ռիսկի գնահատման տեսանկյունից ուշագրավ է այն հանգամանքը, որ պարտավորությունների բարձր կենտրոնացվածություն ունեցող բանկերին բնորոշ է նաև վարկային պորտֆելի բարձր կենտրոնացվածություն, ինչը մեծացնում է վերջիններիս զգայունությունը խոշոր պարտավորությունների արտահոսքի նկատմամբ¹¹: Այս վարկածի հիմնավորման նպատակով սթրես թեստավորման միջոցով գնահատվել է ՀՀ բանկային համակարգի խոշոր պարտավորությունների արտահոսքը բավարարելու ունակությունը: Սթրես թեստը մշակվել է ԱՄՀ-ի կողմից՝ Ռուանդայի բանկային համակարգում պարտավորությունների կենտրոնացվածության գնահատման սթրես թեստի տրամաբանությամբ¹²: Ըստ այդմ՝ գնահատվում է, թե քանի օր բանկային համակարգը կարող է բավարարել խոշոր պարտատերերի պահանջները իրացվելի ակտիվների պաշարի հաշվին: Սթրես թեստի 3 սցենարների արդյունքներով՝ տարեցտարի նվազում է ՀՀ բանկային համակարգի՝ խոշոր պարտավորությունների արտահոսքը ծածկելու ունակությունը: Մասնավորապես՝ եթե բազային սցենարի դեպքում


¹⁰ Քվարտիլային են ցուցանիշի այն արժեքները, որոնք աճման կարգով կառուցված թվային շարքը (կարգավորված շարք) բաժանում են 4 հավասար մասերի:

¹¹ Տե՛ս IMF, „Republic of Armenia: Financial System Stability Assessment“, January 2013, Washington D.C., էջ 18–19:

¹² Տե՛ս **Sanya S., Mitchell W., Kantegwa A.**, Prudential Liquidity Regulation in Developing Countries: A Case Study of Rwanda, Section III-C. „Liquidity Stress Tests“ IMF, Working paper WP/12/20, 2012, էջ 16–22:

2012 թ. ընդհանուր իրացվելիության նորմատիվը նվազում է մինչև 20%, ապա 2010-2011 թթ.՝ տատանվում է 23-25%-ի շրջանակներում: Վատթարագույն սցենարի պարագայում 2012 թ. արձանագրվում է ընդհանուր իրացվելիության նորմատիվի խախտում սթրեսային իրավիճակի 4-րդ օրը, մինչդեռ 2011-2012 թթ. արդյունքներով նորմատիվի խախտում չի արձանագրվում նույնիսկ 5-րդ օրը:

Այսպիսով՝ ՀՀ տարածքում գործող որոշ բանկերում բարձր է պարտավորությունների կենտրոնացվածության մակարդակը, ինչը ֆինանսավորման իրացվելիության ռիսկի համատեքստում դիտարկվում է որպես բանկային համակարգի խոցելի կողմ: Ռիսկի զսպման մեխանիզմների առաջադրման նպատակով հետազոտվել է պարտատիրոջ գծով ռիսկի կարգավորման միջազգային փորձը: Արևելյան Եվրոպայի երկրներում այդ նպատակով կիրառվում է 2 հիմնական մեխանիզմ՝ պարտատերերի գծով ռիսկի սահմանափակում (Ալբանիա, Կոսովո, Ադրբեջան, Ռուսաստան, Լատվիա, Խորվաթիա, Մոնտենեգրո) և պարտավորությունների կենտրոնացվածությանը համապատասխան իրացվելիության տարբերակված պահանջներ (Մակեդոնիա, Ռումինիա): Առաջին մոտեցման դեպքում վերահսկող մարմինը սահմանում է մեկ պարտատերի և փոխկապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափ բանկի նորմատիվային կապիտալի (կամ ակտիվների, կամ պարտավորությունների) նկատմամբ: Երկրորդ մոտեցման դեպքում վերահսկող մարմինը որոշում է պարտավորությունների կենտրոնացվածության ընդունելի միջակայքեր և դրանց աճին զուգահեռ սահմանում իրացվելիության խիստ պահանջներ: Պարտատիրոջ գծով ռիսկի սահմանափակման մոտեցմանը բնորոշ է 2 հիմնական թերություն:




Չճապատկեր 6. ՀՀ բանկային համակարգում խոշոր պարտավորությունների արտահոսքի նկատմամբ զգայունության գնահատման իրացվելիության սթրես թեստի արդյունքները

Նշված ռիսկը կապիտալի նկատմամբ սահմանելիս միջոցների ներգրավման հնարավորությունները կապվում են կապիտալի մեծության հետ՝ այդպիսով առաջ քաշելով այն վարկածը, որ կապիտալը իրականացնում է նաև իրացվելիության ծածկման պահուստի գործառույթ: Մինչդեռ, բանկի կապիտալը կատարում է վնասների կլանման գործառույթ¹³: Այս դեպքում


¹³ Տես Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ (զլխ. խմբագիր՝ Լ. Բաղանյան), Եր., 2007, էջ 431:

բարձր լներիջի (կապիտալ/ակտիվներ) պայմաններում բանկը հնարավորություն ունի ընդհանուր պարտավորությունների նկատմամբ մեծածավալ միջոցներ ներգրավելու՝ նպաստելով պարտավորությունների կենտրոնացվածությանը: Թեև բանկը շարունակում է մնալ խոցելի խոշոր պարտավորությունների արտահոսքի նկատմամբ, քանզի կապիտալի տեսքով ներգրավված միջոցները տեղաբաշխվում են ցածր իրացվելի ակտիվներում և չեն ծառայում որպես ակնթարթային իրացվելիության աղբյուր: Բացի այդ, այս մոտեցման դեպքում սահմանափակվում են իրացվելիության կառավարման նպատակով բանկերի՝ մեծածավալ միջոցների ներգրավման հնարավորությունները: Դա էական է հատկապես օտարերկրյա կապիտալի մեծ մասնաբաժնով բանկային համակարգերի (այդ թվում՝ ՀՀ բանկային համակարգի) համար, երբ դուստր բանկերը իրացվելիության աջակցություն են ստանում օտարերկրյա մայր բանկերից:

Ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածությանը համապատասխան՝ իրացվելիության տարբերակված պահանջների մոտեցումը զերծ է մեկ պարտատիրոջ գծով ռիսկի սահմանափակման մոտեցմանը բնորոշ թերություններից: Սակայն վերջինիս հատուկ են գործնական ներդրման դժվարություններ (օրինակ՝ ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության ընդունելի միջակայքերի և դրանցից ածանցյալ իրացվելիության պահանջների սահմանման համար հաճախ անհրաժեշտ է լինում կիրառել փորձագիտական գնահատականներ): Հաշվի առնելով 2-րդ մոտեցման առավելությունները և ՀՀ բանկային համակարգում մեծաքանակ օտարերկրյա կապիտալով բանկերի առկայությունն ու լներիջի բարձր մակարդակը՝ առաջարկում ենք կիրառել ըստ ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության իրացվելիության տարբերակված պահանջները: Այս մեխանիզմի՝ Բազել 3 իրացվելիության չափորոշիչների ներքո համադրելիության առումով նշենք, որ այդ մոտեցումը կարող է ներդրվել նաև իրացվելիության ծածկույթի գործակցի շրջանակներում՝ խոշոր պարտավորությունների գծով ավելի խիստ արտահոսքի գործակիցներ սահմանելու միջոցով:



Գծապատկեր 7. ՀՀ բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



Գծապատկեր 8. ՀՀ բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների կառուցվածքը


Ըստ շուկայական իրացվելիության ռիսկի՝ ՀՀ բանկային համակարգի ակտիվների կազմի և կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայական ռիսկի ենթակա ակտիվներից միայն ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելը զգալի տեսակարար կշիռ ունի բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում՝ 8% (կամ բարձր իրացվելի ակտիվների 35%-ը): Այս տեսանկյունից՝ շուկայական իրացվելիության ռիսկը կարող է էական դիտարկվել միայն ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի համար:

Առանձին բանկերում բարձր իրացվելի ակտիվների կառուցվածքի վերլուծությունը փաստում է, որ մի շարք բանկերում մեծ է պետական պարտատոմսերի տեսակարար կշիռը բարձր իրացվելի ակտիվներում: Ըստ այդմ կարելի է ենթադրել, որ այդ բանկերի իրացվելիության բավարար մակարդակի ապահովումը պայմանավորված է պետական պարտատոմսերի շուկայի բավարար իրացվելիությամբ: Հետազոտության այս արդյունքը ստուգելու համար Պիրսոնի կոռելյացիայի գործակցի միջոցով գնահատվել է բանկերում ճշգրտված իրացվելիության գործակցի և բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի տեսակարար կշռի կապը¹⁴: Կոռելյացիայի գործակցիցը հաշվարկվել է ՀՀ առևտրային բանկերի՝ 2005–2012 թթ. պանելային տարեկան բնական լոգարիթմական տվյալների հիման վրա (դիտարկումների ընդհանուր քանակը 588 է):


Ճշգրտված իրացվելիության գործակցի և բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի տեսակարար կշռի ցուցանիշների Պիրսոնի կոռելյացիայի գործակցիցը կազմում է -0.704 ՝ բնութագրելով վերոնշյալ ցուցանիշների միջև սերտ բացասական հարաբերակցություն: Այդ կապը շուկայական իրացվելիության ռիսկի տեսանկյունից փաստում է, որ պետական պարտատոմսերի պորտֆելը բացառելու պարագայում (այսինքն՝ միայն ա-

¹⁴ Ճշգրտված իրացվելիությունը հաշվարկվել է որպես առաջնային պաշարների (կանխիկ դրամական միջոցներ+թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ բանկերում) և ընդհանուր ակտիվների հարաբերակցություն:

ռաջնային իրացվելի ակտիվների պաշարը դիտարկելու դեպքում) բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի մեծ տեսակարար կշիռ ունեցող բանկերի իրացվելիությունը համեմատաբար ցածր է: Ղա հիմնավորում է այն վարկածը, որ բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի զգալի տեսակարար կշիռ ունեցող բանկերում իրացվելիության բավարար մակարդակի պահպանումը մեծապես պայմանավորված է պետական պարտատոմսերի շուկայում նույն ցուցանիշի ապահովմամբ: Այս համատեքստում պետական պարտատոմսերի գծով շուկայական իրացվելիության ռիսկը << բանկային համակարգում էական է համարվում:



Գծապատկեր 9. << բանկերի բաշխումն ըստ բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի մասնաբաժնի (առ 31.12.2012 թ.)¹⁵



Բարձր իրացվելի ակտիվներում ՊՊ տեսակարար կշիռ

Գծապատկեր 10. Ճշգրտված իրացվելիության և բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերի մասնաբաժնի կոռելյացիան

Շուկայական իրացվելիության վերլուծության միջազգային փորձի ուսումնասիրությունը (Հունգարիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Չեխիա, Եվրոպական կենտրոնական բանկ) ցույց է տալիս, որ լայն կիրառություն են ստա-

¹⁵ Գծապատկերներ 8-ի և 9-ի կառուցման համար օգտագործվել են 21 առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվությունների և դրանց կից ծանոթագրությունների տվյալները:


ցել բաղադրյալ ինդեքսները (համաթիվ): Վերջիններս կառուցվում են շուկայի իրացվելիության հատկությունների բնութագրիչ ցուցանիշների հիման վրա՝ գործադրելով վիճակագրական մշակման տարբեր հնարքներ: Ըստ այդմ՝ ՀՀ պետական պարտատոմսերի գծով շուկայական իրացվելիության ռիսկի գնահատման նպատակով կառուցվել է շուկայի իրացվելիության համաթիվ:

Աղյուսակ 1

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայական իրացվելիության համաթիվի բաղադրիչները


N	Շուկայի իրացվելիության բնութագրիչ հատկություն	Բնութագրիչ ցուցանիշ
1.	Շուկայի խորություն	Շուկայի շրջանառության գործակից
2.	Շուկայի սահմանափակություն	Եկամտաբերության 30-օրյա պատմական տատանողականություն
3.	Շուկայի առաձգականություն	Հուլի-Հեուբելի գործակից

Շուկայական իրացվելիության համաթիվի հաշվարկում բաղադրիչ ցուցանիշները նախ համապատասխանեցվել են ըստ չափման միավորի ստանդարտ սքորի տեսքով նորմավորելու միջոցով այնպես, որ յուրաքանչյուր ցուցանիշի նորմավորված արժեքի աճը բնութագրում է շուկայի իրացվելիության դրական փոփոխություն (շուկայի խորության աճ, սահմանափակության կրճատում և առաձգականության աճ): Այնուհետև որոշվել է բաղադրիչ ցուցանիշների նորմավորված արժեքների միջին թվաբանական մեծությունը, որի ցուցչային (էքսպոնենտալ) հարթեցման արդյունքում ստացվել է շուկայի իրացվելիության ամփոփ գնահատականը: Ստանդարտ սքորի միջոցով բաղադրիչ ցուցանիշները նորմավորելու հետևանքով համաթիվ երկարաժամկետ տրենդը ձգտում է 0-ի, այսինքն՝ համաթիվի դրական արժեքը բնութագրում է շուկայի իրացվելիության պատմական մակարդակի համեմատությամբ ավելի բարձր իրացվելիություն:



— Շուկայական իրացվելիության համաթիվ

Չճապատկեր 11. ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության համաթիվը



Պճապատկեր 12. ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության ենթահամաթվերը

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության համաթվի շարժընթացը ցույց է տալիս, որ 2007–2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում կտրուկ նվազել է շուկայի իրացվելիությունը՝ հիմնականում պայմանավորված շուկայի խորության նվազմամբ և սահմանափակության աճով: Արդեն 2009 թ. 4-րդ եռամսյակում, տնտեսության իրական հատվածի և բանկային համակարգի ֆինանսական վիճակի բարելավմանը զուգահեռ, սկսել է վերականգնվել նաև շուկայի նշված ցուցանիշը:

Շուկայական իրացվելիության ռիսկի տեսանկյունից առավելապես կարևորվում է այն հանգամանքը, որ ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի համապատասխան համաթիվը բնութագրում է շուկայի 2012–2013 թթ. իրացվելիության նվազում: Դա բացատրվում է շուկայի խորության և առաձգականության նվազմամբ: Այս համատեքստում պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության գարգացումների ազդեցությունը վերլուծելու նպատակով ռիսկի արժեքի (Value at Risk) մեթոդի միջոցով գնահատվել է այդ պարտատոմսերի եկամտաբերության աճի արդյունքում վերագնահատման ազդեցությունը: Վերջինս մոտարկվել է որպես ՀՀ բանկերի շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի ձևափոխված դյուրացիայի և մինչև մարում եկամտաբերության աճի արտադրյալ: Վերլուծության արդյունքներով ՀՀ բանկերի պետական պարտատոմսերի պորտֆելի տրված ժամկետային կառուցվածքի դեպքում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի գնի առավելագույն նվազումը գնահատվել է 9.7%¹⁶:

¹⁶ Առաջնորդվելով ՀՀՄՍ 39-ի պահանջներով՝ ՀՀ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության աճի արդյունքում վերագնահատման ազդեցությունը գնահատվել է միայն շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի պարտատոմսերի պորտֆելի համար:

Վերջինիս ազդեցությունը բանկերի վրա անդրադառնում է բարձր իրացվելի ակտիվների նվազման հետևանքով ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների, ինչպես նաև կապիտալի համարժեքության նվազման տեսքով: ՀՀ բանկերի իրացվելիության վրա ազդեցության առումով պետական պարտատոմսերի վերազնահատման արդյունքում որևէ բանկում չի արձանագրվում նորմատիվի խախտում, այդուհանդերձ, որոշ բանկերում ընդհանուր իրացվելիության նորմատիվը մինչև 2.5 տոկոսային կետով կնվազի: Ուստի ՀՀ բանկային համակարգում շուկայական իրացվելիության ռիսկի զսպման նպատակով առաջարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերը ներառել 10% զեղչադրույթով: Նման մեխանիզմ գործում է Ալբանիայում (20%), Կոսովոյում (20%), Խորվաթիայում (5–10%), Կիպրոսում (20%) և Սերբիայում (10%):

Աղյուսակ 2

ՀՀ պետական պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության առավելագույն հավանական փոփոխությունը¹⁷

30.06.2013 թ. դրությամբ	ՀՀ պետական պարտատոմսերի մարման ժամկետայնություն				
	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1–2 տարի	2–5 տարի	5–7 տարի
Մինչև մարում եկամտաբերության փոփոխության ստանդարտ շեղում	3.320%	3.506%	3.366%	3.616%	1.953%
Եկամտաբերության օրական փոփոխություն (տոկոսային կետ)	0.675	1.120	1.090	1.273	0.662
Ձևափոխված դյուրացիա	0.24	0.69	1.29	2.63	5.28
Բանկերի պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը	20.10%	11.99%	17.84%	37.31%	12.75%
Գնի օրական փոփոխություն (%)	-0.16%	-0.77%	-1.41%	-3.35%	-3.50%
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի գնի ամսական փոփոխություն (%)					-9.71%

Այսպիսով՝ ՀՀ բանկային համակարգում իրացվելիության ռիսկի դրսևորման ձևերի վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Իրացվելիության ռիսկը բանկային գործունեությունում դրսևորվում է 2՝ ֆինանսավորման և շուկայական հիմնական ձևերով: Վերոնշյալ 2 դեպքում էլ իրացվելիության խնդիրներն առաջանում են ակտիվների ֆինանսավորման և (կամ) պարտավորությունների մարման համար դրամական մի-

¹⁷ Վերլուծության համար որպես տվյալների աղբյուր են ծառայել 21 առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները, ինչպես նաև ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության 2012 թ. 1-ին կիսամյակի հաշվետվության տվյալները:

ջոցների անբավարարության հետևանքով: Սակայն եթե ֆինանսավորման իրացվելիության ռիսկի դեպքում ռիսկի դրսևորման սկզբնապատճառը բանկերի ֆինանսական միջնորդության գործառույթների հետևանքով ակտիվների և պարտավորությունների ժամկետային ձեռքբերումն է, ապա շուկայական իրացվելիության ռիսկի դեպքում՝ բանկերի կողմից տնօրինվող շուկայական գնանշվող ակտիվների շուկայի իրացվելիության նվազումը:

2. ՀՀ բանկային համակարգում, ընդհանուր իրացվելիության նվազմանը զուգահեռ, խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը պահպանվել է բարձր մակարդակում՝ բանկերին զգայուն դարձնելով ֆինանսավորման իրացվելիության ռիսկի նկատմամբ: Այս տեսանկյունից, որպես ռիսկի զսպման մեխանիզմ, առաջարկվում է իրացվելիության տնտեսական նորմատիվների շրջանակներում ներդնել ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածությանը համապատասխան իրացվելիության տարբերակված պահանջներ: Դա թույլ կտա նվազեցնել խոշոր պարտավորությունների նկատմամբ բանկերի զգայունությունը բարձր իրացվելի ակտիվների լրացուցիչ պաշարի ձևավորման միջոցով՝ միևնույն ժամանակ չսահմանափակելով իրացվելիության կառավարման նպատակով մեծածավալ միջոցների ներգրավման հնարավորությունները:

3. ՀՀ բանկային համակարգում ընդհանուր իրացվելիության նվազման և ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի ընդլայնման արդյունքում վերջիններիս գծով շուկայական իրացվելիության ռիսկը դարձել է նշանակալի: Շուկայական իրացվելիության ռիսկի աճին հատկապես նպաստել է վերջին տարիներին շուկայի իրացվելիության նվազման միտումը: Այս տեսանկյունից, որպես ռիսկի զսպման մեխանիզմ, առաջարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում բարձր իրացվելի ակտիվներում պետական պարտատոմսերը ներառել գեղչադրույթով (haircut): Դա հնարավորություն կտա զսպելու ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության բացասական զարգացումների ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի վրա:

ГОР СААКЯН

Аспирант кафедры „Банковского дела и страхования” АГЭУ

Анализ аспектов риска ликвидности в банковской системе РА. - Риск ликвидности один из основных видов банковских рисков, и надлежащее управление этим риском играет большую роль с точки зрения обеспечения финансовой стабильности всей банковской системы. Проблемы ликвидности в одном из банков могут стать причиной оттока депозитов и коллапса деятельности межбанковского рынка, и тем самым привести к формированию системных проблем ликвидности. В статье обсуждаются основные аспекты риска ликвидности в банковской деятельности, раскрываются источники их возникновения и взаимосвязь этих аспектов. Одновременно, исходя из фактических данных, анализируются риски ликвидности рынка и финансирования в банковской системе РА, а также приводятся меры снижения рисков.

GOR SAHAKYAN

Post-graduate at the Chair of „Banking and Insurance” at ASUE

Analysis of Dimensions of Liquidity Risk in the Banking System of the RA. - Liquidity risk is considered to be an essential banking risk, and proper management of which is emphasized for ensuring financial stability of the whole banking system. Liquidity problems in separate banks could cause bank run and liquidity hoarding in interbank market by leading to the development of systemic liquidity crisis. This article discusses dimensions of liquidity risk in banking industry, underlines its causes and reviews the main interaction linkages among these dimensions. The statistical analysis assesses funding and market liquidity risks in the banking system of the RA and provides risk mitigation approaches.



ԿԱՌԵՆ ԱԲԳԱՐՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության թեկնածու

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս հայրենական և հատկապես արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ կան բազմաթիվ աշխատանքներ, որոնք նվիրված են առանձին ձեռնարկությունների (տնտեսավարող սուբյեկտների) ֆինանսական հիմնախնդիրներին: Սակայն դրանցում հիմնականում բացակայում են հստակ ու համակարգված մոտեցումները ձեռնարկության ֆինանսները բնութագրելու հարցում: Դա բացատրվում է նրանով, որ ֆինանսական համակարգն առավելապես դրամական միջոցների բաշխողական հարաբերությունների վրա է հիմնվում՝ այդպիսով անտեսելով շուկայական տնտեսությանը բնորոշ ֆինանսների էությունն ու գործառնությունները:

Արևմտյան երկրներում ֆինանսական դպրոցի հիմքում կորպորացիաների ֆինանսների տեսությունն է, իսկ ձեռնարկությունների ֆինանսների մեթոդական առանցքը ֆինանսական մենեջմենթն է՝ որպես կառավարման գիտության բաղադրիչ: Ընդ որում, «ֆինանսական մենեջմենթ» հիմնարար հասկացությունն ընդգրկում է ձեռնարկությունների ֆինանսների ողջ գործընթացը՝ ներառյալ վերջիններիս կառավարման կարևորագույն հիմնահարցերը:

Հիմնաբառեր. տնտեսավարող սուբյեկտ, ֆինանսական մենեջմենթ, ձեռնարկատիրություն, ձեռնարկության ֆինանսներ, ֆինանսների տեսություն

Ներկայումս ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ են ձեռնարկությունների ֆինանսական հիմնախնդիրներին նվիրված աշխատությունները: Այնուամենայնիվ, դրանցում դեռևս բացակայում են ձեռնարկության ֆինանսների բնութա-

գրման հստակ համակարգված մոտեցումները: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ հայրենական ֆինանսական համակարգը հիմնված է առավելապես դրամական միջոցների բաշխողական հարաբերությունների վրա՝ այդպիսով անտեսելով շուկայական տնտեսությանը բնորոշ ֆինանսների էությունն ու գործառույթները:

Արևմտյան երկրներում ֆինանսական դպրոցը հենվում է կորպորացիաների ֆինանսների տեսության, իսկ ձեռնարկությունների ֆինանսների մեթոդական բազան՝ ֆինանսական մենեջմենթի՝ որպես կառավարման գիտության բաղադրիչի վրա: Ընդ որում, «ֆինանսական մենեջմենթը» ներկայացվում է որպես հիմնարար հասկացություն՝ ընդգրկելով նաև ձեռնարկատիրության կազմակերպման և կառավարման ֆինանսական հիմնահարցերը:

Ձեռնարկությունների (կազմակերպությունների) ֆինանսների հիմքում գործունեության նպատակներն են, որոնցից կարևորվում են՝

- վճարունակության ապահովում,
- լուծարելի ակտիվների կառուցվածքի սահմանում և պահպանում,
- զուտ շահույթի ստացման մեխանիզմի որոշում,
- ներդրումների և դրա ֆինանսավորման ծավալի ու կառուցվածքի որոշում:

Թվարկված նպատակների իրականացումը պայմանավորված է որոշակի գործիքակազմի կիրառմամբ (եղանակներ, մեթոդներ):

Նշված մեթոդական մոտեցումները հնարավորություն կտան սահմանելու ձեռնարկությունների ֆինանսների կազմակերպման և կառավարման գործընթացները:

Կառավարման յուրաքանչյուր տեսակ, այդ թվում՝ ֆինանսական կառավարումը, բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ կառավարման սուբյեկտ, կառավարման օբյեկտ:

Ձեռնարկություններում և ֆիրմաներում ֆինանսների կառավարման օբյեկտ են՝

- գույքը (շարժական և անշարժ),
- սեփականության իրավունքը,
- աշխատանքները և ծառայությունները,
- տեղեկատվությունը,
- ներդրումային գործունեության արդյունքները և այլն:

Բոլոր օբյեկտների կառավարման հատկանշական գիծը դրանց ազատորեն օտարումը կամ մեկ անձից մյուսին անցումն է: Ձեռնարկությունների շրջանակում նշված օբյեկտներն առանձնացվում են և ունեն արժեքային արտահայտություն:

Ձեռնարկությունը, որպես կառավարման օբյեկտ, միասնական գույքային համալիր է, որն օգտագործվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով: Որպես այդպիսի համալիր՝ ձեռնարկությունը կամ դրա մի մասը կարող են դառնալ առք ու վաճառքի, գրավի և այլ գործարքների առարկա՝ արտացոլվելով դրամական շրջապտույտում:

Ձեռնարկությունների դրամական շրջապտույտը տնտեսական գործընթաց է, որը պայմանավորված է արժեքի շարժմամբ և ուղեկցվում է դրամական հոսքերով, վճարումներով ու հաշվարկներով:

Ֆինանսների կազմակերպման և կառավարման գործընթացում կարևոր դեր է խաղում ձեռնարկության կարգավիճակը, ըստ որի կարելի է պարզել՝

վերջինս ունի՞ սեփականության իրավունք, տնտեսությունը վարելու ազատություն, պատասխանատվություն կրո՞ւմ է պարտավորությունների կատարման համար, ունի՞ ինքնուրույն հաշվեկշիռ:

Ձեռնարկությունների ֆինանսական գործունեության կառավարման հիմնական նպատակը շահույթի ստացումն է, ըստ որի կարևորվում են.

- առանձնացված գույքի տիրապետումը, որի համար իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում իր պարտավորություններով,
- գործունեության հիմնական ցուցանիշները, որոնք ներկայացվում են վիճակագրական, հարկային և այլ մարմինների,
- կապիտալի շուկայում որպես իրավաբանական անձ հանդես գալը,
- ստացված բոլոր եկամուտները համարվում են իրավաբանական անձի սեփականությունը:

Իրավաբանական անձի գործունեության բնույթը պայմանավորված է առևտրային (կոմերցիոն) կամ ոչ առևտրային կազմակերպություն լինելու հանգամանքով: Առևտրային կազմակերպության հիմնական նպատակը շահույթի ստացումն է, ոչ առևտրային կազմակերպությունները նման նպատակ չեն հետապնդում, և եթե շահույթ է ստացվում, ապա դա չի բաժանվում մասնակիցների միջև:

Արտադրական ձեռնարկությունների և առևտրային (կոմերցիոն) կազմակերպությունների՝ որպես իրավաբանական անձի գործունեությունը սկսվում է գրանցման պահից: Նրանց գործունեության բնույթը սահմանվում է՝ ելնելով ներկայացված հիմնադիր փաստաթղթերից՝ կանոնադրություն և պայմանագիր:

Պետական գրանցում ունեցող առևտրային ձեռնարկությունները (կազմակերպությունները) կարող են բաժանմունքներ և ներկայացուցչություններ ունենալ նաև դրսում: Բաժանմունքները, որպես կանոն, առանձնացված ստորաբաժանումներ են և իրականացնում են մայր կազմակերպության բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը, այդ թվում նաև ներկայացուցչությունների գործառնությունները: Բաժանմունքները և ներկայացուցչությունները իրավաբանական անձի կարգավիճակ չունեն:

Առևտրային կազմակերպությունները հաճախ կանգնում են վերակազմավորման անհրաժեշտության առջև: Վերակազմավորումը գործնականում հնարավոր է մի քանի ձևով՝ ձուլում, բաժանում, առանձնացում, վերափոխում, միացում մեկ այլ կազմակերպության և այլն: Ցանկացած վերակազմավորում իրականացվում է հիմնադիրների կամ իրավաբանական անձ հանդիսացող մարմնի որոշմամբ՝ հիմնադիր փաստաթղթերի հիման վրա:

Այս առումով, չափազանց կարևոր է ձեռնարկությունների վերակազմավորման ճիշտ ձևակերպումը՝ պահպանելով իրավահաջորդի սկզբունքը: Խնդիրը լուծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն իրավաբանական, այլ նաև ֆինանսական տեսանկյունները:

Ֆինանսների կազմակերպման և կառավարման վրա էական ազդեցություն են գործում կազմակերպությունների գույքի ձևավորման գործընթացները: Գույքի ձևավորման աղբյուր են համարվում.

- հիմնադիրների կամ մասնակիցների դրամական և նյութական մուծումները,
- գործունեությունից ստացված եկամուտները,
- արժեթղթերից ստացված շահաբաժինները և տոկոսները,

- կրեդիտորներից ստացված փոխառությունները և դրանց հավասարեցված միջոցները,
- կապիտալ ներդրումները, լրահատկացումները բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերից,
- անփոխհատույց և բարեգործական մուծումները և այլն:

Առևտրային ձեռնարկությունների ունեցվածքի ձևավորման աղբյուրների կառուցվածքը կախված է դրանց կազմակերպարավական ձևից, գործունեության տեսակից, արտադրության և իրացման ծավալներից:

Առևտրային ձեռնարկություններն իրենց գործունեությունից ստացված շահույթը և այլ եկամուտներ պարտավոր են բաշխել մասնակիցների միջև՝ նրանց կողմից մուծված ավանդներին և այլ կարգի մուծումներին համապատասխան:

Առևտրային ձեռնարկությունների ֆինանսների կառավարումը, ըստ էության, իրական դրամական շրջապտույտի կառավարումն է:

Իրական դրամական շրջապտույտը անխզելիորեն կապված է դրամական հոսքերի ու հաշվարկների շարժման հետ, որոնք պահանջում են որոշակի ֆինանսական գործիքների կիրառում: Այդ գործիքները լինում են առաջնային և երկրորդային: Առաջնային գործիքներից են վարկը, փոխառվությունները, արժեթղթերը, դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունները, երկրորդային գործիքներից են ֆինանսական օպցիոնները, ֆյուչերսները, ժամկետային աշխատանքային պայմանագիրը, որ կնքվում է սեփականատերերի և տնտեսավարող սուբյեկտների միջև:

Բոլոր գործառնությունները կարելի է դիտել որպես ֆինանսական գործիք, եթե դրանց հիմքում առկա են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, և եթե այդ գործառնություններն ունեն պայմանագրային գնանշման ձև:

20-րդ դարի վերջին բուռն զարգացում ապրեց ֆինանսների տեսության նորդասական ուղղությունը, ըստ որի հիմք ընդունվեցին կապիտալի շուկան և խոշոր կորպորատիվ գործարարությունը: Առաջացավ ֆինանսների կառավարման նոր ուղղություն՝ ֆինանսական մենեջմենթը, որն ընդգրկում է գլխավոր հաշվապահի և ֆինանսական կառավարչի գործառնությունները:

Առաջավոր երկրների տնտեսության կորպորատիվ զարգացման առանձնահատկությունն ազդեցություն գործեց ֆինանսական մենեջմենթի վրա, որը սկսեց զարգանալ որպես միջին և խոշոր կորպորացիաների ֆինանսների կառավարման գիտություն:

Ներկայումս հայրենական գիտության խնդիրն է ուսումնասիրել արևմտյան երկրների նվաճումները, յուրացնել դրանց տնտեսության վարման մեթոդաբանությունը և մոդելը, հասկանալ ձեռնարկությունների ֆինանսների կառավարման տեսական հիմքերը:

Կարծում ենք՝ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ ներկայումս տնտեսության իրական հատվածում ձեռնարկությունների ֆինանսական մենեջմենթը հանդես է գալիս որպես գիտության արվեստ՝ ընդգրկելով ֆինանսական ռեսուրսների առավել ռացիոնալ աղբյուրներ և դրանց արդյունավետ օգտագործման միջոցով հասնելով ձեռնարկությունների ռազմավարական ու մարտավարական նպատակների իրականացմանը:

Ֆինանսական մենեջմենթի առարկան դրամական հոսքերն են, որ արտացոլում են կապիտալի շարժումը:

Առավել ընդհանուր ձևով ֆինանսների կառավարումը կարելի է սահմանել որպես ձեռնարկությունների կառավարչական գործունեության բնագավառ, որը կապված է դրամական ռեսուրսների և կապիտալի կազմակերպման հետ, ինչը հանգեցնում է ձեռնարկությունների ռազմավարական ու մարտավարական խնդիրների լուծմանը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում առևտրային ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսները ներկայացնում են դրամական միջոցների այն մասը, որոնք ձևավորվում են եկամուտների և արտաքին մուտքերի օգնությամբ: Դրանք նախատեսված են ֆինանսական պարտավորությունների և ընդլայնված վերարտադրության հետ կապված ծախսերի կատարման համար: Իսկ կապիտալը ֆինանսական ռեսուրսների այն մասն է, որն ընդգրկվում է դրամաշրջանառության մեջ՝ եկամուտ ստանալու նպատակով: Այս առումով, կապիտալը հանդես է գալիս որպես ֆինանսական ռեսուրսների փոխակերպված ձև:

Ձեռնարկությունների ֆինանսների կառավարման գործընթացում հիմնական ու առանցքային խնդիրներից են ֆինանսական ռեսուրսների և կապիտալի ձևավորումն ու օգտագործումը: Ֆինանսական ռեսուրսները և կապիտալը այդ գործընթացում հանդես են գալիս անխզելի միասնությամբ՝ դառնալով ֆինանսների հետազոտության գլխավոր առարկան:

Ֆինանսական ռեսուրսների և կապիտալի միջև սկզբունքային տարբերությունն այն է, որ ժամանակի ցանկացած պահի դրությամբ առաջինները կամ գերազանցում, կամ էլ հավասար են կապիտալին: Եթե դրանք հավասար են, նշանակում է ձեռնարկությունը չունի ֆինանսական պարտավորություններ, և ունեցած բոլոր ֆինանսական ռեսուրսներն ընդգրկված են շրջանառության մեջ: Սակայն գործնականում նման իրավիճակ գրեթե չի լինում:

Ամբողջ աշխարհում ֆինանսական հաշվետվություններն այնպես են կառուցվում, որ ֆինանսական ռեսուրսների և կապիտալի միջև տարբերություն գտնելը գրեթե անհնար է լինում: Դա բացատրվում է նրանով, որ հաշվետվություններում ներկայացվում են ոչ թե ֆինանսական ռեսուրսները, այլ դրանց փոխակերպված ձևերը՝ որպես կապիտալ և պարտավորություններ:

Նման մեկնաբանությունները միայն տեսական հիմք կարող են լինել ֆինանսական ռեսուրսների էությունը հասկանալու համար, սակայն բավարար չեն դրանք որպես ձեռնարկությունների ու ֆիրմաների ֆինանսների հետազոտության առարկա ներկայացնելիս: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսները ստորաբաժանել ըստ առանձին տարրերի՝ ելնելով դրանց միասեռ հատկանիշներից: Այս տեսակետից, ֆինանսական ռեսուրսները կարելի է ներկայացնել իբրև ներքին կամ սեփական և արտաքին կամ ներգործող միջոցներ: Ընդ որում, ներքին միջոցները բաղկացած են զուտ շահույթից և ամորտիզացիայից, իսկ փոխակերպված ձևով՝ պարտավորություններից: Չուտ շահույթը ձեռնարկությունների ու ֆիրմաների եկամուտների այն մասն է, որ գոյանում է, երբ ընդհանուր եկամուտներից հանվում են պարտադիր վճարումները (հարկային մարմիններին, բանկերին և այլն): Գործող կարգի համաձայն՝ զուտ շահույթը ձեռնարկություններն ու ֆիրմաներն օգտագործում են իրենց հայեցողությամբ:

Ինչ վերաբերում է ամորտիզացիային, ապա դա հիմնական կապիտալի և այլ արտաշրջանառու ակտիվների մաշվածքի դրամական արտահայտու-

թյունն է: Ամորտիզացիան չի ընդունում դրամական եկամուտների տեսք, թեև ընդգրկվում է ֆինանսական ռեսուրսների կազմում:

Արտաքին կամ ներգործող ֆինանսական ռեսուրսները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ սեփական և փոխառու: Այսպիսի բաժանումը պայմանավորված է կապիտալի ընդգրկման ձևերով: Որպես կանոն, արտաքին մասնակիցների կապիտալը կարող է հանդես գալ կամ ձեռնարկատիրական կապիտալի, կամ էլ վարկային կապիտալի տեսքով: Ըստ այդմ՝ ձեռնարկատիրական կապիտալը կոդավորվի որպես ընդգրկվող սեփական ֆինանսական ռեսուրս, իսկ վարկային կապիտալը՝ որպես փոխառու միջոց:

Ձեռնարկատիրականը ներդրված կապիտալ է, որի նպատակը շահույթի և ձեռնարկության կառավարմանը մասնակցության իրավունքի ապահովումն է:

Ինչ վերաբերում է վարկային կապիտալին, ապա դա դրամական կապիտալ է, որը տրամադրվում է ձեռնարկություններին ու ֆիրմաներին վերադարձելիության և վճարելիության սկզբունքով: Փոխառու կապիտալը տարբերվում է ձեռնարկատիրական կապիտալից նրանով, որ այն ոչ թե ներդրվում է ձեռնարկություններում, այլ տրամադրվում է ժամանակավոր օգտագործման՝ տոկոս ստանալու նպատակով: Ներկայումս սա համարվում է գործարարության տարատեսակ, որով զբաղվում են մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտները (բանկեր, վարկային միություններ, ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային ֆոնդեր, ներդրումային հիմնադրամներ և այլն):

Շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկատիրական և վարկային կապիտալները սերտորեն փոխկապված են, քանի որ բազմազանեցումն այսօր շուկայական տնտեսության ու ֆինանսական համակարգի հուսալիությունն ու կայունությունն ապահովող կարևոր գործոններից մեկն է: Սակայն բազմազանեցման խորացումն էլ անխուսափելիորեն հանգեցնում է կապիտալի ու ֆինանսական հոսքերի բարդացմանը:

Ընդգրկված սեփական ռեսուրսները ձեռնարկության ֆինանսական ռեսուրսների բազային մասն են կազմում, որոնք ձևավորվում են դրա ստեղծման պահին և գտնվում են վերջինիս իրավասության ներքո գործունեության ողջ ժամանակաշրջանում: Ֆինանսական ռեսուրսների այդ մասն ընդունված է անվանել ձեռնարկության հիմնադիր կապիտալ, որը ձևավորվում է բաժնետոմսերի արտարկի (էմիսիա) և, անհրաժեշտության դեպքում, դրանց հետագա վաճառքի միջոցով:

Ձեռնարկությունների ընդգրկված փոխառու միջոցները գործնականում առավել հաճախ հանդես են գալիս բանկային վարկի ու փոխատվությունների, ինչպես նաև թողարկված և վաճառքի հանված պարտատոմսերի տեսքով:

Ֆինանսական ռեսուրսները լինում են կարճաժամկետ (մինչև մեկ տարի) և երկարաժամկետ (մեկ տարին գերազանցող):

Արտադրական (առևտրային) ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ֆինանսական ռեսուրսները և կապիտալը միևնույն բնույթն ունեն և համարվում են դրամական միջոցներ: Այդ միջոցները, կատարելով շրջապտույտ, դրամական ձևից վերածվում են արտադրականի՝ ապահովելով եկամուտ: Այս գործընթացն էլ հենց ֆինանսավորումն է:

Արտադրական ձեռնարկությունների ու ֆիրմաների ֆինանսական ռեսուրսները և կապիտալը ամբողջության մեջ ներկայացնում են տնտեսավա-

րող սուբյեկտների պասիվները, իսկ դրանց արտադրական ձևն ակտիվներն են:

Շուկայական հարաբերությունները, ըստ էության, ծավալվեցին 20-րդ դարի երկրորդ կեսից, երբ արևմտյան զարգացած երկրներում տեղի ունեցավ ֆինանսական և բանկային համակարգերի սերտաճում, որի արդյունքում պետական ֆինանսները սկսեցին դիտարկվել որպես դրամական միջոցների կառավարում կամ էլ, ավելի լայն իմաստով՝ փողին առնչվող գործարար հարաբերություններ¹: Արևմտյան տեսաբանները ֆինանսները սկսեցին դիտել որպես նոր գործ սկսելու կամ գործարարության զարգացման միջոց²: Ըստ այդմ՝ նրանք ֆինանսների ուսումնասիրման օբյեկտ համարեցին ինչպես համապետական (հանրային), այնպես էլ առանձին տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում նաև ձեռնարկությունների և կորպորատիվ կառույցների ֆինանսները: Եթե համապետական ֆինանսների միջոցով հետազոտվում են տնտեսության մակրոտնտեսական մակարդակում պետական եկամուտների ձևավորման ու օգտագործման գործընթացները, ապա տնտեսավարող սուբյեկտների և կորպորատիվ կառույցների ֆինանսների ուսումնասիրման առարկան դրանց կապիտալն է, եկամուտները և դրամական ֆոնդերը: Դրան համապատասխան՝ ֆինանսներն արտահայտում են այնպիսի դրամական հարաբերություններ, որոնք կապված են կենտրոնացված ու ապակենտրոնացված դրամական եկամուտների ու ֆոնդերի կազմավորման և օգտագործման հետ:

Այսպիսով՝ ձեռնարկությունների ու կորպորացիաների ֆինանսները ներկայացնում են տնտեսական գործունեության ընթացքում ստեղծված կապիտալը, եկամուտը, դրամական ֆոնդերը և դրանց ձևավորմանն ու օգտագործմանն առնչվող դրամական հարաբերությունների ամբողջությունը:

Ֆինանսների միջոցով իրականացվում են հասարակական արդյունքի և ազգային եկամտի բաշխում ու վերաբաշխում տնտեսության բոլոր ձյուղերում, այդ թվում նաև ոչ արտադրական ոլորտում: Ֆինանսական հարաբերությունները անմիջականորեն կապված են բազմաբնույթ դրամական միջոցների ձևավորման ու օգտագործման հետ, որոնք ընդունում են ֆինանսական ռեսուրսների տեսք՝ կազմելով ֆինանսների նյութական հիմքը:

Ձեռնարկությունների ու կորպորատիվ կառույցների ֆինանսները տնտեսական հասկացություն են: Վերարտադրության գործընթացում հասարակական արդյունքի իրացումն առանց ֆինանսների տեղի չի ունենում, քանի որ վերարտադրության մեջ համամասնությունները սահմանվում են միայն արժեքային, դրամական հասկացությունների միջոցով: Ուստի ձեռնարկությունների ու կորպորատիվ կառույցների ֆինանսների գոյությունը նույնպես օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Այսպիսով՝ ձեռնարկությունների կորպորատիվ ֆինանսները ներկայացնում են դրամական միջոցների և դրամական հարաբերությունների համակարգ, որի շրջանակներում կազմավորվում ու օգտագործվում են կապիտալը, եկամուտները և դրամական ֆոնդերը: Ընդ որում, եկամուտները հանդես են գալիս տնտեսական գործունեության ընթացքում թողարկված արտադրանքի և այլ արտաիրացումային գործունեությունից ստացված հասույ-

¹ Տե՛ս **Бернер И., Коллер Ж.-К.**, Толковый экономический и финансовый словарь, т. 1, М., 1994, էջ 735:

² Տե՛ս Оксфордский толковый словарь, М., 1995, էջ 244:

թի, իսկ դրամական ֆոնդերը՝ սպառման, կուտակման և պահուստային ձևերով, որոնք հետագայում դառնում են ֆինանսական պլանավորման, վերլուծության և հսկողության առարկա: Դրամական ֆոնդերը ներկայանում են որպես դրամական միջոցների առանձնացված մասեր՝ ստանալով նպատակային օգտագործման ուղղվածություն: Դրանք կազմում են դրամական միջոցների միայն այն մասը, որ գտնվում է ձեռնարկությունների ու ֆիրմաների շրջանառության ոլորտում:

КАРЛЕН АБГАРЯН

Профессор кафедры „Финансов“ АГЭУ,
кандидат экономических наук

Экономические и методические проблемы управления финансами в предприятии.- В настоящее время как в отечественной, так и в зарубежной экономической литературе есть многочисленные работы, которые посвящены финансовым проблемам отдельных предприятий (финансовых субъектов). Однако в них, в основном, нет четких и системных подходов, характеризующих финансовое состояние предприятия. Это объясняется тем, что финансовая система основана на распределительных отношениях денежных средств, таким образом игнорируя суть и функции финансов, типичных для рыночной экономики. В западных странах в основе финансовой школы лежит теория финансов корпораций, а методическим стержнем финансов предприятий является финансовый менеджмент, как компонент управленческой науки. При этом, концепция „финансовый менеджмент“ подразумевает весь процесс важнейших финансовых проблем, которые исходят из его целей.

KARLEN ABGARYAN

Professor at the Chair of
„Finance“ at ASUE, PhD in Economics

Economic and Methodical Issues of Managing Finance in Enterprises.- There is a great variety of works both in domestic and foreign literature devoted to financial issues of individual enterprises (financial entities). However, there aren't any clear and coordinated approaches characterizing the financial condition of the enterprise. It can be explained by the fact that the financial system is based on the allocative relations of financial means, thus ignoring the essence and functions of finance, typical to market economy. In western countries the financial school is based on the theory of „corporations' finance“ and financial management plays the role of a pivot for an enterprise's financial state, being a component of managerial science. Moreover, the concept of „financial management“ presupposes the whole process of the most important financial issues which arise from its objectives.



ՌՈՄԻԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՌԻԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

Աշխատանքում ներկայացվել են «մրցունակություն», «օգտակարություն», «մրցունակության և օգտակարության համակցում» հասկացությունների նոր բնորոշումներ, դրանց գնահատման մեթոդական մոտեցումներ: Կազմակերպության մրցունակությունն առաջարկվել է գնահատել՝ ելնելով տվյալ և նպատակային շուկայում առաջատար համարվող կազմակերպության առևտրային գործունեության զուտ շահութաբերության ցուցանիշների հարաբերակցությունից: Համանման մոտեցմամբ կարելի է գնահատել նաև ցանկացած ապրանքի հարաբերական մրցունակությունը: Օգտակարությունը հաշվարկվում է որպես ապրանքի վաճառքի գնի և որակի մակարդակը բնութագրող հանրագումարային ցուցանիշի հարաբերություն: Մրցունակության և օգտակարության համակցման մակարդակն այս դեպքում ապրանքի հարաբերական մրցունակությունը և օգտակարությունը բնութագրող ցուցանիշների արտադրյալն է:

Մրցունակության բարձրացմանը միտված միջոցառումների մշակման ուղիները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է ըստ ապրանքի միավորի ինքնարժեքի նախահաշվային հողվածների որոշել տվյալ և նպատակային շուկայում առաջատար համարվող կազմակերպության կատարած փաստացի ծախսերի դրական տարբերությունները:

Հիմնաբառեր. ապրանքի և կազմակերպության մրցունակություն, ապրանքների օգտակարություն, մրցունակության և օգտակարության համակցում, մրցունակության գնահատում

Շուկայական տնտեսության պայմաններում առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքները պայմանավորված են նախօրոք որոշված մակարդակի՝ նպատա-

կային շահույթ ստանալու համար անհրաժեշտ մասշտաբի ապրանքային իրացում ապահովելու հնարավորություններից: Իսկ վերջինս հանգում է կազմակերպության և ապրանքների մրցունակության, ինչպես նաև դրանց օգտակարության մեծացմանն առնչվող խնդիրների արդյունավետ լուծմանը: Առևտրային կազմակերպությունների մրցունակության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը ՀՀ-ում էլ ավելի է կարևորվում՝ կապված այն իրողության հետ, որ ներքին շուկան խիստ սահմանափակ է, որի պատճառով անվնասաբերության կետը գերազանցող չափի ապրանքային իրացման համար անհրաժեշտ է թողարկվող ապրանքների և կազմակերպության մրցունակության բարձր մակարդակ ապահովել: Ներկայումս ՀՀ-ում թողարկվող ապրանքների գերակշիռ մասը ցածր մրցունակությամբ է բնութագրվում ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին շուկայում: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 2011 և 2012 թվականներին ՀՀ ներքին շուկայում սպառված ապրանքների ընդհանուր ծավալում սեփական արտադրանքի մասնաբաժինը համապատասխանաբար եղել է 37 և 39,8, իսկ արտահանման և ներմուծման հարաբերությունը՝ 32 և 27,7 տոկոս³⁷: Դրա հիմնական պատճառներն են ՀՀ ներքին ներդրումային ցածր հնարավորությունները, արտաքին ներդրումների ներգրավման անբավարար գրավչությունը, ապրանքների մրցունակության ցածր մակարդակը, թողարկման անվանացանկի նորացման ցածր տեմպերը, դրանց որակական հատկանիշների և արժեքային ցուցանիշների անհամապատասխանությունը սպառողների ներկայացրած պահանջներին: Այս տեսակետից կարևորվում են առևտրային կազմակերպությունների, նրանց ապրանքների մրցունակության և օգտակարության մակարդակների բարձրացմանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունները:

Ներկայումս ոլորտի մասնագետները այդ հասկացությունների տնտեսական էությունը տարբեր կերպ են մեկնաբանում: Թեպետ առավել տարածված է այն տեսակետը, որ մրցունակության մակարդակի բարձրացման առումով որոշիչ է որակի՝ սպառողների գնահատումը: Այսինքն՝ ընդունված է, որ մրցունակության ձևավորման վրա առավել էական ազդեցություն են թողնում ապրանքի որակը, գինը, դրանց համակցման ռազմավարությունը՝ օգտակարությունը սպառողի տեսակետից³⁸:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ միայն նման մեկնաբանության պահանջներով առաջնորդվելիս առևտրային գործունեության իրականացման դեպքում անտեսվում են ապրանքարտադրողների տնտեսական շահերը, ինչի պատճառով վերջիններս իրական շարժառիթներ չեն ունենում կազմակերպելու այս կամ այն ապրանքի թողարկումն ու իրացումը:

Վերը ներկայացված հակասությունների պատճառով կիրառական առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում «մրցունակություն» և «օգտակարություն» հասկացությունների տնտեսական էության և դրանց կապերին բնորոշ առանձնահատկությունների բացահայտումը:

Խնդրի լուծման հիմնական դժվարությունն այն է, որ միևնույն ապրանքի առնչությամբ սպառողները կարևորում են հնարավորինս բարձր որակն ու ցածր գինը՝ վերջիններին համակցումը (օգտակարությունը), իսկ արտադրողները՝ վաճառքի բարձր գինն ու ցածր ինքնարժեքը: Հետևապես՝ կարելի է

³⁷ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013 թ., էջ 227, 450, 451:

³⁸ Տե՛ս Ձեռնարկությունների արդյունավետ կառավարում (գործարար խաղի մեթոդիկա) /տ.գ.դ., պրոֆ. Յու. Սուվարյանի ընդհ. խմբ./, Եր., «Տնտեսագետ», 2001, էջ 40:

փաստել, որ գործնականում ապրանքների մրցունակությունը և օգտակարությունը առավել հաճախ ձևավորվում են հակասական և նույնիսկ տարաբնույթ գործոնների ազդեցությամբ: Այսպես՝ արտադրողների տեսակետից էական է մրցունակ ապրանքների թողարկումը, սպառողների համար առաջնային է դրանց օգտակարության բարձր մակարդակը: Այսինքն՝ եթե արտադրողին տնտեսապես ձեռնտու է հնարավորինս մեծ քանակով ապրանք վաճառել իրեն ձեռնտու գնով և հաճախակի, ապա սպառողների նպատակն է դրանց դիմաց քիչ վճարել և հնարավորինս ոչ հաճախակի: Ընդ որում, մրցակցային շուկայում որոշիչ են սպառողների կայացրած որոշումները ապրանքների գնման վերաբերյալ: Այս առումով, կարծում ենք, նպատակահարմար է ներկայացնել «մրցունակություն», «օգտակարություն», «մրցունակության և օգտակարության համակցում» հասկացությունների նոր սահմանումներ:

Կազմակերպության մրցունակությունը կառավարման այնպիսի մոտեցումների իրացումն է, որը թույլ է տալիս դիտարկվող ժամանակահատվածում, մրցակիցների համեմատությամբ, միավոր ներդրումների հաշվով հարաբերականորեն ավելի բարձր մակարդակի շահութաբերությամբ բնութագրվող գործունեություն ծավալել: Ապրանքի մրցունակությունը դրա բնութագրիչների այնպիսի համակցումն է, որը դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպությանը, մրցակիցների նույնատիպ ապրանքների համեմատությամբ, ապահովում է ավելի բարձր մակարդակի շահութաբերություն: Մրցունակության և օգտակարության համակցումը ապրանքի բնութագրիչների այնպիսի զուգորդության ապահովումն է, որի շնորհիվ ապրանքը սպառողների տեսակետից բնութագրվում է հարաբերականորեն ավելի մեծ օգտակարությամբ, իսկ ապրանքարտադրողները մրցակիցների համեմատությամբ ավելի բարձր մակարդակի արդյունավետությամբ բնութագրվող շահութաբեր առևտրային գործունեություն են իրականացնում:

Ներկայումս ինչպես կազմակերպությունների մրցունակության, այնպես էլ ապրանքների մրցունակության և օգտակարության քանակական գնահատման հիմնախնդիրների մեկնաբանմանը վերաբերող բազմաթիվ ուսումնասիրություններ կան: Այդուհանդերձ, դրանց համալիր գնահատման՝ մասնագետների կողմից ընդունված միասնական մոտեցումներ չկան:

Նման իրավիճակի առաջացման պատճառները տարբեր են: Նախ՝ մրցունակության և օգտակարության մակարդակի ձևավորման վրա ազդում են մեծ թվով տարաբնույթ գործոններ, ինչը դժվարացնում է դրանց ներգործության համալիր գնահատումը: Առավել հաճախ փորձ է արվում գնահատման նպատակով հաշվի առնելու այդ գործընթացի վրա ազդող հնարավորինս մեծ թվով գործոնների ազդեցության օրինաչափությունները: Սա, որոշակի առումով, կարելի է հիմնավոր համարել, քանի որ գործնականում յուրաքանչյուր կազմակերպությունում կատարվող բոլոր գործընթացներն այս կամ այն չափով ազդում են մրցունակության և օգտակարության մակարդակի ձևավորման վրա: Մյուս կողմից՝ այդ մոտեցումը հիմնավոր չէ համակարգերի տեսության պահանջների ապահովման տեսանկյունից, որի համաձայն՝ համակարգի բաղադրատարրերից յուրաքանչյուրի հատկանիշների տարանջատված գնահատումը հնարավորություն չի ընձեռում դրանք ամբողջությամբ բնութագրելու: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ցուցանիշների թվի աճին զուգընթաց աճում են նաև մրցունակության և օգտակարության գնահատման անհրաժեշտ տեղեկատվության ծավալը և ձեռքբերման ծախսերը, ինչպես նաև մեծանում է հաշվարկների բարդության աստիճանը:

Բացի դրանից, ներկայումս առաջարկվող բոլոր մեթոդական մոտեցումները նախատեսված են միևնույն շուկաներում գործող և նույնատիպ գործունեություն իրականացնող կազմակերպությունների կամ բարձր մակարդակի համասեռությամբ բնութագրվող ապրանքների մրցունակության և օգտակարության գնահատման համար: Սակայն հարկ է հաշվի առնել, որ շուկայական հարաբերությունների և մրցակցության զարգացման պայմաններում կազմակերպությունները ռիսկերի կրճատման նպատակով ձգտում են ընդլայնել թողարկվող արտադրատեսակների ու մատուցվող ծառայությունների անվանացանկը, որի դեպքում վերը նշված մոտեցումներով կատարվող գնահատումները ցանկալի արդյունքների հասնելու հնարավորություն չեն ընձեռում:

Կազմակերպության, ապրանքների մրցունակության և օգտակարության գնահատման համար նախատեսված մեթոդական մոտեցումները պետք է հնարավորություն տան լուծելու հետևյալ երկու հիմնական խնդիրները՝

1. հնարավորինս հավաստի քանակական գնահատման ենթարկել կազմակերպության և ապրանքների մրցունակության, ինչպես նաև վերջիններիս օգտակարության մակարդակը,
2. բացահայտել մրցունակության և օգտակարության ձևավորման գործընթացում տեղ գտած թերությունները:

Հաշվի առնելով «մրցունակություն», «օգտակարություն», «մրցունակության և օգտակարության համակցում» հասկացությունների տնտեսական էության վերը ներկայացված մեկնաբանությունները՝ առաջարկում ենք վերջիններիս գնահատման մեթոդական նոր մոտեցումներ: Այսպես՝ կազմակերպության մրցունակությունն առաջարկում ենք գնահատել՝ ելնելով առևտրային գործունեության շահութաբերության հարաբերական մակարդակից, որը կարելի է որոշել հետևյալ հաջորդական քայլերով՝

1. Հաշվարկել դիտարկվող ժամանակահատվածում (հաշվետու տարում) առաջատար կազմակերպության գործունեության զուտ շահութաբերությունն ըստ համախառն ծախսերի.

$$C = (Z - Z\bar{C}) : Z\bar{C} \quad (1)$$

որտեղ՝ C - ն զուտ շահութաբերության մակարդակն է ըստ համախառն ծախսերի՝ արտահայտված մասերով,

Z - ն՝ գործունեության արդյունքում ստացված համախառն զուտ հասույթը՝ դրամական միավորներով,

Z \bar{C} - ն՝ համախառն ծախսերը նույն դրամական միավորներով:

2. Հաշվարկել կազմակերպության գործունեության շահութաբերության հարաբերական մակարդակը (մրցունակությունը) բնութագրող հանրագումարային ցուցանիշը: Դա կարելի է որոշել որպես վերը ներկայացված մոտեցմամբ հաշվարկված, առաջատար մրցակից կազմակերպության գործունեության շահութաբերության ցուցանիշների հարաբերություն: Վերջինս միաժամանակ կբնութագրի կազմակերպության մրցունակության հարաբերական մակարդակը դիտարկվող նպատակային շուկայում, որը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$K\bar{U} = K\bar{C} / U\bar{C} \quad (2)$$

որտեղ՝ K \bar{U} - ն տվյալ կազմակերպության մրցունակության հանրագումարային ցուցանիշն է,

K \bar{C} - ն՝ դիտարկվող ժամանակահատվածում (հաշվետու տարում) գործունեության զուտ շահութաբերության ցուցանիշը,

U \bar{C} - ն՝ նույն ժամանակահատվածում գործունեության զուտ շահութաբերության ցուցանիշը:

Նման մոտեցմամբ կարելի է որոշել բոլոր տեսակի կազմակերպությունների մրցունակության հարաբերական մակարդակը բնութագրող հանրագումարային ցուցանիշները՝ անկախ դրանց թողարկման անվանացանկում ներառված ապրանքների քանակական և որակական բնութագրիչներից: Սակայն կիրառական առումով դա կարելի է օգտագործել միայն կապիտալի միջձյուղային տեղաշարժերի համար ձեռնառու ուղղությունների ընտրության նպատակով, որը հնարավորություն չի ընձեռում լուծելու հետևյալ երկու կարևոր խնդիրները՝

1. Ընտրել և թողարկման անվանացանկում ներառել այն ապրանքատեսակները, որոնք սպառողի տեսակետից կբնութագրվեն ավելի բարձր օգտակարությամբ:
2. Չնահատել թողարկման անվանացանկում ներառված ապրանքների մրցունակության փաստացի մակարդակը, բացահայտել առկա թերությունները, ընտրել վերջիններիս վերացման միջոցառումների մշակման հիմնական ուղղությունները:

Թողարկման անվանացանկում ապրանքների ներառման նպատակահարմարությունը որոշելու համար մրցունակությունը կարելի է գնահատել՝ ելնելով հարաբերական զուտ շահութաբերության և օգտակարության մակարդակները բնութագրող ցուցանիշներից:

Յուրաքանչյուր ապրանքի մրցունակությունը (U) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$U = \zeta / L\text{H} \quad (3)$$

որտեղ՝ ζ -ն տվյալ ապրանքի միավորի իրացումից ստացված զուտ շահույթն է՝ դրամական միավորներով,

$L\text{H}$ -ն՝ տվյալ ապրանքի միավորի թողարկման և իրացման հանրագումարային ծախսերը (լրիվ ինքնարժեքը)՝ դրամական միավորներով:

Ապրանքի օգտակարությունը (O) սպառողների տեսակետից կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$O = Q / \text{Ո} \quad (4)$$

որտեղ՝ Q -ն տվյալ ապրանքի միավորի սպառման գինն է՝ դրամական միավորներով,

Ո -ն՝ տվյալ ապրանքի որակի մակարդակը բնութագրող հանրագումարային ցուցանիշը:

Յուրաքանչյուր ապրանքի նշանակությամբ պայմանավորված՝ կարելի է որոշել ոլորտի լավագույն մասնագետներից կամ սպառողներից ձևավորված խմբի փորձագիտական ցուցանիշը միավորային գնահատման արդյունքների հիման վրա:

Նման մոտեցմամբ որոշված օգտակարության ցուցանիշով կարելի է պարզել, թե սպառողը ապրանքի միավոր օգտակար հատկանիշի դիմաց որքա՞ն գումար է վճարում: Արտադրական նշանակության ապրանքների օգտակարությունը կարելի է որոշել նաև՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե դիտարկվող ժամանակահատվածում սպառող կազմակերպության գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթի որ մասն է բաժին ընկնում տվյալ ապրանքին: Սակայն նման հաշվարկները կիրառական առումով բարդ են, հետևապես՝ ոչ նպատակահարմար:

Գործնականում կարևոր է նաև տվյալ և մրցակից կազմակերպությունների կողմից միևնույն կամ տարբեր պահանջմունքների բավարարման հա-

մար նախատեսված ապրանքների մրցունակության և օգտակարության ցուցանիշների հարաբերակցության վերլուծությունը: Վերջինս թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել տվյալ կազմակերպության առաջարկած ապրանքների մրցունակության և օգտակարության փաստացի հարաբերական մակարդակը:

Կարելի է հաշվարկել նաև ապրանքների մրցունակության և օգտակարության հատկանիշների համակցման մակարդակը բնութագրող հանրագումարային ցուցանիշը, որը կներկայացնի դրանց արտադրյալը: Մեր կարծիքով՝ մրցունակության և օգտակարության փաստացի մակարդակի օբյեկտիվ գնահատման առումով ավելի նպատակահարմար է դրանց առանձին դիտարկումն ու համեմատումը մրցակիցների համանման ցուցանիշների կամ պետական պարտատոմսերի (բանկային ավանդների ներգրավման տոկոսադրույքների) եկամտաբերության մակարդակի հետ:

Ակնհայտ է, որ մրցունակության և օգտակարության ցուցանիշների որոշումը նշված մոտեցումներով, հիմնավոր լինելով հանդերձ, այնուամենայնիվ, հնարավորություն չի ընձեռում ապահովելու այդ գործընթացին վերաբերող երկրորդ պահանջը: Հետևապես՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու կազմակերպության գործունեության շահութաբերության և ինքնարժեքի փաստացի մակարդակի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների առանձնահատկությունների գնահատման այնպիսի մեթոդական սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան բացահայտելու դրանց հիմնական ուղղությունները: Առաջարկում ենք մրցունակությունը գնահատել՝ ելնելով վերջինիս ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների առնչությամբ կատարվող աշխատանքների արդյունավետության փաստացի մակարդակից:

Հեռանկարային առումով, մրցունակության մակարդակի բարձրացման տեսակետից հատկապես կարևորվում են մրցակցային ռազմավարության ճիշտ ընտրությունը և դրա արդյունավետ իրականացումը: Ընթացիկ ժամանակահատվածում որոշիչ նշանակություն ունի թողարկման անվանացանկում ներառված յուրաքանչյուր ապրանքատեսակի մրցունակության գնահատումը: Կազմակերպության մրցունակությունը, ապրանքների մրցունակությունն ու օգտակարությունն անմիջական կախվածության մեջ են մի կողմից՝ թողարկման անվանացանկում ներառված ապրանքների նախագծման աշխատանքների, մյուս կողմից՝ դրանց արտադրության և իրացման գործընթացների կառավարման արդյունավետության մակարդակից: Հետևապես, երկրորդ պահանջի ապահովման շարժառիթներից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում լուծելու հետևյալ երկու հիմնախնդիրները՝

1. ընտրել այն հիմնական գործոնները, որոնք հնարավորություն կընձեռեն քանակական գնահատման ենթարկելու ապրանքների նախագծման, արտադրության և իրացման աշխատանքների կատարման արդյունավետության փաստացի հարաբերական մակարդակը,
2. մշակել այնպիսի մեթոդական մոտեցումներ, որոնք թույլ կտան հնարավորինս օբյեկտիվորեն գնահատել ապրանքների մրցունակության և օգտակարության մակարդակը բնութագրող ցուցանիշները:

Այս տեսանկյունից՝ մրցունակության և օգտակարության որոշման հիմնախնդիրն առնչվում է ապրանքների թողարկման և իրացման ծախսերի, գնագոյացման քաղաքականության արդյունավետության, որակի մակարդակի գնահատման մեթոդական սկզբունքների ընտրությանը:

Ըստ այդմ՝ նախ առաջարկում ենք հաշվարկել առաջատար կազմակերպության միևնույն ապրանքների լրիվ ինքնարժեքների տարբերությունը: Դա հնարավորություն կտա գնահատելու տվյալ կազմակերպությունում ապրանքների թողարկման և իրացման ծախսերի կրճատման առկա պահուստները: Վերջիններիս օգտագործմանն ուղղված միջոցառումների մշակմանն ուղղությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է ըստ ինքնարժեքի որոշման նախահաշվային հողվածների հաշվարկել տվյալ և նպատակային շուկայում առաջատար կազմակերպության կողմից ապրանքի միավորի թողարկման և իրացման փաստացի ծախսերի դրական տարբերությունները:

Ապրանքի մրցունակությունը և օգտակարությունը կախված են նաև գնագոյացման ոլորտում կազմակերպության իրականացրած քաղաքականության (ապրանքների վաճառքի առաջարկվող գնի սահմանման) արդյունավետությունից: Ապրանքի մրցունակության և օգտակարության մակարդակի գնահատման հիմք է դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպության վաճառած ապրանքների միջին թվաքանակական գինը: Գնագոյացման քաղաքականության արդյունավետությունը կարելի է գնահատել՝ ելնելով դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպության վաճառած ապրանքների միջին թվաքանակական գնի և նպատակային շուկայում նույն ապրանքի իրացման առավելագույն գնի հարաբերակցությունից: Այդ ցուցանիշի առավելագույն արժեքը կարող է կազմել մեկ միավոր: Ըստ առաջին մոտեցման՝ որքան այդ ցուցանիշը մոտ է մեկին, այնքան ավելի արդյունավետ է նաև կազմակերպության գնագոյացման քաղաքականությունը: Սակայն որոշ դեպքերում կազմակերպությունը գնագոյացման ձկուն քաղաքականությամբ նախատեսված մակարդակի չափով նպատակային շահույթ ստանալու համար կարող է հնարավորություններ ստեղծել:

Օգտակարության որոշման տեսակետից կարևոր նշանակություն ունի ապրանքների որակի գնահատման մեթոդական մոտեցումների ճիշտ ընտրությունը: Մեր կարծիքով՝ նպատակահարմար է ընտրություն կատարել փորձագիտական միավորային գնահատման արդյունքների հիման վրա: Ընդ որում, արդյունաբերական նշանակության ապրանքների գնահատումները հարկ է իրականացնել ոլորտի մասնագետներից, իսկ զանգվածային սպառման ապրանքներինը՝ սպառողներից կազմված խմբի փորձագիտական միավորային գնահատումների հիման վրա: Կարծում ենք՝ գործնականում ավելի նպատակահարմար է կիրառել 1–100 միավորային համակարգը: Վերջինս ավելի լայն հնարավորություններ է ընձեռում տարբերակված գնահատումների իրականացման և ցուցանիշների հաշվարկի պարզեցման առումով: Ապրանքի որակը բնութագրող հանրագումարային ցուցանիշը կորոշվի որպես փորձագիտական միավորային գնահատման միջին արժեքի հարաբերություն 100-ի: Այս ցուցանիշը նույնպես ներառում է ամբողջի գաղափարը, որի առավելագույն արժեքը կարող է լինել մեկ միավոր:

РОМИК АВАНЕСЯН

Доцент кафедры „Управления“ АГЭУ,
кандидат экономических наук

К вопросу о раскрытии экономической сущности конкурентоспособности, полезности товаров и их оценки.- В статье представлены новые определения экономической сущности понятий конкурентоспособности и полезности товаров, а также методические рекомендации их оценки. Относительная конкурентоспособность фирмы предлагается определить как соотношение рентабельности коммерческой деятельности данной организации и лидера целевого рынка. Идентичными подходами можно определить также абсолютные и относительные уровни конкурентоспособности любого товара. Полезность можно определить как соотношение цены реализации и обобщающего показателя качества продукции. Путем умножения относительных показателей конкурентоспособности и полезности товаров получим уровень их сочетания.

Представлены также методические подходы к оценке особенностей воздействия основных факторов на процесс формирования фактических уровней себестоимости и рентабельности производимых товаров. Для этого необходимо по статьям калькуляции себестоимости определить разницу фактических расходов товара данной организации и лидера целевого рынка, что дает возможность выявить имеющиеся недостатки этого процесса и определить основные пути разработки мероприятий по их устранению.

ROMIK AVANESYAN

Associate Professor at the Chair of
„Management” at ASUE, PhD in Economics

On the Issue of Disclosing the Concepts of Economic Nature of Competitiveness, Utility of Goods and Their Evaluation Methods.- New definitions of the concept of economic nature of competitiveness, utility of goods and methodical recommendations of these indicators are suggested in the article. Relative competitiveness of any company is suggested to disclose the ratio between profitability of company's commercial transactions and the leader of the objective market. The absolute and relative level of competitiveness of each product could be calculated by identical approaches. The product utility is a relation between the sales price and the general indicator of the product quality. Multiplication of the indicators of competitiveness and product utility discloses the level of their combination.

Methodological approach to the feature of the main factors' impact on the formulation process of the actual level of cost and profitability of goods produced, is represented. For this goal the ratio between the actual cost of goods for the objective market leader and given company should be calculated. This gives the possibility to find the main disadvantages in this process and create the approaches for their elimination.



ԱՐՄԵՆ ԿԱՐԱՆԱՆՅԱՆ

ՀՊՏՀ ուսումնական կազմակերպական բաժնի պետ,
կառավարման ամբիոնի ասիստենտ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաջողված կարելի է համարել ընդհանուր կադրային ռազմավարությունը, որը միավորում է կազմակերպության քաղաքականության տարբեր ոլորտները անձնակազմի, քաղաքականության պլանավորման և աշխատուժի կիրառման կողմերի հարաբերակցությամբ: Կադրային քաղաքականությունը պետք է զարգացնի կազմակերպության՝ տեխնոլոգիական փոփոխություններին և շուկայի պահանջներին հարմարվելու ընդունակությունը: Այսպիսով՝ կադրային քաղաքականությունն այն «քարտեզն» է, որով պետք է առաջնորդվել անձնակազմի կառավարման յուրաքանչյուր փուլում:

Հիմնաբառեր. կադրային քաղաքականություն, կադրային ռազմավարություն, կադրերի պլանավորում, կանխատեսում

Կազմակերպության գլխավոր բաղադրիչը աշխատակիցներն են: Ընտրության և ուսուցման առումով, նրանք «խլում» են ներդրված կապիտալի հիմնական մասը, սակայն գործունեության անընդհատության պահպանումը, բնականաբար, մեծ ծախսեր է պահանջում: Մի կազմակերպության արտադրողականությունը կարող է շատ բարձր լինել և տասնապատիկ գերազանցել այլ կազմակերպության արտադրողականությունը, եթե հաշվի են առնվում և արդյունավետորեն են կիրառվում մարդկային ռեսուրսները կամ մարդկային կապիտալը:

Պիտերսը և Ուոտերմանը¹ հետազոտել են մի շարք ամերիկյան կազմակերպությունների փորձը: Նրանք ուսումնասիրել են, թե ինչպիսի գործոններ

¹ Տե՛ս **Պիտերս Թ., Վոտերման Բ.**, В поисках совершенства. Уроки самых успешных компаний Америки. М., „Альпина Паблишер“, 2011, էջ 139 –141:

են ազդում կազմակերպության արտադրողականության բարձրացման վրա, որ գործոնն է առավել առաջնային այս իմաստով: Ըստ հետազոտության արդյունքների՝ բոլոր կազմակերպությունների համար առանձնացված 8 հիմնական գործոններից ամենակարևորն էր «արտադրողականության բարձրացումը աշխատակիցների մասին հոգալու շնորհիվ»: Ընտրված կազմակերպությունները ներդրված կապիտալը չէին դիտարկում որպես արդյունավետության բարձրացման ավելի կարևոր գործոն: Նրանք իրենց աշխատակիցներին էին համարում այդպիսին՝ անկախ այն բանից, որ մարդիկ չեն կարող «ձեռք բերվել», «հաշվառումից հանվել» կամ «կրկնապատկվել» այնքան արագ և հեշտ, կերպով, որքան կազմակերպության բոլոր մյուս ակտիվները:

Այն, որ անձնակազմը չափազանց կարևոր գործոն է, որ մարդկանց կազմակերպությունում վերաբերվում են որպես կազմակերպական արժեքի, ավելի հստակ երևում է կադրային քաղաքականությունից:

Հաջողված կարելի է համարել ընդհանուր կադրային ռազմավարությունը, որը միավորում է կազմակերպության քաղաքականության տարբեր ոլորտները: Կադրային քաղաքականությունը պետք է զարգացնի կազմակերպության՝ գոնե մոտ ապագայում կանխատեսվող տեխնոլոգիական փոփոխություններին և շուկայի պահանջներին հարմարվելու ընդունակությունը²:

Ճիշտ մշակման դեպքում դա բխում է կազմակերպության առևտրային կամ գործառնության նպատակներից: Կադրային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը աշխատակազմի անվտանգության և առողջության ապահովումն է:

Մեկ այլ գործոն է աշխատակիցներին կազմակերպության աշխատանքներում ներգրավելը (մասնակցություն մոտակա պլանների մշակմանը կամ կառավարչական կարևորագույն որոշումների մասին տեղեկատվության տրամադրում): Այսինքն՝ կարևորվում են շահադրդման տարբեր ձևեր: Եթե կազմակերպությունը չունի կադրային քաղաքականությունն արտացոլող փաստաթուղթ, դա դեռ չի նշանակում, թե դեկավարությունն ի վիճակի չէ արդյունավետորեն կատարել իր գործառնությունները:

Կադրային պլանավորման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, համաձայնեցվածությունը, հստակ և ճշգրիտ հերթականությունը, պլանային գործընթացի եզակիության ապահովումը կադրային քաղաքականության ձևավորման կարևորագույն բաղադրիչներն են:

Համապատասխան քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է վերլուծել կադրերի զարգացման պլանային ցուցանիշները, բացահայտել սոցիալական և տնտեսական օրենքներին, արտադրության և հասարակության զարգացման փոփոխվող պայմաններին դրանց համապատասխանությունը, օպտիմալացման ուղիները:

Այս առումով, նորմատիվային բազայի կարգավորումը ենթադրում է բոլոր փուլերում կադրերի զարգացման պլանային ցուցանիշների հաշվառում, առկա հնարավորությունների գնահատում, քաղաքականության իրականացում³:

Ըստ այդմ՝ պայմանականորեն առանձնացնենք երեք հիմնական փուլեր:

² Տե՛ս **Արմստրոնգ Մ.**, Стратегическое управление человеческими ресурсами. М., „ИНФРА-М“, 2002, էջ 56:

³ Տե՛ս **Бычкова А.**, Управление персоналом. Пенза, Изд-во Пенз. гос. ун.-та, 2005, էջ 38–42:

Առաջին փուլում հիմնավորվում է կազմակերպության կադրային ներուժի զարգացման նպատակը՝ ձևավորելով կառուցվածքային մակարդակների ամբողջություն:

Այդ կառուցվածքը ներառում է որոշակի ենթանպատակներ: Այսպես՝

- 1) կադրային քաղաքականության ոլորտում գիտական հետազոտությունների իրականացում,
- 2) կառավարման համակարգի նյութատեխնիկական ապահովում,
- 3) կրթական հաստատությունների, աշխատողների մասնագիտական արդյունավետության բարձրացման նպատակով տրամադրվող ֆոնդերի առանձնացում,
- 4) մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության ապահովում:

Երկրորդ փուլը ներառում է մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի զարգացման ծրագրերի իրականացման մեթոդական ուղեցույցների մշակումը:

Կադրային համակարգի զարգացման ծրագրում, մեր կարծիքով, առավելապես պետք է կարևորվեն.

- 1) համակարգի կառուցվածքը,
- 2) համակարգի և դրա կառուցվածքային միավորների գործունեության պլանավորման և գնահատման հիմնական ցուցանիշները,
- 3) կադրային համակարգի զարգացման մակարդակի վերլուծությունը,
- 4) կադրային համակարգի զարգացման կանխատեսումները,
- 5) նախատեսվող ժամանակահատվածում կադրային համակարգի զարգացման նպատակի քանակական բնորոշումը,
- 6) կադրային քաղաքականության մշակման կառավարման կազմակերպական կառուցվածքի որոշումը,
- 7) կադրային քաղաքականության ռեսուրսային հատվածի ապահովումը:

Երրորդ փուլում արդեն ելակետային կանխատեսումների հիման վրա, ընտրվում է կադրային ծրագրի արդյունավետ տարբերակ և իրականացվում:

Հարկ է նշել, որ ՀՀ առևտրային բանկերի գերակշիռ մեծամասնությունն այսօր ունի իր կադրային քաղաքականությունը: Օրինակ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ անձնակազմի կառավարման քաղաքականության նպատակն է սահմանել հիմնական խնդիրները և իրագործման սկզբունքները, աշխատողների հավաքագրմանը, վարձատրմանը, շահադրդմանը, ազատմանը, վարվելակերպի և ներքին կարգապահության կանոններին, ատեստավորման կազմակերպմանն ու անցկացմանը, վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն առնչվող դրույթները, կառավարման մարմինների և ղեկավարների իրավասությունները:

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ կադրային քաղաքականությունը մարդկային ռեսուրսների կառավարման ամբողջական, երկարաժամկետ ռազմավարություն է, որի հիմնական նպատակներն են.

- մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատակազմի ձևավորումը, որն ընդունակ կլինի արդյունավետ կերպով իրագործելու զարգացման ռազմավարությունը, լուծելու բանկի առջև ծառայած խնդիրները, կատարելու գործող օրենսդրության և բանկի ներքին իրավական ակտերի պահանջները,
- անհրաժեշտ որակի և քանակի աշխատանքային ռեսուրսների նկատմամբ բանկի պահանջների լրիվ և ժամանակին բավարարումը:

Բանկի անձնակազմի կառավարումն իրականացվում է համաձայն գործող օրենսդրության, կադրային քաղաքականության ներքին կանոնադրության և դրանով սահմանված իրավական այլ ակտերի⁴:

Այսպիսով՝ կադրային քաղաքականությունն այն «քարտեզն» է, որով պետք է առաջնորդվել անձնակազմի կառավարման յուրաքանչյուր փուլում:


Անձնակազմի կառավարման համակարգին վերաբերող ընդհանուր մեթոդական բնույթի պահանջները բազմազան են, բայց, միևնույն ժամանակ, բավական խիստ և որոշակի: Նախ՝ համակարգի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ճյուղային բնույթի, այնպես էլ ֆինանսավարկային հաստատության առանձնահատկությունները: Համակարգը պետք է ունենա համալիր բնույթ, և գործունեությունն ապահովվի բանկի կառավարման բոլոր մակարդակներում՝ ճշտորեն արտացոլելով հեռանկարային պահանջներն ու օպերատիվ խնդիրները: Բացի այդ, համակարգի մշակման փուլում պարտադիր կարգով պետք է զուգակցվեն մի կողմից՝ առանցքային տարրերի կայունության անհրաժեշտ մակարդակը, մյուս կողմից՝ բանկի ներքին և արտաքին միջավայրերի կանխատեսվող փոփոխություններին հարմարվելու ունակությունը:

Ի վերջո, որպես անձնակազմի կառավարման համակարգի անհրաժեշտ և պարտադիր տարր պետք է դիտարկել նրա գործնական ներգրավման, շահագործման ու հետագա զարգացման պաշտոնական գործընթացը:

Անձնակազմի կառավարման համակարգը նպատակահարմար է բաժանել երեք փոխկապակցված մասերի.

- կառավարման ռազմավարություն,
- գործառնական ենթահամակարգեր,
- ռեսուրսային ապահովման բլոկ:


Ըստ այդմ՝ ՀՀ առևտրային բանկերում անձնակազմի կառավարման տիպային կառուցվածքը կունենա հետևյալ տեսքը.



⁴ Տե՛ս www.acba.am «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ կանոնադրություն (նոր խմբագրությամբ):

Անձնակազմի զարգացման ենթահամակարգ	<ul style="list-style-type: none"> • ուսուցում և վերապատրաստում • աշխատանքային արդյունքների գնահատում • աշխատուժի տեղաշարժ
Առաջխաղացման պահուստի կառավարման ենթահամակարգ	<ul style="list-style-type: none"> • պահուստի պլանավորում • պահուստի ընտրություն • պահուստի պատրաստում
Աշխատանքի վարձատրության ենթահամակարգ	<ul style="list-style-type: none"> • հիմնական վարձատրություն • լրացուցիչ վարձատրություն
Սոցիալ-հոգեբանական ենթահամակարգ	<ul style="list-style-type: none"> • սոցիալ-տնտեսական աջակցություն • հոգեբանական աջակցություն

Գծանկար 1. Անձնակազմի կառավարման կառուցվածքն ըստ կառավարման ռազմավարության և գործառնական ենթահամակարգերի



Գծանկար 2. Անձնակազմի կառավարման կառուցվածքն ըստ ռեսուրսային ապահովման բլոկի

Անձնակազմի կառավարման ռազմավարությունը բանկի ընթացիկ դրությունն ու հեռանկարային զարգացումն արտացոլող գործունեության կադրային առանցքային հիմնախնդիրների լուծման սկզբունքային մոտեցումների ամբողջությունն է: Ժամանակակից պայմաններում երկարաժամկետ կադրային ռազմավարության ձևավորման վրա անմիջականորեն ներազդում են հետևյալ ներքին և արտաքին գործոնները.

- բանկի առաքելությունը՝ որպես վարկային կապիտալի շուկայի համապատասխան հատվածներում դրա գործունեության և հետագա զարգացման ընդհանրական հիմնադրույթ,
- աշխատանքային ռեսուրսների շուկայի վիճակը,
- բանկի վարկանիշը,
- բանկի ֆինանսական հնարավորությունները անձնակազմի պահպանման և կառավարման համակարգի գործունեության ապահովման գծով,
- անձնակազմի ծառայության աշխատակիցների իրազեկության աստիճանը,
- շուկայավարական համապատասխան ծրագրերի առկայությունը,
- քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնիկական, միջազգային և այլ հանգամանքներ:

Բացի այդ, ուղղակի ազդեցություն կարող են ունենալ նաև սուբյեկտիվ բնույթի բազմաթիվ գործոններ. ասենք՝ բանկի գործադիր տնօրենի՝ անձնակազմի կառավարման դերի և նշանակության ըմբռնումը, գծային և ֆունկցիոնալ ստորաբաժանումների ղեկավարների շարքում անձնակազմի կառավարման ծառայության դերն ու հեղինակությունը, բանկի հիմնադիրների (բաժնետերեր, փայատերեր) վերաբերմունքը անձնակազմի կառավարման ֆունկցիոնալ ստորաբաժանման նկատմամբ:

Գործառնական ենթահամակարգը բանկերում հանդես է գալիս որպես տեղային բնույթի կառավարչական խնդիրների լուծմանն ուղղված ամբողջական համակարգի ինքնավար տարր: Հիմք ընդունելով կառավարման ընդհանուր ռազմավարության շրջանակներում ձևավորված միասնական մեթոդական սկզբունքներն ու մոտեցումները՝ այդ ենթահամակարգը ներառում է որոշակի կանոնակարգեր, կառավարչական մեխանիզմներ և ընթացակարգեր:

Բանկային հաստատությունների կառուցվածքում մեր կողմից առաջարկվել է անձնակազմի կառավարման գործառնական 6 ենթահամակարգ.

1. պլանավորման,
2. ներգրավման,
3. զարգացման,
4. առաջխաղացման,
5. աշխատանքի վարձատրության,
6. սոցիալ-հոգեբանական աջակցման:

Ենթահամակարգերը պետք է մեթոդապես համատեղելի լինեն, իսկ դրանցից յուրաքանչյուրի գործունեության վերջնական արդյունքների համար պատասխանատվություն պետք է կրեն համապատասխան ծառայության աշխատակիցները:

Ռեսուրսային բլոկն ապահովում է գործառնական բոլոր ենթահամակարգերի գործունեությունը՝ իրականացնելով տեղեկատվական, գործիքային, նորմատիվամեթոդական, կազմակերպական, ֆինանսական գործառնություններ:

Այսպիսով՝ մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործումը ՀՀ առևտրային բանկերը տարեցտարի ավելի են կարևորում: Այս համատեքստում հիմնական շեշտը պետք է դրվի կադրերի մասնագիտական որակավորման բարձրացման վրա:

АРМЕН КАРАХАՆՅԱՆ

Начальник учебно-организационного отдела,
ассистент кафедры „Менеджмента” АГЭУ

Приоритетные направления кадровой политики коммерческих организаций.- Как состоявшуюся кадровую политику, можно назвать общую кадровую стратегию, которая объединяет различные сферы политики организаций – персонала, соотношения сторон политики планирования и применения рабочей силы. Кадровая политика должна поднимать способность адаптации организации к технологическим изменениям и рыночному спросу, которые можно прогнозировать в ближайшем будущем.

Таким образом, можно сделать вывод, что кадровая политика представляет собой „карту”, по которой следует руководствоваться на каждом этапе управления персоналом.

ARMEN KARAKHANYAN

Head of Educational-Organizational Department,
Assistant at the Chair of „Management” at ASUE

Priority Directions of Personnel Policy in Commercial Organizations.- The whole personnel strategy can be considered successful if it unites various spheres of policy of the organizations - the personnel, parities of the parties of policy planning and labor. Personnel selection should raise the ability of adaption in organizations to technological changes and market demands which can be predicted in the nearest future.

Thus, it is possible to draw a conclusion, that personnel selection represents a „map” which should guide each stage of personnel management.



ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

ՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՆՅՈՒԹ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԱՅԱՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Ներկայումս ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրականացվում են մի շարք օրենսդրական և կազմակերպական բարեփոխումներ՝ փորձելով ոլորտի պետական կառավարման համակարգը համապատասխանեցնել միջազգային լավագույն չափորոշիչներին, նպատակ ունենալով ապահովելու կառավարման համակարգի աշխատանքների թափանցիկություն և արդյունավետություն:

Հիմնաբառեր. ոչ մետաղական հանքանյութեր, վերամշակում, պետական կարգավորում, մրցունակ ձեռնարկություններ, արտահանման շուկաներ, մարքեթինգ

Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման կարողությունների ընդլայնման հիմնախնդիր-

ների հետազոտումն և լուծման ուղղությունների նախանշումը Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեն, քանի որ արտահանմանը միտված ուղղված տնտեսությամբ միայն կարող ենք ունենալ կայուն և դինամիկ զարգացող մրցունակ երկիր:

Նշված ոլորտի ձեռնարկությունների արտահանման կարողությունների ընդլայնման նպատակով կատարվող օրենսդրակազմակերպական քայլերը կարելի է բաժանել 7 խմբի՝

- նորմատիվային և հայեցակարգային ակտերի ընդունում-գործարկում,
- արտադրատնտեսական և մարքեթինգային լայնածավալ հետազոտությունների իրականացում,
- «փափուկ» ֆինանսական միջոցների հասանելիություն,
- պետություն – մասնավոր հատվածների միջև գործընկերության զարգացում,
- արտադրություն-գիտություն-կրթություն կապի ապահովում,
- մատչելի և հուսալի արտահանման ենթակառուցվածքների ստեղծում-վերագործարկում,
- ճյուղի ձեռնարկությունների միջև արտադրատնտեսական համագործակցություն (կոոպերացում):

Ընդերքօգտագործման բնագավառում ներկայումս գերիշխում են ցածր արտադրողականություն և շահագործման արդյունավետություն ու բարձր էներգատարություն ունեցող տեխնոլոգիաները: Այս ոլորտում ազգային քաղաքականության հիմնաքարը պետք է դառնա բարձր տեխնոլոգիաների կիրառումը: Դա պահանջում է ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման զարգացման ճկուն ու արդյունավետ ռազմավարության և դրանից բխող հստակ գործողությունների ծրագրի ներդրում:

Ձեռնարկությունների գործունեության վերականգնման սկզբնական փուլում մի շարք արտադրատեսակների արտադրությունը և արտահանումը խթանելու համար հարկ է գնահատել պահպանված ձեռնարկությունների առկա վիճակը (տնտեսական և տեխնիկական աուդիտ)՝ ընտրելով ոլորտի առավել շահութաբեր և տնտեսության համար կարևոր արտադրատեսակները, պահպանված ձեռնարկությունները դասակարգել ըստ դրանց արտադրության համար կարևորություն ունեցող առաջնության՝ սկզբնապես առանձնացնելով 5–6 ձեռնարկություն: Ընտրված մի շարք արտադրատեսակների արտադրության համար անհրաժեշտ են տեխնոլոգիական ռեժիմների և գործընթացների համալիր վերամշակումներ:

Ձեռնարկությունների վերագործարկումն արդյունավետ կազմակերպելու նպատակով պետք է մշակել գործարարության մրցունակ ծրագրեր առաջնահերթ արտադրատեսակների համար, որոնք կներառեն բոլոր հարցերի պատասխանները (սպառման շուկայի կայունություն, հումքի ձեռքբերման հնարավորություններ, ռիսկի գործոններ, ներդրումային ծախսեր, ներդրումների հետզնման ժամկետներ և այլն): Բանկերի համար ընդունելի բիզնես-ծրագրերի մշակումից բացի, պետությունը պետք է աջակցի համապատասխան շահագրգիռ խմբերին, միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին՝ տվյալ ծրագրերի պատրաստման հարցում:

2008–2009 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամը մեկ անգամ ևս հիշեցրեց տնտեսագետներին և քաղաքական գործիչներին, որ առանց պետության ակտիվ մասնակցության շուկայական տնտեսությունը չի կարող

լուծել սոցիալ-տնտեսական առկա հիմնախնդիրները: Հետևաբար՝ ոչ մետաղական հանքարդյունաբերության ձեռնարկություններում պետական բաժնեմասի առկայությունն, անկասկած, արդարացված և սպասված է, մի բան, որ թույլ կտա ներդրողների վստահությունը շահել և նոր երաշխիք ապահովել: Միաժամանակ պետք է մշակել նաև պետական բաժնետոմսերը հետագայում վերավաճառելու քաղաքականություն և հստակ ժամկետներ՝ նախապատվությունը տալով նախագծի մյուս բաժնետերերին:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն հայեցակարգի ընդունումը, որի մշակման և հաստատման աշխատանքներն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձգձգվում էին: Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգը (հաստատվել է 10.10.2013 թ.) հնարավորություն կտա կյանքի կոչելու բնագավառի տնտեսական, իրավական և կազմակերպչական բնույթի միջոցառումները:

Կարծում ենք՝ հայեցակարգում պետք է առանձին բաժնով անդրադառնալ արտահանման հիմնախնդիրներին, ինչը թույլ կտա հասցեական և առարկայական դարձնել պետական քաղաքականության ուղղությունները:

Նշված հայեցակարգի հիման վրա առաջարկում ենք մասնավոր հատվածի հետ համատեղ մշակել առանձին հանքանյութերի արդյունահանման և վերամշակման բիզնես-նախագծեր, որոնք կապահովեն արդյունավետության և հասցեականության ավելի բարձր մակարդակ:

ՀՀ Կառավարությունը ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման կարողություններն ընդլայնելու նպատակով պետք է արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ, բացի ցեմենտի արդյունաբերությունից, ընդգրկի նաև ծայնա- և ջերմամեկուսիչ նյութերի, գտիչ փոշիների, բազալտե անընդհատ մանրաթելքի, ծուլածո սալիկների և ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումից ստացվող այլ արտադրատեսակների արտադրությունը՝ դա դիտարկելով որպես արտահանման գերակա ուղղություններից մեկը:

ՀՀ Կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 654-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրության համաձայն, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը փոխանցվեցին հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման լիազորությունները (գործառույթները), սակայն ընդերքի վերամշակման գործառույթի փոխանցում հստակորեն սահմանված չէ, ինչն էլ երկու նախարարությունների տարածայնության առարկան է: Առաջարկում ենք ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունում կատարել փոփոխություններ. ընդերքի վարչությանը փոխանցել նաև ընդերքի վերամշակման ծրագրերի մշակման գործառույթը: Նշենք նաև, որ փաստացիորեն ընդերքի վարչությունն է իրականացրել ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքները: Կարծում ենք՝ լավագույն արդյունքի համար հարկ է վարչությունը համալրել համապատասխան կադրերով:

Ապրանքների ծագման երկրի հավաստագիր ստանալու համար, բացի դիմում-հայտարարագրից, Առևտրաարդյունաբերական պալատի կողմից պահանջվող փաստաթղթերը հնարավոր չէ էլեկտրոնային եղանակով տրա-

մադրել, ինչը արտահանման գործընթացն ավելի ժամանակատար և աշխատատար է դարձնում: Առաջարկում ենք վերանայել փաստաթղթերի ցանկը՝ հաշվի առնելով, որ էլեկտրոնային ստորագրության լայն տարածումը հնարավորություն է տալիս պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու էլեկտրոնային եղանակով:

Ոլորտի արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունեն նաև օրենսդրական դաշտում համապատասխան փոփոխությունները, որոնք կսահմանեն՝

- ա.** Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման սկզբունքներն ու կարգը,
- բ.** ոչ մետաղական հանքանյութերը վերամշակելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանելու հիմնախնդիրները,
- գ.** երկրորդային ռեսուրսօգտագործման ազգային հայեցակարգ՝ առանձնացնելով ոլորտի ռազմավարական գործողությունների գերակայությունը,
- դ.** «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը համալրել նոր ենթաօրենսդրական ակտերով և կանոնակարգերով, որոնք կապահովեն երկրորդային հումքի օգտագործման տնտեսական խթանման միջոցառումների իրացումը և գործարարության միջավայրի էկոլոգիապես հիմնավորված զարգացումը,
- ե.** աշխատանքների անվտանգության ապահովման դրույթները,
- զ.** միջազգային չափորոշիչների կիրառման մեխանիզմները, ժամանակացույցը և այլն:

Ոլորտի ձեռնարկությունների արտահանման կարողություններն ամբողջապես օգտագործելու համար խիստ անհրաժեշտ է արտաքին շուկաների ուսումնասիրումը, որը կնպաստի արտադրատեսակների ճիշտ ընտրությանը և իրացման արդյունավետ ցանցի ստեղծմանը:

Արտաքին շուկայում գործարարության ծավալումն անխուսափելիորեն կապված է որոշակի վտանգների հետ, որոնք սպառնում են համապատասխան տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների որոշակի շահերին: Այլ կերպ ասած՝ արտաքին տնտեսական գործունեությունը կապված է ամենատարբեր արտաքին ռիսկերի հետ: «Արտաքին ռիսկ» ասելով հասկանում ենք հնարավոր անբարենպաստ իրադարձությունները, որոնք կարող են տեղի ունենալ, և որոնց պատճառով արտաքին տնտեսական գործունեություն ծավալողը կարող է գույքային վնասներ կրել:

Նման ռիսկերի հետ կապված հնարավոր կորուստների նվազեցման նպատակով կարելի է առանձնացնել հետևյալ խումբ մեթոդները.

- 1) ապահովագրում, այսինքն՝ տարբեր քաղաքականությունների կիրառում, ինչպես նաև միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում գործադրվող տարբեր ապահովագրական պայմանագրերի կնքում,
- 2) հեջավորում՝ բորսայական ֆյուչերսային և օպցիոն գործարքների դեպքում,
- 3) հաշվարկակրեդիտային հարաբերություններում տարբեր մեթոդների և ձևերի կիրառում՝ առաքված ապրանքների համար չվճարման կամ վճարի դիմաց ապրանքները չառաքելու դեպքում. օրինակ՝ հաս-

տատված ակրեդիտիվ փաստաթուղթ, բանկային տարբեր երաշխավորագրեր, գրավադրում և այլն,

- 4) արտաքին շուկայի տարբեր պայմանների (առաջարկ, պահանջարկ, գին) վերլուծում, դրանց վերաբերյալ կանխատեսումներ, ինչպես նաև պլանավորում և արտաքին պայմանների փոփոխությամբ պայմանավորված հնարավոր վնասներից խուսափելու անհրաժեշտ միջոցառումների ճիշտ ժամանակին իրականացում սեփական կամ փոխառու միջոցների հաշվին և այլն¹:

Արտաքին տնտեսական գործունեության շրջանակներում հաճախ առկա է օտարերկրյա գործընկերոջ կողմից չվճարման ռիսկ: Վերջինիս կառավարման ամենատարածված մեթոդներից մեկն էլ ապահովագրումն է, որը կպաշտպանի տնտեսավարողներին ինչպես քաղաքական (գործընկերոջ ռիսկը, ով գտնվում է պատերազմական կամ հեղափոխական իրավիճակում, կամ գործընկեր երկրի կառավարության ռիսկը, որը կարող է ներմուծման դեմ արգելքներ մտցնելու կամ արժույթային սահմանափակումների միջոցով խափանել հասույթի փոխանցումը), այնպես էլ առևտրային (սնանկացման կամ ֆինանսական ծանր վիճակում գտնվող առևտրային գործընկերոջ ռիսկը) ռիսկերից²:

Հայաստանում առևտրային բանկերի կողմից արտահանման վարկավորումը ռիսկային է համարվում, ուստի արտահանման առանձին վարկավորում Հայաստանում չի իրականացվում: Փաստորեն, արտահանման ֆինանսավորման համար բանկերը բարձր տոկոսադրույքներով կամ սեփական միջոցների (ռեսուրսների) հաշվին են վարկեր տրամադրում: Սեփական միջոցների օգտագործման պատճառով սահմանափակվում են դրամի հոսքը և պարտքի կառավարումը: Բարձր վճարվող աշխատուժը, բարձր բանկային տոկոսադրույքները և չկարգավորվող փոխատվությունները ավելացնում են ընկերության ֆինանսական ծախսերը, հետևաբար՝ արտահանման արժեքը՝ հայկական ապրանքը միջազգային շուկայում դարձնելով ոչ մրցունակ: Գործնականում անհամեմատ հեշտ է սպառողական, քան արտահանման վարկի ձևակերպումը: Արտահանման վարկ ձեռք բերելը ձեռնարկությունների համար դառնում է աշխատատար և ծախսատար:

Առևտրի ֆինանսավորումը Հայաստանում իրականացվում է առևտրային բանկերի միջոցով փաստաթղթավորված վարկի (վարկագիր) ձևով և բանկային երաշխիքով: Այս ծառայությունները տրամադրում է հայկական բանկերի մեծ մասը: Վարկագիր (ակրեդիտիվ) բացելու արժեքը մոտավորապես 1% է, որը երկու անգամ ավելի թանկ է Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում կիրառվող սակագներից: Սա մասամբ պայմանավորված է միջազգային բանկերի կողմից պահանջվող հաստատման վճարներով³:

2012 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Կառավարությունը «Արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գործակալություն) ստեղծման միջոցառումների ցանկը հաստատելու


¹ Стѣи Внешнеэкономическая деятельность предприятия /под ред. Стровского Л./ Учебник, 5-е издание, „Юнити-Дана“, 2010, էջ 293–294:

² Стѣи Should Governments Subsidize Exports through Export Credit Insurance Agencies? Toni Haniotis, Sebastian Schich, Discussion Papers, September, 1995, N 103:

³ Стѣи ԵՄ ԽՆ ԱԱԱ հենասյուն, «Ֆինանսական գործիքների դերը առևտրի խթանման կազմակերպություն ստեղծելու գործում» քաղաքականության խորհրդատվության փաստաթուղթ: Եր., հուլիս, 2011, էջ 12:


որոշում կայացրեց: Այն հիմնականում զբաղվելու է արտահանման վարկավորման ապահովագրությամբ, որը կարող է նպաստել վարկերի տոկոսադրույքների նվազմանը: Այսինքն՝ վարկավորման ապահովագրման դեպքում առևտրային բանկերը վարկը կդիտարկեն ոչ ռիսկային: Ենթադրվում է, որ ապագայում Գործակալությունը կդառնա ինքնաֆինանսավորվող և կգործի առևտրային հիմունքներով, ինչպես Եվրոպական երկրներում է:

«Արտահանող-արտասահմանցի գնորդ». սա Հայաստանից ապրանքների արտահանման պարզեցված հիմնական շղթան է.



Գծապատկեր 1. «Արտահանող-արտասահմանցի գնորդ» պարզեցված շղթան

Եվրոպական շղթան այլ է՝ «արտահանող-արտասահմանցի գնորդ» և նրանց միջև՝ ապահովագրող գործակալություն, որը գնահատում և ապահովագրում է հիմնականում գնորդի ռիսկերը (գծապատկեր 2): Եթե տնտեսավարողը ցանկանում է արտահանման համար վարկ ստանալ որևէ ֆինանսական կառույցից, արտահանման վարկավորման գործակալությունը երաշխավորություն է տրամադրում:



Գծապատկեր 2. «Արտահանող-ապահովագրող գործակալություն-արտասահմանցի գնորդ» շղթան

Գործակալությունն արտահանողի փոխարեն վարկի գումարը վճարում է հիմնականում երեք դեպքում՝

- 1) երբ արտահանողի ապրանքի մի մասը չի վաճառվում,
- 2) եթե քաղաքական լարված իրավիճակի պատճառով արտահանումը չի իրականացվում,
- 3) եթե գնող կողմը չի վճարում գումարը:

Նվազագույնի հասցնելով ռիսկերը՝ Գործակալության ստեղծումը առաջին հերթին կնպաստի արտահանման ծավալների ավելացմանը: Այստեղ կարևոր խնդիրն առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատումն է: Այս գործիքը հիմնականում լուծում է արտահանման խնդիրներից մեկը:

Արտահանման վարկավորման գործակալության կանոնադրական կապիտալը, որը կներդնի ՀՀ Կառավարությունը, կկազմի 1.5 մլրդ ՀՀ դրամ: Գործակալությունը կկարողանա մոտ 10 անգամ ավելի՝ 15 մլրդ դրամի ապահովագրական պոլիսներ տրամադրել: Ապահովագրավճարը չի գերազանցի ապահովագրվող գումարի 1 տոկոսը:

Արտաքին շուկա մուտք գործելով՝ ձեռնարկությունը հայտնվում է միջազգային սուր մրցակցության միջավայրում. այս պայմաններում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է կիրառել կառավարման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ միջազգային շուկաներում մարքեթինգային հետազոտությունների պատվիրում:

Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկություններն արտաքին շուկաներ մուտք գործելու համար պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերեն՝ հաշվի առնելով աշխարհագրական, տնտեսական, քաղաքական և այլ գործոններ:

ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների շուկաներ մուտք գործելու համար, կարծում ենք, նպատակահարմար կլինի գործադրել սեփական մարքեթինգային ցանցի ստեղծման եղանակը, քանի որ մեր ձեռնարկությունների արտադրատեսակների մասին որոշակի տեղեկություն ունեն այդ շուկայի սպառողները, մեր տնտեսավարող սուբյեկտներն օրենսդրական դաշտին հիմնականում տեղյակ են, որակին վերաբերող չափորոշիչները խիստ չեն, լեզվական խոչընդոտ չկա և այլն:

Հաշվի առնելով նաև արտահանման ուղիների անհուսալիությունը և այլընտրանքի բացակայությունը՝ առաջարկում ենք նաև արտերկրում (առավել հարմար է ՌԴ Մերձմոսկովյան շրջանը) հիմնել լոգիստիկ կենտրոն (պահեստ) ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների համար՝ պետության և մասնավոր հատվածների մասնակցությամբ:

Այս առաջարկը համահունչ է նաև Մաքսային միության անդամ երկրների՝ ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի տնտեսական միասնացման գործընթացներին: Օրինակ՝ նախատեսվում է ստեղծել «Միասնական տրանսպորտային լոգիստիկ» ձեռնարկությունը, որը կկորոդինացնի անդամ երկրների երկաթուղային համակարգն ու բեռնափոխադրումները: Այս համատեքստում որոշիչ հանգամանք է տարածաշրջանային տնտեսական միասնացման նախագծերում Հայաստանի անդամակցությունը, որը ներկայումս արտաքին առևտրի ծավալների մեծացման առավել արդյունավետ ուղին է:

Տվյալ ոլորտի ձեռնարկությունների արտահանման կարողությունների գնահատականների և վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ համագործակցությունն առավել արդյունավետ կարող է լինել Մաքսային միության (այսուհետ՝ ՄՄ) երկրների հետ, քանզի մինչև անկախացումը և դրանից հետո էլ Հայաստանը տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում գործակցում է նախկին խորհրդային հանրապետությունների հետ: Ուսումնասիրվող ոլորտի ձեռնարկությունների արտահանման հիմնական և հեռանկարային շուկան Ռուսաստանի Ղաշնությունն է, որի դերը ՄՄ-ում առանցքային է: Փաստորեն, տնտեսական ինտեգրման նախադրյալներից երկուսը՝ աշխարհագրական մերձությունը և պատմականորեն ձևավորված տնտեսական կապերը, ներկա փուլում ՄՄ երկրների հետ առկա են: Մաքսային միությանը հնարավոր անդամակցության դրական ազդեցությունը ոլոր-

տում տեսանելի կլինի այն դեպքում, երբ վերականգնվեն Աբխազիայով երկաթուղային և ավտոճանապարհային փոխադրումները, ինչպես նաև ֆինանսավորվեն Հայաստան-Իրան երկաթուղու և նոր ատոմակայանի շինարարական աշխատանքները: Սակայն պետք է ակտիվ քայլեր ձեռնարկել այլ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ուղղություններով ևս, ինչը հնարավորություն կտա ընդլայնելու արտադրական ծավալներն ու արտահանման աշխարհագրությունը:

Արևմտյան Եվրոպա, Միջին Արևելք և այլ տարածաշրջաններ արտահանելիս առավել արդյունավետ կլինի իրացման միջնորդների ցանցի կիրառումը, ինչը թույլ կտա ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումից ստացվող արտադրատեսակներն իրացնել մեզ համար դեռևս անծանոթ շուկաներում՝ օգտագործելով նաև սփյուռքահայության ներուժը:

Կարծում ենք՝ անարդյունավետ կլինի լայնածավալ ագրեսիվ գովազդային քաղաքականությունը, քանի որ ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումից ստացվող արտադրատեսակները հիմնականում լայն սպառման չեն, և խոշոր սպառողները ձեռնարկություններն են: Տվյալ արտադրատեսակների արտահանման դեպքում ուշադրությունը պետք է կենտրոնացնել հատկապես սպառող ձեռնարկությունների գնումներ կատարող անձանց շրջանակի հետ ակտիվ և հասցեական աշխատանքների ուղղությամբ, ինչը հաճախ որոշիչ նշանակություն է ունենում համագործակցության և երկարաժամկետ պայմանագրերի կնքման դեպքում:

Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումից ստացվող արտադրատեսակների մասին տեղեկատվություն տարածելու լավագույն միջոց կարող է լինել մասնագիտական ամսագրերում և կայքերում հայտարարությունների կամ գովազդային վահանակների տեղադրումը, մասնավորապես՝ www.constructionbusinessowner.com, www.alibaba.com, www.probuild.com, www.amazon.com և այլն: Օգտակար կլինի նաև մեր ձեռնարկությունների ակտիվ մասնակցությունը միջազգային և տեղական ոլորտային ցուցահանդեսներին:

Հայաստանի արտասահմանյան առևտրային ներկայացուցչությունները ևս պետք է իրենց մասնակցությունն ունենան ոլորտի ձեռնարկությունների և դրանց արտադրատեսակների նկարագրերի նպատակային տարածման գործում: Միջազգային շուկայում ներկայանալու համար առաջարկում ենք բացել իր տեսակի մեջ աշխարհում եզակի՝ www.nmm.am (**Non-Metallic Mining**) մասնագիտացված կայքէջը: Ղա կարող է դառնալ ժամանակակից մարքեթինգային գործիք, որը կներկայացնի մեր հանրապետությունը որպես ոչ մետաղական հանքանյութի արդյունահանման և վերամշակման մեծ ներուժ ունեցող երկիր:

Համաշխարհային տնտեսությունում արտաքին տնտեսական կապերը դառնում են պետության ազգային եկամտի աճի, տնտեսական և գիտատեխնիկական առաջընթացի արագացման գործոն⁴: Հետևաբար՝ այս ոլորտի ձեռնարկությունների միասնացումը մասնագիտացված կառույցներին ավելի է կարևորվում:

Ոչ մետաղական հանքանյութերի բնագավառում առաջատար համարվող երկրում՝ Միացյալ Նահանգներում, մասնավոր կորպորացիաների և պե-

⁴ Տե՛ս **Թ. Թորոպյան**, Հայաստանի արտաքին տնտեսական կապերի կարգավորման միտումները, Եր., «Էկոնոմիկա» ամսագիր, N 1-3, 1996, էջ 21:

տության ջանքերով հիմնադրվել է մասնագիտացված մարմին՝ *Պեռլիտի ինստիտուտը*: Այն ստեղծվել է 1949 թվականին՝ որպես շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն: Սկզբնական շրջանում դրան անդամակցում էին միայն ամերիկյան ընկերություններ, իսկ այժմ այն դարձել է համաշխարհային ճանաչում ունեցող ինստիտուտ՝ տարբեր երկրների պեռլիտ արդյունահանող և վերամշակող շուրջ 40 ընկերությունների գործակցությամբ⁵:



Նկար 1. Պեռլիտի ինստիտուտ

դիրքերը նաև միջազգային շուկայում⁶:

Մեր տարածաշրջանում երկու ընկերություն Թուրքիայից և մեկ ընկերություն Իրանից անդամակցում են Պեռլիտի ինստիտուտին: Կարծում ենք՝ «Արագածպեռլիտ» ԲԲԸ-ի անդամակցությունը նշված կառույցին կնպաստի արտահանման կարողությունների ընդլայնմանը:

Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման հիմնախնդիրները համակարգված և հասցեական լուծելու նպատակով առաջարկում ենք ՀՀ Կառավարության և ոլորտի շահագրգիռ ձեռնարկությունների մասնակցությամբ հիմնել «Ոչ մետաղական հանքանյութերի արտահանման խթանման և պաշտպանության» պետական խորհուրդ:

Երկրի զարգացման, արդյունաբերական արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացման, ինչպես նաև ներդրումների ներգրավման գործում կարևոր նշանակություն ունեն գիտատեխնիկական առաջընթացի արագացումը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը⁷:

Ոլորտի արտադրատեսակների արտահանմանը կարող են նպաստել լայն տարածում ստացած բարտերային և քլիրինգային պայմանագրերը, ինչպես նաև միջպետական պարտքերը:

Այսօր արդեն առկա են բազմաթիվ պայմանագրեր ու համաձայնություններ ոլորտի արտադրատեսակների իրացման վերաբերյալ. այսպես՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երկարաժամկետ տնտեսական համագործակցության նախագծերի իրականացման գործողությունների պլան մինչև 2010 թվականը» միջպետական համաձայնագիրը՝ 14.09.2007 թ., նախնական պայմանագրեր Հայաստանի և ՌԴ լեռնամետա-

⁵ Տե՛ս <http://www.perlite.org/support/about-perlite-institute.html>

⁶ Տե՛ս <http://www.perlite.org/support/join-us.html>

⁷ Տե՛ս **Юнь О., Борисов В.**, Инновационная деятельность в промышленности. М., „Экономист“, N 9, 1999, էջ 12:

լուրգիական գործարանների միջև (Քաջարանի, Ագարակի, Ղափանի պղնձամոլիբդենային կոմբինատներ, «Լենմետրո» ԲԲԸ և այլն): Ռուսական կողմը իր հերթին շահագրգիռ է Հայաստանից ոչ մետաղական հանքանյութերի ներմուծմամբ, քանի որ խորհրդային շրջանում դրանց հիմնական սպառող են եղել և տեղյակ են մեր հանքանյութերի որակական բարձր հատկանիշներին: Ոլորտի արտահանման հիմնախնդիրների լուծման դեպքում պայմանավորվածությունները կյանքի կկոչվեն:

Նոր սերնդի տեխնիկայի ստեղծման պահանջը սրվում է այն ժամանակ, երբ առկա տնտեսական պահանջմունքներն անհնար է լինում բավարարել հնացած տեխնիկայի հնարավորությունների օգտագործմամբ: Հարկ է մանրակրկիտ կերպով վերլուծել և առաջադրված տարբերակներից ընտրել արդյունավետը⁸:

Ներկայումս այս ոլորտը ժամանակակից տեխնիկայով և տեխնոլոգիաներով համալրումը բավականին ցածր մակարդակի վրա է: Կարևոր է նաև նորագույն սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ կադրերի ապահովումը: Այս խնդիրը կարելի է լուծել բուհերի, միջին մասնագիտական ուսումնարանների և մասնավոր ձեռնարկությունների համատեղ ջանքերով, անհրաժեշտության դեպքում՝ արտասահմանում ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման միջոցով:

Մեր երկրում գիտություն–արտադրություն համագործակցությունը գոհացուցիչ մակարդակի վրա չէ: Մշակված չեն կազմակերպակառավարչական այնպիսի գործուն մեխանիզմներ, որոնք կնպաստեին գիտատեխնիկական ներուժի լիարժեք օգտագործմանն ու կայուն տնտեսական աճի ապահովմանը: Այս առումով, հրատապ է արտադրական ինտեգրացիայի և գիտատեխնիկական առաջընթացի խթանմանն ուղղված ջանքերի կենտրոնացումը⁹: Գիտություն–արտադրություն ոչ բավարար համագործակցության բացակայության մասին է վկայում այն փաստը, որ «Քար և սիլիկատներ» գիտահետազոտական նախագծային ՓԲԸ-ի և «Նյութաբանություն» գիտահետազոտական և արտադրական ՓԲԸ-ի բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ դեռևս մնացել են թղթի վրա, քանի որ մեր երկրում վենչուրային ֆինանսական միջոցները խիստ անբավարար են: Առանց պետական հովանավորության՝ մասնավոր հատվածը զգուշանում և առավել քիչ ռիսկային նախագծերում է ներդրումներ անում: Այս խնդիրը կարող է լուծվել ՀՀ Կառավարության և օտարերկրյա դոնորների գիտահետազոտական և արդյունքների նյութականացման աշխատանքների ֆինանսավորման (կամ մասնակցության) միջոցով:

Ձեռնարկատիրական կոշտ մրցակցությունը պահանջում է, որ ընկերությունները մշտապես մշակեն արդիական ապրանքներ և ծառայություններ, որպեսզի ձեռք բերեն նոր շուկաներ: Գիտելիքահենք տնտեսության պայմաններում արտադրությունը գրեթե խնդրահարույց չէ. հիմնական խնդիրը սպառողի վերաբերյալ գիտելիքն է, շուկա առաքված ապրանքի վերաբերյալ տեղեկատվությունը¹⁰:

⁸ Տե՛ս **Շ. Էվինյան**, Գիտատեխնիկական առաջադիմության էկոնոմիկա, Եր., «Տնտեսագետ», 1995, էջ 52–53:

⁹ Տե՛ս **Домбровский В.**, О научно-промышленной политике России на рубеже веков. М., „Проблемы теории и практики управления“, N 1, 2000, էջ 10:

¹⁰ Տե՛ս **Գ.Վարդանյան**, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., «Գիտություն» հրատ., 2008, էջ 40:

Արտահանման կարողությունների ընդլայնմանը նպաստող հաջորդ քայլը համապատասխան ներուժ ունեցող նոր արտադրությունների ստեղծման խթանումն է: Դրանց կազմակերպումը պահանջում է պետության ֆինանսական և խորհրդատվական աջակցության մեխանիզմների կիրառություն՝ կապված նոր շուկաների ուսումնասիրության, գործարարության նախագծերի մշակման, անհրաժեշտ ներդրումների ներգրավման, հարկային խթանող միջավայրի ստեղծման հետ¹¹:

Նշված խնդիրն արդյունավետ լուծելու համար պետք է ապահովել «ուսումնասիրություն – փորձարարական ստրուկտորական աշխատանքներ – ներդրում – արտադրություն – իրացում» շղթայի կենսունակությունը:



Գծապատկեր 3. Բիզնես-նախագծի փուլերը

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման կարողությունների ընդլայնման արդյունավետ միջոցներից է միություններում միավորումը, որը նպաստում է շահերի համակենտրոնացմանը և արտաքին շուկայում միասնաբար հանդես գալուն՝ ապահովելով պաշտպանվածություն և մրցունակություն:

Վերջին տարիներին շահագրգիռ խմբերի և համապատասխան գործարանների սեփականատերերի մասնակցությամբ քննարկվել է ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման քլաստերի կամ կոնցեռնի ստեղծման հնարավորությունը՝ որպես տարբերակ դիտարկելով նաև պետության մասնակցությունը¹²: Դա թույլ կտա իրացնել միասնական ձեռնարկությունների արտադրատնտեսական կարողությունները, վերակառուցել ոչ արդյունավետ գործող ձեռնարկությունները՝ միջազգային շուկայում ապահովելով մրցունակ արտադրատեսակների թողարկումը:

2009 թվականին «Գյումրու ապակու գործարան» ՓԲԸ-ի և «Քարակերտի քարածուխի գործարան» ԲԲԸ-ի միջև բանակցություններ սկսվեցին «Հայրազալտ և պեռլիտ» կոնցեռն (Concern «Armbasalt & Perlite») հիմնելու վերաբերյալ: Նախատեսվում էր նաև համատեղ բիզնես-նախագիծ մշակել «Project Development International Funding» կազմակերպության (ԱՄՆ) ֆինանսավորմանը ներկայացնելու համար: Սակայն այս ոլորտի ձեռնարկությունների համագործակցությունը դեռևս օրակարգում է:

Այսպիսով՝ ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման կարողությունների ընդլայնումը հնարավոր է միայն պետություն-մասնավոր հատվածների համագործակցության և միջազգային առաջավոր փորձի ներդրման միջոցով:

¹¹ St'u The Export Manufacturing Experience of Indonesia, Malazia and Thailand: Lessons fot Africa, Rajah Rasiah, Discussion papers, June 1998, N 137:

¹² St'u ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 125:

МИКАЕЛ МЕЛКУМЯН

Заведующий кафедрой „Микроэкономики и организации предпринимательской деятельности” АГЭУ, доктор экономических наук, профессор

СУРЕН ПАРСЯН

Аспирант кафедры „Микроэкономики и организации предпринимательской деятельности” АГЭУ

Законодательные и организационные шаги для увеличения экспортного потенциала предприятий, добывающих и перерабатывающих нерудные полезные ископаемые. - В настоящее время в нерудной промышленности осуществляется ряд законодательных и организационных реформ, чтобы приблизить систему управления государственным сектором к лучшим международным стандартам для обеспечения прозрачности и эффективности работ системы управления. Основная цель данного анализа – предложить решение проблемы увеличения экспортного потенциала предприятий, добывающих и перерабатывающих нерудные полезные ископаемые, особенно для их применения в Армении.


MIKAYEL MELKUMYAN

Head of the Chair of „Microeconomics and Organization of Entrepreneurial Activity” at ASUE, Doctor of Economics, Professor

SUREN PARSYAN

Post-graduate at the Chair of “Microeconomics and Organization of Entrepreneurial Activitie” at ASUE

Legislative and Organizational Measures of Expanding Export Potentials of Non-Metallic Mineral Mining in Processing Enterprises. - Nowadays, several legislative and organizational reforms are maintained in the area of Non-Metallic Mining to bring the state management system closer to the best international standards aiming to ensure transparency and efficiency of the management system. The main purpose of the analysis is to offer solutions to expanding export potentials of non-metallic mineral mining and processing enterprises, especially for their implementation in Armenia.



ՍԵՐՁԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆԸ

Հանրապետության արդյունաբերության համակարգում մինչև 1980-ական թվականները զբաղված էր 459,9 հազար աշխատող: Համեմատության համար նշենք, որ այժմ այդ համակարգում աշխատողների թիվն ընդամենը 83,8 հազար է, իսկ գործազուրկների ընդհանուր քանակը՝ 245,5 հազար: Աշխատանք չունենալու պատճառով հանրապետությունից արտագաղթողների թիվն աստիճանաբար ավելի է մեծանում: Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակից ելքը երբեմնի հզոր արդյունաբերության վերականգնումն և գիտատեխնիկական նվաճումների հիման վրա զարգացումն է:

Հիմնաբառեր. արդյունաբերություն, հանրապետություն, գործազրկություն, արտահանում, ներմուծում, պղինձ, մոլիբդեն, խտանյութ, թափոններ, խնայողություն

Մինչև 1990-ական թթ. Հայաստանը բարձր զարգացած ինդուստրիալ երկիր էր. արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ տնտեսության համախառն արտադրանքի 56–68 տոկոսն էր կազմում¹: Ընդ որում, արդյունաբերության զարգացման շնորհիվ լուծվել էր աշխատանքային ռեսուրսների լրիվ ու նպատակային օգտագործման կենսական հիմնահարցը: 1988 թ. տվյալներով արդյունաբերության մեջ աշխատողների

¹ Տե՛ս Ս. Մելքունյան, ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 2009, էջ 113:

թիվը հասել էր 459,9 հազարի. համեմատության համար նշենք, որ 2012 թ. տվյալներով մեր արդյունաբերության համակարգում աշխատողների ընդհանուր քանակը 83,8 հազ. մարդ է ընդամենը²: Այսպիսով՝ արդյունաբերության զարգացումը վճռական դեր է խաղացել հանրապետության աշխատանքային ռեսուրսների օգտագործման շատ կարևոր խնդիրը լուծելու առումով:

Բացի դրանից, արդյունաբերության աննախադեպ վերելքը միջազգային շուկայում այս բնագավառի մի շարք ենթաճյուղեր ճանաչելի դարձրեց: Արդյունքում՝ այդ տարիներին Հայաստանից աշխարհի ավելի քան 80 երկիր արդյունաբերական շուրջ 200 տեսակի կարևոր արտադրանք էր արտահանվում, որոնց զգալի մասը միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում արժանացել էր ոսկե մեդալների ու պատվոգրերի:

Ի դեպ, այդ ժամանակահատվածում Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշիռը զգալիորեն ակտիվ էր. արտահանումը 1,5 անգամ գերազանցում էր ներմուծումը: Իսկ ինչպե՞ս կարելի է գնահատել հանրապետության երբեմնի հզոր արդյունաբերության արդի վիճակը: Կարծում ենք՝ համեմատության եզրեր չկան: Ճյուղի ձեռնարկությունների մեծ մասն անհեռատես ձևով, առանց տնտեսագիտական լուրջ հիմնավորումների սեփականաշնորհվել և կազմալուծվել է, չնչին մասը գործում է մասնակիորեն: Դրա հետևանքով ունենք գործազուրկների բավական խոշոր բանակ և, դրա հետ կապված, բնակչության մեծ արտահոսք: Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 2008 թ. կազմել է 74,9 հազ., 2009 թ.՝ 81,4 հազ., 2010 թ.՝ 83,3 հազ., 2011 թ.՝ 265,7 հազ., իսկ 2012 թ.՝ 245,5 հազ.³: Բնականաբար, հանրապետությունում գրանցված գործազուրկների թիվն ավելի մեծ է, քան իրականում է: Խնդիրն այն է, որ զգալի թվով մարդիկ գերադասում են աշխատել առանց գրանցման, քանի որ հաշվառվելու դեպքում կզրկվեն չնչին նպաստներից:

Ի դեպ, արդյունաբերության արդի վիճակով է պայմանավորված բնակչության աղքատության բարձր ցուցանիշը, որը 2012 թ. տվյալներով կազմել է 32,4 տոկոս⁴:

Գործազրկության հետ կապված՝ մեծ է նաև արտագաղթողների թիվը:

Մասնավորապես՝ 2004 թ. ՀՀ-ից արտագաղթել է 9,2 հազ., 2008 թ.՝ 6,7 հազ., 2010 թ.՝ 2,6 հազ. մարդ⁵:

Հայաստանի Հանրապետության բնակչության արտագաղթի, տեղաշարժերի պատկերը դիտարկենք քաղաքների բնակչության թվի կրճատման՝ 1999 և 2013 թվականների փաստացի ցուցանիշներով (աղյուսակ 1):

Փաստորեն, ներկայացված բոլոր քաղաքներում մեծ չափով նվազել է բնակչության թիվը: Ի դեպ, բնակչության թիվը նվազել է աղյուսակում չներառված մյուս քաղաքներում ևս: Նշենք, որ կրճատվել է հատկապես արդյունաբերական կենտրոն համարվող քաղաքների բնակչությունը: Երևանում, օրինակ, բնակչության թիվը նշված տարիներին նվազել է շուրջ 200 հազարով, Գյումրիում՝ 87 հազարով, բնակչության թվի զգալի նվազում է արձանագրվել Ալավերդիում, Արմավիրում, Հրազդանում, Չարենցավանում, Արտաշատում, Աշտարակում, Սևանում, Ստեփանավանում և այլ քաղաքներում ևս:

² Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2013, էջ 258:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 77, 53:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 109:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 74:

«Հ համեմատարար խոշոր քաղաքային բնակավայրերի բնակչության թիվը (հազ. մարդ)»⁶

<i>Քաղաքներ</i>	<i>1999 թ.</i>	<i>2013 թ.</i>
Երևան	1248,7	1066,3
Աբովյան	61,14	43,9
Ագարակ	5,1	4,5
Ալավերդի	24,9	13,3
Արմավիր	44,7	29,4
Աշտարակ	29,7	18,8
Արտաշատ	35,0	22,3
Ախթալա	4,1	2,1
Արթիկ	24,0	19,5
Բերդ	11,8	7,9
Բյուրեղավան	12,1	9,5
Գյումրի	211,7	121,3
Գորիս	29,2	20,6
Վանաձոր	172,7	85,7
Թալին	7,6	5,3
Մասիս	271	20,4
Հրազդան	63,9	42,0
Չարենցավան	36,3	20,4
Ջերմուկ	10,3	4,6
Սիսիան	19,0	14,9
Կապան	46,8	43,2
Վաղարշապատ	65,5	46,7
Ստեփանավան	25,0	13,1
Սևան	30,9	19,3
Մեծամոր	12,5	9,2
Ծաղկաձոր	15	1,3
Վայք	7,7	5,9
Քաջարան	8,8	7,2
Մարտունի	14,5	12,9
Նոր Հաճն	12,9	9,3
Սպիտակ	21,7	12,9

Այս հանգամանքը իր բացասական ազդեցությունն ունեցավ աշակերտների թվաքանակի վրա:

Մասնավորապես՝ միայն Լոռու մարզում եթե 2003–2004 ուստարում աշակերտների թիվն ավելի քան 46 հազար էր, ապա 2013–2014 ուստարում՝ 24,86 հազար, այսինքն՝ նշված ժամանակաշրջանում մարզի աշակերտների թիվը կրճատվել է ավելի քան 21,1 հազարով: Այդպիսին է վիճակը նաև մյուս մարզերում:

Նշենք, որ այժմ բնակչության արտահոսքը բավականին մեծ է նաև գյուղական բնակավայրերից, քանի որ մեր սակավահող հանրապետություն-

⁶ Տես ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Եր., 2013, էջ 20:

նում սեփականաշնորհված հողատարածքների 45–50%-ը չի օգտագործվում: Իսկ հատկապես ցածրադիր վայրերի կլիմայական պայմաններն այնպիսին են, որ նույնիսկ 1-2 տարի չօգտագործվելու դեպքում դրանք նորից անապատացվում են: Հանրապետության տնտեսության, նյութական արտադրության երկու կարևորագույն բնագավառների (արդյունաբերություն և գյուղատնտեսություն) անմխիթար վիճակով պայմանավորված՝ բնակչության զգալի մասը արտադրողից դարձել է սպառող: Դրա ապացույցը արտահանման (2012 թ.՝ 1,38 մլրդ ԱՄՆ դոլար) և ներմուծման (2012 թ.՝ 4,26 մլրդ դոլար) ցուցանիշների խիստ մեծ բացասական ձեռքվածքն է⁷:

Փաստորեն, ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ներմուծումը գերազանցում է արտահանումը ավելի քան երեք անգամ:

Մեր տնտեսության անմխիթար վիճակի վկայություններից է նաև արտաքին պարտքի մեծ աճը:

Որոշ մասնագետներ Հայաստանի Հանրապետության տնտեսության անհուսալի վիճակը փորձում են բացատրել հումքային ռեսուրսների անբավարար քանակությամբ, տրանսպորտային շրջափակմամբ և այլ հանգամանքներով: Մեր կարծիքով՝ սրանք հիմնավոր պատճառներ չեն: Հանրապետության տարածքի ու բնակչության քանակի համեմատությամբ մենք այնքան բազմազան ու մեծ քանակությամբ հումքային պաշարներ ունենք, որ դրանք խնայողաբար, նպատակային, համալիր օգտագործելու պարագայում կարող ենք դառնալ տնտեսապես զարգացած երկիր՝ այնպիսի, ինչպիսին Շվեյցարիան է: Տրանսպորտային մեկուսացվածությունն էլ վճռական գործոն չէ, քանի որ այս պայմաններում մենք երեք անգամ ավելի շատ կարողանում ենք ներմուծել: Հետևաբար՝ արտադրություն ունենալու դեպքում կարելի է առնվազն նույն չափով արտահանել:

Տնտեսության զարգացմանը խոչընդոտող հանգամանք է նաև մարդկային գործոնի ոչ ճիշտ և ոչ նպատակասլաց օգտագործումը:

Մեր համոզմամբ՝ մենք մեր երկիրը, նրա բնական պայմանները, ռեսուրսները լավ չենք ճանաչում, տնտեսապես ճիշտ չենք գնահատում տարածքի բարդ կառուցվածքը, չենք կարողանում նպատակային, արդյունավետ, խնայողաբար և համակարգված օգտագործել բնական պաշարները:

Մեր բարդ տարածքի յուրաքանչյուր հողակտորի, ջրային, մետաղային ռեսուրսի տնտեսական գնահատումը պետք է հեռանկարային հիմք ունենա, այլ ոչ թե պայմանավորված լինի այսօր ստացվող եկամտով, շահույթով:

Մենք մեր ազգային սեփականության՝ բնական պաշարների օգտագործման տնօրինությունը չպետք է հանձնենք օտար ներդրողին, ում, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրում է այսօրվա շահույթը. մեր տարածքի ու ռեսուրսների հեռանկարային ձակատագիրը նրանց կարող է քիչ հետաքրքրել կամ բնավ չհետաքրքրել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում է գտնվում աշխարհի պղնձի հետազոտված պաշարների 5–7 և մոլիբդենի 7–9%-ը, պետք է լրջորեն գնահատել այդ մեծ հարստության արժեքը և դրանք օգտագործել ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան: Մեր երկիրը բավական հարուստ է նաև ոսկու, բազմամետաղների, ալյումինի հումքի, քարանյութերի խոշոր պաշարներով: Գիտությունը հայտնի բոլոր քարանյութերն առկա են այստեղ: Քարը մեր ազգային հիմնական հարստու-

⁷ Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., 2013, էջ 450:

թյուններից մեկն է: Այն ոչ միայն սոսկ շինանյութ արտադրելու հումք է, այլև այնպիսի հումքատեսակ, որի միջոցով հնարավոր է ստեղծել հարյուրավոր այնպիսի արտադրատեսակներ, որոնք մեծ զուևարներով և դժվարությամբ ներմուծում ենք հեռավոր երկրներից: Հիշենք, որ անհիշելի ժամանակներից հայր քարանյութերն օգտագործել է շատ բնագավառներում: Սակայն կարևորը բնական պաշարներ ունենալը չէ, այլ դրանցից յուրաքանչյուրը խելամիտ և նպատակային օգտագործելը: Ցավոք, այսօր էլ շարունակում ենք անհեռատեսորեն օգտագործել մեր բնական պաշարների մեծ մասը, մասնավորապես՝ պղինձն ու մոլիբդենը:

Մինչև վերջին ժամանակներս, սկսած 1950-ական թվականներից՝ Քաջարանի կոմբինատի շահագործումից ի վեր, այստեղ արդյունահանված մոլիբդենի հումքի հարստացված խտանյութը (կիսաֆաբրիկատ) արտահանվում էր Ռուսաստան, իսկ անկախությունից հետո՝ Իրան և այլ երկրներ: Բնականաբար, այս թանկարժեք հումքն այդպես արտահանելը մեր տնտեսության համար նվազ եկամտաբեր էր, քանի որ վաճառվում էր համեմատաբար ցածր գնով: Վերջին տարիներին Քաջարանի կոմբինատում, ինչպես նաև Երևանի նախկին «Մաքուր երկաթ» փորձնական ձեռնարկությունում ներդրվել է մոլիբդենի հումքից վերջնական արտադրանքի՝ ֆերոմոլիբդենի արտադրության տեխնոլոգիան: Այսպիսով՝ այժմ մենք արտահանում ենք ոչ թե մոլիբդենի խտանյութը, այլ պատրաստի արտադրանքը՝ ֆերոմոլիբդենը, որի արժեքը միջազգային շուկայում անհամեմատ բարձր է: Նշենք, որ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, ըստ վերջին տվյալների, տարեկան արտադրում է 7 հազ. տոննա մոլիբդենի խտանյութ, որի մեջ մաքուր մոլիբդենի տեսակարար կշիռը 51% է: Իսկ պղնձի խտանյութի արտադրությունն այստեղ տարեկան 43 հազ. տոննա է կազմում. մաքուր պղնձի պարունակությունը՝ 27,5% է: Ըստ այս ցուցանիշների՝ կարելի է մոտավորապես պատկերացնել, թե Քաջարանի կոմբինատը միայն պղնձի ու մոլիբդենի վաճառքից ինչպիսի եկամուտ կարող է ապահովել: Իսկ եթե դրան հավելենք Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրանքը, ինչպես նաև նոր կառուցվող Թեղուտի (Լոռու մարզում) նմանատիպ կոմբինատը, ապա դժվար չէ պատկերացնել այս ձեռնարկությունների արդյունավետ գործունեության դրական դերը մեր արդյունաբերության ապագայի համար:

Խոսքը հատկապես պղնձամոլիբդենային հումքի համալիր օգտագործման մասին է: Թեև այժմ արդեն Քաջարանի կոմբինատում զգալի աշխատանքներ են կատարվում արդյունահանված հումքից նաև այլ թանկարժեք մետաղատեսակներ կորզելու նպատակով, սակայն դրանք դեռևս բավարար համարել չի կարելի: Խնդիրն այն է, որ մեր հանրապետության պղնձամոլիբդենային հանքավայրերի հումքը պղնձից ու մոլիբդենից բացի պարունակում է նաև 10-ից ավելի մետաղային այլ տարրեր (սելեն, թելուր, ռենիում, ոսկի, գերմանիում և այլն): Պղնձից, մոլիբդենից, մասամբ նաև ռենիումից բացի, մնացածները պոչանքի հետ նետվում են շրջակա միջավայր:

Վերջին տվյալներով մեր պղնձամոլիբդենային հանքավայրերից արդյունահանվող խտանյութի մեջ եղած հիմնական մետաղների՝ պղնձի 65–66%-ն է կորզվում, մոլիբդենի շուրջ 70%-ը, իսկ բազմամետաղների հանքավայրերում միայն 50%-ը: Ցածր է նաև ոսկու կորզման տեսակարար կշիռը:

Միայն Սյունիքի մարզում լեռնահանքային ձեռնարկությունների թափու նապահեստներում կուտակված է 200 մլն տոննայից ավելի պոչանք (թա-

փոն): Փաստորեն, այս հսկայական զանգվածը նույնպես հունք է, քանի որ դրա բաղադրության մեջ կան զգալի քանակությամբ պղինձ, մոլիբդեն և հազվագյուտ շատ թանկարժեք մետաղատեսակներ: Ողջի գետի կիրճում կուտակված պոչանքի այդ հսկայական զանգվածները, անկասկած, բացասաբար են անդրադառնում բնական համակարգի (ջրային, հողային ռեսուրսների, մթնոլորտի) վրա: Այդպիսին է վիճակը նաև Մեդրու կիրճի, Դեբեդի ավազանի, Սոթքի, Մեդրաձորի ոսկու հանքավայրերում, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի հարակից վայրերում:

Նախատեսվում է գունավոր մետաղների հանքանյութերի արդյունահանումը մեծ չափով ավելացնել: Միայն Քաջարանի կոմբինատում տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու դեպքում պոչանքար թափվող պղինձի քանակը կարող է կազմել 9,3 հազ. տ, մոլիբդենի քանակը՝ 1,77 հազ. տ: Բացի դրանից, պոչանքար են թափվում նաև ավելի քան տասը տեսակի թանկարժեք այլ մետաղներ, որոնց արժեքը շատ մեծ է⁸:

Հայաստանի Հանրապետության տնտեսությանը և շրջակա միջավայրին խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում մեծ վնասներ են հասցվել բնական շինանյութերի՝ տուֆաքարի, բազալտաքարի, գրանիտի, կրաքարի, պեմզայի, պեռլիտների ու մյուս քարանյութերի արդյունահանման և մշակման ոչ արդյունավետ կազմակերպման հետևանքով: Այսպես՝ մեր հանրապետության քարանյութերի զարդը տուֆաքարն է, որն իր ճարտարապետաշինարարական, դեկորատիվ որակական հատկանիշներով, որպես որմնանյութ, երեսպատման նյութ, աշխարհում շատ ճանաչված է: Հանրապետության բոլոր քաղաքները, գյուղական շատ բնակավայրեր հիմնականում կառուցապատված են տուֆաքարով: Այս առումով, առանձնահատուկ նշանակություն ունի Արթիկի վարդագույն տուֆը: Անհանդուրժելի է, որ այսօր էլ շարունակում ենք այդ չվերականգնվող անզուգական բնական ռեսուրսն օգտագործել անհեռատեսորեն:

Հանրապետության տուֆաքար արդյունահանող խոշորագույն ձեռնարկությունը միշտ եղել է «Արթիկտուֆ» կոմբինատը: 1928 թվականից մինչև այժմ վերջինս արդյունահանել է 55 մլն տ տուֆի զանգված, որից 25 մլն-ը օգտագործվել է որպես որմնանյութ, մնացած՝ մեծ մասը հիմնականում նետվել է շրջակա միջավայր՝ որպես «թափոն»:

Իրականում ի՞նչ է այդ «թափոնը» և տնտեսաէկոլոգիական ինչ հետևանքներ է ունենում:

Տուֆաքարի թափոնը ընդերքից արդյունահանված մանրուք է ավազի ու խճի տեսքով և որպես որմնանյութ չի կարող օգտագործվել: Սակայն քարի թափոնն ամբողջապես հնարավոր է օգտագործել որպես բնական թեթև լցանյութ, որի պահանջը շատ մեծ է շինարարական արդյունաբերությունում: Կարելի է արտադրել, օրինակ՝ արհեստական տուֆաբլոկներ, որոնք իրենց ֆիզիկամեխանիկական հատկանիշներով չեն զիջում բնական որմնանյութերին: Հայտնի է, որ Ռուսաստանում, Ուկրաինայում և շատ այլ երկրներում կավից արտադրում են արհեստական լցանյութեր (կերամզիտ, ագլոպորիտ և այլն), որոնք օգտագործվում են շինարարության մեջ: Իսկ մեր բնական բարձրորակ լցանյութերն անխնա նետում ենք շրջակա միջավայր: Մինչդեռ, հունքը լիովին օգտագործելու դեպքում հնարավորություն կստեղծվի արտադրվող շինանյութերի ծավալը մեծացնելու ավելի քան 1,5 անգամ, իսկ ինքնարժեքն էլ

⁸ Տես Հ. Ավագյան, «Հայոց աշխարհ», 30/9 2012:

նույնքան իջեցնելու: Բացի դրանից, հումքի անմնացորդ օգտագործումը թույլ կտա բնական ռեսուրսները խնայել հետագա սերունդների համար, կլուծվեն նաև բնապահպանական կարևոր խնդիրներ: Միայն Արթիկ քաղաքի շրջակայքում 1928 թվականից մինչև այժմ տուֆաքարի թափոնների տակ և լքված քարհանքերով զբաղեցված է ավելի քան հազար հեկտար սևահողային տարածք: Իսկ հանրապետության ամբողջ տարածքում այդ ձևով շարքից հանվել է շուրջ 7 հազար հեկտար գյուղատնտեսական հողահանդակ: Հայաստանի Հանրապետությունը աշխարհի սակավահող երկրներից է, ուստի շուրջ 7,0 հազար հեկտար սևահողային տարածությունը մեզ համար մեծ հարստություն է: Քարանյութերի թափոնների օգտագործումը, հողատարածքները աղտոտումից փրկելուց բացի, կնպաստի շրջակա միջավայրի օդային զանգվածի, ջրային ավազանների մաքրության վերականգնմանը:

Եթե 2003 թ. մեր հանրապետությունում մթնոլորտ է արտանետվել 28,2 հազ. տ վնասակար նյութ, 2007 թ.՝ 34 հազ տ, 2010 թ. այդ թիվը հասել է 97,5 հազ. տ-ի⁹, իսկ 2012 թ.՝ 117,4 հազ. տ-ի: Ընդհանուր առմամբ, 2012 թ. հանրապետությունում առաջացած թափոնների ծավալը կազմել է 93,03 մլն տ¹⁰, որից օգտագործվել է ընդամենը 9,9 հազ. տ, վնասագործվել՝ 0,3 հազ. տ:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստերը, Հայաստանի Հանրապետությունում բնական պաշարների համալիր, խնայողաբար օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում դեռևս նկատելի դրական տեղաշարժեր չեն դիտվում, որը ժամանակակից գիտության, տեխնիկայի առաջընթացի պայմաններում աններելի է:

Ամփոփելով ՀՀ արդյունաբերության զարգացման խնդիրներին վերաբերող հարցադրումները՝ մեր եզրակացությունները հետևյալն են.

1. Անհրաժեշտ է վերականգնել հանրապետության երբեմնի հզոր արդյունաբերությունը և զարգացնել ժամանակակից համաշխարհային գիտատեխնիկական նվաճումներին, պահանջներին համապատասխան:
2. Բնակչության վերարտադրության աճը վերականգնելու և արտահոսքը մեծապես կրճատելու նպատակով հարկ է մշակել արդյունաբերության տարածքային համաչափ զարգացման հիմնավոր ծրագիր:
3. Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Իջևան, Դիլիջան, Սևան, Գորիս և մյուս բոլոր քաղաքների արդյունաբերության զարգացման հիմնահարցերին, որոնց բնակչության թիվը, աճի գործակիցները խիստ կրճատվել են:
4. Արդյունաբերական նշանակություն ունեցող բոլոր տեսակի ռեսուրսների տնտեսական գնահատման, դրանց համալիր, նպատակային, խնայողաբար օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության խնդիրները պետք է լուծել բացառապես պետական մակարդակով:
5. Վերջին 200 տարիների փորձը ցույց է տալիս, որ մեր մետաղային հանածոների արդյունահանումը և առհասարակ հանքային հարստությունների շահագործումը չպետք է վստահել արտասահմանյան ընկերություններին, քանի որ նրանց հիմնականում հետաքրքրում է ցանկացած ձևով մեծ շահույթի ապահովումը, այլ ոչ թե հումքի խնայողաբար օգտագործումը կամ էլ շրջակա միջավայրի պահպանումը: Նպատակահարմար կլինեն այդ բնագավառներում արտասահմանյան ներդրումները:

⁹ Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., 2013, էջ 212:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН


Профессор кафедры „Макроэкономики“ АГЭУ,
доктор географических наук

Необходимость восстановления и развития промышленности Республики Армения.- До развала Советской власти Армения была высокоразвитой индустриальной страной, где доля промышленности в общем объеме валовой продукции составляла 56–68%. В системе промышленности были заняты 459,9 тыс. рабочих. Для сравнения отметим, что в настоящее время в системе промышленности нашей республики общее число рабочих составляет 83.8 тыс. человек, а общая численность безработных составляет 245.5 тыс. человек. В результате этого продолжается эмиграция населения республики. За последние 13 лет население только города Еревана сократилось около на 200 тыс. человек. По нашему мнению, Республика Армения имеет разнообразную, мощную сырьевую базу, что дает возможность восстановить, развивать современную промышленность, создать широкий рабочий фронт для трудовых ресурсов и прекратить эмиграцию нашего населения.

SERGEY MELKUMYAN

Professor at the Chair of „Macroeconomics“ at ASUE,
Doctor of Geographical Sciences

The Imperative of Reconstructing and Developing Industry in the Republic of Armenia.- Before the collapse of the Soviet power, Armenia was a highly developed industrial country where the share of industry in gross volume of production accounted for 56–68%. About 459,9 thousand workers were employed in the sphere of industry. For comparison, we should note that at present in the system of industry of our country the total number of employees is 83.8 thousand people. The total number of the unemployed is 245.5 thousand people. As a result of this the emigration of the population is continuing. The emigration has very negatively influenced especially all urban settlements. Over the last 13 years, the population of the city of Yerevan has reduced by nearly 200 thousand people. In our opinion, the Republic of Armenia has a diverse, powerful source of raw materials that gives an opportunity to restore and develop modern industry, to create a working front for labor and stop the emigration of our population.



ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ՄԱՐԻԱՄ ՄՈՍՁՅԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԷՆԵՐԳԱԽՆՆՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Էներգետիկ ռեսուրսներով Հայաստանի Հանրապետության ոչ բավարար ապահովվածությունը և դրանից բխող էներգետիկ անվտանգության ու էներգետիկ անկախության ապահովման հրամայականը պահանջում են էներգախնայողությանն ուղղված միջոցառումների ու գործիքների մշակում ու արդյունավետ կիրառում: Այդ գործիքներից առաջնային են սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացումը և ոլորտում պետական միջամտության դերի մեծացումը, ինչի շնորհիվ սպառողների համար տեսանելի օգուտները տնտեսության մասշտաբով և երկարաժամկետ հատվածում կդրսևորվեն բնակչության բարեկեցության աճով և տնտեսության ներքին ու արտաքին մրցունակության բարձրացմամբ:

Հիմնաբառեր. էներգախնայողություն, էներգետիկ անվտանգություն, էներգետիկ անկախություն, էներգետիկ գրագիտություն, տնտեսական աճ, խնայողություն

ՀՀ աշխարհաքաղաքական, տնտեսական պայմանները առավել քան կարևորում և ստիպում են ուշադրության կենտրոնում պահել էներգետիկ անվտանգության, էներգետիկ անկախության հիմնահարցերը, որոնց սերտորեն առնչվում է էներգախնայողությունը, ինչն էլ, իր հերթին, պայմանավոր-

ված է սպառողների՝ տվյալ ոլորտին վերաբերող գրագիտության մակարդակի բարձրացմամբ: Պատմականորեն ՀՀ-ն մշտապես բախվել է էներգետիկ ռիսկերի: Երկրի անվտանգությունը և անկախությունը ենթադրում են ոչ միայն սեփական ռեսուրսներով ապահովվածություն, այլ նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում և շահագործում, իսկ վերջինս էլ պահանջում է զգալի ներդրումներ: ՀՀ տնտեսությունը բնութագրվում է էներգատարության գործակցի բարձր աստիճանով, ինչը նշանակում է, որ էներգետիկայի բնագավառում ցանկացած տեղաշարժ կարող է տնտեսությունում աղետալի հետևանքների պատճառ դառնալ: Այս բնագավառում տեղի ունեցող գործընթացներն իրենց ազդեցությունն են թողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Գիտությունը, տեխնիկան և տեխնոլոգիան պատմականորեն զարգացել են առաջանցիկ տեմպերով, ինչը հանգեցրել է էներգետիկ ռեսուրսների նկատմամբ պահանջարկի և սպառման ծավալների աճի: Սակայն, նշված գործընթացներին զուգահեռ, նույն տեմպերով չեն բարձրացել սպառողների էներգետիկ գրագիտության, նաև էներգախնայողության մակարդակները: Միջազգային ասպարեզում առկա հետազոտությունները հիմնականում հանգում են էներգախնայողության հասկացության սահմանման հստակեցմանը: Մինչդեռ, գործողությունները պետք է հիմնականում նպատակաուղղել սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացմանը և էներգասպառման կառավարման համակարգի ներդրմանը: Սպառողների՝ էներգետիկ շուկայի մասնակիցների վարքագիծը բնութագրվում է որպես ռացիոնալ՝ ցածր կամ ոչ ձկուն պահանջարկով: ՀՀ-ն աշխարհի այն ոչ մեծաթիվ երկրներից է, որտեղ էներգետիկ ռեսուրսների ձեռքբերմանն ուղղվող ծախսերը (ընդ որում՝ ինչպես քանակի, այնպես էլ համակարգերին միացման համար վճարվող), կենսամակարդակի և տնտեսական աճի տեմպերի համեմատությամբ, աճում են առաջանցիկ տեմպերով՝ սպառողների իրական եկամտի հաստատուն լինելու պարագայում: ՀՀ-ում էներգետիկայի ոլորտում տեղի ունեցող գնային փոփոխություններն ուղղակիորեն անդրադառնում են ինչպես բնակչության կենսամակարդակի, այնպես էլ տնտեսության մրցունակության վրա: Էներգետիկայի բնագավառի գները ՀՀ-ում գնաձև ձևավորող գլխավոր բաղադրիչներից են: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ մեր երկրում սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացումը բխում է ինչպես կենցաղային և ոչ կենցաղային համարվող սպառողների, այնպես էլ պետության շահերից: Հետևաբար՝ նշված խնդրի լուծումը պահանջում է համակարգային մոտեցում և պետության անմիջական մասնակցություն՝ նպատակային ծրագրերի իրագործման միջոցով: Խոսքը վերաբերում է հատկապես էներգախնայողության ծրագրերին, որոնց հիմքում էլ պետք է դրվի սպառողների էներգետիկ գրագիտության բարձրացման գերխնդիրը: Դա ենթադրում է ռեսուրսների խնայողաբար օգտագործում (կամ չօգտագործում, եթե դրա կարիքը չկա) այնպիսի տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնելու համապատասխան ռեսուրսները: Տարածված այն կարծիքը, թե էներգախնայողությունը հանգեցնում է էներգետիկ ռեսուրսների սպառման կրճատման, հետևաբար՝ հաճախ նաև սակագների բարձրացման և կարող է ունենալ հակադարձ ազդեցություն, վերանայման կարիք ունի, ինչպես և սակագների մեծության ձևավորման մեթոդների կախվածությունը սպառման ծավալներից: Բացի այդ, կարճաժամկետ

հատվածում էներգախնայողության հետևանքով առաջացած վնասները, երկարաժամկետում կփոխհատուցվեն տնտեսության մյուս ոլորտներում մրցունակության բարձրացմամբ, այդ թվում՝ ի հաշիվ ծախսերի և էներգետիկ ռեսուրսներից տնտեսության կախվածության հնարավորինս նվազման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման և լրացուցիչ ծառայությունների մատուցման: Դրա վառ ապացույցն են, օրինակ՝ նորակառույց շենքերում օգտագործվող նոր տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս զգալի տնտեսումներ կատարելու՝ միաժամանակ այլ ծառայությունների հաշվին ապահովելով սպառման ծավալների ավելացում: Բացի այդ, սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացման և էներգախնայողության արդյունքում տնտեսված միջոցները կներդրվեն տնտեսության այլ հատվածներում: Կամ, այլ կերպ ասած՝ կարճաժամկետ վնասները կարող են ապահովել ռազմավարական օգուտներ:

Աղյուսակ 1

«Վնասը տնտեսական և էներգատնտեսական բնութագրերը»¹


Հ/հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Տարի				
			2001	2002	2003	2004	2005
1	ՀՆԱ	մլրդ. դրամ	1176	1363	1625	1896	2228
2	Բնակչություն	մլն մարդ	3,212	3,210	3,212	3,215	3,218
3	Առաջնային վառելիք-էներգետիկ պաշարներ	հազ. տ ն.հ.	2032	2001	2080	2305	2618
4	Էլեկտրաէներգիայի արտադրություն	մլն կՎտժ	5745	5517	5501	6031	6316
5	Բնական գազի ներմուծում	մլն մ ³	1409	1070	1201	1333	1685
6	Նավթամթերքների ներմուծում	հազ. տ ն.հ.	368	379	432	412	402
7	Էլեկտրաէներգիայի վերջնական սպառում	մլն կՎտժ	3450	3400	3660	4000	4370
8	Բնական գազի վերջնական սպառում	մլն մ ³	1300	901	977	1156	1444
9	Էներգաապահովվածություն սեփական ՎԷՊ-ով	%	30,3	38,3	33,8	35,5	33,1
10	ՎԷՊ-ի վերջնական սպառում	հազ. տ ն.հ.	1610	1302	1430	1564	1789
11	ՀՆԱ էներգատարություն	կգ ն.հ. հազ. դրամ	1,72	1,469	1,280	1,216	1,175
12	ՀՆԱ էլեկտրատարություն	կՎտժ հազ. դրամ	4,88	4,05	3,38	3,18	2,83
13	ՀՆԱ էներգարդյունավետություն	հազ. դրամ կգ ն.հ.	0,57	0,68	0,78	0,82	0,8

¹ «Վնասը տնտեսության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր, Հավելված ՀՀ Կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N2 արձանագրային որոշման:

Կարճաժամկետ հատվածում էներգախնայողության և սեփական էներգետիկ ռեսուրսների սակավության հետևանքով առաջացած վնասները ՀՀ-ն կարող է փոխհատուցել նաև տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին ակտիվ ներգրավվածությամբ՝ եթե դրանց ոչ անմիջական մասնակցությամբ, ապա գոնե միջնորդի (տրանզիտ երկրի) դերակատարմամբ՝ փոխադրող երկրների համար ապահովելով երրորդ երկրներ էներգետիկ ռեսուրսների փոխադրման կամ տարանցման հուսալիություն և անվտանգություն:

Ընդ որում, տնտեսության առանձին հատվածների էներգատարության վերաբերյալ լիարժեք և համակողմանի պատկերացում կազմելու համար նախ պետք է ունենալ չափման միասնական միավոր (այդ թվում՝ պայմանական), քանի որ 1 մ³ գազի և 1 կՎտժ էլեկտրաէներգիայի սպառման արդյունքները համադրելի չեն:

Հայաստանի արդյունաբերությունն իր էներգատարությամբ ԱՊՀ երկրների շարքում ունի ցածր («լավ») ցուցանիշ (329,4 կգ ն.հ./հազ. դոլար), Ուզբեկստանը՝ 2616, ՌԴ՝ 831, Էստոնիան՝ 569, Մոլդովան՝ 1264, Կրաստանը՝ 304:



Գծանկար 1. *Էներգիայի սպառման կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի (2003 թ.)²*

Ինչպես երևում է գծանկարից, ՀՀ-ում էներգետիկայի ռեսուրսների և արտադրանքի հիմնական սպառողներ են արդյունաբերությունը (սարքավորումների մասով), տրանսպորտը, բնակչությունը, առևտրային այլ սպառողներ (չենքերի լուսավորություն, ջեռուցում և այլն): Ընդ որում, էներգետիկ ռեսուրսների առաջնային սպառումն իր ծավալներով ՀՀ-ում գերազանցում է երկրորդային սպառմանը: Ու քանի որ առաջնային էներգետիկ ռեսուրսները (օրինակ՝ գազը) սպառում են գերազանցապես ոչ կենցաղային համարվող

² Նույն տեղում:

սպառողները, և պահանջարկ ներկայացնողների ծախսերն ուղղակիորեն կախված են դրանց օգտագործման արդյունավետությունից, ուստի այստեղ էներգախնայողության համար խթաններ ստեղծելու կարիք առաջանում է հենց այդ պահանջարկը ներկայացնողների կողմից: Այլ է իրավիճակը ռեսուրսների երկրորդային սպառման շուկայում, որտեղ անհրաժեշտ են գործուն մեխանիզմներ շուկայի ծախողումները փոխհատուցելու համար՝ հաշվի առնելով սպառման համեմատաբար փոքր ծավալները և էներգախնայող տեխնոլոգիաների բարձր արժեքը: Ներկայումս ռեսուրսների երկրորդային սպառման շուկայում առկա խթաններն ուղղված են հիմնականում ծայրահեղ ծանրաբեռնվածության նվազեցմանը, մինչդեռ սպառողի համար էներգախնայողության շահամիտման անհրաժեշտ պայման է տեսանելի օգուտը:

Այսպիսով՝ էներգախնայողությունը հանգում է համապատասխան տեխնոլոգիաներ կիրառելու համար խթաններ ստեղծելուն: Ու, ինչպես նշվեց վերևում, պետությունը պետք է ակտիվ դերակատարություն ունենա էներգախնայողության ծրագրերում՝ դրանցում ներառելով հատկապես նորմատիվային պահանջներ, որոնք կունենան պարտադիր բնույթ (օրինակ՝ նոր շենքերի կառուցման թույլտվության հատուկ նորմատիվների սահմանում), և երկարաժամկետում կապահովեն զգալի օգուտ: Նորմատիվների պարտադիր կատարման պահանջը կարող է սկզբնական շրջանում առավել արդյունավետ լինել, քանի որ էներգախնայողության շնորհիվ առաջացող օգուտներն ուղղակիորեն զգալուց հետո միայն սպառողը շահագրգռված կլինի կիրառելու անհրաժեշտ տեխնոլոգիաներ: Առանձին երկրների ազգային առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ արդյունավետ կարող է լինել հասարակության մյուս անդամների օգուտների տեսանելիությունը և համեմատվելու ցանկությունը: Նման մեթոդ կարող է համարվել, օրինակ, սպառողին վճարման հաշիվ ներկայացնելիս հասարակության այլ անդամների վճարումների միջին մեծության վերաբերյալ տեղեկատվությունը: Գործուն մեթոդ կարող է լինել սպառողների կողմից ինքնակառավարման համակարգի ներդրումը:

Էներգախնայողության ռազմավարությունը, հիմնվելով մոդելների վրա, պետք է հաշվի առնի էներգետիկ ռեսուրսների արտադրությունը, ներմուծումը, սպառումը, սակագները կարճաժամկետում, դրանց մեծությունների փոփոխության ազդեցությունները մակրոտնտեսական և ֆինանսական ոլորտներում, ինչպես նաև սպառողների վարքագծային և տեխնոլոգիական ընտրության վրա ազդող ծախսային, հարմարավետության ու ժողովրդագրական գործոնները երկարաժամկետում: Մոդելավորման եղանակը հնարավորություն կտա հաշվի առնելու նաև օրենսդրական ու իրավական այլ ակտերի և ռազմավարությամբ սահմանված նպատակների համապատասխանությունը: Սակայն պետք է նշել, որ մոդելավորման համար անհրաժեշտ է ունենալ ելակետային տվյալների բազա, որի ստեղծման մեջ ևս պետության դերն առանցքային պետք է լինի: Քանի որ ՀՀ-ում, սոցիալ-տնտեսական պայմաններից կախված, հիմնական ուշադրությունը սևեռվում է միջոցառումների տնտեսական արդյունավետությանը, ուստի պետք է մշակել այնպիսի մոդելներ, որոնք հաշվի կառնեն դրանց սոցիալական արդյունավետությունը ևս: Վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը կարող է իրականացվել սոցիալական գրվազդի միջոցով: Սա նշանակում է, որ, օրինակ, սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացման և էներգախնայողության ապա-

հովման խնդիրը սոցիալական գովազդից վերածվում է գիտականորեն հիմնավորված և մշակված ծրագրի բաղադրիչի: Իսկ ծրագիրը պետք է լինի նպատակային՝ հաշվի առնելով շահառու յուրաքանչյուր խմբի ցանկությունները: Բայց քանի որ յուրաքանչյուր ձեռնարկի հաջողության գրավականը շուկայի արձագանքն է, ուստի կարևորվում է վերը նշված գիտական գաղափար-ծրագրի առևտրայնացումը և առաջարկի ու պահանջարկի համար խթանների ստեղծումը: Հակառակ պարագայում, կատարված ծախսերն արդյունավետ չեն լինի: Այսպես օրինակ՝ շինարարության ոլորտում համապատասխան նորմատիվների բացակայությունը կխոչընդոտի ներդրումների իրականացմանը, բնապահպանական խիստ տուգանքների բացակայությունն էլ չի խրախուսի մաքուր տեխնոլոգիաների բնագավառում ներդրումները:

Այսպիսով՝ սպառողների էներգետիկ գրագիտության մակարդակի բարձրացման և էներգախնայողության ապահովման ճանապարհը հետևյալն է՝



Արդյունքում՝ երկարաժամկետ հեռանկարում կապահովվեն տնտեսականից մինչև բնապահպանական օգուտներ. կաճի բնակչության բարեկեցության մակարդակը, տնտեսության մակարդակով կապահովվի դրանց ներքին և արտաքին մրցունակությունը՝ նպաստելով գիտության ու տեխնիկայի առաջընթացի և էներգախնայողության տեմպերի համադրելիությանը:

ГАРЕГИН БАГРАМЯН

*Начальник управления тарифной политики
Комиссии по регулированию общественных услуг,
кандидат технических наук*

МАРИАМ МОМДЖЯН

*Главный специалист управления тарифной политики Комиссии по
урегулированию общественных услуг,
кандидат экономических наук, доцент*

Проблемы энергосбережения и энергетическая грамотность потребителей.- Геополитические и экономические условия Республики Армения делают важными и требуют уделять особое внимание проблемам энергетической безопасности и энергетической независимости Армении, с чем очень тесно связаны проблемы энергосбережения, и что, в свою очередь, связано с проблемами повышения уровня энергетической грамотности потребителей. Стимулирование энергосбережения и энергетической грамотности потребителей на уровне государственных целевых программ в долгосрочной перспективе обеспечит выгоды как экономические, так и экологические, а также повышение уровня благосостояния потребителей и повышение конкурентоспособности экономики в целом.

GAREGIN BAGHRAMYAN

*Head of Tariff Policy Department
of Public Services Regulatory Commission,
PhD in Technical Sciences*

MARIAM MOMJYAN

*Chief Specialist of Tariff Policy Department of Public
Services Regulatory Commission,
PhD in Economics, Associate Professor*

Problems of Energy Savings and Energy Intelligence of Consumers.- Current geopolitical and economic conditions of the Republic of Armenia are very essential and make pay more attention to problems of energy safety and energy independence of the RA which are associated with the problems of energy saving, which, in its turn, is associated with the issues of improving energy intelligence of consumers. Development of incentives for energy saving and improvement of energy intelligence of consumers in governmental programs will provide economic and ecological benefits in the long run, including improvement of public welfare and competitiveness of economy, as a whole.



ՄԱՐԻԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության
ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ
ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Շուկայական տնտեսության պայմաններում հնարավոր չէ լիովին լուծել զբաղվածության հիմնախնդիրները, սակայն աշխատանքի շուկայում հարաբերական հավասարակշռության ապահովումը յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ՀՀ աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը, առանձնացնել առկա կարևոր հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման մեխանիզմներ: Այդ մեխանիզմներից կարելի է առանձնացնել զբաղվածության այլընտրանքային ձևերի խթանումը, աշխատանքային ռեսուրսների օֆշորինգի ծավալների ավելացումը, վարձատրության պետական երաշխիքների ձևավորումը, աշխատավարձերի համատարած ու երկարատև չվճարման նախադեպերի վերացումը և այլն:

Հիմնաբառեր. զբաղվածություն, գործազրկություն, աշխատանքի շուկա, աշխատանքային ռեսուրսների օֆշորինգ, զբաղվածության խթանում

Շուկայական տնտեսության պայմաններում հնարավոր չէ լիովին և ամբողջությամբ լուծել զբաղվածության հիմնախնդիրները, սակայն աշխատանքի շուկայում հարաբերական հավասարակշռության ձևավորումը յուրաքանչ-

յուր պետության առաջնահերթություններից է: Հայտնի է, որ զբաղվածության և աշխատանքի վարձատրության մակարդակների բարձրացումը միանշանակ հանգեցնում է երկրի բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Մեր նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ՀՀ աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը, առանձնացնել առկա կարևոր հիմնախնդիրները և առաջարկել մեխանիզմներ դրանց լուծման նպատակով: Հոդվածի շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել ՀՀ աշխատանքային ռեսուրսները, աշխատանքի առաջարկը և պահանջարկը, ինչպես նաև գործազրկության ցուցանիշները տարբեր տարիքային և մասնագիտական խմբերում:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության տնտեսությունը մինչև վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զարգանում էր արագ տեմպերով՝ արձանագրելով երկնիշ տնտեսական աճ: Սակայն աճի տեմպերը կտրուկ նվազեցին 2008 թ. (ՀՆԱ հավելաճը կազմեց ընդամենը 6.9%), իսկ 2009 թ. աճը բացասական էր (ՀՆԱ հավելաճը՝ 14.1%): Կարծես թե, 2010-ից սկսած, տարբեր գործոնների և միջոցառումների շնորհիվ ՀՀ տնտեսությունը սկսեց դրսևորել աճի որոշակի միտումներ (2010–2013 թթ. ՀՆԱ հավելաճը կազմեց համապատասխանաբար՝ 2.2%, 4.7%, 7.2%, 3.5%): Նման պայմաններում բացասական կամ նվազման միտումներ ցուցաբերեցին նաև այլ կարևոր մակրոտնտեսական ցուցանիշներ: 2008-ի ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունը թողեց սոցիալտնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտների, այդ թվում՝ աշխատանքի շուկայի վրա: Միաժամանակ, պետք է նշել, որ ճգնաժամը թե՛ առանձին մարդկանց և թե՛ պետությունների ստիպում է ավելի արդյունավետ օգտագործել առկա ռեսուրսները: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական մակարդակով վերափոխելու և կատարելագործելու տնտեսությունը կառուցվածքային, որոշ դեպքերում՝ բովանդակային առումներով: Աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը պատկերացնելու համար ներկայացնենք ոլորտը նկարագրող մի շարք վիճակագրական տվյալներ (աղյուսակ 1):

Աղյուսակից երևում է, որ 2013 թ., 2009-ի համեմատությամբ, ՀՀ աշխատանքային ռեսուրսները նվազել են 6.9%-ով: 2009–2013 թթ. տնտեսապես ակտիվ բնակչության՝ զբաղվածների և գործազուրկների ցուցանիշները փոփոխվել են հիմնականում նույն ուղղությամբ, ուստի այս տարիներին դրանց գործակիցները զգալի փոփոխությունների չեն ենթարկվել: Այդուհանդերձ, պետք է նշել, որ զբաղվածության մակարդակը 2013-ին, 2009-ի համեմատությամբ, աճել է՝ 81.3%-ից հասնելով մինչև 83.8%-ի: Գործազրկության մակարդակը վերոհիշյալ տարիներին կազմել է համապատասխանաբար՝ 18.7%, 19%, 18.4%, 17.3% և 16.2%: Ընդ որում, հարկ է նշել, որ բերված են ՀՀ միջին ցուցանիշները: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ՀՀ բնակչության 1/3-ից ավելին կենտրոնացած է Երևանում, գործազրկության մակարդակն այստեղ զգալի չափով գերազանցում է մյուս մարզերի ցուցանիշները՝ 2010–2012 թթ. կազմելով համապատասխանաբար՝ 29.9%, 30.2% և 25.8%: Հատկապես բարձր է Երևանում կանանց գործազրկության մակարդակը (2010–2012 թթ.՝ 35.7%, 34.4%, 28.2%): Մյուս մարզերում գործազրկության ցածր մակարդակը մասամբ պայմանավորված է գյուղական բնակչության զերակշռությամբ:

Աղյուսակ 1

«Հաշատանքային ռեսուրսները 2009–2013 թթ. (հազ. մարդ)»¹

	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ	2397.6	2389.7	2286.3	2260.5	2232.0
Տնտեսապես ակտիվ բնակչություն, այդ թվում՝	1418.8	1463.3	1440.9	1418.3	1392.2
տղամարդ	750.6	777.2	739.0	724.5	725.6
կին	668.2	686.1	701.9	693.8	666.6
Զբաղվածներ, այդ թվում՝	1152.8	1185.2	1175.1	1172.8	1166.7
տղամարդ	617.3	644.8	610.9	605.0	616.5
կին	535.5	540.4	564.2	567.8	550.2
Գործազուրկներ, այդ թվում՝	265.9	278.2	265.7	245.5	225.5
տղամարդ	133.3	132.5	128.1	119.4	109.1
կին	132.6	145.7	137.6	126.1	116.4

Միջազգային ասպարեզում, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից աշխատանքի շուկայի բնութագրության համար հիմնականում օգտագործվում են աշխատուժի առաջարկի, պահանջարկի և աշխատանքի շուկայի իրադրությունը բնորոշող ցուցանիշները: Աշխատանքի շուկայի իրավիճակը բնութագրող ցուցանիշներից նշենք դրա լարվածության ընդհանուր գործակիցը, որը ցույց է տալիս աշխատուժի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, այսինքն՝ մեկ թափուր աշխատատեղին բաժին ընկնող աշխատանք փնտրողների կամ չզբաղվածների թիվը, ինչպես նաև աշխատանքի տեղավորման գործակիցը, որը ցույց է տալիս աշխատանք փնտրողների կամ չզբաղվածների ընդհանուր թվում աշխատանքի տեղավորվածների տեսակարար կշիռը²:

«Հաշատանքի շուկան ավելի լավ պատկերացնելու համար դիտարկենք վիճակագրական համապատասխան տվյալներ, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում և 3-ում:

Նշենք, որ աղյուսակներում բերված են ՀՀ զբաղվածության պետական ծառայության տվյալները, այսինքն՝ խոսքն այդ ծառայությունում գրանցվածների մասին է միայն: Ըստ այդմ՝ 2013 թ. ընթացքում աշխատուժի պահանջարկի հայտ է ներկայացրել 3452 գործատու (2012 թ. 4039-ի փոխարեն) 9847 թափուր աշխատատեղերի համար (2012 թ. 10823-ի փոխարեն): Այսպիսով՝ 2013 թ. ընթացքում միջինացված ցուցանիշներով աշխատուժի առաջարկը (աշխատանք փնտրողների) կազմել է 65199 մարդ, պահանջարկը՝ 9847 թափուր պաշտոն, իսկ լարվածության գործակիցը՝ 6.6 մարդ մեկ թափուր պաշտոնի հաշվով: 2013 թ. աշխատուժի առաջարկը, չզբաղվածների առումով, կազմել է միջինը 57900 մարդ, իսկ մեկ թափուր աշխատատեղին բաժին ընկնող չզբաղվածների թիվը 5.9 է: Համեմատության համար նշենք,

¹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար–մարտ, ՀՀ ԱԿԾ
http://armstat.am/file/article/f_sec_1_13_4.doc.pdf

² Տե՛ս **Октябрьский П.**, Статистика (учеб.). М., „Проспект“, 2005, էջ 178-179:

որ 2013 թ. նոյեմբերի վերջի դրությամբ, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում 100 թափուր աշխատատեղի հաշվով առկա է ընդամենը 70 չգբաղված (այսինքն՝ լարվածության գործակիցը 0.7 է)³:

Աղյուսակ 2

Աշխատուժի առաջարկը 2013 թ. վերջի դրությամբ՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի (հազ. մարդ)⁴

Մարզ	Աշխատանք փնտրողներ			Չգբաղվածներ			Գործազուրկներ		
	ընդամենը	երիտասարդներ		ընդամենը	երիտասարդներ		ընդամենը	երիտասարդներ	
		16-24 տարեկան	25-30 տարեկան		16-24 տարեկան	25-30 տարեկան		16-24 տարեկան	25-30 տարեկան
Ընդամենը	65.2	6.6	9.2	57.9	5.6	8.0	56.0	5.5	7.6
ք. Երևան	18.5	0.9	1.8	17.2	0.9	1.8	16.7	0.9	1.7
Արագածոտն	2.0	0.3	0.3	1.4	0.2	0.2	1.4	0.2	0.2
Արարատ	3.1	0.4	0.5	2.7	0.3	0.4	2.6	0.3	0.4
Արմավիր	4.5	0.4	0.6	2.5	0.2	0.4	2.4	0.2	0.3
Գեղարքունիք	5.0	0.6	0.9	4.2	0.4	0.7	4.1	0.5	0.7
Լոռի	7.3	1.2	1.2	7.0	1.1	1.2	6.8	1.0	1.2
Կոտայք	5.9	0.5	0.9	5.6	0.5	0.8	5.5	0.4	0.8
Շիրակ	9.0	1.1	1.3	8.6	1.0	1.2	8.0	1.0	1.0
Սյունիք	4.7	0.4	0.7	4.1	0.3	0.6	4.0	0.3	0.6
Վայոց ձոր	1.0	0.1	0.2	0.8	0.1	0.1	0.7	0.1	0.1
Տավուշ	4.2	0.7	0.8	3.8	0.6	0.6	3.8	0.6	0.6

Աղյուսակ 3

Աշխատանքի շուկայի լարվածության մակարդակն ըստ 2013 թ. ամիսների (մարդ)⁵

Ամիս	Աշխատուժի առաջարկը՝ աշխատանք փնտրողներ	Այդ թվում՝ չգբաղվածներ	Աշխատուժի պահանջարկ	Աշխատանք փնտրողների թիվը մեկ թափուր աշխատատեղի հաշվով	Չգբաղվածների թիվը մեկ թափուր աշխատատեղի հաշվով
Հունվար	72200	63700	1 693	43	38
Փետրվար	71800	63200	1 913	38	33
Մարտ	71200	62900	2 063	35	30
Ապրիլ	70200	62200	2 499	28	25
Մայիս	69400	61600	2 648	26	23
Հունիս	68400	60700	2 363	29	26
Հուլիս	68500	59700	2 112	32	28
Օգոստոս	67007	58400	2 079	32	28
Սեպտեմբեր	66900	57800	1 990	34	29
Հոկտեմբեր	66700	57700	1 907	35	30
Նոյեմբեր	66300	57500	1 721	39	33
Դեկտեմբեր	65200	57900	1 514	43	38

³ Տե՛ս <http://www.rosmintrud.ru/labour/relationship/155>

⁴ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբերին, www.armstat.am

⁵ Տե՛ս նույն տեղը:

Համաձայն ՀՀ զբաղվածության պետական ծառայության տվյալների՝ 2013 թ. աշխատանքով ապահովվել է 12659 մարդ: Այսպիսով՝ աշխատանքի տեղավորման գործակիցը, ըստ աշխատանք փնտրողների թվի, կազմում է 19.4%, իսկ չզբաղվածների հաշվով՝ 21.9%: Սրանք չափազանց ցածր ցուցանիշներ են:

Եթե ուսումնասիրենք աշխատուժի պահանջարկի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների, ապա կտեսնենք, որ ավելի շատ թափուր աշխատատեղեր կան արդյունաբերության (2909), առևտրի և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման (1338), կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման (1025), տրանսպորտի և կապի (734), հյուրանոցների և ռեստորանների (721), առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման (671), շինարարության (658), կրթության (434) և պետական կառավարման (403) ոլորտներում⁶: Մյուս բնագավառներում (օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն, տնային տնտեսությունների վարում, ֆինանսական գործունեություն և այլն) աշխատուժի պահանջարկը համեմատաբար ավելի փոքր է:

ՀՀ զբաղվածության պետական ծառայության կողմից պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվից (56 հազ. մարդ) մասնագիտական ուսուցում են անցել 1317-ը (գործազուրկների ընդհանուր թվաքանակի 2.4%-ը), որից 799-ը վերամասնագիտացել են, 476-ը նախնական մասնագիտական պատրաստում և արհեստագործական ուսուցում են անցել, իսկ 42-ը՝ որակավորման բարձրացում⁷:

Ուսումնասիրելով պաշտոնապես գրանցված գործազուրկների կառուցվածքն ըստ սեռի, տարիքի, ինչպես նաև կրթական մակարդակի՝ տեսնում ենք, որ առավել մեծ է 35–45 և 46–54 տարիքային խմբերում ընդգրկված գործազուրկների տեսակարար կշիռը (համապատասխանաբար՝ 27.7% և 21.8%): Բավականին մեծ է նաև 55-ից բարձր և 25–30 տարիքային խմբերում գործազուրկների տեսակարար կշիռը (համապատասխանաբար՝ 16.1% և 13.6%):

Միաժամանակ, ըստ կրթական մակարդակի տարբերակման, առավել մեծ է միջնակարգ ընդհանուր կրթությամբ գործազուրկների տեսակարար կշիռը (45.7%), որոնց հաջորդում են միջին մասնագիտական կրթությամբ գործազուրկները (23.4%) և հետբուհական ու բարձրագույն կրթությամբ գործազուրկները (16.6%): Ավելի ցածր մասնագիտական որակավորում ունեցող բնակչության շրջանում գործազրկության բարձր ցուցանիշները վկայում են այն մասին, որ գործազուրկների զգալի մասն ունի միջին մասնագիտական կրթության, ինչպես նաև որակավորման բարձրացման կարիք: Այս խմբի գործազուրկների մասնագիտական ուսուցման և գիտելիքների ու հմտությունների կատարելագործմանն էլ պետք է ուղղված լինեն զբաղվածության ծառայության և ուսումնական այլ մարմինների մասնագիտական ուսուցման ծրագրերը: Պետք է նշել, որ 9847 թափուր աշխատատեղերից 6241-ը կամ 63.4%-ը բաժին են ընկնում բանվորական աշխատատեղերին: Մեծ է նաև որոշակի որակավորմամբ բանվորական, ինչպես նաև հյուրանոցային և ռեստորանային ոլորտում սպասարկող որակյալ աշխատուժի նկատմամբ պահանջարկը:

⁶ Տես նույն տեղը, էջ 87:

⁷ Տես նույն տեղը, էջ 89:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև հայրենական տնտեսության զարգացման միտումները, սոցիալական խնդիրները, աղքատության բավականին բարձր մակարդակը, կարելի է եզրակացնել, որ աշխատունակ բնակչության զբաղվածության ապահովումն ու գործազրկության մակարդակի նվազեցումը տնտեսության առաջնային հիմնախնդիրներից են: Ցավոք, պետք է փաստել, որ վերջին 20 տարիների ընթացքում ականատես ենք եղել երկրի աշխատանքային ներուժի աստիճանական քայքայմանը, ինչն էլ դարձել է ինչպես տնտեսական անհամաչափ զարգացման պատճառ, այնպես էլ հետևանք:

Զբաղվածության պետական խթանման մակրոտնտեսական մեխանիզմները կարող են լինել ուղղակի և անուղղակի ներգործության:

Եթե շուկայական տնտեսության պայմաններում զբաղվածության ուղղակի խթանման մեխանիզմների կիրառությունը խիստ սահմանափակ է, ապա անուղղակիներինը բավական ազդեցիկ է և արդյունավետ: Անուղղակի մեխանիզմների շարքում առանձնացնենք ամենակարևորները.

- Գործադիր իշխանության համապատասխան պատասխանատու մարմինների գործունեության ակտիվացման շնորհիվ վարձու աշխատուժի իրավական պաշտպանության ապահովում:
- Վարձու աշխատողների իրավունքների և շահերի պաշտպանության գործուն համակարգի ձևավորում համապատասխան գործառույթներ իրականացնող պետական մարմինների գործունեության նկատմամբ պետական վերահսկողության խստացմամբ:
- Աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ձևավորում և աշխատավարձերի համատարած ու երկարատև չվճարման նախադեպերի վերացում խիստ տուգանքների և գործատուների նկատմամբ այլ պատժամիջոցների կիրառման միջոցով:
- Գործազրկության ապահովագրության համակարգի ներդրում և զարգացում:
- Զբաղվածության այլընտրանքային ձևերի խթանում (հեռահար աշխատանք համացանցի հնարավորությունների օգտագործմամբ, ձկուն աշխատանքային գրաֆիկի կիրառում, կես կամ քառորդ դրույքով աշխատանք՝ job-sharing, work-sharing և այլն):
- Զբաղվածության այլընտրանքային ձև կարելի է համարել, այսպես կոչված, աշխատանքային ռեսուրսների օֆշորինգը (off shoring), որը զարգացած երկրներում տեղակայված ընկերությունների կողմից որոշակի աշխատանքների կատարման կազմակերպումն է զարգացող երկրներում, որտեղ աշխատանքի վարձատրության ավելի ցածր մակարդակի դիմաց կարելի է ստանալ բարձր որակի ծառայություններ: Օֆշորինգի ենթակա են, օրինակ՝ ճարտարագիտական, ֆինանսական վերլուծությունների, հաշվապահական, ծրագրավորման և այլ աշխատանքներ, որոնց կատարման համար պարտադիր չէ աշխատողի ֆիզիկական ներկայությունն աշխատավայրում: Համաշխարհային ճանաչում վայելող McKinsey ընկերության փորձագետների գնահատմամբ՝ օֆշորինգի միջոցով կարելի է ապահովել համաշխարհային ծառայությունների 11%-ը, իսկ օֆշորինգի ծավալներն

ապագայում թեև դանդաղ տեմպերով, բայց աճելու են⁸: Աշխատավարձի առումով, մատչելի աշխատանքային ռեսուրսների առաջարկը զարգացող երկրներում մեծանում է, քանի որ այստեղ համալսարանների շրջանավարտների թիվը տարեկան աճում է 5.5%-ով, մինչդեռ զարգացած երկրներում այս նույն ցուցանիշը 1% է կազմում⁹: Քանի որ վերոհիշյալ մասնագիտությունների գծով համալսարանական կրթության մակարդակը ՀՀ-ում բավականին բարձր է և մրցունակ, ուստի օֆշորինգը համարում ենք զբաղվածության և արտագաղթի խնդիրների լուծման արդյունավետ միջոց:

- Գործազուրկների մասնագիտական հարմարեցում աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին որակավորման բարձրացման ծրագրերի օգնությամբ, ինչպես նաև օֆշորինգի հնարավորությունների ավելացման նպատակով օտար լեզուների ուսուցման կատարելագործում միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում:
- Աշխատանքի շուկայում առանձին սոցիալական խմբերի (երիտասարդներ, հաշմանդամներ, կրճատման ենթարկված աշխատողներ և այլն) աջակցմանն ուղղված հատուկ պետական ծրագրերի մշակում և ֆինանսավորում:

Այսպիսով, համոզված ենք՝ պետություն – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում հնարավոր է ապահովել աշխատողների շահերի և իրավունքների պաշտպանության, արդարացի վարձատրության, սեփական երկրում պաշտպանվածության, ապահովության և վստահության կայուն երաշխիքներ:

⁸ Տե՛ս **Лабуазьер М., Розенфельд Д., Фаррелл Д.**, Будущее глобального рынка труда, The McKinsey Quarterly, 2005, № 3, էջ 73:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 76:

МАРИЯ СААКЯН

Доцент кафедры „Экономики труда” АГЭУ,
кандидат экономических наук

Анализ проблем занятости Республики Армения и возможности их решения.-

В условиях рыночной экономики невозможно полностью исключить безработицу, однако обеспечение относительного равновесия на рынке труда является главным приоритетом любого государства. Целью данной статьи является изучение и анализ состояния рынка труда РА, выявление основных проблем и попытка предложить механизмы, направленные на решение данных проблем. Из вышеуказанного можно выделить стимулирование альтернативных видов занятости, увеличение объемов офшоринга трудовых ресурсов, создание государственных гарантий оплаты труда, недопущение прецедентов поголовной и долгосрочной невыплаты зарплат и т.д.

MARIA SAHAKYAN

Associate Professor at the Chair of „Economics of Labour”
at ASUE, PhD in Economics

Analysis of Issues of Employment in The Republic of Armenia and Possibilities to Solve Them.-

It is impossible to eliminate unemployment under the conditions of market economy, but provision of stability in the labour market is one of the main priorities of the government. The aim of this article is to analyze the labor market in Armenia, to find out the core problems and to suggest mechanisms for solving them. This article suggests a number of methods for the provision of the growth of employment. From the above-mentioned we can point out the stimulation of alternative employment, labour off shoring, creation of state guarantees for salaries, elimination of precedent for wage nonpayment etc.



ՎԱՐԴԻՄԻՐ ՄԱՆԱՍՅԱՆ

*ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության
ամբիոնի դոցենտ,
աշխարհագրական գիտությունների թեկնածու*

**ՀՀ ՉՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԵՎ
ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում լուսաբանվում են գյուղական տարածքների վերակառուցման հրատապ խնդիրները ՀՀ-ում համայնքների խոշորացման համատեքստում՝ հաշվի առնելով շուկայական բարեփոխումները ագրոպարենային համակարգում, ժողովրդագրական իրավիճակը և աշխատանքային ռեսուրսների առկայությունը ագրարային հատվածում: Քննարկելով գյուղական համայնքների վիճակը և զարգացման շարժընթացը 1926-2013 թթ. ընթացքում՝ քննադատորեն վերլուծվում են բնակավայրերի խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ժամանակակից կանխատեսումները, պարզվում հանրապետության լեռնային գոտու մարզերում ու տարածաշրջաններում գյուղական համայնքների զարգացման կայունացման պայմաններն ու գործոնները, կատարվում են գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքներում ներդրումների մոտավոր հաշվարկներ՝ կախված տնտեսությունների զարգացման մակարդակից:

Հիմնաբառեր. *գյուղական տարածքներ, համայնքներ ու բնակավայրեր, հիպոկենտրոնացում, Մարկովյան շրջանների մեթոդ, արտագաղթ ու ներգաղթ, սոցիալական ենթակառուցվածքներ, ներդրումային գրավչություն, գյուղացիական տնտեսություններ*

Ագրարային հատվածի զարգացման շուկայական բարեփոխումների փուլում ՀՀ գյուղական տարածքների զարգացման գործընթացի բարդ ու հակասական բնույթն իր արտացոլումն է գտել ՀՀ Կառավարության 2011 թ. №44 «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգին հավանություն տալու մասին արձանագրության մեջ: Այդ հիմնախնդրի հրատապությունը բացատրվում է մի կողմից՝ լեռնային գոտու գյուղական տարածքներում փոքր գյուղական բնակավայրերի բարձր տեսակարար կշռով, մյուս կողմից՝ դրանց, այսպես կոչված, հարատևության մեծ «կենսունակությամբ», թեև խորհրդային տարիներին ագրարային քաղաքականության ոլորտում իրականացված կառավարման համակարգի փոփոխությունները, նպատակաուղղված ոչ հեռանկարային գյուղական բնակավայրերի խոշորացմանը, հանգեցրին բարձրլեռնային ու հեռավոր գյուղերի քայքայման և դատարկման գործընթացի արագացմանը:

ՀՀ լեռնային գոտու բոլոր մարզերում և տարածաշրջաններում այժմ առկա են գյուղական տարածքներ, որտեղ ստեղծվել են բարեկարգված համայնքներ: Դրանցում, որպես կանոն, ենթակառուցվածքների զարգացման մակարդակը զգալիորեն ավելի բարձր է, քան հարակից գյուղական համայնքներում և բնակավայրերում: Այդպիսի համայնքներում դիտվում է գյուղական բնակչության կայունացում և նույնիսկ աճ, ամրապնդվում է նաև որակյալ աշխատուժը: Այստեղ բնակչության թվաքանակի ավելացումը տեղի է ունենում ծնելիության աճի, ուրիշ գյուղերից ու նույնիսկ քաղաքային բնակավայրերից ներգաղթի հաշվին: Սակայն այդպիսի համայնքների մասնաբաժինն առայժմ շատ փոքր է, հետևաբար՝ գյուղական տարածքների տնտեսական և ժողովրդագրական զարգացման մեջ որակ չի կազմում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ լեռնային գոտու տնտեսական և ժողովրդագրական իրավիճակը առայժմ մնում է խիստ լարված: Գոտու շատ մարզերում ու տարածաշրջաններում մինչև այժմ պահպանվում է գյուղական համայնքներից ու բնակավայրերից բնակիչների գաղթի բարձր մակարդակ, իսկ որոշ մարզերում (Շիրակ, Վայոց ձոր, Սյունիք, Լոռի) նույնիսկ աճել է բնակչության արտահոսքը: Օրինակ՝ Սյունիքի մարզում 1000 մարդու հաշվով տարվա ընթացքում գաղթի ինտենսիվությունը միջինում 2001–2005 թթ. 14.9%-ից 2008–2012 թթ. ավելացել է՝ հասնելով մինչև 19.1%-ի: Բնորոշ է, որ 2001–2012 թթ. (հետբարեփոխումների ամենաինտենսիվ վերակառուցման ժամանակաշրջանում) մարզի 4 տարածաշրջաններում դիտվել է բնակչության թվի կրճատում (11.2 հազ. մարդ): Այդ ժամանակաշրջանում աննշան չափով (0.3%-ով) կրճատվել է մարզի քաղաքային բնակչությունը: Այդպիսի օրինակներ կարելի է բերել նաև ըստ լեռնային գոտու այլ մարզերի:

Շարունակվում է ոչ միայն փոքր, այլև նույնիսկ համեմատաբար խոշոր հեռանկարային գյուղական համայնքների (հատկապես Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու, Տավուշի ցածրադիր և գետահովտային բարենպաստ տեղամասերում) մանրացումը: Խիստ անբարենպաստ իրավիճակ է ձևավորվել նաև սահմանամերձ և բարձրլեռնային տարածաշրջանների տնտեսապես թույլ զարգացած և սոցիալապես խոցելի գյուղական համայնքներում: Անբավարար ագրոարտադրական ռեսուրսաապահովվածության, բարեկարգ ճանապարհային ցանցի բացակայության պայմաններում առաջնահերթ խնդիրների լուծումն այստեղ խիստ բարդացել է: Գյուղացիական տնտեսություններում աշխատանքային ռեսուրսների խիստ պակասի և բնակավայրերի ցանցի վատ-

թարացման պատճառով կտրուկ նվազում են ակնկալվող փոխհատուցումները ագրարային հատվածում կատարված զգալի ներդրումներից: Դիտվում է գյուղատնտեսական աշխատանքներում քաղաքներից ներգրավվող աշխատողների թվի աճ: Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, ներունակ գաղթի ծավալները, հատկապես գյուղական երիտասարդության շրջանում, դեռևս շատ բարձր են, իսկ տրամադրվածությունը գաղթի նկատմամբ շատ կայուն է: Հանրապետության ագրոպարենային համակարգի և դրա առանցքային ոլորտի՝ ագրարային հատվածի կառավարման մեջ տեղի ունեցող շուկայական բարեփոխումների արդյունքում գյուղացիական տնտեսություններն անցնում են ինքնաֆինանսավորման և ինքնաձախսածածկման, անհամեմատ մեծանում են պահանջները աշխատանքային ռեսուրսների, գյուղական համայնքների արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների նկատմամբ: Այսպիսով՝ լեռնային գոտու գյուղական համայնքների վերակառուցման առումով հասունանում է շատ պատասխանատու, կարելի է ասել՝ բեկումնային ժամանակաշրջան: Չէ՞ որ որակյալ աշխատուժի կայունացումից և չնախատեսված արտագաղթի կրճատումից պետք է կախված լինեն ամբողջ ագրարային հատվածում սոցիալ-տնտեսական վերակառուցման և հնարավոր ռիսկերի կանխարգելման ու հետևանքների հաղթահարման գործընթացները:

Լեռնային գոտու գյուղական համայնքների և բնակավայրերի խոշորացման խնդիրներն այժմ անհանգստացնում են բոլորին՝ գյուղապետերին, տարածքային կառավարման նախարարության աշխատակիցներին, տնտեսագետ գիտնականներին: Սակայն, հավանաբար, չափից ավելի երկար է տևել այդ համայնքների տնտեսական և ժողովրդագրական դրության բարեփոխումների բացառման ուղին, ուստի կարճ ժամանակահատվածում մատնանշել դրանց վերականգնման հայեցակարգը և գտնել գործընթացի առավել կիրառելի ձևեր ու մեթոդներ, չափազանց դժվար է: Առավել ևս, որ գյուղական բնակչության մեխանիկական համակենտրոնացման և միաբնակեցման կողմնակիցներ դեռևս կան:

Թեև «անհեռանկարային» գյուղեր այժմ ձևականորեն գոյություն չունեն, սակայն մինչև հիմա փորձեր են արվում հաշվարկելու ստացվելիք ինչ-որ տնտեսական արդյունք մարզկենտրոնի մոտ («լուտերների» հայեցակարգը) կամ էլ գետահովիտների և ավտոմոբիլային մայրուղիների երկարությամբ տեղաբաշխված առանձին խոշոր գյուղական համայնքներում բնակչության համակենտրոնացումից: Այդպիսի հայեցակարգերի կողմնակիցներն առաջարկում են գյուղական տարածքների վերակառուցման ռազմավարության և մարտավարության մշակման դեպքում հաշվի առնել գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման և գյուղական տարածքների զարգացման այն բացասական միտումները, որոնք այժմ ակնառու են լեռնային գոտու շատ մարզերում ու տարածաշրջաններում: Օրինակ՝ կոշտ ծածկով ճանապարհային ցանցի բացակայությունը և առանձին տարածաշրջաններում սոցիալական ենթակառուցվածքների թույլ զարգացումը, բնականաբար, գյուղական բնակչությանը ստիպում են կենտրոնանալ ցածրադիր գոտում և գետահովիտների ու ավտոմոբիլային մայրուղիների երկարությամբ, ինչպես նաև զարգացած սոցիալական ենթակառուցվածքներ ունեցող խոշոր քաղաքային և գյուղական բնակավայրերի շուրջը: Հարց է ծագում՝ կարելի՞ է արդյոք այդ բացասական միտումը համարել օբյեկտիվ

օրինաչափություն և ըստ այդմ կանխատեսել գյուղական բնակավայրերի ու բնակչության տեղաբաշխումը: Դժվար թե համայնքների ու բնակավայրերի խոշորացումից սպասվող արդյունքը համադրելի լինի գյուղական տարածասահմանների արհեստական «խոշորացման» հետևանքով առաջացող այն հսկայական կորուստների հետ, որոնք հարուցված են գյուղական տարածքների «ամայացմամբ», արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքերի չօգտագործմամբ՝ չխոսելով արդեն ազգային գենոֆոնդի պահպանության պաշտպանական նշանակության, ազրոէկոլոգիական և մշակութային խաթարումների մասին:

Դժբախտաբար, գյուղական տարածքների վերակառուցման գործընթացում շատ բացասական երևույթներ մինչև հիմա չեն հաղթահարվել, որոշ հարցեր մեկնաբանվում ու գնահատվում են խիստ միակողմանի, լավագույն դեպքում՝ մշակութակենցադային տեսանկյունից: Դա, հիրավի, ընդունում են նաև քաղաքաշինարարները, ովքեր դժգոհում են, որ գյուղական համայնքների վերակառուցման նպատակով արվող առաջարկությունների մշակումն ընթացել և շարունակում է ընթանալ գյուղական տարածքների և փոքր համայնքների ու բնակավայրերի տնտեսական և սոցիալական զարգացման հարցերի ուսումնասիրությանը զուգահեռ՝ հաճախ առաջ անցնելով դրանցից:

Կարծում ենք՝ գյուղական համայնքների խոշորացման վերաբերյալ ծայրահեղ տեսակետները (հատկապես «հիպերկենտրոնացման» հայեցակարգը) ծագել են պարզեցված արտամիջարկման վրա հիմնվող «արտադրության համակենտրոնացում–համայնքների խոշորացում» միտումների և գյուղական տարածքների սովորույթի բնույթը հաշվի չառնող սխալ մեթոդաբանական նախադրյալներից, որը չի կարելի դիտել միայն որպես բացասական երևույթ:

Գյուղական համայնքների խոշորացումը և միջհամայնքային միավորների ձևավորումը, ընդհանուր առմամբ, առաջադիմական գործընթաց է՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրության հետագա համակենտրոնացման և մասնագիտացման խորացման պահանջներով, քաղաքների ու գյուղերի, ցածրադիր ու լեռնային գոտիների բնակիչների մշակութակենցադային սովորույթների մերձեցման անհրաժեշտությամբ: Սակայն այս դեպքում հարկ է մշտապես հաշվի առնել ինչպես ագրարային հատվածի ուրույն առանձնահատկությունները (հողը, սեզոնայնությունը, կենդանի օրգանիզմները, աշխատանքային և արտադրության փուլերի անհամատեղելիությունը և այլն), այնպես էլ մասնագիտացման ու վերարտադրության պայմանները (այգեգործությունն ու տավարաբուծությունը պահանջում են 5–7 տարի, իսկ դաշտավարությունը՝ 2–3 տարի):

Հասկանալի է, որ հենց ագրարային հատվածի ազրոկլիմայական պայմաններից անհամեմատ մեծ կախվածությունը, արտադրատեխնոլոգիական ու կազմակերպչական գործոնների թերազնահատումը և գյուղացիական տնտեսությունների ու տնտեսավարման այլ փոքր ձևերի զարգացման միտումները հաճախ հանգեցնում են գյուղական տարածքների զարգացման սխալ հայեցակարգերի և գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման ու մասնագիտացման մակարդակների ոչ ճիշտ սահմանման:

Գյուղական համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորների ձևավորման հայեցակարգային տարբերակների մշակման ժամանակ հաճախ հաշվի չեն առնվում հակասությունները:

Չի բացառվում, որ գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման և մասնագիտացման խորացման պարագայում, կենտրոնական համայնքներում աշխատուժի մի մասի վերաբնակեցման արդյունքում, անցնելով բարձր տնտեսական արդյունավետություն ապահովող կառավարման ագրոֆիրմային կառուցվածքի, ցրված փոքր համայնքների և բնակավայրերի մի մասը հարկավոր չլինի՝ հատկապես նախալեռնային գոտու և առանձին տարածաշրջանների գետահովտային մի քանի խոշոր համայնքներում և համահավաք հողօգտագործման բնակավայրերում:

Մի շարք դեպքերում էլ կարելի է դրականորեն գնահատել նաև գյուղական համայնքների խոշորացման գործընթացը (հատկապես Երևանի, Գյումրու և Վանաձորի համեմատաբար բարձր քաղաքակենտրոնացման գոտիներում), մանավանդ, եթե դրանք փոքր են, քանի որ դա կապված է քաղաքամերձ հանգստի, ամառանոցային կառուցապատման, կոլեկտիվ այգեգործաբանջարաբուծական տնտեսություններում հասարակության աճող պահանջմունքների բավարարման համար տարածքների ընդարձակման հետ (այդպիսի գյուղական համայնքների և բնակավայրերի մի մասն արդեն ընդգրկվել է քաղաքային սահմանագծերում):

Սակայն աշխատուժի պակասի, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման համեմատաբար ոչ բարձր մակարդակի պայմաններում (իսկ այսպիսի բնութագրով համայնքներն ու բնակավայրերը մեծամասնություն են կազմում լեռնային գոտում) փոքր համայնքների ու բնակավայրերի, դրանց գյուղացիական տնտեսությունների ու տնտեսավարման այլ փոքր ձևերի պահպանումը օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Հայտնի է, որ տարածքային տարբերությունները մեծ ազդեցություն են ունենում էթնիկական մշակույթների և արտադրական տիպերի մասնագիտացման ձևավորման վրա: Մի կողմից՝ պարփակվող լանդշաֆտների նմանությունը կանխորոշել է նույնիսկ շատ տարբեր՝ ինչպես շարֆադինական (եզդիական) և քրիստոնեական, քոչվոր և նստակյաց ժողովուրդների էթնոմշակութային մերձեցմանը: Մյուս կողմից՝ լանդշաֆտները համարվել են տարբեր տարածաշրջաններում էթնիկական խմբերի և նրանց մասնագիտացման տարբերության պատճառներից մեկը, քանի որ յուրաքանչյուր էթնոս ապրել և այժմ էլ ապրում է էկոլոգիական տարբեր որմնախորշերում (հայերը՝ ցածրադիր գոտում ու գետահովիտներում, իսկ քոչվորական ոչխարաբուծությամբ զբաղվող եզդիները՝ ջրբաժաններում ու լեռնային գոտում). հետագայում ևս պահպանվելու են այդ տարբերությունները:

Ուստի այս համատեքստում արժե ուշադրություն դարձնել նաև աչքի ընկնող էթնոմշակութային բնութագիր ունեցող գյուղական տարածքներում գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման տարբերությունների վրա, քանի որ ցածրադիր գոտու և գետահովտային տարածաշրջանների բուսաբուծության ենթաձյուղերի գերակշռության պայմաններում ավելի հանդիպում են խոշոր գյուղական համայնքները, իսկ լեռնաարոտային ոչխարաբուծության պայմաններում՝ քիչ աշխատուժ ապահանջող ցրված բնակեցումը՝ փոքր գյուղական համայնքների ու բնակավայրերի գերակշռությամբ:

Գյուղական տարածքների վիճակի վատթարացում հարուցող ազգային մշտական հիմնախնդիրներից բացի, պետք է հիշատակել նաև էկոլոգիականը: Մինչև այժմ գյուղական համայնքների զարգացման էկոլոգիական գործոնները պատշաճ կերպով հաշվի չեն առնվել, թեև վաղուց անցել են այն

ժամանակները, երբ «գյուղ ձևավորող» հիմնական ճյուղերը՝ բուսաբուծությունը, անասնաբուծությունը և ռեկրեացիան անվնաս էին համարվում շրջակա միջավայրի համար: Այսօր գյուղական համայնքների զարգացմանը միտված յուրաքանչյուր միջոցառում պետք է հանգամանորեն կշռադատվի բնության պահպանության հիմնախնդիրների հաշվառմամբ:

Որտեղ և ինչպիսի պայմաններում է ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցի և շրջակա միջավայրի տարրերի վրա ավելանում «տեխնաժին ճնշումը»: Այսպես՝ Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի և այլ մարզերում գունավոր և ազնիվ մետաղների մեծաքանակ արդյունահանման, լեռնային գոտու գետերի վրա 100-ից ավելի փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման, Արարատյան դաշտավայրի մարզերում գրունտային ջրերի թույլատրելի պաշարների օգտագործման սահմանը գերազանցող լճակային ձկնաբուծության ծավալների կտրուկ մեծացման հետևանքով էկոհամակարգերի խաթարումը հանգեցնում է գյուղական տարածքներում բնակության ավանդական վայրերի և զբաղմունքների վերացմանը: Սա լուրջ սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգությանը, քանի որ մեր հանրապետության հիմնական կերակրատու համարվող Արարատյան դաշտին, ջրի սղության պատճառով, անապատացում է սպառնում:

Տնտեսական նախագծերի իրականացումը, կապված խոշորածավալ էկոլոգիական փոփոխությունների հետ, պատճառ է դառնում գաղթային գործընթացների կտրուկ աճի և գյուղական համայնքների ու բնակավայրերի դատարկման: Միջազգային ոլորտում այդ երևույթը բնորոշվում է «էկոլոգիական փախստականներ» հասկացությամբ: Այսպես օրինակ՝ Արգինի գետի վրա փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցումը հանգեցրել է հինգ գյուղական համայնքների ջրագրկմանը, իսկ Արագածոտնի մարզում «Թուխմանուկ» ոսկու հանքավայրի շահագործումը սպառնում է ոչ միայն Մելիքգյուղի բնակիչներին, այլև հարակից համայնքներին. հանքավայրը բազմամետաղային է, չէն բացառվում նաև ուրանի հետքերը: Բնակության ավանդական վայրերի կորուստ և գյուղական բնակչության արտագաղթ կարող է տեղի ունենալ նաև սողանքների և բնական միջավայրի հսկայական ավերածությունների պատճառով:

Գյուղական տարածքների էկոլոգիական խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անբարենպաստ էկոլոգիական իրավիճակը շարունակում է պահպանվել մի կողմից՝ անխոհեմ տնտեսավարման, բնակչության թույլ սոցիալական պաշտպանվածության, ոլորտի հետագա մենաշնորհացման և բնական ռեսուրսների նկատմամբ սպառողական վերաբերմունքի հետևանքով: Մյուս կողմից՝ դա մեծ մասամբ պայմանավորված է ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով բնօգտագործման արդյունավետության գործոնների գնահատման բացակայությամբ:

Գյուղական տարածքների հետազոտողների մեծ մասը, օգտագործելով պաշտոնական վիճակագրության տվյալները, արձանագրում է համայնքային ցանցի խոշորացման և բնակավայրերի թվի կրճատման բարձր տեմպեր: Այսպես՝ 1926–2013 թթ. վիճակագրական հաշվառման մեջ գտնվող 1266 գյուղական բնակավայրերի թիվը նվազել է՝ հասնելով 942-ի. վերացել են (հաշվառումից հանվել են) 417-ը կամ 32.4%-ը, մնացածը կամ միավորվել է մեկ անվան տակ (178 բնակավայր), կամ ձեռք է բերել քաղաքային բնակավայրի կարգավիճակ (43), կամ էլ նախկին քաղաքային բնակավայրերից

առաջացած գյուղեր են (8): Բացի դրանից, քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում ստեղծվել են 178 նոր գյուղական համայնքներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ գյուղական համայնքների և բնակավայրերի վիճակագրական հաշվառման մեջ կատարված փոփոխությունները 1926–2013 թթ. ընթացքում¹

Գյուղական համայնքների և բնակավայրերի ընդհանուր թիվը	ժամանակաշրջան					
	1926-1959*	1959-1970	1970-1989	1989-1995	1995-2013	1926-1913
ժամանակաշրջանի սկզբում	1266	1134	931	909	925	1266
ժամանակաշրջանի վերջում	1134	931	909	925	942	942
Գյուղական համայնքների և բնակավայրերի թվի նվազեցում կամ ավելացում, այդ թվում՝	169	186	22	16	17	344
ընդհանուր անվան միավորման հաշվին	66	19	12	2	–	99
քաղաքային սահմանագծի մեջ ընդգրկման հաշվին	27	10	4	–	2	43
դատարկվելու (հաշվառումից հանելու) հաշվին	202	184	26	5	–	417
Նոր ստեղծված գյուղեր	126	27	18	7	–	178
Վերականգնված գյուղեր	–	–	2	16	–	18
Նախկին քաղաքային բնակավայրերից առաջացած գյուղեր	–	–	–	–	8	8

* 1926 և 1959 թթ. մարդահամարների ժամանակ որպես առանձին գյուղական բնակավայրեր հաշվառված են նաև ձմեռային բնակատեղերը, սահմանային պահակատները, զինվորականների խոտի հնձավայրերը, քոչաստեղերը և այլն, որոնք իբրև գյուղեր չէին ներառվել «գյուղական բնակավայրերի» ցանկում, ուստի և դրանց բնակչությունը հաշվված պետք է լինի այլ գյուղերի հետ: Իրականում այդ գյուղերը միմյանցից 0.5-ից մինչև 20 կմ հեռավորության վրա տեղաբաշխված փոքր բնակավայրերի ցանց և առանձին գյուղացիական դաստակերտներ են ներկայացնում, որոնք մինչև 1959 թվականը համարվել են առանձին բնակավայրեր: Դա հնարավոր է հաստատել միայն արխիվային տվյալներով և խոշորամասշտաբ քարտեզներով:

Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանանում ՀՀ Կառավարության կողմից մշակված խոշորացման հայեցակարգը, որի համաձայն՝ գոյություն ունեցող 942 գյուղական համայնքներից խոշորացման

¹ Աղյուսակը կազմել ենք ըստ՝ Ջ. Կորկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.), Եր., Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 1932: Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 гг., Стат. сборник, ЦСУ при СовМин Арм. ССР, Армгосиздат, Ер., 1962, էջ 10-54: Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Армянская ССР, ЦСУ при СовМин. Арм. ССР, Госстатиздат, ЦСУ СССР, М., 1963, էջ 14–15: Итоги Всесоюзной переписи населения 1970 года по Арм. ССР, ЦСУ при СовМин Арм. ССР, ДСП, Ер., 1972, էջ 25: Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 1, Стат. сборник, ЦСУ Арм. ССР, ДСП, Ер., 1981, էջ 37-38: 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Հայաստանի Հանրապետության վիճակետև, Եր., 1991, էջ 27: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008–2012, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, էջեր՝ 245–247, 253–254, 259–261, 268–169, 276–278, 284–285, 291–293, 300–302, 309–310 և 316–317:

համար նախատեսված են ավելի քան 600-ը: Անկասկած, սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական տարբեր հանգամանքների պատճառով տեղի է ունենալու գյուղական համայնքների խոշորացում, բայց դժվար է վստահորեն պնդել, թե գյուղական համայնքների թիվը կպակասի 600-ով կամ 1.5 անգամ, քանի որ առկա են մի շարք խոչընդոտներ: Դրանցից մեկն այն է, որ շատ տարածաշրջաններում բարդ ռելիեֆը թույլ չի տալիս խոշորացնել գյուղական համայնքները և ձևավորել միջհամայնքային միավորումներ: Այսպես օրինակ՝ Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերին տեղաբաշխված Կապանի տարածաշրջանում նեղ կիրճերը և թեք լեռնալանջերը թույլ չեն տալիս կառուցապատել նույնիսկ մի քանի հարյուր բնակիչների համար նախատեսված գյուղական բնակավայրեր: Շատ հաճախ (հատկապես բարձր-լեռնային գոտում) փոքր գյուղական բնակավայրերը, ուրույն տնտեսավարմամբ, զբաղեցնում են մեկուսացված ոչ մեծ տարածք՝ մանրաուրվագիծ և անկանոն կառուցվածք ունեցող հողատեսքերով:

Եթե 1960–1970-ական թվականներին հիմնականում քննադատվում էին այդ բաժանման գործընթացի սխալները (հեռանկարային էին համարվում երբեմն ընդհանրապես հեռանկար չունեցող գյուղեր, և ընդհակառակը), ապա ավելի ուշ՝ բաժանման սկզբունքն ամբողջությամբ:

Ձգտելով համահարթել սոցիալ-տնտեսական տարբերությունները փոքր ու խոշոր և ցածրադիր ու լեռնային գոտիների գյուղական համայնքների միջև («ընտրված գյուղական համայնքներ» «քաղաքային տիպի» բնակավայրերի վերածման ճանապարհով)՝ պատկան մարմինները և նախագծողները միաժամանակ գիտակցաբար նպաստում են «խոշորացվող» ու «պահպանվող» և ցածրադիր ու լեռնային գոտիների գյուղական բնակավայրերի միջև սոցիալ-տնտեսական տարբերությունների մեծացմանը:

Առաջիկա ժամանակաշրջանի բարդությունը կապված է լինելու նաև դեպի մայրաքաղաք և հանրապետության այլ քաղաքներ ու արտասահմանյան երկրներ ազգաբնակչության շարունակվող արտագաղթի պայմաններում գյուղական համայնքների մանրացման և վերացման միտումների հաղթահարման հետ: Այս առումով, խիստ կարևորվում է գաղթային գործընթացների կառավարման արդյունավետ միջոցառումների մշակումը: Համայնքների խոշորացման դեպքում մարմիններն ակնկալում են մարդկային ներուժի համախմբում, ենթակառուցվածքների ու ծառայությունների մատուցման արդյունավետության մեծացում, ֆինանսական կարողությունների և լիազորությունների շրջանակի ընդլայնում և այլն: Բայց մի դեպքում դա կարող է ցանկալի արդյունք ապահովել, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Շատ տարածված տեսակետ է համայնքների կառուցվածքում որքան մեծ է փոքր գյուղական բնակավայրերի տեսակարար կշիռը, այնքան բարձր է գյուղական բնակչության արտագաղթի մակարդակի ինտենսիվությունը: Սակայն, ըստ վերջին ուսումնասիրությունների, որոշակի ճշգրտումներ արվեցին այս առումով:

Այսպես՝ արտագաղթի գծային ռեգրեսիվ մոդելների վերլուծության հիման վրա ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ վերջին տարիներին գյուղական համայնքների ցանցի կառուցվածքի միջին չափերը (խոշոր, միջին և փոքր բնակավայրեր), ըստ բնակչության թվի, աննշան կերպով են կապված գյուղական համայնքներից գաղթային գործընթացի ծավալների և շարժընթացի հետ: Այդ եզրակացությունը շատ կարևոր է գյուղական տարածքների զարգացման հետագա կատարելագործման ուղիները որոշե-

լու համար: Իսկապես, համապատասխան մարմինների և մասնագետների փորձերը՝ կտրուկ փոփոխել գյուղական համայնքների ավանդական կառուցվածքը, ձևավորել «խոշորացված կենտրոնի կատարելատիպ», անկասկած, հանգեցնելու են խիստ բացասական հետևանքների: Բազմագործոն վերլուծությունը ցույց տվեց, որ այժմ գյուղական բնակչության արտագաղթի վրա առավել մեծ ազդեցություն են ունենում ոչ թե գյուղական համայնքների չափերը, այլ դրանց գործառույթները, ոչ գյուղատնտեսական զբաղվածության տարածման աստիճանը, ենթակառուցվածքների ու ծառայությունների մատուցման արդյունավետությունը, ֆինանսական կարողությունների մեծացումը, ներդրումային գրավչությունը, ճանապարհների կոշտ ծածկով տարածքի հագեցվածությունը և այլն: Բնականաբար, այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը մեկուսացված չէ այլ գործոնների ազդեցությունից, հետևաբար՝ դրանց փոխազդեցության ուժը, կախված որոշակի պայմաններից, պետք է տարբեր լինի:

Գյուղական համայնքների նպատակային ձևավորումը, դրանցից շատերի հիմքի վրա մսի, կաթի, կարտոֆիլի, պտուղ-բանջարեղենի, շաքարի ձակնդեղի, կտավատի ու ձկնամթերքների վերամշակման և համակցված կերերի արտադրության ձեռնարկությունների տեղաբաշխումը, պահպանման ու մթերման համակարգերի, պահեստային ու ապրանքափաթեթավորող տնտեսությունների, տրանսպորտի, ծառայությունների ոլորտի, արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերի միջոցով բարձր տնտեսական ցուցանիշներ ապահովող կառավարման ագրոարդյունաբերական միավորումների և ագրոֆիրմային կառուցվածքների ստեղծումը մոտ հեռանկարում գյուղական տարածքների զարգացման կարևոր խնդիրներից են: Ուստի, ագրարային հատվածի մասնագիտացման խորացման հետ մեկտեղ, գյուղական համայնքների զարգացման կարևորագույն ուղղությունը դառնում է բազմազանեցումը՝ ոչ գյուղատնտեսական ճյուղերում բնակչության այլընտրանքային զբաղվածության պայմանների ստեղծումը: Շուկայի անկայունության և տնտեսության ագրարային հատվածի վերակառուցման պայմաններում բազմազանեցումն անհրաժեշտ է փոփոխվող արտաքին պայմաններին գյուղական բնակչության արագ հարմարվելու, գյուղմթերքների ստացման և վերամշակման գործում կայունություն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Դրա լուծումը զգալիորեն ընդլայնում է գյուղական բնակչության զբաղվածության ոլորտը (հատկապես երիտասարդ կանանց), որն էլ, իր հերթին, թույլ է տալիս կարգավորել բնակչության վերարտադրությունը և պահպանել ազգային գենոֆոնդի լավագույն հատկանիշները: «Բեռնաթափման» հաշվին << լեռնային գոտու մարզերում ու տարածաշրջաններում քաղաքային բնակավայրերին համապատասխանող ոչ գյուղատնտեսական մասնագիտության (հատկապես ագրովերամշակման հետ կապված) լրացուցիչ աշխատատեղերը տեղաբաշխելու մասին հարցը վաղուց է հասունացել, սակայն առայժմ անբավարար չափով է լուծվում: Այսօր արդեն կասկածից վեր է, որ գյուղական համայնքների սոցիալական զարգացմանը վերաբերող ամենավճռորոշ միջոցառումներն անգամ չեն կարող ապահովել պատշաճ փոխհատուցում, եթե քաղաքային համայնքների զարգացման դեպքում հաշվի չեն առնվելու գյուղական տարածքները:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության փոքր գյուղական համայնքների և բնակավայրերի տեղաբաշխումն ըստ ուղղաձիգ գոտիականության²

Բարձրության գոտիները (ծովի մակարդակից՝ մետրերով)	1926		1959		1979		1989		2001		2012	
	բացարձակ թիվը	%	բացարձակ թիվը	%	բացարձակ թիվը	%	բացարձակ թիվը	%	բացարձակ թիվը	%	բացարձակ թիվը	%
Ցածրադիր գոտի (մինչև 1000 մ)	44/189	23,3	20/220	9,1	11/233	4,7	14/240	5,8	18/240	7,5	17/243	6,7
Նախալեռնային գոտի (1000-1500 մ)	71/200	35,5	47/203	23,1	55/187	29,4	59/216	27,3	63/216	29,2	68/211	30,6
Լեռնային գոտի (1500 մ-ից բարձր)	137/477	30,6	160/491	21,6	94/486	19,3	106/481	22,0	122/448	27,2	153/467	32,7
Ընդամենը ՀՀ-ում	252/866	29,1	173/914	18,9	160/906	17,7	179/937	19,1	203/904	22,4	238/932	25,5

Լեռնային գոտու մարզերում ու տարածաշրջաններում, գյուղական համայնքների և բնակավայրերի ցանցի մեծ ցրվածության հետ մեկտեղ, արձանագրվում են առողջապահության, առևտրի, կրթության և մշակույթի օբյեկտների ապահովվածության ամենացածր ցուցանիշները: Այնինչ, մոտ հեռանկարում գյուղական տարածքների զարգացումը պետք է կողմնորոշված լինի ոչ միայն դեպի խոշոր համայնքներ ու քաղաքամերձ բնակավայրեր, այլև գյուղական «խորքեր», որտեղ պատմականորեն ձևավորվել է փոքր գյուղական համայնքների տարակենտրոն խիտ ցանց, որը վերջին տարիների ընթացքում էլ ավելի է կրճատվել բնակչության արտագաղթի հետևանքով³: Այսպես՝ 500 մարդուց ավելի բնակչությամբ կենտրոնական համայնքների միայն 30%-ը կարող է ձևավորել ժամանակի պահանջներին համապատասխանող մշակութային սպասարկման հաստատությունների սկզբնական համալիր: Միաժամանակ, հանրապետության լեռնային գոտու հենակետային

² Աղյուսակը կազմել ենք ըստ՝ Населенные пункты и население Армянской ССР за 1831–1959. Стат. сборник, ЦСУ при СовМин Арм. ССР, Армгосиздат, Ер., 1962, էջ 10–54: Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Армянская ССР, ЦСУ при СовМин. Арм. ССР, Госстатиздат, ЦСУ СССР, М., 1963, էջ 14–15: Итоги Всесоюзной переписи населения 1970 года по Арм. ССР, ЦСУ при СовМин. Арм. ССР, ДСП, Ер., 1972, էջ 25: Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 1, Стат. сборник, ЦСУ Арм. ССР, ДСП, Ер., 1981, էջ 37–38: 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Հայաստանի Հանրապետության վիճակագրություն, Եր., 1991, էջ 27: Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշներ), ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003, էջ 144–209: Հայաստանի մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008–2012, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, էջեր՝ 245–247, 253–254, 259–261, 268–269, 276–278, 284–285, 291–293, 300–302, 309–310, 316–317:

³ Տես Վ. Մանայան, Փոքր գյուղական բնակավայրերի վերականգնման հիմնահարցերը, «Էկոնոմիկա», 1991, N 9–10, էջ 37–46:

համայնքների մոտավորապես 1/3-ը ներառվում են մինչև 300 մարդ մարդաշատությամբ կատեգորիայի մեջ, այդ թվում՝ գյուղական բնակավայրի մոտ 90–95%-ը (աղյուսակ 2):

Այսպիսով՝ արգելակվում է ոչ մեծ համայնքների և բնակավայրերի կառուցապատումը սոցիալական ենթակառուցվածքների չափանշվածք բազաների անկատարության պատճառով: Ընդ որում, խիստ տուժում է կառուցվող օբյեկտների որակը: Դա հատկապես վերաբերում է փոքր գյուղական համայնքներին և մեկուսացված բնակավայրերին: Եթե բոլոր խոշոր գյուղական համայնքներն ապահովված են նախագծման և կառուցապատման հատակագծերով, ապա փոքր համայնքները գրկված են դրանցից, թեև մեծ է պահանջարկը: Այսպես օրինակ՝ 101-ից մինչև 200 մարդ բնակչությամբ համայնքներում և բնակավայրերում, որոնք, ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների, ամբողջի 21%-ն են կազմում, փաստորեն, չի կարելի կառուցել տիպային մուր-մանկապարտեզ, տարրական դպրոց, ակումբ, բաղնիք, խանութ և այլն, քանի որ բնակչության թիվը չի բավարարում կառուցապատմանը ներկայացվող պահանջները:

Նոր մշակված հայեցակարգում, որպես բնակավայր, հստակ չէ մոտ հեռանկարում պահպանվող փոքր գյուղերի սահմանումը, «որոնց համար, նախագծման ժամանակից սկսած, բացահայտված չէ զարգացման տնտեսական բազան»: Հարց է առաջանում. իսկ ինչպե՞ս կարելի է նախատեսել այդպիսի համայնքների զարգացումը, եթե դրանց համար չի կազմվել գլխավոր հատակագիծ: Փաստորեն, առաջարկվում է կապիտալ շինարարությունն ամբողջությամբ կենտրոնացնել խոշորացվող համայնքներում: Իսկ ինչպե՞ս պետք է լուծվեն պահպանվող փոքր համայնքների և բնակավայրերի կապիտալ շինարարության խնդիրները: Բազմաթիվ փոքր գյուղական համայնքներ, որտեղ ապրում են կենսաթոշակառուներ, ընդհանրապես չեն ներառվում որևէ կատեգորիայում: Գյուղացիական տնտեսություն և տնտեսավարման այլ փոքր ձևեր վարող սոցիալապես խոցելի այդ խմբերի դեպքում առայժմ չկան միաբնակեցնելու հնարավորություններ, իսկ հետագա զարգացման համար բացակայում է սոցիալ-տնտեսական բազան: Հստակեցված չէ նաև խոշորացված համայնքների վարչական և արտադրական կենտրոնների անվանման սկզբունքը, խնդիր է համարվում հարևանությամբ գտնվող «անհաշտ» համայնքների միավորումը ևս (ասենք՝ ընդհանուր ջրագծի, միջգյուղական հողատարածքների օգտագործումը և այլն), քանի որ դրանցից յուրաքանչյուրը խոշորացման գործընթացում որոշակի ռիսկեր է պարունակում:

Փոքր գյուղական համայնքների և բնակավայրերի պահպանմանը ու վերականգնմանը կարող են նպաստել նաև լեռնային գոտու շատ մարզերում ու տարածաշրջաններում վերջին տարիներին մեծ տարածում ստացած գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերը (հիմնականում՝ մթերման ու վաճառահանման)⁴: Դրանք ունեն իրենց վերամշակման և իրացման կետերը, իսկ որոշ տարատեսակներ՝ նաև սեփական մանրածախ ցանցերը: Դա հնարավորություն է տալիս գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացում դաշտից (ֆերմայից) մինչև վաճառասեղան ճանապարհին խուսափելու միջնորդներից և ստանալու առավելագույն եկամուտ: Գյու-

⁴ Տե՛ս Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, «Տնտեսության ազդարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 55-61:

ղատնտեսական արտադրության կազմակերպման նշված ձևի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նախկինում ոչ հեռանկարային համարվող, մեկուսացված փոքր գյուղական համայնքների մոտ տեղաբաշխված հողատեսքերի և ֆերմաների օգտագործման հնարավորություններ է ստեղծում:

Ձգալի սոցիալ-տնտեսական արդյունք կարելի է սպասել նաև գյուղական տարածքներում գտնվող դատարկ բնակելի տների և տնամերձ հողամասերի օգտագործման դեպքում⁵: Այժմ ՀՀ լեռնային գոտու մարզերում ու տարածաշրջաններում հաշվվում են 200 հազարից ավելի դատարկ բնակելի տներ և տասնյակ հարյուրավոր հեկտար լքյալ գյուղատնտեսական հողատեսքեր: Կարծում ենք՝ այս հանգամանքը լեռնային գոտու շատ գյուղական համայնքների հնարավորություն կտա դեպի իրենց գրավելու այն քաղաքաբնակներին, ովքեր ցանկանում են զբաղվել կոլեկտիվ այգեգործաբանջարաբուծությամբ: Սակավաբնակ և կիսալքյալ գյուղերը կարող են վերածվել կոլեկտիվ այգեգործաբանջարաբուծական յուրօրինակ բնակավայրերի, քանի որ դրանցում առկա դատարկ բնակելի տները, տնամերձ հողամասերի հետ մեկտեղ, վաղ թե ուշ անցնելու են քաղաքաբնակների տնօրինությանը՝ ձեռք բերելով ամառանոցային նշանակություն: Այս համատեքստում հատկանշական է երևանյան ազլոմերացիային հարող նախալեռնային գոտում տեղաբաշխված «Արալանջ» կոլեկտիվ այգեգործաբանջարաբուծական ընկերությունը, որը ձևավորվել է 1980-ական թվականների սկզբին՝ ընդգրկելով մայրաքաղաքի 76 տարբեր կազմակերպությունների ու հաստատությունների շուրջ 1400 աշխատակիցների: Այժմ այստեղ գործում է ավելի քանի 300 տնտեսություն. չափերով հավասար է հանրապետության միջին մարդաշատության գյուղական համայնքի: Դա նշանակում է՝ գյուղատնտեսական աշխատանքների ակտիվ ժամանակաշրջանում առկա է լիարժեք գյուղական կենսաձև՝ եկամտաբեր գյուղատնտեսական աշխատանքով: Չի բացառվում, որ կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու նպատակով այստեղ մշտապես բնակվել ցանկացողների թիվը մեծանա: Նշված միջոցառումները ոչ միայն պետք է նպաստեն փոքր գյուղական համայնքների պահպանմանը և վերականգնմանը, այլև դրանց գործառույթների հետագա զարգացմանը և մասնագիտացման խորացմանը:

Այսպիսով՝ փոքր գյուղական համայնքները և բնակավայրերը լեռնային գոտու գյուղական տարածքների համակարգի բնական և անհրաժեշտ մասն են: Դրանց վերացումն արագացնում է փոքր գյուղերից դեպի խոշոր գյուղեր և գյուղերից քաղաքներ գաղթող բնակչության շարժը: Մինչդեռ, գյուղական համայնքների ցանցի բնական զարգացումը և ինքնակարգավորումը արգելակում են այդ արտագաղթը, կասեցնում գյուղերի վերացման և բնակչության նվազման գործընթացները: Գյուղական համայնքներից արտագաղթի կրճատման արդյունքում կարելի է ակնկալել նաև այդ բնակավայրերի ապախոշորացման գործընթացի դանդաղեցում:

Հետևաբար՝ պետք է լրջորեն վերանայել գյուղական համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման որոշ ռազմավարական հարցեր:

⁵ Տե՛ս Վ. Մանասյան, Հայկական ԽՍՀ-ում կոլեկտիվ այգեգործության և բանջարաբուծության տարածքային կազմակերպման մի քանի հարցեր, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1990, N 1, էջ 19-25: Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, նշվ. աշխ., էջ 63-65:

ВЛАДИМИР МАНАСЯН


Доцент кафедры „Природопользования“ АГЭУ,
кандидат географических наук

Проблема сельских территорий РА в контексте укрупнения сельских общин и формирования межобщинных объединений. - Анализируются тенденции и современное состояние сельских территорий РА с учётом рыночных преобразований в АПК республики, демографической ситуации в связи с ориентацией на укрупнение мелких населённых пунктов в сфере создания экологически устойчивой сети сельских общин. Рассматриваются состояние и динамика развития сельских общин за период рыночных преобразований, современные прогнозы организации и укрупнения сети поселений в сельских общинах. Выявлены условия и факторы стабилизации развития сельских общин в горных регионах. Даны ориентировочные расчеты вложений в инфраструктуру общин, в зависимости от уровня экономического развития крестьянских хозяйств и других форм хозяйствования, что способствовало бы развитию частного агробизнеса в республике.

VLADIMIR MANASYAN

Associate Professor at the Chair of „Environmental Economics“
at ASUE, PhD in Geographical Sciences

The Issue of Rural Territories in the RA in the Context of Enlarging Rural Communities and Forming Intercommunity Unions. - Tendencies and the current state of rural territories in the RA are analyzed taking into account the market reforms in the APC of the republic, demographic situations in connection with the orientation of strengthening small settlements in the sphere of creating ecological stability of the network of rural communities. The present state and the dynamics of developing rural communities during the period of market reforms are considered, as well as the modern prognosis of the perspective organization and strengthening of the network of settlements in the rural communities. The conditions and factors of stabilization of the development of rural communities in the regions of the mountainous zones are identified. The estimated accounts of investments in the infrastructures of the communities are given depending on the level of the economic development of the rural households and other forms of economy, which would contribute to the development of the agrobusiness in the republic.



ՁՈՅԱ ԹԱՐԵԿՈՍՅԱՆ

*ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր*

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՌԱՋՆԹԱՅ, ԹԵ՞ ՁԱԽՈՂՈՒՄ

Հայտնի է, որ «անցումային տնտեսություն» հասկացությունը հասարակագիտության, մասնավորապես՝ քաղաքագիտության և տնտեսագիտության տեսական մեկնաբանություններում և վերլուծություններում կիրառվում է նախկին սոցիալիստական համակարգի երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային և այլ բարեփոխումների արդյունքներն ու համաշխարհային չափանիշներին համարժեք շուկայական բաց տնտեսություն ձևավորելու նախաձեռնությունները համադրելու նկատառումներով: Հոդվածում դիտարկվել է անցումային տնտեսություններում առկա ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական գործընթացների և հիմնախնդիրների վերլուծությունը՝ համապատասխան գնահատականների հիման վրա: Սույն հետազոտության համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել մարդու իրավունքների Freedom House միջազգային կազմակերպության և Համաշխարհային բանկի Doing Business-2013 վերլուծական հաշվետվությունները:

Հիմնաբառեր. *վարկանշավորում, անցումային տնտեսություն, ժողովրդավարություն, շուկայական տնտեսություն, օտարերկրյա ներդրումներ, եվրոսոցացում, տեղեկատվական հասարակություն*

Հայտնի է, որ «անցումային տնտեսություն» հասկացությունը հասարակագիտության, մասնավորապես՝ քաղաքագիտության և տնտեսագիտության տեսական մեկնաբանություններում և վերլուծություններում կիրառվում է նախկին սոցիալիստական համակարգի երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային և այլ բարեփոխումների արդյունքներն ու գոյություն ունեցող՝ համաշխարհային չափանիշներին համարժեք շուկայական բաց տնտեսություն ձևավորելու նախաձեռնությունները համադրելու նկատառումներով: Ավելի քան 20 տարի առաջ սկսված՝ կենտ-

րոնացված պլանային տնտեսությունից անցումը շուկայական տնտեսության, դրա մեխանիզմների գործարկման արդյունքները, ըստ առանձին երկրների, միագիծ ու լիարժեք գնահատել հնարավոր չէ: Ասվածը կարելի է հիմնավորել ըստ անցումային տնտեսությամբ երկրների ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական գործընթացներում առկա հիմնախնդիրների վերլուծության և համապատասխան գնահատականների:

Անառարկելի փաստ է, որ ցանկացած տնտեսակարգ կառուցվում է որոշակի քաղաքական համակարգի հիմքի վրա: Շուկայական տնտեսության ձևավորման և ամրապնդման անբաժան ուղեկիցը ժողովրդավարությունն է: Ղա հաստատվում է աշխարհի զարգացած և նոր արդյունաբերական երկրների փորձով, այլ խոսքով՝ շուկայական տնտեսության և ժողովրդավարության կապն այլընտրանք չունի:

Միջազգային իրավապաշտպան Freedom House կազմակերպությունը յուրաքանչյուր տարի անցումային տնտեսությամբ երկրներում իրականացնում է ժողովրդավարության զարգացման վարկանշային հետազոտություններ, որոնց արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու ժողովրդավարական բարեփոխումների համեմատական վերլուծություններ, ինչպես նաև գնահատելու տվյալ երկրի երկարաժամկետ քաղաքական զարգացման միտումները: Այդ հետազոտությունները համապատասխան երկրների կառավարությունների գնահատականը չեն. պայմանավորված են քաղաքացիների անհատական իրավունքների և ազատությունների նկատմամբ պետական և ոչ պետական սուբյեկտների գործնական վերաբերմունքով ու դերակատարությամբ:

Երկրների քաղաքական համակարգի գնահատման հիմքում յոթ ցուցանիշ է՝ ընտրական գործընթացներ (ազատ, արդար և թափանցիկ), քաղաքացիական հասարակության զարգացման, զանգվածային լրատվության միջոցների անկախության, ազգային կառավարության ժողովրդավարության, տեղական իշխանությունների ժողովրդավարության, դատական համակարգի անկախության և արդյունավետության, կոռուպցիայի մակարդակներ:

Վարկանշավորման գործընթացը ներառում է չորս փուլ: Առաջին փուլում փորձագետները վերոհիշյալ յոթ խումբ ցուցանիշների վերաբերյալ կազմում են նախնական վարկանիշներ, երկրորդ փուլում գիտական խորհրդատուները գնահատում են դրանք, տվյալների անձշտության մասին կոնսենսուսային որոշման դեպքում՝ վերանայում և վերամշակում, երրորդ փուլում հաշվետվությունների հեղինակները քննարկում են խորհրդատուների գնահատականները (եթե դրանք նախնական արդյունքներից տարբերվում են ավելի քան 0,05 միավորով, ապա իրավունք ունեն վիճարկելու), և, վերջապես, չորրորդ փուլում Freedom House-ի մասնագետները վարկանիշները խմբագրում են՝ ժողովրդավարության մասին ընդհանուր եզրակացություն հրապարակելու համար: Յուրաքանչյուր երկիր, վերը նշված յոթ ցուցանիշներին համապատասխան, ստանում է վարկանիշ: Բոլոր երկրներին տրվում է 1–7 վարկանշային գնահատական (տասնորդական ճշգրտությամբ). 1 միավորը համապատասխանում է ժողովրդավարական զարգացման առավել բարձր մակարդակին, իսկ 7-ը՝ ամենացածրին: Ցուցանիշների միջին թվաբանականով հայտնի է դառնում երկրում ժողովրդավարության զարգացման, քաղաքական համակարգի իրական գնահատականը: Վարկանշային գնահատման արդյունքում քաղաքական համակարգերը դասակարգվում են այսպես՝

1. կայուն ժողովրդավարական համակարգով երկրներ՝ 1–3 միավոր,
2. մասնակի ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներ՝ 3–4 միավոր,
3. անցումային կամ հիբրիդային (խաչասերված) քաղաքական համակարգով երկրներ՝ 4–6 միավոր,
4. մասնակի ավտորիտար քաղաքական համակարգ ունեցող երկրներ՝ 5–6 միավոր,
5. ավտորիտար քաղաքական համակարգով երկրներ՝ 6–7 միավոր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվել են նախկին սոցիալիստական 29 երկրներում ժողովրդավարության զարգացման մակարդակի, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների վիճակն արտացոլող վարկանիշները 2013 թ. դրությամբ (աղյուսակ 1): Հետազոտությունները փաստում են, որ կենտրոնացված պլանային տնտեսության ունեցած երկրների մի մասը, հատկապես՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից ութը, նպատակավաճ ընթանում է ժողովրդավարական հասուն ինստիտուտների ձևավորման ճանապարհով, ինչը հնարավոր է դարձրել վերջիններիս անդամագրումը զարգացած երկրների՝ Եվրոմիության ընտանիքին:

Մասնակի ժողովրդավարական համակարգով երկրներից երեքը՝ Ռումինիան, Բուլղարիան և Խորվաթիան ևս ԵՄ անդամ են: Իսկ ԱՊՀ անդամ գրեթե բոլոր երկրներում առաջընթացն աննշան է, ապագան էլ՝ մշուշապատ: Որոշ բացառություններ կարելի է անել Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի վերաբերմամբ, որոնք անցումային կամ հիբրիդային քաղաքական համակարգով երկրներ են: Ընդ որում, վերջիններս ունեն հստակ արտահայտված քաղաքական կողմնորոշում դեպի Եվրոպա, որը Վրաստանի և Մոլդովայի պարագայում արտացոլվեց Եվրոասոցացման համաձայնագրերի նախաստորագրմամբ: Եվրոպայի հետ համագործակցության խորացման, թերևս, աներկբա դիրքորոշում ունեւր Ուկրաինան, որն արդեն նախաստորագրել և պատրաստ է ստորագրելու Եվրոմիության հետ ընկերակցության համաձայնագիրը: Դա հանգեցրեց քաղաքական ծայրահեղականությանը բնորոշ տրամադրությունների և դրանց համարժեք իրավիճակների ձևավորման: Ներկայումս մենք այդ հզոր երկրի մասնատման ականատեսն ենք:

Երկրների պատմական զարգացման փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական պատերազմների, հեղափոխությունների ժամանակ կամ դրանց բնորոշ իրավիճակներում ժողովրդավարական արժեքներն առաջինն են տուժում, իսկ հետագա վերականգնումը բարդ ու դժվարին գործ է:

Հայաստանը, (ինչպես նաև Կոսովոն) համարվում է մասնակի ավտորիտար քաղաքական համակարգ ունեցող երկիր և միայն քաղաքացիական հասարակության զարգացման մակարդակը բնութագրող վարկանիշով է մոտենում ուսումնասիրվող երկրների միջինացված ցուցանիշին:

Աղյուսակ 1

Անցումային երկրների քաղաքական համակարգի վարկանիշները 2013 թ.¹

<i>Կայուն ժողովրդավարական համակարգով երկրներ</i>								
<i>Երկրներ</i>	<i>EP</i>	<i>CS</i>	<i>IM</i>	<i>NGOV</i>	<i>LGOV</i>	<i>JFI</i>	<i>CO</i>	<i>DS</i>
Սլովենիա	1.50	2.00	2.25	2.00	1.50	1.75	2.25	1.89
Էստոնիա	1.75	1.75	1.50	2.25	2.50	1.50	2.25	1.93
Լիտվա	1.75	1.75	1.75	2.25	2.25	1.75	3.25	1.93
Լեհաստան	1.25	1.50	2.25	2.50	1.75	2.50	3.25	2.14
Չեխիա	1.25	1.75	2.50	2.75	1.75	2.00	3.25	2.18
Լատվիա	1.75	1.75	2.00	2.75	2.50	1.75	3.50	2.29
Սլովակիա	1.50	1.75	2.75	2.75	2.50	2.75	3.50	2.50
Հունգարիա	2.25	2.00	3.50	3.50	2.50	2.75	3.50	2.86
<i>Մասնակի ժողովրդավարական համակարգով երկրներ</i>								
Բուլղարիա	2.00	2.50	3.75	3.50	3.00	3.25	4.00	3.14
Ռումինիա	3.00	2.50	4.00	3.75	3.00	3.75	4.00	3.43
Խորվաթիա	3.25	2.50	4.00	3.50	3.75	4.25	4.00	3.61
Սերբիա	3.25	2.25	4.00	3.75	3.50	4.50	4.25	3.64
Չեռնոգորիա	3.25	2.75	4.25	4.25	3.25	4.00	5.00	3.82
Մակեդոնիա	3.25	3.25	4.75	4.25	3.75	4.00	4.00	3.89
<i>Անցումային կամ հիբրիդային քաղաքական համակարգով երկրներ</i>								
Ալբանիա	4.25	3.00	4.00	5.00	3.50	4.75	5.25	4.25
Բոսնիա և Հերցեգովինա	3.25	3.50	4.75	5.50	4.75	4.25	4.50	4.36
Վրաստան	4.75	3.75	4.25	5.00	5.50	5.00	4.50	4.75
Ուկրաինա	4.00	2.75	4.00	5.75	5.50	6.00	6.00	4.86
Մոլդովա	4.00	3.25	5.00	5.75	5.75	4.50	5.75	4.82
<i>Մասնակի ավտորիտար քաղաքական համակարգով երկրներ</i>								
Կոսովո	5.00	3.75	5.75	5.75	4.75	5.50	5.75	5.18
Հայաստան	5.75	3.75	5.75	5.75	5.75	5.50	5.25	5.36
<i>Ավտորիտար քաղաքական համակարգով երկրներ</i>								
Ղրղզստան	5.50	4.75	6.25	6.50	6.50	6.25	6.25	6.00
Ռուսաստան	6.75	5.50	6.25	6.50	6.00	6.00	6.50	6.21
Տաջիկստան	6.50	6.00	6.00	6.25	6.00	6.25	6.25	6.18
Ղազախստան	6.75	6.00	6.75	6.75	6.50	6.50	6.50	6.57
Ադրբեջան	7.00	6.00	6.75	6.75	6.50	6.50	6.50	6.57
Բելառուս	7.00	6.25	6.75	6.75	6.75	7.00	6.25	6.68
Թուրքմենստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
Ուզբեկստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
<i>Միջինացված ցուցանիշներ</i>								
	3.98	3.52	4.47	4.70	4.29	4.43	4.78	4.31

¹ Աղբյուրը՝ Nations in Transit 2013. Freedom House 2013. EP-ընտրական գործընթացներ, CS՝ քաղաքացիական հասարակության զարգացման մակարդակ, IM՝ զանգվածային լրատվության միջոցների անկախության մակարդակ, NGOV՝ ազգային կառավարության ժողովրդավարության մակարդակ, LGOV՝ տեղական իշխանությունների ժողովրդավարության մակարդակ, JFI՝ դատական համակարգի անկախության և արդյունավետության մակարդակ, CO՝ կոռուպցիայի մակարդակ, DS՝ երկրում ժողովրդավարության մակարդակ:
http://www.freedomhouse.org/sites/default/files/NIT2013_Tables_FINAL.pdf

Ուսումնասիրելով ավտորիտար քաղաքական համակարգ ունեցող ութ երկրի քաղաքական վարկանշային ցուցանիշները՝ կարելի է պնդել, որ ԱՊՀ անդամ երկրները այդպես էլ չկարողացան ավելի քան 20 տարիների ընթացքում ձևավորել ժամանակակից հետարդյունաբերական՝ տեղեկատվական հասարակության չափանիշներին համապատասխանող քաղաքական միջավայր, որը, ինչպես նշեցինք, հենց տնտեսական առաջընթացի կարևորագույն գործոն է:

Անցումային երկրներին առաջադրված տնտեսական բնույթի խնդիրները կարելի է խմբավորել և ներկայացնել այսպես.

- Տնտեսության ազատականացում. արտացոլվում է գների ազատականացման, ազատ շուկայում դրանց սահմանման և առևտրային արգելքների նվազեցման միջոցով՝ շուկայական տնտեսությամբ երկրներում գնային քաղաքականության փոխկապվածության մեջ:

- Մակրոտնտեսական կայունացում. սա, առաջին հերթին, այնպիսի գործընթաց է, որի միջոցով տնտեսության ազատականացմանը և ճնշված պահանջարկի «ազատագրմանը» հետևող գնաձի մակարդակի կտրուկ բարձրացումն առնվում է հսկողության տակ, և ժամանակի ընթացքում դրա մակարդակն աստիճանաբար նվազում է: Մակրոտնտեսական կայունացումը պահանջում է պետական բյուջեի, դրամական զանգվածի և վարկերի նկատմամբ կարգապահական քաղաքականության իրականացում, ինչպես նաև կայուն վճարային հաշվեկշռի ձեռքբերում:

- Մասնավորեցում և վերակազմակերպում. ներառում է անցումային երկրներում ձեռնարկությունների մասնավորեցումը և կենսունակ ֆինանսական հատվածի ձևավորումը՝ արտադրելու այլ շուկաներում պահանջարկ ունեցող մրցունակ ապրանքներ:

- Իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ. անհրաժեշտ են անցումային երկրներում պետության դերի վերակողմնորոշման, համապատասխան իրավակարգի սահմանման և ոչ խտրական մրցակցության պայմանների ձևավորման նպատակով: Ենթադրվում էր, որ մակրոտնտեսական կարգավորմանն ու ազատականացմանն առնչվող, ինչպես նաև մասնավորեցման հիմնախնդիրներն անցումային տնտեսությամբ երկրներն արագորեն կլուծեն: Իհարկե, շուկայական տնտեսությանն անցման ընթացքում շատ երկրներում որոշակի տեսանելի արդյունքներ զրանցվեցին: Ամենից առաջ դա արտահայտվեց այդ երկրների քաղաքական անկախության և ազատության ձեռքբերմամբ: Տնտեսական բարեփոխումները հանգեցրին մակրոտնտեսական կայունության ամրապնդման, հսկողության տակ առնվեց գնաձի: Երկրների մեծ մասում ստեղծվեցին նաև շուկայական կառուցվածքային հիմքեր, որոնց թվում կարելի է հիշատակել սնանկացման գործընթացները, մրցակցության խթանման և հակամենաշնորհային ակտերը, հաշվապահական հաշվառման ստանդարտների կատարելագործումը և ֆինանսական շուկաների կարգավորման օրենսդրության ընդունումը:

Սակայն գործնականում ԱՊՀ անդամ բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, մակրոտնտեսական կայունացման միջոցառումներն ի սկզբանե ձախողված էին, քանի որ որդեգրվել էր արմատական բարեփոխումների կուրս այն պայմաններում, երբ չէր ձևավորվել մրցակցության պաշտպանության ինստիտուցիոնալ և իրավական բարենպաստ միջավայր:

Տնտեսական բարեփոխումների հաջողության ցուցիչը երկրների տնտեսական առաջընթացն է, բնակչության եկամուտների աճը, ժամանակակից

համաշխարհային տնտեսության պահանջմունքները բավարարող մրցունակ ապրանքային շուկաների ձևավորումը և այլն: Ուստի մեր խնդիրն է ուսումնասիրել անցումային տնտեսությունների ձեռքբերումները վերը նշված տնտեսական ցուցանիշների առումով: Առավել ամփոփ վերլուծություն կարելի է կատարել՝ հիմք ընդունելով Համաշխարհային բանկի Doing Business-2013 վերլուծական զեկույցը, որտեղ գործարարության զարգացման անհրաժեշտ բարենպաստ պայմանները դասակարգվում են ըստ ինը ցուցանիշների: Դրանք են՝

1. ձեռնարկությունների գրանցում,
2. շինարարության թույլտվություն,
3. սեփականության գրանցում,
4. վարկավորում,
5. շահերի պաշտպանություն,
6. հարկային քաղաքականություն,
7. միջազգային առևտուր,
8. պայմանագրերի իրացման ապահովում,
9. ձեռնարկությունների լուծարում:

Աղյուսակ 2-ում ներկայացված են համարները, անցումային 29 երկրի գործարարության վարկանիշները և, որպես տնտեսական զարգացման համեմատական ցուցանիշ, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն:

Կայուն ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ ցուցանիշը, ըստ Համաշխարհային բանկի համապատասխան գնահատականների, գտնվում է բարձր մակարդակի վրա: Այս խմբի երկրներում, բնականաբար, բարվոք են նաև գործարարության պայմանները, ինչը հնարավորություն է տվել Doing Business-ի վարկանշավորման աղյուսակում բարելավելու դիրքերը: Թերևս, Լեհաստանում է միայն, որ ձեռնարկությունների գրանցման, շինարարություն կատարելու թույլտվության և հարկային քաղաքականության ուղղությամբ առկա են որոշ խոչընդոտներ: Իսկ Սլովակիայում նման խոչընդոտներ կան գործարարության շահերի պաշտպանության, հարկային քաղաքականության և միջազգային առևտրին մասնակցության առումներով: Գործարարության որոշակի առաջընթաց գրանցվել է Կրաստանում, Հայաստանում, Դրոգստանում, Ադրբեջանում, Ղազախստանում, Բելառուսում և, կարելի է ասել, մասնակի ժողովրդավարական համակարգ ունեցող բոլոր երկրներում, սակայն բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների մակարդակը դրանցում բավական ցածր է: Իսկ որոշ երկրներում, օրինակ՝ Ռուսաստանում, Ղազախստանում, Ադրբեջանում, միջին և միջինից բարձր եկամուտների մակարդակը հիմնականում պայմանավորված է նավթային դոլարներով:

2013 թ. կայուն ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում գործարարության պայմանները վատթարացել են՝ հանգեցնելով վարկանիշների անկմանը, իսկ Եվրոպայի հիմնադիր երկրներում՝ Ռուսաստանում, Բելառուսում և Ղազախստանում, ընդհակառակը, գրանցվել է գործարարության պայմանների բարելավում: Նշված ցուցանիշի բարելավում գրանցվել է նաև Մակեդոնիայում, Կրաստանում, Կոսովոյում և Հայաստանում²:

² Վերլուծությունը կատարվել է ըստ Doing Business 2013. Smarter Regulations for Small and Medium-Size Enterprises. IFC, էջ 3:

Աղյուսակ 2

Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և գործարարության վարկանիշներն անցումային 29 երկրում³

Երկիր	1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազ. ԱՄՆ դոլար)	Վարկանիշ	1	2	3	4	5	6	7	8	9
Կայուն ժողովրդավարական համակարգով երկրներ											
Սլովենիա	23.6	42	28	63	97	116	20	80	56	60	38
Էստոնիա	15.2	17	37	24	13	32	39	59	4	50	70
Լիտվա	12.3	23	87	59	7	46	93	44	31	17	39
Լեհաստան	12.5	70	113	164	86	15	44	121	49	77	81
Չեխիա	18.5	63	130	76	47	46	93	128	62	78	32
Լատվիա	12.3	24	53	79	57	6	59	59	16	14	80
Սլովակիա	16.1	41	68	56	9	15	109	122	102	71	33
Հունգարիա	12.7	46	35	86	41	32	120	109	73	22	62
Մասնակի ժողովրդավարական համակարգով երկրներ											
Բուլղարիա	6.6	51	43	119	62	6	44	85	108	87	83
Ռումինիա	7.9	56	44	84	92	15	44	151	47	54	102
Խորվաթիա	13.9	84	56	132	110	65	132	42	98	47	89
Սերբիա	5.7	89	83	176	100	15	74	138	74	94	86
Չեռնոգորիա	7.1	66	51	161	116	32	28	139	34	135	47
Մակեդոնիա	4.7	38	5	136	69	46	20	33	66	65	116
Անցումային կամ հիբրիդային քաղաքական համակարգով երկրներ											
Ալբանիա	3.9	82	45	170	72	15	15	149	75	89	183
Բոսնիա և Հերցեգովինա	4.8	110	160	139	103	65	93	127	71	124	73
Վրաստան	2.9	12	8	7	2	15	20	61	35	41	105
Ուկրաինա	3.1	145	118	179	167	32	109	181	139	43	150
Մոլդովա	2.0	90	94	159	18	89	109	106	141	20	92
Մասնակի ավտորիտար քաղաքական համակարգով երկրներ											
Կոսովո	3.5	119	163	173	65	32	173	41	130	155	31
Հայաստան	3.4	48	22	78	5	46	93	159	82	63	54
Ավտորիտար քաղաքական համակարգով երկրներ											
Ղրղզստան	0.9	44	14	43	17	15	12	150	156	54	138
Ռուսաստան	10.4	123	108	182	51	89	93	105	162	18	103
Տաջիկստան	0.8	139	136	178	87	168	59	165	178	40	64
Ղազախստան	8.2	59	47	147	28	72	44	39	181	36	48
Ադրբեջան	5.3	54	15	160	10	46	20	103	177	27	88
Բելառուս	5.8	68	7	44	6	89	109	183	128	12	93
Թուրքմենստան	4.1	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ուզբեկստան	1.5	150	106	145	135	138	132	154	169	44	112

³ Տե՛ս Doing Business 2013. Making a Difference for Entrepreneurs. IFC, էջ 145-205: The World Bank: World Development Indicators, 2012. Gross National Income per Capita, էջ 83-93: Ծանոթություն. 1–9 սյունակներում նշված արժեքները ցույց են տալիս յուրաքանչյուր ցուցանիշի գծով երկրի տեղը ուսումնասիրված 183 երկրների շարքում:

Քանի որ գործարարության պայմանների և ՀՆԱ արտադրության ծավալների միջև կապն ուղղակի է, ուստի կարելի է ենթադրել, որ այդ երկրներում տնտեսական գործունեություն իրականացնելու պայմանները բարելավվել են միայն ձևականորեն: Ավելին, ժողովրդավարական զարգացման սկզբունքների անտեսումը, անկայուն քաղաքական իրավիճակը ազգային շուկայից դուրս են մղում ոչ միայն ներքին ներդրողներին, այլև կասեցնում են օտարերկրյա ներդրումների ներհոսքը: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ օտարերկրյա ներդրումների գրավչության գործոններից կարևորագույնները եղել և մնում են քաղաքական կայունությունը և ժողովրդավարության անշրջելիությունը:

ЗОЯ ТАДЕВОСЯН


Доцент кафедры „Международных экономических отношений“ АГЭУ, доктор экономических наук

Страны с переходной экономикой: прогресс или провал?- Известно, что идея „страны с переходной экономикой“ в общественных науках и, в частности, в политологии и экономических теоретических комментариях и исследованиях применяется с целью сравнительного анализа результатов экономических, социальных, правовых, культурных и других реформ в бывших социалистических странах, и инициативы формирования экономики открытого типа эквивалентно существующим мировым стандартам. Результаты перехода централизованной плановой экономики к рыночному, который начался более 20 лет назад, и полноценного функционирования его механизмов – однозначно оценивать по отдельным странам невозможно. В данной статье вышесказанное обосновано анализом и соответствующими оценками, как политических так и экономических процессов и проблем в странах с переходной экономикой. Информационной основой данного исследования послужили аналитические доклады международной организации по правам человека Freedom House и Всемирного банка Doing Business–2013.

ZOYA TADEVOSYAN

Associate Professor at the Chair of
„International Economic Relations“ at ASUE,
Doctor of Economics

Countries in Transition: Progress or Failure?- It is known that the idea of „transition countries“ in social sciences and, in particular, in the commentaries and study of political science and economic theory is used for comparative analysis of the economic, social, legal, cultural and other reforms of the former socialist countries and the formation of economic initiatives equivalent to the existing open-world standards. A clear assessment of the results of the transition of centrally planned economy to a market, which began over 20 years ago, and the full functioning of its mechanisms - in individual countries is impossible. The above mentioned is based on the analysis and corresponding estimations made in this paper including both political and economic processes and problems of the transition economies. The information basis of the study has included the analytical reports of the international human rights organization Freedom House and the World Bank Doing Business–2013.



ԼԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
*ՀՊՏՀ կրմեղցիայի ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ

Մրցակցության պայմաններում առևտրական կազմակերպության արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայման է սպառողական ապրանքների և ծառայությունների պահանջարկի կանխատեսումը:

Կանխատեսումներին վերաբերող հիմնական պահանջների բավարարումը և մշակման գործընթացում առաջացող խնդիրների լուծումը կարող են էապես նպաստել տեղեկատվության ճշգրտության աստիճանի բարձրացմանը՝ մեծացնելով նաև դրա գործնական նշանակությունը:

Հիմնաբառեր. *պահանջարկի կանխատեսում, մրցակցություն, գործարարության ծրագիր, բազիսային ժամանակաշրջան, ֆինանսատնտեսական ճգնաժամ*

Սպառողական ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի կանխատեսումը սուր մրցակցության պայմաններում արդյունավետ գործունեության ծավալման անհրաժեշտ պայման է: Բնակչության պահանջարկի կանխատեսումների արդյունքում ստացված տեղեկատվությունը կարող է հիմք հանդիսանալ արտադրական պլանների կազմման, գործարարության ծրագրերի մշակման, առևտրական կազմակերպությունների, պահեստային տնտեսությունների ստեղծման և մի շարք այլ խնդիրների արդյունավետ լուծման համար: Ակնհայտ է, որ կանխատեսումներին վերաբերող հիմնական պահանջների պահպանումը և դրանց մշակման գործընթացում առաջացող խնդիրների լուծումը կարող են էապես մեծացնել տեղեկատվության ճշգրտությունը և գործնական նշանակությունը:

Ժամանակակից կանխատեսումները մշակվում են տրամաբանության և մաթեմատիկայի խիստ կանոններով, հսկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա, էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի օգտագործման միջոցով¹: Հարկ է նշել, որ կանխորոշված հեռանկար գոյություն չունի: Այն մշտապես ձևավորվում է որպես նոր վիճակ, որտեղ անցյալն անհետ չի կորչում: Բնության և հասարակության յուրաքանչյուր երևույթ պահպանում է անցյալը և հետագա զարգացման ընթացքում բնութագրվում է մի կողմից՝ որպես պատմականորեն դրսևորված վիճակ, մյուս կողմից՝ նոր, առավել կատարելագործված ձև:

Ցանկացած երևույթի կամ գործընթացի կանխատեսումը, ամենաընդհանուր ձևով, անցնում է հետևյալ փուլերը.

- կանխատեսվող օբյեկտի ընտրություն և բնութագրում,
- ելակետային անհրաժեշտ տեղեկությունների հավաքում և գնահատում,
- երևույթի զարգացման միտումների և դրա վրա ազդող գործոնների վերլուծություն,
- կանխատեսման մեթոդի ընտրություն և մաթեմատիկական մոդելի կառուցում,
- հաշվարկների կատարում,
- ստացված արդյունքների գնահատում,
- արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակում:

Ճշգրիտ կանխատեսման գործում էական է անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը²: Այն պետք է լինի հստակ և լիարժեք: Սակայն միշտ չէ, որ երևույթի զարգացման վերաբերյալ կարելի է հայթայթել այդպիսի տեղեկատվություն: Ուստի առանձին դեպքերում հարկ է լինում հենվել նաև գիտական ենթադրությունների վրա: Պետք է նշել՝ որքան ցածր է ելակետային տեղեկատվության ճշտության աստիճանը, այնքան ցածր են կանխատեսման իսկության մակարդակն ու արժեքը:

Կանխատեսումների մշակման ժամանակ պետք է պահպանել մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք հնարավորություն են ընձեռում մեծացնելու դրանց կիրառման գործնական նշանակությունը: Այդ սկզբունքներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ անընդհատություն, հեռանկարային և ընթացիկ, փոխադարձ կապ, հնարավոր տարբերակների մշակում և այլն:

Շրջանառության մեջ կարևորվում է բնակչության պահանջարկի կանխատեսումը, որի մի քանի տարբերակների մշակումը ձեռներեցին հնարավորություն է տալիս ընդունելու առավել արդյունավետ և ճշգրիտ որոշումներ, որոնք պետք է բխեն առաջադրված նպատակների ու խնդիրների լուծման շահերից, կամ դրանք միմյանցից կարող են առանձնանալ պահանջարկը ձևավորող գործոնների տարբեր գնահատումների պայմաններում: Օրինակ՝ նպատակահարմար է մշակել պահանջարկի ծավալի և կառուցվածքի կանխատեսում ոչ միայն բնակչության թվաքանակի, դրամական եկամուտների և գների անփոփոխ մակարդակի պարագայում, այլև հաշվի առնել դրանց

¹ Стѣи Информационная основа потребительской оценки товаров и услуг: современные методы и подходы, учеб. пособие /Денисова А., Зайцев Е., Молоткова Н./: Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун.-та, 2005:

² Стѣи Транспортное обеспечение коммерческой деятельности. Учебно-методическое пособие /под ред. Правдина Н./: Ульяновск : УЛГТУ, 2007:

հնարավոր փոփոխությունը կանխատեսվող ժամանակաշրջանում: Ի դեպ, մոդելում ներառված գործոնների մեծության որոշումը կանխատեսվող ժամանակաշրջանում լուծում պահանջող խնդիրներից է: Ըստ էության, յուրաքանչյուր գործոնի մեծության վրա ազդում են մի շարք այլ ենթագործոններ, ուստի խնդիրը բավականին բարդ է, որի լուծման նպատակով տարբեր մասնագետներ առաջարկում են մի շարք մոտեցումներ, որոնք ընդհանուր ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- եթե գործոնի հեռանկարային զարգացման վերաբերյալ առկա է կառավարության համապատասխան որոշում (դրամական եկամուտների ավելացման, գների կայունության ապահովման, զբոսաշրջիկների թվի ավելացման և այլն), ապա դա պետք է հիմք ընդունել,
- եթե բազիսային ժամանակաշրջանում առկա է համապատասխան տեղեկատվություն գործոնի զարգացման վերաբերյալ, ապա այդ միտումը կարելի է տարածել նաև կանխատեսվող ժամանակաշրջանի վրա,
- եթե մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակվել են կանխատեսումներ մեզ հետաքրքրող գործոնների վերաբերյալ, ապա դրանց արդյունքները կարելի է հիմք ընդունել,
- եթե վերը նշված միջոցներով հնարավոր չէ որոշել գործոնի զարգացման հեռանկարը, ապա այդ խնդիրը կարելի է լուծել փորձագիտական գնահատականների հիման վրա:

Կանխատեսումների մշակման գործընթացում հաճախ կարևորվում է բազիսային տարիների ճիշտ ընտրությունը, որից էլ մեծապես կախված է կանխատեսվող ցուցանիշի զարգացման հեռանկարների որոշումը³: Օրինակ՝ 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ (նաև 2009 թ.) ՀՀ տնտեսության որոշ ցուցանիշներ անկում ապրեցին, և միայն 2010-ին առաջընթաց արձանագրվեց: Տվյալ դեպքում եթե բազիսային համարենք 2008-2013 թթ., ապա տվյալ ցուցանիշի գծով կստանանք ավելի մեծ ծավալ կանխատեսվող ժամանակահատվածում, քան այն դեպքում, երբ բազիսային տարիներն ավելացնենք (2005–2013) կամ պակասեցնենք (2010–2013):

Երբեմն կանխատեսվող ցուցանիշի՝ բազիսային տարիներին շարժընթաց շարքի գրաֆիկական պատկերի մաթեմատիկական տեսքի ընտրությունը դառնում է անհնար, քանի որ դա ոչ մի օրինաչափության չի ենթարկվում: Տվյալ պարագայում հնարավոր է խնդրի լուծման երկու տարբերակ.

1. կանխատեսումը մշակել փորձագիտական գնահատումների արդյունքներով,
2. դինամիկ շարքը համահարթեցնել, որի արդյունքում հնարավոր կդառնա դրա գրաֆիկական պատկերի մաթեմատիկական տեսքի ընտրությունը:

Փորձագիտական մեթոդով կանխատեսումներ մշակելիս ևս առաջանում են որոշակի խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Ելնելով կանխատեսվող ցուցանիշից՝ հարկ է լինում հավաքագրել այդ ոլորտի համապատասխան մասնագետներին՝ պահանջվող աշխատանքների կատարման համար: Փորձը ցույց է տալիս, որ ոչ բոլոր մասնագետներն

³ Տե՛ս **Пилипук А.**, Организация фирменных торговых-сбытовых систем в агропромышленном комплексе Беларуси /под ред. Гусакова В./, Минск: Институт системных исследований в АПК НАН Беларуси, 2011:

են համաձայնում համագործակցել նշված խնդրի լուծման շուրջ, ուստի նրանց շահագրգռելու միջոցներ գտնելու անհրաժեշտություն է առաջանում:

• Փորձագետների հետ աշխատանքները կազմակերպելու համար նախ պետք է կատարել մեթոդի ընտրություն (օրինակ՝ անհատական կամ խմբային հարցման մեթոդներ): Բնականաբար, ամեն մի մեթոդ ունի իր առավելություններն և թերությունները, սակայն փորձը ցույց է տալիս, որ առավել ճշգրիտ կանխատեսումներ կարելի է մշակել խմբային հարցումների մեթոդի օգնությամբ, երբ յուրաքանչյուր մասնագետ, լսելով մյուսների կարծիքները կանխատեսվող ցուցանիշի հնարավոր զարգացման վերաբերյալ, իր դիրքորոշումը ներկայացնում է առանձին գործոնների հնարավոր փոփոխության առնչությամբ, որոնք իրենց էական ազդեցությունն են թողնում նշված ցուցանիշի (մասնավորապես՝ պահանջարկի) վրա:

Բավականին լուրջ խնդիրներ են առաջանում նորմատիվային մեթոդով պահանջարկի կանխատեսման գործընթացում. այսպես՝ կանխատեսվող ժամանակահատվածում պարենային մի շարք ապրանքների սպառման ընդհանուր ծավալում ինչ մասնաբաժին է ունենալու շուկան, ինչ՝ սպառումն այլ աղբյուրների (անձնական տնտեսություն, որսագողություն, ձկնագողություն և այլն) հաշվին ինչպես բազիսային ժամանակաշրջանում, այնպես էլ կանխատեսվող տարիներին, կամ՝ փաստացի սպառումը երբ է հասնելու նորմատիվային մակարդակին: Առաջին հարցի լուծման հնարավոր տարբերակ է սպառման տարբեր աղբյուրների տեսակարար կշիռների փոփոխման միտումների հաշվառումը, վերլուծությունը և այդ օրինաչափությունների տարածումը կանխատեսվող ժամանակահատվածի վրա: Երկրորդ հարցի հետ կապված՝ կարելի է կիրառել լուծման հետևյալ տարբերակները.

- Եթե համապատասխան որոշում ընդունի Կառավարությունը, ապա դա պետք է առաջնային համարվի:
- Եթե բազիսային ժամանակահատվածում առկա են սպառման փաստացի ծավալների աճի միտումներ, ապա կարելի է որոշել այն ժամանակը, երբ փաստացի սպառումը կհասնի նորմատիվային մակարդակի: Բազիսային ժամանակահատվածի ճիշտ ընտրությունից է մեծ չափով կախված նշված խնդրի արդյունավետ լուծումը:

Նույնն են մոտեցումները նաև մի շարք ոչ պարենային ապրանքների շուկայի իրավիճակի կանխատեսումների մշակման վերաբերյալ: Սակայն, ի տարբերություն պարենային հիմնական ապրանքների սպառման ֆիզիոլոգիական նորմաների, որոնք ժամանակի ընթացքում գրեթե փոփոխության չեն ենթարկվում, ոչ պարենային ապրանքների սպառման նորմաները և ապահովվածության նորմատիվները փոփոխության են ենթարկվում՝ ելնելով սպառման առավել նպաստավոր պայմանների առաջացումից: Օրինակ՝ ներկայումս ՀՀ-ում ընտանիքների ապահովվածությունն ավտոմեքենաներով մոտ 50 միավոր է կազմում 100 ընտանիքի հաշվով, իսկ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը հասնում է 220 միավորի: Դժվար չէ ենթադրել, որ մեքենաների քանակը ՀՀ-ում մոտակա տարիներին ավելանալու է, ուստի անհրաժեշտ է համապատասխան նորմատիվի և դրա հիման վրա տվյալ շուկայի իրավիճակի և պահանջարկի զարգացման վերաբերյալ կանխատեսման մշակում:

Պահանջարկի, ինչպես նաև մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի և կառուցվածքի կանխատեսման դեպքում անհամապատասխանություն է առաջանում մասնակիների գումարի և ընդհանուր ցուցանիշի կան-

խատեսված մեծության միջև: Օրինակ՝ պարենային ու ոչ պարենային ապրանքների պահանջարկի ընդհանուր ծավալի և կանխատեսված ցուցանիշների միջև ևս առկա են շեղումներ, որոնք պետք է շտկվեն: Դա հնարավոր է անել երկու՝ ընդհանուրից դեպի մասնակիները և մասնակիներից դեպի ընդհանուրը տարբերակներով:

Նույնպիսի խնդիր է առաջանում նաև պարենային ու ոչ պարենային ապրանքների և ըստ առանձին ապրանքային խմբերի կանխատեսվող ցուցանիշների հանրագումարի հավասարակշռության ապահովման պարագայում: Մեր կարծիքով՝ այս դեպքում չպետք է առաջնորդվել համահարթեցման միայն մեկ սկզբունքով. հարկ է երկու տարբերակները կիրառել միաժամանակ՝ փոփոխության ենթարկել և՛ ընդհանուր ցուցանիշները, և՛ մասնակիները: Հաշվարկները ճշգրտելիս և ծավալն ու կառուցվածքը հաշվեկշռելիս էական նշանակություն են ձեռք բերում կանխատեսում կատարող անձի մասնագիտական հմտությունը և փորձը:

ЛИАНА АЙРАПЕТЯН

Ассистент кафедры „Коммерции” АГЭУ,
кандидат экономических наук

Проблемы прогнозирования спроса населения и пути их решения.- В условиях конкуренции прогноз спроса потребительских товаров и услуг является необходимым условием для продуктивной деятельности торгового предприятия. Информация, полученная в результате изучения спроса, является основой для эффективного решения многих проблем. Сохранение основных требований к прогнозам, и решение проблем, возникших в процессе их разработки, могут существенно повысить степень точности и практичности полученной информации.

LIANA HAYRAPETYAN

Assistant at the Chair of „Commerce”
at ASUE, PhD in Economics

Problems of Demand Prediction and Their Solutions.- In the condition of the competition the forecasting of demand of consumer goods and services is a necessary condition for the efficient activity of a trading company. Information received as a result of studying the demand, is a basis for the effective solution of many problems. Preservation of the main requirements to the prediction and solution of the problems arising in the course of their development, can significantly increase the degree of accuracy and practical value of the received information.



ЛУСИНЕ АРУТЮНЯН

*Доцент кафедры иностранных языков АГЭУ,
кандидат филологических наук*

СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ОБЩЕСОБЫТИЙНЫХ ИМЕН

Семантический анализ общесобытийных имен - Предметом исследования данной статьи является дефиниционный и компонентный анализ внутренней структуры концепта „событие“ для полного описания модели „событийность“ в английском языке. Данное изучение позволило установить релевантные для формирования общесобытийного значения компоненты, которыми являются „процессуальность/действие“, „изменение“, „важность, значимость“, „расчлененность“, „незапланированность“, „определенность“, „неопределенность“ и „внезапность“.

Ключевые слова: *концепт „событие“, дефиниционный анализ, компонентный анализ, общесобытийные наименования*

В исследованиях, касающихся событий, закономерно возникает вопрос об их соотношении с изменениями, процессами, действиями, а также фактами. Однако следует отметить, что большинство из них показывают скорее объективную близость вышеуказанных концептов, чем четкие различительные признаки.

События определяются как процессы и действия, которые происходят в пространстве и во времени, результатом которых является изменение объектов или положений дел по волевому усилию субъекта или без его инициативы и которое воспринимается социумом или индивидом как необычное, значительное или важное.

Неоднородность концепта „событие“ затрудняет также процесс отбора лингвистических средств его обозначения. В качестве номинативной единицы для события обычно рассматривается предложение, хотя, казалось бы, не отрицается и тот факт, что событие может быть обозначено и отдельным словом. Так, например, С.Д. Кацнельсон пишет: „Понятие о событиях как целостных структурах действительности существенно для понимания не только предложений, но также слов и их значений¹“.

В то же время В.Г.Гак, противопоставляя элементную и событийную номинации при разработке типологии лингвистических номинаций, дает следующие пояснения. „Элементная номинация обозначает определенный элемент действительности: предмет, качество, процесс, отношение, любой реальный или мыслимый объект. Номинантом здесь может быть слово или словосочетание (в этом случае говорят о лексической номинации), значимая морфема, синтаксема, интонама. Событийная номинация в качестве номинанта имеет микроситуацию, то есть событие, факт, объединяющий ряд элементов. Она имеет внешнюю форму предложения, в связи с чем к ней приложим термин „пропозитивная номинация“².

Такое рассуждение оставляет неясным статус довольно обширной группы существительных, обозначающих события. Между тем семантика этих существительных заслуживает самого пристального внимания. О.Д.Кацнельсон, признавая существование слов, обозначающих события, указывает, что их значения занимают ключевые позиции в иерархии лексических значений слов³.

Аналогичный подход, акцентирующий значимость событийных имен при передаче информации, находим также и в когнитивной лингвистике, где событие рассматривается как регулируемый языковым сознанием концепт, организующий наши знания о мире непредметных объектов. Базовая языковая репрезентация этого концепта – пропозиция (предложение) – обладает прототипическими свойствами по отношению к номинализациям, событийным именам и инфинитиву. Вместе с тем номинализации и собственно событийные имена по сравнению с инфинитивом более специализированы в передаче событийного значения⁴.

При изучении концепта „событие“ важно рассмотреть, каким образом компрессируются информация и знания, которая может быть расчленена выражена событийным предложением в значениях существительных, обозначающих события, какие качества событий укладываются в них, как взаимодействуют и пересекаются концепты действия и процесса, структурируя сложный феномен события в языке.

Следует отметить, что в рамки настоящего исследования входит задача определения общесобытийных существительных, указывающих на

¹ Кацнельсон С.Д., Типология языка и речевое мышление. Л., Наука, 1972:142-143

² Гак В.Г., К типологии лингвистических номинаций. // В кн.:Языковая номинация/ Общие вопросы. М., Наука, 1977, с.230-293.

³ Кацнельсон С.Д. Типология языка и речевое мышление. Л., Наука, 1972:143.

⁴ Ли В.С., О категориальном статусе инфинитива и событийных имен.// Фортунатовский сборник: Материалы научной конференции, посвященной 100-летию Московской лингвистической школы 1887-1997гг. М., Эдиториал УРСС, 2000:151

событие в самом обобщенном и абстрактном виде, но которые могут уточнять или сужать свое содержание, опираясь на контекст. Значительную трудность в проблеме отбора таких слов привносит также неопределенность дефиниций их значений. В ряде случаев дефиниции определенных лексико-семантических вариантов общесобытийных слов передаются в чрезмерно неопределенном и расплывчатом виде посредством слов с обобщенной семантикой. Это свойство сближает данные слова с широкозначными лексическими единицами, которые характеризуются семантической опустошенностью и соотносятся с понятиями, отражающими объективную действительность в максимально обобщенном виде. Сигнификат таких слов обладает минимальным количеством признаков, в силу чего они способны номинировать почти бесчисленное количество денотатов, заполняясь конкретным содержанием только с опорой на контекст. Например, слово *event* отсылает к любому событию без особых квалифицирующих признаков (вечеринка, свадьба, рождение ребенка, экзамен и т.д.).

Итак, первым этапом исследования явился отбор общесобытийных лексических единиц методом сплошной выборки из ряда толковых словарей, дефиниции которых дополнялись и выверялись по словарям синонимов⁵.

На первом этапе выборки было принято, что дефиниция свидетельствует о наличии значения „событие” в том случае, если она включает основной идентификатор событийного значения *event* и слова, с помощью которых он толкуется: *happening, occurrence, fact, circumstance* и *situation*. В результате дефиниционного анализа существительных, которые имеют в своих толкованиях данные слова-идентификаторы, образовалась группа из 37 лексем, способных репрезентировать обобщенное событие: *event, fact, affair, matter, business, cert, eventuality, happening, occasion, case, situation, circumstance, incident, occurrence, episode, instance, adventure, misadventure, contingency, misfortune, mischance, mishap, accident, casualty, disaster, calamity, catastrophe, cataclysm, drama, tragedy, tragicomedy, comedy, farce, prelude, fluke, fortune, luck*.

Для полного описания модели „событие” необходимо провести анализ ее внутренней структуры, а именно: применить метод компонентного анализа, который основывается на дефиниционном анализе лексических значений, представленных в лексикографических источниках. Как известно, в семном составе слов в первую очередь выделяется архисема – общая сема родового значения. Далее устанавливаются дифференциальные семы видового значения. На низшем уровне выделяются потенциальные семы, которые должны отражать потенциальные свойства предметов и актуализируются в определенных условиях.

В случае с общесобытийными существительными архисемой является „событийность”, указывающая на любое событие в самом

⁵ Merriam-Webster's New Dictionary of Synonyms. USA, Merriam Company Publisher, 1978. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, N.Y., Oxford University Press, 2009. Random House Unabridged Dictionary. N.Y., Random House, 1993. www.oxforddictionaries.com www.thefreedictionary.com

обобщенном виде. К дифференциальным семам относится сема „процессуальность/действие“, поскольку значение процесса является основополагающим для формирования событийного значения. Дифференциальной можно также считать сему „изменение“, так как, как было выше указано, любое событие предполагает изменение.

В дефинициях этих единиц структура обозначаемого явления не раскрывается и не конкретизируется, событие представляется глобально без расчленения на его признаковые составляющие. Этому способствует наличие таких неопределенных идентификаторов как *anything, any event, something*. Достаточно сравнить значения существительного *event* со значениями слов *flood, earthquake, wedding* чтобы убедиться, что смыслы последних более конкретны и содержат определенные признаковые компоненты, нежели слово *event*. Дифференциальными семами „процессуальность/действие“ и „изменение“ обладают следующие существительные:

event – *anything that happens or takes place, especially one of importance happening* – *an event or occurrence; any event considered worthwhile or unusual*

occurrence – *something that happens; an incident or event*

Следует отметить, что в дефинициях данных слов, в силу их широкозначности, не выявляются потенциальные семы. Из этого следует, что степень их широкозначности настолько велика, что они способны называть *любое* событие и раскрывать целый ряд его признаков в контексте.

Дифференциальная сема „процессуальность/действие“ более ярко выражена в структуре значений слов *matter, affair, business*. В дефинициях этих существительных есть указание на возможное значение действия, вернее, даже на возможность применения этих единиц для наименования действий и событий.

affair – *an event or sequence of events of a specified kind or that has previously been referred to; thing to be done; a matter that is a particular person's concern or of public interest*

matter – *a situation under consideration; affair; a subject of concern, feeling, or action*

business – *a person's regular occupation; a situation or series of events, typically a scandalous one; work that has to be done or matters that have to be attended to*

В вышеуказанных словах также можно выделить сему „важность, значимость“, так как в дефинициях указывается на отмеченное социумом важное и значительное событие.

В словарях синонимов значения существительных *circumstance, situation, case, instance, occasion, incident* выделяются среди значений других единиц. Они указывают не столько на события, сколько на условия осуществления их, т.е. место, время, обстоятельства, определяя пространственно-временные рамки события.

occasion – *a particular event, or the time at which it takes place; a noteworthy event, ceremony*

case – *an instance* of something; an occurrence

situation – a set of circumstances at a given moment; a state of affairs

circumstance – an event or fact that causes or helps to cause something to happen

incident – *an instance* of something happening; an event or occurrence

instance – an example or *single occurrence* of something

episode – an incident or event that is *part* of a progression or a larger sequence

prelude – an introductory performance, event, or action *preceding* a more important one

Как показывают дефиниции, значения места и времени являются существенными для семантики представленных единиц, причем значение времени дифференцируется: указывается как момент (case, incident), так и длительность (situation, circumstance). Потенциальной семой „расчлененность“ обладают существительные episode и prelude, где слова-индикаторы „part“ и „preceding“ указывают на фрагментарность значений данных слов, являясь всего лишь элементами в последовательном цикле событий.

Интересным образом противопоставляются семы „незапланированность“ и „определенность“ в лексических единицах contingency, eventuality, accident, chance и cert:

contingency – an event that may occur but that is not *likely* or *intended*

eventuality – a *possible* event, occurrence, or result; contingency

accident – an *unexpected* and undesirable event, especially one resulting in damage or harm

chance – an *accidental* or *unpredictable* event

cert – an event regarded as *inevitable*; *sure* thing

Если в дефинициях слов contingency, eventuality, accident, chance сема „незапланированность“ получила отражение в дефинициях посредством специального индикатора „is not likely or intended“, „possible“, „unexpected“ и „unpredictable“, то в дефиниции слова cert индикаторы „inevitable, sure“ дают возможность предположить, что это событие, несомненно, произойдет.

Наиболее существенным из признаков компонентов является потенциальная сема „внезапность“, которая является кардинальной для формирования семантики целого ряда единиц. Она проявляется посредством индикатора „sudden“:

disaster – a *sudden* accident or a natural catastrophe that causes great damage or loss of life

calamity – an event causing great and often *sudden* damage or distress; a disaster

cataclysm – a large-scale and violent event in the natural world; a *sudden* violent political or social upheaval

Явления, подобные приведенным (accident or a natural catastrophe, sudden damage, upheaval), не могут носить запланированный характер, и это находит отражение в структуре значения вышеуказанных наименований.

Сема „неопределенность" наличествует в слове *adventure* посредством индикаторов *unknown* и *unexpected*:

adventure – a risky undertaking of *unknown* outcome; an exciting or *unexpected* event or course of events

Определенный ряд единиц характеризуется семой „несчастный исход", что проявляется в индикаторах *unlucky*, *unfortunate*, *undesirable*, *serious*, *tragic*, *suffering* и т.д.

misadventure – an *unlucky* event; *misfortune*

misfortune – an *unfortunate* or *disastrous* event; *calamity*

mischance – an *unfortunate* occurrence; a *mishap*

mishap – an *unfortunate* event or accident

accident – an unexpected and *undesirable* event, especially one resulting in *damage* or *harm*

casualty – an event or accident especially one involving *serious injury* or *loss of life*

drama – a situation that is highly emotional, *tragic* or *turbulent*

tragedy – an event causing great *suffering*, *destruction*, and *distress*, such as a serious accident, crime, or natural catastrophe

В противоположность вышеуказанным единицам с негативной оценкой существует совокупность слов, характеризующиеся позитивной оценкой – семой „счастливый исход". Например:

comedy – a *humorous* occurrence

farce – a *ludicrous* event or situation

fluke – an unlikely chance occurrence, especially a *surprising* piece of *luck*

fortune – the chance happening of *fortunate* events

luck – events that are beyond control and seem subject to chance; *good fortune* or *prosperity*

На стыке этих двух разновидностей лексем с негативной и положительной оценкой выделяется слово *tragicomedy*, одновременно обладающее обоими качествами с индикаторами *comic* и *tragic*:

tragicomedy – an event or incident having both *comic* and *tragic* aspects

Остается неясным статус лексической единицы *fact*, которая часто употребляется для номинирования событийных имен.

fact – a thing that is known or *proved to be true*; a *real* occurrence, an *event*

Анализ индикаторов в дефинициях данного слова свидетельствует о том, что основополагающим компонентом для данного существительного служит сема „истинность/реальность". По этому поводу Н.Д. Арутюнова отмечает: „Фактом считают то, что подтверждено жизнью. Факт должен быть установлен, и тогда он станет достоверным. В таком употреблении факт - это быль, он противопоставляется домыслу, догадке, шутке, выдумке, словом, небылице (или предположению)... Показательно, что употребление слова факт в значении, близком таким именам как событие, происшествие, случай, обстоятельство, то есть в качестве наименования

события, считается производным от предиката факт, означающего „правда“, „истина“, „установлено“, „доказано“⁶.

Подводя итог описанию семного состава общесобытийных имен, следует констатировать, что в полном объеме они не представлены ни в одной единице. Представленные семы отражены настолько фрагментарно, что не удастся увидеть какую-либо систему или регулярность. Однако наблюдается закономерность в том, что чем широкосмысленнее событийное слово, тем число потенциальных сем в составе его дефиниций тяготеет к убыванию или полному отсутствию. Этот факт дает им безграничную возможность для номинирования обобщенного события. Они не дают конкретных характеристик события, обстоятельств и последующего изменения, но могут служить обозначениями самых различных событий с любой обстоятельственной моделью. И, наоборот, чем уже и конкретнее значение слова, тем больше потенциальных сем зарегистрировано в значении данной лексемы. Такие лексические единицы являются менее гибкими в контексте, так как на них налагается нагрузка зафиксированных в лексикографических источниках потенциальных сем.

Данное исследование позволило в некоторой степени установить семантическое содержание концепта „событие“ и выяснить релевантные для формирования общесобытийного значения компоненты. Это, в свою очередь, привело к уточнению модели событийности в том виде, в котором она проецируется на семантику языковых общесобытийных наименований.

⁶ Арутюнова Н.Д. Сокровенная связка (к проблеме предикативного отношения). // Изв. АН СССР, сер. литературы и языка, т. 39, N4, 1980:348-349.

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


*ՀՊՏՀ օտար լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

Համաիրադարձային անունների իմաստաբանական վերլուծությունը. - Սույն ուսումնասիրության նպատակն է իմաստաբանական վերլուծության ենթարկել «իրադարձություն» հասկացության տիրույթը համակարգող բառային միավորները: Այդ բառերի նշանակային բաղադրիչների մանրագնին քննությունը թույլ տվեց սահմանելու մի շարք իմաստային միավորներ, որոնց թվում՝ «փոփոխություն», «գործընթաց/գործողություն», «նշանակալիություն», «անսպասելիություն», «հանկարծակիություն», «մասնատվածություն», ինչպես նաև «ժամանակ» և «տեղ», որոնք հստակեցնում են «իրադարձության» հանգամանքային բնորոշումները:

LUSINE HARUTYUNYAN

*Associate Professor at the Chair of
Foreign languages at ASUE,
PhD in Philology*

The Semantic Analysis of the Nouns Denoting „Event“. - The present paper seeks to establish the linguistic model of the concept „event” and to identify the specific semantic components that contribute to its formation. The research has been conducted in two stages. At first, with the help of the definitional analysis 37 lexical units that denote the concept „event” in a most generalized and abstract way have been determined. The thorough analysis of the semantic structure of these units, namely, the componential analysis has shown that the semantics of these words is based on a wide range of semes as „change”, „process/action”, „importance”, „unexpectedness”, „suddenness”, „fragmentation”, „a happy/unhappy end”, as well as „spatial” and „temporal” semes, specifying the circumstantial aspects of the occurring event.



ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական
գիտությունների թեկնածու*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ

Հասարակագիտության մեջ 19–20-րդ դարերը նշանավորվեցին մշակույթի մասին հատուկ գիտության՝ մշակութաբանության (Օ. Շպենգլեր, Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ, Է. Ֆրոմ, Ա. Թոյնբի, Յո. Հայզինգա, Ա. Լոսև, Մ. Կազան, Դ. Գուրկիչ և ուրիշներ) ձևավորմամբ ու զարգացմամբ: Անհրաժեշտ է նշել, որ այդ գիտության կայացման ու զարգացման մեջ ակտիվ մասնակցություն ունեցան նաև մեր՝ հնագույն մշակույթ ունեցող ժողովրդի ներկայացուցիչները (Է. Մարգարյան, Հ. Գևորգյան, Ս. Հարությունով (Մոսկվա), Կ. Սարինգուլյան և ուրիշներ): Անցյալ դարի 70–80-ական թվականներին կազմավորվեց և ակտիվ գործունեություն ծավալեց հայկական մշակութաբանական և ավանդութաբանական գիտական դպրոցը (հիմնադիր՝ Է. Մարգարյան), որը մեծապես նպաստեց ինչպես Հայաստանում, այնպես էլ նախկին Խորհրդային Միությունում համապատասխան հետազոտությունների խթանմանն ու ծավալմանը: Ի դեպ, ռուսական գիտական շրջանակներում Է. Մարգարյանը համարվում է «ռուսական մշակութաբանության սկզբնավորողը»: Մեզանում կատարվեցին բազմաթիվ մշակութաբանական հետազոտություններ, հրատարակվեցին հետաքրքիր հոդվածներ ու մենագրություններ, իսկ բուհերի ուսումնական ծրագրերում, առաջիններից մեկում՝ նաև ՀՊՏՀ-ում, ընդգրկվեց և այսօր էլ հաջողությամբ ուսումնասիրվում է «Մշակութաբանություն և հայ մշակույթի պատմություն» դասընթացը: Աձեց հայ մշակութաբանների մի ամբողջ սերունդ (Ա. Սարգսյան, Ս. Սարգսյան, Գ. Մելքունյան, Յու. Հովականյան, Է. Աբրահամյան (Տաշքենդ) և ուրիշներ), որ պատասխանատվությամբ է կատարում իր գործը: Մշակութաբանների այդ խմբի լիիրավ անդամն է նաև ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դոցենտ Մարիետա

Նիկողոսյանը, ով տարիներ շարունակ բարձր մակարդակով ու նվիրվածությամբ կարդում է «Մշակութաբանություն» դասընթացը, հրատարակել է բազմաթիվ հոդվածներ, վերջին հինգ տարիներին ընթերցողի սեղանին է դրել երեք ինքնատիպ մենագրություն՝ «Հերմենևտիկա. պատմամշակութային հիմնախնդիրների քննություն»՝ 2009, «Ճապոնական քաղաքակրթության առանձնահատկությունները (անցյալ, ներկա)»՝ 2011, «Եվրոպական մշակույթը Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջաններում»՝ 2013¹:

Ստորև կփորձենք անդրադառնալ վերջինիս բովանդակությանն ու արժևորել աշխատանքը:

Ներածության մեջ հեղինակը ոչ միայն պարզ ու մատչելի բացատրում է «վերածնունդ» եզրույթի բովանդակությունը, այն է՝ անտիկ դարաշրջանի արվեստին բնորոշ հատկությունների վերածնունդը նոր պայմաններում, այլև վերլուծում այդ հասկացությունը իմաստակազմավորման բարդ գործընթացի խոր փիլիսոփայական-մշակութաբանական տեսանկյունից: Առանձնացնելով դարաշրջանի հիմնական գծերը՝ Մ. Նիկողոսյանն անդրադառնում է Վերածննդի մշակույթի առաջացման տեղի, ընդգրկման ժամանակային սահմանների՝ գիտության մեջ առկա տեսակետների քննարկմանն ու խմբավորմանը: Մասնավորապես՝ կանգ է առնում այն հայեցակարգի վերլուծության վրա, ըստ որի Վերածնունդը աշխարհագրական սահմաններ չունի, համաշխարհային պատմական երևույթ է, որը տարբեր ժամանակներում, որոշակի դրսևորումներով արտահայտվել է այլ տարածաշրջաններում ու երկրներում: Հեղինակն անդրադարձել է նաև հայ հետազոտողների (Վ. Չալոյան, Ս. Սարգսյան, Հ. Թամրազյան, Հ. Իսաբեկյան) այն տեսակետին, համաձայն որի՝ մեր իրականության մեջ նույնպես դիտվել են Վերածննդի մշակույթին բնորոշ երևույթներ: Ավելին, հիշատակում է, որ, այդ հետազոտողների կարծիքով, Հայկական Վերածնունդը շուրջ երկու հարյուր տարով նույնիսկ նախորդել է Եվրոպական Վերածննդին:

Աշխատության առաջին՝ «Վերածննդի մշակույթի առանձնահատկությունները» գլուխը սկսվում է սկզբունքային նշանակություն ունեցող՝ անտիկ և միջնադարյան մշակույթի հետ առնչության հարցի քննարկմամբ: Հեղինակը Վերածննդի մշակույթի գործիչների նշանակալի ներդրումն է համարում բարձրարժեք անտիկ մշակույթի հետ ժառանգական կապի վերականգնումը: Դարաշրջանի անվանումն առաջին հերթին փաստում է անտիկ հարուստ մշակույթի վերածնունդն ավելի քան 1000-ամյա մոռացությունից: Անկասկած, Վերածննդի մշակույթն արմատներ ունի նաև միջնադարյան մշակույթում: Հեղինակը տեղին է մեջբերում խորհրդային ճանաչված փիլիսոփա, Եվրոպական մշակույթի հայտնի գիտակ ու հետազոտող Ա. Լոսևի պատկերավոր համեմատությունը. «Վերածնունդը պատանու նման հակադրվում է իր ծնողներին և պաշտպանություն որոնում պապերի մոտ, հակված է մոռանալու այն ամենը, ինչով պարտական է միջնադարին և չափազանցնել անտիկ ժառանգության նշանակությունը»: Սակայն, ըստ Մ. Նիկողոսյանի, Վերածննդի արվեստը ոչ այլ ինչ է, քան անտիկ ֆիզիկական գեղեցկության և քրիստոնեական ոգեղենության յուրահատուկ համադրություն:

Վերածնունդի աշխարհայացքի և մշակույթի հիմնական գաղափարական հիմքը, արժեքաբանական ընդհանրացումն ու մեթոդաբանական ուղղ-

¹ Մ. Նիկողոսյան, Եվրոպական մշակույթը Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջաններում, Եր., «Գրիգոր Տաթևացի», 2013, 210 էջ:

վածությունը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, հումանիզմն է: Այն խոր հետք թողեց պոեզիայում և հարուստ նյութ տվեց գեղանկարիչների ու քանդակագործների ստեղծագործական որոնումներին: Մ. Նիկողոսյանի մեկնաբանմամբ ևս, ըստ Վերածննդի դարաշրջանին բնորոշ **մարդակենտրոնության**, մարդը ոչ թե փրկություն հայցող մեղսագործ էակ է, այլ աստվածային արարչագործության պասակ, ում աստված օժտել է իմաստությամբ, ուժով ու հզորությամբ՝ շարունակելու աստվածային արարչագործությունը: Կարևոր են նաև **քաղաքացիական հումանիզմի** առանձնացումն ու քննությունը: Մ. Նիկողոսյանի կարծիքով՝ հումանիզմի գաղափարախոսության այս տեսակին բնորոշ է հետաքրքրությունը սոցիալ-քաղաքական հիմնահարցերի՝ հանրապետության, ազատության, հավասարության, հասարակությանը ծառայելու, հայրենասիրության նկատմամբ:

Հեղինակը դիտարկում է նաև կրթության ու գիտության վերածննդի հավակարգի քննությունը, որքանով մարդու դաստիարակությունը հումանիստները համարում էին նրա ու հասարակության կատարելագործման հիմնական միջոց: Ավելին, Վերածննդի շրջանի մտածողները հումանիզմի հիմնախնդիրներն արծարծել են անգամ բնափիլիսոփայական ուսմունքներում: Մ. Նիկողոսյանն ընդգծում է նաև, որ այդ դարաշրջանի մտածողներից շատերին բնորոշ էր գիտական ու գեղարվեստական մտածողության միահյուսվածությունը, ինչը հատկապես վառ կերպով դրսևորվեց Լեոնարդո դա Վինչիի (1452–1519) աշխատանքներում: Իբրև արվեստագետ-փիլիսոփա՝ նա տիեզերքն ըմբռնում էր որպես կատարյալ ու գեղեցիկ մի ստեղծագործություն, որում ներդաշնակորեն միահյուսված են հոգևորն ու նյութականը:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է բուն Իտալական Վերածննդի մեկնաբանությանը, որն իրականացվում է զուգահեռաբար երկու՝ փիլիսոփայական-մշակութաբանական և արվեստաբանական դիտանկյուններից: Ինչպես նկատում է հեղինակը, Վերածննդի դարաշրջանում հոգևոր գործունեության զլխավոր տեսակը արվեստն էր, որն այդ ժամանակաշրջանում ուներ նույն նշանակությունը, ինչ կրոնը՝ միջնադարում, գիտությունը՝ նոր ժամանակներում: Արվեստն ընթանում էր գիտության, գրականության, փիլիսոփայության առջևից՝ կատարելով ճանաչողական համապարփակ գործառույթ: Իմացության ծարավը, որ բնորոշ էր Վերածննդի դարաշրջանի գործիչներին, ամենից առաջ դրսևորվեց գեղարվեստական իմացության միջոցով: Գիտության ու արվեստի միասնության ըմբռնումն արվեստագետներին օգնեց լուծելու կերպարվեստի բազմաթիվ կարևոր հարցեր: Ընդ որում, Վերածննդի գեղագիտական-գեղարվեստական իդեալը ավելի ամբողջական արտահայտվեց կերպարվեստում (գեղանկարչություն, քանդակագործություն) և ճարտարապետության մեջ: Այնուհետև հեղինակն անդրադառնում է Իտալական Վերածննդի քննությանը ժամանակագրական առումով:

Վերածննդի առաջին փուլը նախավերածնունդն է (13-րդ դարի 2-րդ կես – 14-րդ դար), որը սերտորեն առնչվում էր միջնադարյան ռոմանական, գոթական, բյուզանդական ավանդույթներին: Նախավերածննդի արվեստը սկզբնապես դրսևորվեց քանդակագործության մեջ, իսկ գեղանկարչության՝ 13-րդ դարավերջին դիտված վերելքը շարունակվեց նաև 14-րդ դարում: Այս երևույթը զլխավորում էր Ջոտո դի Բոնդոնեն (1266/67–1337): Հենց նա էլ նախանշեց այն ուղին, որով ընթացավ Վերածննդի մշակույթը:

Վաղ Վերածննդի (14–15-րդ դարեր) փուլի բարենորոգիչը Մազաչոն էր (1401–1428), ով գեղանկարչության մեջ ունեցավ նույն դերը, ինչ ճարտարապետության մեջ՝ Բրունելլեսկին, քանդակագործության մեջ՝ Դոնատելոն: Վերջինս Բրունելլեսկիի հետ ստեղծեց արվեստների համադրության այն նոր սկզբունքը, որ հատուկ է ճարտարապետական ու քանդակագործական ձևերին: Գեղանկարչության մեջ առանձնացավ Սանդրո Բոտիչելլին (1445–1510)՝ Վերածննդի հայտնի քնարական գեղանկարիչներից մեկը:

15-րդ դարի վերջից մինչև 16-րդ դարի առաջին քառորդը Բարձր Վերածննդի շրջանն է, որը բնութագրվում է իտալական արվեստի աննախադեպ թռիչքով: Այդ ժամանակաշրջանի տիտանները միավորեցին Իտալական Վերածննդի գլխավոր արժեքները՝ անհատականություն, ներդաշնակություն, հզորություն: Բարձր Վերածննդի դասական ոճը կազմավորվեց Ֆլորենցիայում, լավագույն հուշարձանները ստեղծվեցին Հռոմում, իսկ ավելի ուշ Վենետիկը դարձավ Բարձր և Ուշ Վերածննդի կենտրոնը:

Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացնում է այս շրջանի նշանավոր արվեստագետների ամբողջական ստեղծագործական դիմանկարները, նուրբ և արվեստագիտական խոր վերլուծության ենթարկում նրանց գլուխգործոցները: Այնուհետև խոսում է Լեոնարդո դա Վինչի գյուտարարի, արվեստի տեսաբանի, հանձարեղ գիտնականի էության հետաքրքիր շերտերի մասին: Անդրադառնում է հայկական իրականության, հայ արվեստի ու ճարտարապետության հետ նրա ունեցած առնչություններին, Հայաստան կատարած ճամփորդությանը, «Հայկական նամականիի», «Ժածկագրերի» և այլնի հետ կապված բազմաթիվ՝ հայ ընթերցողի համար առանձնակի հետաքրքրություն ներկայացնող հարցերի պատմամշակութաբանական քննությամբ:

Մեծ է Բարձր Վերածննդի մշակույթի նաև հասարակական արժեքը: Այս շրջանի քաղաքական միտքը կապված է երկու անունների՝ Մաքիավելլիի և Գվիչարդինիի հետ:

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է Հյուսիսային Վերածննդի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Այն սկսվում է «Ռեֆորմացիա (բարենորոգում, ուղղում)» երևույթի փիլիսոփայական վերլուծությամբ: Վերածննդի դարաշրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխությունները Եվրոպայում հանգեցրին քրիստոնեության մի նոր ուղղության՝ բողոքականության առաջացմանը, որն այդ մշակույթի խոր փոփոխությունն էր, և դրա հետևանքները դարձան բողոքականության գաղափարախոսությունը՝ ձևավորելով մարդու նոր տիպ: Մարդու այդ նոր տեսակն այդուհետ դարձավ արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման շարժիչ ուժը: Այս նոր մշակույթում վերերկրային քրիստոնեական ոգեղենությունը հանդես է գալիս իբրև իմաստային հիմք աշխատանքային բարոյականության համար: Բողոքականությունը դարձավ այդ աշխարհակարգի հոգևոր հիմքը, որը կառուցված էր ըստ անհատական ազատության, շուկայական հարաբերությունների, իրավական պետության և բնության բանական-տեխնիկական վերափոխման սկզբունքների: Ռեֆորմացիան այն մարտահրավերի, «կոչի» հոգևոր պատասխանն էր, որը մարդկությանն առաջադրեց 16-րդ դարի սոցիալ-տնտեսական և մշակութային իրավիճակը: Ահա այս գաղափարական-հոգևոր փոփոխությունների պայմաններում էլ Վերածնունդը տարածվեց ու զարգացավ Հյուսիսային Եվրոպայի երկրներում: Մյուս կողմից,

հեղինակի ներկայացմամբ, դեռևս 15-րդ դարում հումանիստական շարժումը դուրս եկավ Իտալիայի սահմաններից և մեծ ազդեցություն ունեցավ Եվրոպայի հյուսիսային երկրների մշակույթների վրա: Ըստ այդմ՝ «Հյուսիսային Վերածնունդ» հասկացությունը ոչ միայն աշխարհագրական բնութագիր է, այլև Վերածննդի որոշակի յուրահատկություններ է ընդգրկում Նիդեռլանդներում, Անգլիայում, Պերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում: «Վերածնունդ» այս երկրների վերաբերմամբ գործածվում է պայմանականորեն: Եթե Իտալիայում հիմնականում անտիկ մշակույթի որոշ ավանդույթների վերածնունդն էր, ապա Հյուսիսային Եվրոպայում անտիկ մշակութային ավանդույթների մասին եղած հիշողությունը շատ թույլ էր. հիմնականը մշակութային գործընթացների ներքին ավանդույթների ընդհանրությունն էր, հումանիզմի ձևավորումը և դրա գաղափարների տարածումը, միջնադարյան աշխարհայեցողության սասանումն ու անհատի ինքնագիտակցության բարձրացումը:

Մ. Նիկողոսյանը նկատում է՝ եթե Իտալական Վերածննդի մշակույթում առաջին պլանում էր իրականության արտացոլման գեղագիտական կողմը, ապա Հյուսիսային Վերածննդում գերակշռողը բարոյականն էր: Մյուս կողմից՝ եթե Իտալական Վերածննդին բնորոշ էր անտիկ մշակույթի որոշ ավանդույթների վերականգնման ձգտումը, եկեղեցական դոգմաներից ազատագրման և աշխարհիկ կրթվածության մղումը, ապա Հյուսիսային Վերածննդի մշակույթում գլխավոր տեղ էին գրավում կրոնական կատարելագործման հարցերը, կաթոլիկ եկեղեցու և նրա ուսմունքի նորացումը: Այնուհետև հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է Նիդեռլանդներում, Պերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իսպանիայում Վերածննդի մշակույթի տիպական դրսևորումների քննությանը՝ այդ երկրների պատմության առանձնահատկությունների համատեքստում:

Մ. Նիկողոսյանը խոսում է նաև Շեքսպիրի ու Սերվանտեսի արվեստի և հայկական մշակույթի հետաքրքիր առնչությունների մասին: Շեքսպիրի անձին և ստեղծագործությանը մեզանում առաջինն անդրադարձել է Հովսեփ Էմինը 1792 թ., ինչին հաջորդել են հանճարեղ գործերի բազմաթիվ անգլագական թարգմանություններ, բեմադրություններ ու դերակատարումներ՝ ծնունդ տալով մի յուրահատուկ մշակութային շարժման՝ «հայ շեքսպիրական և շեքսպիրագիտություն» անունով: Իսկ Սերվանտեսի գլուխգործոց «Ղոն Կիխոտը» հայերեն թարգմանվել ու հրատարակվել է դեռևս 1878 թ.՝ հետագայում թեմա դառնալով հայ գեղանկարիչների ու թատրոնների համար:

Վերջաբանում հեղինակն ամփոփում է հետազոտության արդյունքները և իբրև յուրատեսակ *հետզոտություն* ներկայացնում օգտագործված գրականության ամփոփ ցանկը:

Աշխատանքը խարսխված է հարուստ պատմական-փաստական նյութի վրա, աչքի է ընկնում տեղեկատվական հագեցվածությամբ: Հեղինակը կատարել է մշակութաբանական-արվեստաբանական խոր վերլուծություն, հստակորեն առանձնացրել Վերածննդի տարբեր ժամանակաշրջանների մշակույթի առանձնահատկությունները, աշխատանքի բաժիններն ավարտել լայն ընդհանրացումներով ու սեփական եզրահանգումներով: Մ. Նիկողոսյանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև քննարկվող շրջանի գեղարվեստական գրականության, արվեստի բազմաթիվ ուղղությունների, տեսությունների (ռեալիզմ, համադրական ռեալիզմ, մաներիզմ և այլն) ու տեսա-

կան ճարտարապետության հարցերին: Մանրամասնորեն նկարագրել է կերպարվեստում և ճարտարապետության մեջ կիրառվող (լուսաստվեր, բարձրաքանդակի սկզբունք, գեղանկարչական հարթաքանդակ, գծային հեռանկարի տեսություն, օդային հեռանկար, ծխագույն լուսաստվեր, հավասարակողմ եռանկյան սկզբունք, բրգաձև հորինվածք, գծատարածական լուծում, չորս ասեղի տեխնիկա և այլն) գեղարվեստական ամենատարբեր «տեխնիկաներն ու տեխնոլոգիաները», մի բան, որ հարստացնում է ընթերցողի գիտելիքներն ու պատկերացումները Վերածննդի արվեստի «արհեստագործական» նրբությունների ու գաղտնիքների մասին:

Աշխատանքը գրված է գեղեցիկ գիտական հայերենով, ինչը մեծապես կարող է նպաստել ընթերցողների, հատկապես ուսանողության լեզվական մշակույթի զարգացմանը: Հեղինակը կարևոր աշխատանք է կատարել նաև հետազոտության մեջ հիշատակվող հեղինակների, նրանց գործերի անվանումները հայերեն ճշգրիտ տառադարձությամբ ներկայացնելու, բազմաթիվ մշակութաբանական ու արվեստաբանական եզրույթների (կապելլա՝ կաթոլիկ ժամատուն, ստերեոսկոպիկ՝ տարածացուցական, սիլուետ՝ ստվերանկար, կոնդոտյեր՝ վարձու զորապետ, օրդեր՝ մույթաշար, անֆիլադա՝ սենեկաշարք, ռակուրս՝ օբյեկտի հեռանկարային դիրք, գրավյուրա՝ խորանկար, քսիլոգրաֆիա՝ փայտի փորագրություն, օֆորտ՝ պղնձի փորագրություն և այլն) հայերեն համարժեքների օգտագործման առումով:

Արժե նշել նաև աշխատանքում ներառված՝ արվեստի գործերի վերապրությունների մասին, որոնք ոչ միայն օգնում են հասկանալու հեղինակի վերլուծություններն ու մեկնաբանությունները, այլև գեղագիտական հաճույք են պատճառում ընթերցողին: Մ. Նիկողոսյանն ամենայն բարեխղճությամբ ու մեծագույն հարգանքով է օգտագործել թեմային վերաբերող բարձրարժեք գրականությունը:

Մ. Նիկողոսյանի աշխատանքը ինքնուրույն, ավարտուն և հաջողված հետազոտություն է: Շնորհավորում ենք ինչպես հեղինակին, այնպես էլ ընթերցողներին, առաջին հերթին՝ ուսանողներին, նման գիրք նվեր ստանալու առիթով:

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Գրանցման վկայական՝ 03Ա 054452 (ներդիր՝ 003)՝ տրված 30.06.2006: Հասցեն՝ Երևան 0025, Նալբանդյան 128:

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսի խմբագրության հասցեն՝ Երևան 0025, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, 3-րդ (բարձրահարկ) մասնաշենք, 6-րդ հարկ: Գրանցման վկայական՝ 01Մ000187: Ստորագրված է տպագրության՝ 27.06.2014: Պատվեր՝ 81: Տպաքանակ՝ 250: Ծավալը՝ 9,5 հրատ. մամուլ, 10,25 տպ. մամուլ, 14 պայմ. տպ. մամուլ: Չափսը՝ 70x108^{1/16}:

Հեռախոս՝ (010) 593 448

Էլիոստ՝ g.v.hovhannisyan@mail.ru

Կայքէջ՝ www.asue.am → կառուցվածք → «Բանբեր ՀՊՏՀ»

Համակարգչային ձևավորումը՝
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ


Էջադրումը և համակարգչային սրբագրությունը՝
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վերստուգող սրբագրիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան, Նալբանդյան 128

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ



«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի խմբագրություն ներկայացվող նյութերը պետք է բավարարեն տեխնիկական հետևյալ պահանջները.

- շարվածքի տառատեսակ՝ Arial LatArm,
- տառաչափ՝ 12,
- տողամեջ՝ 1,5,
- հեղինակի անուն, ազգանուն (գլխատառերով), աշխատավայր, պաշտոն, գիտական աստիճան, կոչում, հեռախոսահամար,
- տողատակում՝ հղումներ.
աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (մամուլի դեպքում՝ համար) և էջ,
- հայերեն, ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումներ, հիմնաբառեր: